

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Գ Ի Տ Ա Կ Ա Ն  
Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

IV  
2001

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

---

Գ յ ու մ ր ի 2001

ԴՏՀ 008+902 / 904+800  
ԳՄԴ 71+63. 4+80  
Գ 602

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Հայրապետյան  
Ս. Հարությունյան  
Ս. Պետրոսյան  
Ֆ. Տեր-Մարտիրոսով

Խմբագրությամբ՝ Ս.Հայրապետյանի

Գ - 602      Գիտական աշխատություններ. 4,  
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,  
2002, 184 էջ:

Գ  $\frac{4400000000}{703(02)-2002}$  2002  
ISBN 5-8080-0504-3

ԳՄԴ 71+ 63,4+80

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2002

*Республика Армения  
Национальная академия наук  
Институт археологии и этнографии  
Центр арменоведческих исследований Ширака*

# НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

IV

EDITION

# RESEARCH PAPERS

*Shirak Centre of Armenian Studies  
Institute of Archeology and ethnography  
National Academy of Sciences  
Republic of Armenia*

Издательство "Гитутюн" НАН РА

"Cuitutiun" Publishers NAS RA

---

ГЮМРИ 2001 GYUMRI

*Публикуется по решению Ученого совета  
Института археологии и этнографии НАН РА*

*Редакционная коллегия:*

*С. Айрапетян  
С. Арутюнян  
С. Петросян  
Ф. Тер-Мартirosов*

*Под редакцией С. Айрапетяна*

*Published by arrangement of the Scientific Council  
At the institute of Archeology and Ethnography NAS RA*

*Editing stuff:*

*S. Hairapetyan  
S. Harutiunyan  
S. Petrossyan  
F. Ter-Martirossov*

*Edited by S. Hairapetyan*

**Լարիսա ԵԳԱՆՅԱՆ**

**ԾԻՍԱԿԱՆ ԻՐԵՐԸ ԲԵՆԻԱՄԻՆԻ ԱՆՏԻԿ ԹԱՂՈՒՄՆԵՐՈՒՄ**

Թաղման ծեսը համընդհանուր ձևով կարող է բնորոշվել որպես հասարակության մեծածանր քաղման մախապատրաստման և ընդունված կանոնների համաձայն քաղման իրականացման համալիր գործողություն: Ամեն մի հասարակություն քաղման ծեսն իրականացնում է ավանդաբար ընդունված և կանոնակարգված արարողությունների որոշակի հաջորդականությամբ՝ ելնելով հանգուցյալի սոցիալական, տարիքային, սեռային և այլ հատկանիշներից: Եվ քանի որ քաղման ծեսն իրականացվում է հասարակության որոշ անդամների և ոչ թե ողջ հասարակության կողմից, ենթադրվում է նաև ծեսն իրականացնող խմբի որոշակի վերաբերմունք հանգուցյալի նկատմամբ: Եվ ըստ այդմ էլ քաղման ծեսն իրենից ներկայացնում է նաև մարդկանց որոշակի խմբի կողմից հանգուցյալի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և գնահատանքի դրսևորում՝ արտահայտված որոշակի գործողությունների շարքով:

Թաղման ծեսը բարդ երևույթ է, և այստեղ իր արտացոլումն է գտնում մարդկային կենցաղավարությունն իր բազմաբնույթ և բազմատեսակ կողմերով: Եվ ինչպես ցանկացած պատմական երևույթ, քաղման կոնկրետ ծեսն իրենից ներկայացնում է բարդ, շարժուն համակարգ, որտեղ առանձին հատկանիշներ գտնվում են որոշակի հարաբերությունների մեջ: Թաղման ծեսի զանազան արարողակարգերի նյութականացված մնացորդները, ինչպես նաև ուղեկցող նյութերի ծիսական բովանդակության վերլուծությունը հնարավորություն են տալիս ծիսական մի քանի առանձնահատուկ դրսևորումներ դիտարկել:

Բենիամինի անտիկ քաղումների ուղեկցող նյութերի հետ գտնվել են ճաներ, կաուրիներ և բոժոժներ, ինչպես նաև երկրաչափական տարբեր ձևեր (եռանկյուն, ձվաձիր, ուղղանկյուն, խորանարդ և այլն) ունեցող քարե իրեր: Գ-տաժոների մեծ մասը չունի կիրառական նշանակություն և դամբարանում հայտնվել է զուտ ծիսական դերով: Իսկ արդյոք քաղմանն ուղեկցող, որոշակի կիրառական նշանակություն ունեցող մյուս իրերի (հմայիլներ, հայելի), վնասված կամ թերի լինելը ևս ծիսակարգի արդյունք է: Գ-ուցե ծիսական որոշակի բովանդակություն ունեն նաև դամբարանի ծածկասալերի և կողասալերի քարերի մեջ, ինչպես նաև կմախքի որոշակի մասերում գտնված կավաճերի բեկորները:

Երկրաչափական խորհրդանիշերն ընկած են ծիսականացված առարկաների և ծիսական տարածքի կառուցման հիմքում: Որպես նշանների իմաստաբանություն, դրանք կերպ են առնում են դիցաբանական համակարգում: Քննարկվող նյութերի մեջ առավել օգտագործված երկրաչափական ձևերն են եռանկյունին, ուղղանկյունը, շրջանը, ձվաձիրը և խորանարդը: Կիրառական որոշակի նշանակություն ունեցող իրերի քննության ժամանակ երկրաչափական ձևը մղվում է երկրորդ պլան: Կան երկրաչափական ձև ունեցող իրեր, որոնք կիրառական նշանակություն չունեն և այս դեպքում առաջնային դառնում է հենց ձևը:

Թիվ 121 դամբարանից գտնվել է սև քարից մի իր, որը ողորկ մակերեսով եռանկյուն բուրգ է (տախտակ I, նկ. 2): Իրի ողորկ ու փայլեցված մակերեսը ոչ միայն քարի տեսակով է պայմանավորված, այլ հավանաբար նաև՝ երկարատև օգտագործմամբ: Նույն քարից մեկ այլ իր, որը նույնպես եռանկյուն միստեր ունի, և կարող է դիտվել նաև արտաձև, գտնվել է թիվ 54 դամբարանից (տախտակ I, նկ. 3): Գ-տաժոների ծիսական բովանդակության մեկնությանը օգնում են նաև Բենիամինի բնակավայրի բազմագործառնական բնույթի մի շինության պեղումներից<sup>1</sup> հայտնաբերված մեկ տասնյակ եռանկյունաձև ձիթաճրագները:

<sup>1</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն , Դրասխանակերտի մ.թ.ա. 1-ին դարի մոնումենտալ կառույցի գործառության մասին, ՇՊՄԺ հանրապետական 2-րդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 19:

Եռանկյունին բազմազան դրսևորումներ ունի՝ ըստ տարբեր ժողովուրդների դիցաբանական ընկալումների: Այն խորհրդանշում է՝ մայր-հայր-երեխա,<sup>2</sup> մարմին-խելք-հոգի:<sup>3</sup> Եռանկյունին նաև պտղաբերության խորհրդանշան է:<sup>4</sup> Հայտնի է, որ եռանկյունին Անահիտ դիցուհու խորհրդանշան էր, և եռանկյունի էին սրբազան երինջների ճակատի սպիտակ սեպածև նշանները, որոնք «*դիցուհու ջահն էին՝ խարանած երինջի ճակատին*»:<sup>5</sup> Հայոց մայր դիցուհի Անահիտի մեծանի սրբազան ցլերին հիշեցնող, ճակատի սեպածև նշանով ցլի պատկերով գունազարդ կարաս է հայտնի Դ-վինից:<sup>6</sup> Եռանկյունածև ձիթաճրագները, հնարավոր է, նույնպես խորհրդանշում են Անահիտին: Եռանկյունու, որպես իգական խորհրդանշանի վկայության հետաքրքիր մի ավանդույթ է պահպանվել բանագիտական նյութում: Աշոցքի Ղազանչի գյուղում հարսնացու աղջիկներին բնորոշելու առաջին հարցադրումն է «*ինչպե՞ս եռանկյունու վիճակն*»:<sup>7</sup> Եռանկյունին տիրական երկրաչափական ձև է հատկապես ընտանիքի և սիրո կապերի ամրացմանն ուղղված հմայական գործողություններում: Եռածալ են թուղթուգրի թղթերը, որոնք ի տարբերություն գլանածև փաթաթվածների, գործության ուժը պահպանում էին միայն որոշակի դեպքում և որոշակի ժամանակ:<sup>8</sup> Թիվ 54 և 121 դամբարաններից գտնված իրերը տարբեր կողմերից դիտելիս կարելի է ընկալել և՛ որպես իգական, և՛ որպես արական խորհրդանշան: Հետևաբար, պիտի կարծել՝ թաղման ծեսում իրը ծիսական այս բովանդակության կրողն է և ընտանիքի խորհրդանշան:

Երկրաչափական սիմվոլների երկրաչափական կողը, կապված իրական օբյեկտների եզակիության և իդեալականացման հետ, հարմար միջոց է մասնավորապես ունիվերսալ սխեմաներ կազմելու համար, որոնք շեշտում և ընդգծում են տարբեր ոլորտների միասնությունը, ինչպես շրջանի և քառակուսու միասնությունը: Երկրաչափական խորհրդանշանները նկարագրում են տիեզերքի կառուցվածքը նրա և հորիզոնական, և ուղղահայաց ասպեկտներում:<sup>9</sup> Բենիամինի թիվ 184 դամբարանից գտնվել է կրաքարից մի իր (տախտակ I, նկ. 4), որը կտրագված անկյուններով քառակուսի է՝ կենտրոնում միջանցիկ անցքով: Քառակուսին տարածության սահմանազատման նախնական ձևերից մեկն է, նաև տան, կառույցի հիմնական ձևերից մեկը:

Քառակուսին և շրջանը միավորող իրը կարող է խորհրդանշել նաև տղամարդ (քառակուսի) և կին (շրջան) սկիզբ՝ միավորելով արական և իգական սկիզբները: Հետերոգեն ծագմամբ և նշանակությամբ դիցաբանական խորհրդանշանների ամենատարածված ձևերից մեկը շրջանն է, որը որպես մարմին կազմված է ուղիղ կորից՝ առանց սկզբի և առանց վերջի և ցանկացած կետից ուղղված է դեպի անտես կենտրոն: Շրջանը հանդես է գալիս որպես գնդի ունիվերսալ պրոյեկցիա և դիցաբանական ավանդույթներում ընդունվում է որպես իդեալական մարմին: Եվ պատահական չէ, որ գունդը դիտվում էր ամսահամանի և սահմանափակման միասնություն, և աստվածների կերպարներն ընդունվում էին գնդի ձևով:<sup>10</sup> Երկրաչափական որոշակի ձև ունեցող մեկ այլ իր գտնվել է թիվ 124 դամբարանից (տախտակ I, նկ. 1): Այն չեչաքարից է, քառակող՝ նիստերի վրա երկայնակի ակոսներով և, որպես երկրաչափական մարմին, քառակող սեղան է՝ մեկընդմեջ լայնացող և նեղացող նիստերով: Ինչպիսին է այս քարերի ծիսական դերը, դժվար է ասել, սակայն ակներև է, որ նպատակամղված են ինչ-որ գաղափարի և հավանաբար պահպանակի դեր են կատարել:

<sup>2</sup> J. Danielou, *Les symboles chretiens primitifs*. Paris 1961. page 38-46.

<sup>3</sup> M. Granet, *La pensee chinais*. Paris 1934. page 17-24.

<sup>4</sup> Н. Виноградова, *Символика алтарной композиции средневековой Японии*. в кн. *Искусство Востока и античности*. М., 1977, стр. 111.

<sup>5</sup> Պլինիոսը, *Եր.*, 1959, էջ 548:

<sup>6</sup> Գ. Քնչարյան, *Դ-վինը անտիկ ժամանակաշրջանում*, Եր., 1991թ. էջ, 42:


<sup>7</sup> ԴԱԵ, *իմ գրառումներից*, Աշոցք:

<sup>8</sup> Սո. Լիսիցյան, *Չանգեզուրի հայերը*, Եր., 1969, էջ 62:

<sup>9</sup> *Мифы народов мира*. т.1. М., 1991, стр.272.

<sup>10</sup> *Мифы народов мира*. т.2. М., 1992, стр. 19.

## ՏԱԽՏԱԿ I




Բենիամինի գտածոների մեջ կա նաև քարից ձու (տախտակ I, նկ. 5), որը, որպես երկրաչափական մարմին, ձվածիր է: Չուն գտնվել է սալարկղում և դրված է եղել ննջեցյալի ոտքերի տակ: Հայտնի է, որ անտիկ աշխարհում ձուն ուներ մաքրագործող գործառնություն և օգտագործվում էր թաղման ծիսակարգի հետ կապված զոհաբերությունների ժամանակ:<sup>11</sup> Այն ամեն ինչի սկիզբ էր, ծառայում էր մաքրագործող զոհաբերության համար, և ձուն չէին ուտում:<sup>12</sup> Հունաստանում այն կապված էր թաղման

<sup>11</sup> Շ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Արտաշատ II, Եր., 1981, էջ. 57

<sup>12</sup> Ե. Կ ա տ ա ն յ ա ն, Грунтовые некрополи воспорских городов V-IV в. в. до н. э. и местные их особенности. МИА 1959, ном. 69. стр. 268.

արարողակարգի հետ,<sup>13</sup> գալերի մոտ մույնպես: Մեն-ժերմենի հնագիտական քանդա-  
րանում պահվում են մ.թ. 1-2-րդ դարերով թվագրվող քարից ձվեր, որոնք ունեն հավի  
ձվի չափեր և գտնվել են տարբեր դամբարանադաշտերից<sup>14</sup>:

## ՏԱԽՏԱԿ II



Ազգագրական նյութերը փաստում են, որ ձվին հատկացվում էր չարքերին  
վանող հատկություն: Այս ծեսը 19-րդ դարում հայտնի էր ազգագրական տարբեր  
շրջաններում<sup>15</sup> և նպատակաճանաչված էր չար հայացքը ձվի վրա գցելուն: Նույն պահպա-  
նական նշանակությունն ունեւր անասունների ճակատին ձու խփելը: Չուն կարևորվում  
է նաև հարսանեկան ծեսի հետ կապված արարողություններում. փեսային ձվածեղ  
կերցնելը, հարսանեկան սինիների վրա ձվածեղ դնելը և այլն:<sup>16</sup> Երեխաներին *կոխ* հի-  
վանդությունից բուժելու նպատակով գերեզմանի վրա ոտքերը լվանալուց հետո  
այնտեղ ձու և մեխ էին քաղում,<sup>17</sup> որն անշուշտ մույն պահպանական իմաստն ունի:  
Շիրակում նորածին երեխային լողացնելիս այժմ էլ ձու են գցում տաշտի մեջ: Թաղման  
ծիսակարգում թեև հազվադեպ, բայց այժմ էլ հանդիպում է հանգուցյալի ոտքերի տակ  
քարն ձու դնելու սովորույթը, որն ըստ հավատալիքի, դանդաղեցնում է դիակի քայքայ-

<sup>13</sup> P. Nilsson, *Das Eium Tolenkult der Alten Archy fur Religions Wissenschaft: Leipzig, 1908, page, 530-540*

<sup>14</sup> Մեն ժերմենի (Ֆրանսիա) հնագիտական քանդարան, թիվ 28002, 25476, 65100, 65160, 65476:

<sup>15</sup> Մտ. Լիսիցյան, *նշվ. աշխ., էջ, 809:*

<sup>16</sup> Նույն տեղում, էջ, 810:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 50:

ման ընթացքը:<sup>18</sup> Ակնհայտ է ծեսի վերապրուկային բնույթը, ուր անկախ նորոյա տրանզավորումից, առկա է ձվին վերագրվող պահպանակի իմաստը:

Թիվ 2, 118 և 196 դամբարաններում գտնվել է մեկական վեգ (ճան): Գտնված բոլոր ճաները անմշակ են (տախտակ I, նկ.3): Ըստ կիրառության, վեգերը բաժանվում են խաղավեգերի և հմայիլների: Առաջինների շարքին են դասվում անմշակ վեգերը, իսկ երկրորդին՝ միջանցիկ անցքովները:<sup>19</sup> Կա կարծիք, թե վեգերը դամբարաններում են դրվել խորհրդանշելով գոհաբերված կենդանիներին:<sup>20</sup> Ճաները կամ վեգերը որպես խաղալիքներ և հմայիլներ հայտնի են Հայաստանի բրոնզիդարյան հուշարձաններից՝ Լորուտ (վաղ բրոնզ),<sup>21</sup> Մեծամոր (միջին բրոնզ)<sup>22</sup> և Լճաշեն (ուշ բրոնզ):<sup>23</sup> Ճաներ հայտնի են նաև Հայաստանի անտիկ հուշարձաններից: Գտնվել են Գառնիից:<sup>24</sup> Մշակված վեգեր գտնվել են Արտաշատի մ. թ.ա. 1-ին դարի դամբարաններից, ինչպես նաև շերտից:<sup>25</sup> Արտաշատից գտնվել է նաև բրոնզից ձուլածո ճան:<sup>26</sup> Ճանի ձևով պատրաստված կավանոթ է գտնվել Պանոսիկապեյից մ.թ.ա.4-րդ դար: Անոթի շուրթը կտրված է,<sup>27</sup> հավանաբար այն օգտագործվել է ծիսական հեղման համար, ապա՝ ըստ ծիսակարգի կտրվել:

Հերոդոտոսի վկայությամբ, երբ Մանեսի որդի Ատյունի օրոք Լյուդիայում սով էր, փրկության միջոցներ որոնելով, հնարեցին գառ և վեգ խաղալը:<sup>28</sup> Հավանաբար հետագայում վեգը կապվել է վերապրելու գաղափարի հետ, և պատմական հենքի վրա էլ առաջացել է ծիսական իմաստը: Եվ պատահական չէ, որ վեգ-հմայիլը հունական աշխարհում համարվել է հաջողություն և երջանկություն բերող:<sup>29</sup>

Այս ենթադրությունները հուշում են հայերենում փնտրել ճանի կամ վեգի նախնական իմաստը: *Ծնունդ* բառը հայերենում ծագում է *ճան* արմատից, ըստ հնդեվրոպական արմատից է ծագել հայերեն բնիկ *ծին* բառը: Այս արմատը նույնն է *ճանաչել* արմատի հետ:<sup>30</sup> *Ծին*-ը բնիկ հայ բառ է՝ ըստ արմատից, սանսկրիտերեն *jan* (ծնիլ), տարբեր լեզուներում *gne*, *gno*, *gen*, *gon* և այլն: Հայերենը ծագում է *gen* ձևից: Այս արմատը նույնն է *ճանաչել* արմատի հետ:<sup>31</sup> Նույն *ճանաչել* իմաստն ունի *ճան* արմատը, որ բնիկ հայ բառ է հնախոսական ըստ աղյալ արմատից (կազմված է *ճան* արմատից անանգակաձևով): *ճանաչել*-ի նախնական ձևն է *ճանացել*: Նախաձայն *ճ-*ն ազդվելով *ճ* ձայնից, վերածվել է *չ* ձևի:<sup>32</sup> Այսինքն, *ճան* - ը նույն *ճան* - ն է *ճ* - *ճ* ձայնափոխությամբ՝ կազմված *ճան* արմատից *ճ* անանգակաձևով, որի ազդեցությամբ հետո *ճ* ձայնը դարձել է *ճ*:<sup>33</sup> *Ծին* - *ճանաչել*, *ճան-ճանաչել*: Այսինքն, *ճան*-ը նշանակում է *ծնվել*, *ծնել*: Հետևաբար թաղման ծիսակարգում ճանն ունի *ծնվել* իմաստը և վերածնության խորհրդանիշ է:

Մի քանի դամբարաններում գտնվել են կատրիններ (թիվ 183 և 100) և բոժոժներ (թիվ 40, 43, 105):<sup>34</sup> Բոժոժները սովորական խխունջներ են, որ տարածված են նաև

<sup>18</sup> Գ.ԱՆ, *Իմ գրառումներից*, Աշոցք, գ. Թորոս:  
<sup>19</sup> Ն. Ե Ն զ Ի թ ա ը յ ա ն, *Հին Հայաստանի վեգ-հմայիլները և վեգ-խաղալիքները*, ԼՀԳ, 3, 1991, էջ 170:  
<sup>20</sup> Т. Х а ч а т р я н, *Древняя культура Ширака*. Ер., 1975, стр. 144.  
<sup>21</sup> Վ. Ա վ ե տ յ ա ն, *Լճաշենի 1984-85թթ. պեղումները* ԼՀԳ, 1986, էջ 92:  
<sup>22</sup> Է. Խ ա ն զ ա ղ յ ա ն, Կ. Մ կ ր տ չ չ ա ն, Է. Պ ա ը ս ա մ յ ա ն, *Մեծամոր*, Եր., 1973, էջ 21, 66:  
<sup>23</sup> Վ. Ա վ ե տ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 91:  
<sup>24</sup> Ж. Х а ч а т р я н, *Гарни*. Ер., 1976, стр. 9.  
<sup>25</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, *նշվ. աշխ.* էջ 58:  
<sup>26</sup> Б. А р а к е л я н, *Арташат I*, Ер., 1982, стр. 34.  
<sup>27</sup> Б. П е т е р с, *Косторезное дело в античных государствах Северного Причерноморья* М., 1986, стр. 81.  
<sup>28</sup> Հ ե ը ն ը ն ը ն ու, Եր., Գիրք I, 94:  
<sup>29</sup> Б. П е т е р с, *նույն տեղում*:  
<sup>30</sup> Հ Ա ճ ա յ ա ն, *Հայերեն արմատական բառարան, հ.1*, Եր., 1971, էջ 443:  
<sup>31</sup> Նույն տեղում, էջ 457:  
<sup>32</sup> Նույն տեղում, էջ 182:  
<sup>33</sup> Նույն տեղում, էջ 443:  
<sup>34</sup> Լ. Ե զ ա ն յ ա ն, *Շունը և ձին անտիկ Բենիամինի թաղման ծեսում*, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, հ. I, Գյումրի, 1998, էջ 53:

Հայաստանում: Կառուրին (տախտակ II, նկ.4), որ բերվում էր Հնդկական օվկիանոսից և Միջերկրական ծովից, անտիկ ժամանակաշրջանում լայնորեն օգտագործվում էր որպես զարդ: Նրան վերագրվում էր հնայական գործություն,<sup>35</sup> վերագրվում էր նաև չար աչքից պահպանելու գործություն<sup>36</sup> և օգտագործվում էր բուժական մոգության նպատակով:<sup>37</sup> Այս իրերի ծիսական իմաստի մեկնությունը հենց բառերի նշանակության մեջ է: Հայերենում հաճախ նույն իմաստն արտահայտվում է հոմանիշ բառերով: Լեզվի զարգացման ընթացքում շատ բառեր, նոր իմաստ ստանալով, կորցնում են նախնականի հետ կապը: Չանգակ և բոժոժ բառերը նախապես նշանակել են *իրև բժժանք, կախարդանք, հոռիք*:<sup>38</sup> Թաղման ծիսակարգում զանգակներն ու բոժոժները օգտագործվել են նախնական միացյալ իմաստով, որպես *բժժանք, հոռիք*, և, դրանով էլ պայմանավորված, պահպանակի դեր են կատարել:

Ուղեկցող նյութերի մեջ կան իրեր, որոնք թերի են կամ վնասված: Եվ հավանաբար միշտ չէ, որ այն կախված է հանգուցյալի սոցիալական վիճակից: Թիվ 183 դամբարանում զանգի վերևում դրված թասը տրամագծով կիսված է: Կիսված է նույն դամբարանից գտնված պիրիտից խորանարդաձև կախիկը, ինչպես նաև ապարանջաններից մեկը: Այս դամբարանը միակն է գտնված իրերի հարստությամբ ու բազմազանությամբ, և իրերի կտրված լինելը մեր կարծիքով չի կարող սոցիալական վիճակի արտահայտություն լինել: Թաղումը կատարվել է կարասի 20սմ լայնությամբ ժապավենների նավաձև շարվածքի վրա: Այսինքն՝ բացի ուղեկցող իրերից, բեկորային է նաև կարասը: Անկյունագծով կիսված է նաև Բենիամինի թիվ 184 դամբարանից գտնված կրաքարե իրը (տախտակ I, նկ. 4): Մեկ այլ հնայիլ (տախտակ II, նկ. 2), նույնպես կիսված (կտրված) գտնվել է թիվ 125 դամբարանից: Մի քանի դամբարանների ծածկասալերի վրա գտնված խեցեղենի բեկորները նույնպես ենթադրում են ծիսակարգի առկայություն:

Բրոնզիդարյան Հայաստանում դիամասնատման եղանակով կատարված որոշ թաղումների նյութեր դամբարանի մեջ դրվել են նախապես կտրելուց հետո:<sup>39</sup> Մեծամորի դամբարաններ վրա ևս հայտնաբերվել են խեցեղենի բեկորներ:<sup>40</sup> Եզիպտացիները Օսիրիսի հարությանը նպաստելու համար նրա գերեզմանի վրա խեցանոթների բեկորներ էին շարում:<sup>41</sup> Անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում ևս պահպանվել է հոգեհացի համար բերված անոթները կտրելու և կրակի մեջ նետելու ծիսակարգը: Ծիսակարգը կատարվել է նաև Բենիամինում: Արտաշատում այդ բեկորները որոշ դամբարաններում հասնում են մի քանի հարյուրի:<sup>42</sup> Թաղման ծիսակարգում օգտագործված ամանները կտրելու սովորույթը մինչև 60-ական թվականները պահպանվել էր նաև լենինականցիների մոտ: Ըստ սովորության՝ գերեզմանոցից ոչինչ տուն չէր տարվում և գերեզմանի քարերին խփելով կտրում էին շշերն ու բաժակները:<sup>43</sup>

Կապույտ ապակյա հոռուքի տրամագծով կիսված մի մասն է պահպանվել (տախտակ II, նկ.2 ): Իր ձևով այն հատած կոն է: Հարթ, ավելի լայն մակերեսը ողջ շրջագծով եզերված է կապույտ և սպիտակ ապակեթելի պարանազարդով, որից ներս շրջանը լայն սպիտակ ժապավենով բաժանված է չորս դաշտի: Խաչվող տրամագծերի՝ ժապավենով անջատված յուրաքանչյուր դաշտում պատկերված է եղել մեկ աչք, որը ենթադրում է չորս դաշտերից յուրաքանչյուրի կենտրոնում մեկական աչքի ընդելուզված լինելը: Աչքի պատկերն արված է սպիտակ և կապույտ շրջանների համադրմամբ,

<sup>35</sup> Ж Х а ч а т р я н , Гарни. Ер., 1976, стр. 109.

<sup>36</sup> Г. Б о р о з о в а, Некоторые материалы об амулетах-украшениях населения Средней Азии, в кн. Домусульманские верования и обряды в Средней Азии. М., 1978, стр. 88; Ն Ա վ ա գ յ ա ն , Հայկական տարագ, Եր., 1983, էջ 94; Գ. Միքայելյան, Նոր Բայազետ (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 11), Եր., 1980, էջ 142:

<sup>37</sup> В. Р т в е л а д з е, Могильник Кушанского времени в Ялангтуш-Тепе, СА, ном. 2, 1983, стр. 36.

<sup>38</sup> Հ. Ա ճ ա յ ա ն , նշվ. աշխ., էջ 448:

<sup>39</sup> Օ. Խ ն կ ի կ յ ա ն , Դամբարանադաշտեր Միսիանի շրջանում, ԼՀԳ, 1984, 9, էջ 59:

<sup>40</sup> Է. Խ ա ն գ ա ղ յ ա ն , Կ.Մ կ ռ տ չ յ ա ն , Է. Պ ա ռ ս ա մ յ ա ն , նշվ. աշխ., էջ 169:

<sup>41</sup> Э. Ц е р е в, Лунный бог. М., 1976, стр. 364.

<sup>42</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն , նշվ. աշխ., էջ 47:

<sup>43</sup> Կ.Մ Ն ղ ը ը յ ա ն , Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 6, Եր., 1974, էջ 249:

կենտրոնում ուռուցիկ, սև բիբով: Հուռուքը հավանաբար պատրաստվել է վզից կախելու համար, այդ պատճառով էլ դիտվող մակերեսն ավելի մեծ է: Միաժամանակ լուծվել է ծավալի և քաշի փոքրացման հարցը: Կոնաձև իրանի վրա պահպանված ուղղահայաց տրամագծով անցնող նույնատիպ անցքի հետ: Ընդելուզված մակերեսը եզրից դեպի կենտրոն թեքություն ունի, և կենտրոնի կտրված հատվածի վրա շոշափվում է փոքր գոգավորություն: Այստեղ ևս հավանաբար անցք է եղել: Իրը կտրված է հենց այս մասից, և մնում է միայն ենթադրություններ անել: Հուռուքի մակերեսին աչքերը շրջանաձև շարելը միայն գեղարվեստական լուծման արդյունք չէ, այլ նաև ցանկացած կողմից նայելիս պատկերի նույնատիպ ընկալում ապահովելը: Իսկ պատկերի բովանդակությունն ու նպատակը միասնական են: Պատկերին ուղղված չար հայացքը կարող է չեզոքանալ՝ դուրս թռչելով խաչվող անցքերից: Հուռուքն իր գուգահեռները չունի Հայաստանում: Պատրաստման տեխնիկայով, ոճական և գեղարվեստական առանձնահատկություններով այն սերտորեն առնչվում է առաջին դարերում պատրաստված աչքի ուլունքներին, որոնք գալիս են առաջին հազարամյակից և հանդիպում են անտիկ աշխարհի բոլոր երկրներում:<sup>44</sup> Ենթադրվում է, որ աչքի ուլունքները արտադրվել են Եգիպտոսում և Փյունիկիայում<sup>45</sup>, և բացառված չէ, որ այս հուռուքը նույն ծագումն ունենա: Մյուսը հմայիլը, որը նույնպես թերի է, նախապես խորանարդի ձև է ունեցել (տախտակ II, նկ.5): Պահպանված մասի վրա կա մի անցք, նկատելի է նաև մեկ այլ անցքի հետք: Հավանաբար այս հմայիլը ևս խաչվող անցքեր է ունեցել:

Չար աչքի ազդեցության մասին հավատալիքներ հայտնի են բոլոր ժողովուրդների դիցաբանական ընկալումներում և պահպանվել են ազգագրական տարբեր ծեսերում և սովորույթներում: Հավատալիքի մասին հնագույն գրավոր վկայությունը գտնում ենք Խորենացու մոտ: Պատմելով Երվանդի մասին, Խորենացին ավելացնում է. « *Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչարջացն սովորութիւն ունել սպասատրացն արքունի՝ վէմս որձաքարեայ ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն* »:<sup>46</sup> Դիցաբանական պատումը կոնկրետ կերպարի մեջ անձնավորել է չար աչքի բացասական ուժի ժողովրդական պատկերացումը:

Բենիամինի դամբարանադաշտից գտնվել է նաև հայելի (տախտակ II, նկ.1), որն ունի կտրատված եզրեր: Հայաստանի համաժամանակյա հուշարձաններից հայելիները գտնվել են Արտաշատից, Վաղարշապատից<sup>47</sup> և Գառնիից:<sup>48</sup> Արտաշատի հայելիները նույնպես բրոնզի թիթեղից են, անգարդ և, բացառությամբ մեկի, գտնվել են խիստ քայքայված վիճակում:<sup>49</sup> Արտաշատի դամբարաններում հայելիների առկայությունն ունի պաշտամունքային նշանակություն և կապվում է անդրշիրիմյան պատկերացումների հետ:<sup>50</sup> Հայելի գտնվել է նաև Անուշավանից: Բենիամինում պեղված ավելի քան 250 դամբարաններից միայն մի հայելի է գտնվել: Դամբարանադաշտում հիմնականում միջին և աղքատիկ թաղումներ են, և բնական է հայելու եզակի լինելը: Նույնիսկ հարուստ թաղումներ ունեցող դամբարանադաշտերում հայելիներ հազվադեպ են հանդիպում: Ույզարակում, որտեղ նույնիսկ հարուստ դամբարաններ են պեղվել, հայելիներ գտնվել են բացառապես միայն քրմուհիների դամբարաններից:<sup>51</sup>

Իրանում Անահիտին և Միհրին նվիրված տաճարից ևս գտնվել են հայելիներ, որոնք կանացի մոտավոր կերպարանք ունեն: Որպես կոթ պատկերված են ոտքերը, գլխի փոխարեն ամրացված է հայելու սկավառակը: Ըստ Գիրշմանի, հայելիները խոր-

<sup>44</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 81:

<sup>45</sup> М. А лек сее в а, *Античные бусы Северного Причерноморья. САИ, вып.1-12, М., 1978, стр. 46.*

<sup>46</sup> Մ ն վ ս ե ս Խ ո ռ ե ն ա ջ ի, *Պատմություն Հայոց, Եր., 1990, Գ II, ԽԲ:*

<sup>47</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 85:

<sup>48</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 97:

<sup>49</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 67:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>51</sup> О. В и ш н е в с к а я, *Культура Сакских племен низовьев Сырдарьи в VII-V вв. до н. э. Труды ХАЭЭ VIII. М., 1973, стр. 85.*

հրդանշում են Անահիտին և Միհրին:<sup>52</sup> Միջին Ասիայի տարբեր հնավայրերի պեղումներից հայտնի են հայելին ձեռքին կանացի արձանիկներ:<sup>53</sup> Հավանաբար հայելին եղել է կանացի աստվածության ատրիբուտ, բայց եղել է կապված նաև արևի հետ: Մրա օգտին է խոսում նաև հայելուն վերագրված՝ գերեզման լուսավորելու հավատալիքը:<sup>54</sup> Հայելին հավանաբար կապված է ավելի հին հավատալիքի հետ, որի համաձայն հայելուն վերագրվում էր նաև պտղաբերության բարձրացման հատկանիշ: Այս գաղափարի հետ կապվում է հայկական հավատալիքներում հայելուն իզական հատկանիշ և միաժամանակ պտղաբերության ուժ վերագրելը: Ըստ հայկական ժողովրդական հավատալիքների, եթե առկահատիկի ժամանակ երեխան հայելի վերցներ, ապա հաջորդ երեխան աղջիկ էր ծնվելու:<sup>55</sup> Հավանաբար պտղաբերության հետ է կապվում նաև հայկական հարսանեկան նվագարաններից պարկապուկի վրա հայելի ամրացնելու սովորույթը: Իրանում, կապված հարսանեկան հայելու հետ, կար մի սովորույթ, ըստ որի, եթե այդ հայելին կտորվեր, նշանակում էր հարսի և փեսայի մահ: <sup>56</sup>Ման հավատալիք ունեն նաև տաջիկները:<sup>57</sup> Հայելու կտորվելը չարագուշակ է համարվում նաև հայերի մոտ:<sup>58</sup>

Կտորված հայելիներ կամ հայելու կտորներ գտնվել են նաև սարմատական դամբարաններից<sup>59</sup>, և ենթադրվում է, թե սարմատների համար հայելին ունեցել է մոգական նշանակություն, նաև մոգական ազդեցություն: Այս իսկ պատճառով էլ հայելին կտորում էին և նոր միայն դնում հանգուցյալի հետ՝ մոգական ուժերը համապատասխանեցնելով նոր վիճակին:<sup>60</sup> Քանի որ հայելին մոգական ուժերի կրողն է և իր վրա կրում է մարդու պատկերը, ուրեմն հայելու տիրոջ մահից հետո այն պիտի կտորվեր: Այսինքն կտորված հայելին խորհրդանշում էր մեռած մարդուն: Սարմատական քարոմներում բոլոր հայելիները վնասված են, և ըստ Խազանովի, դա արվել է հանգուցյալի հոգին ազատելու համար:

Հայելիների բեկորների օգտագործումը բնորոշ է նաև Միհրին: Հայելիները կտորում էին նպատակադրված, իրար հիշելու համար, հատկապես ամուսնուց, հարազատների երկար ժամանակով բաժանվելիս:<sup>61</sup> Քանի որ հայելին ունի մոգական ուժ, ամբողջ մասի բաժանելով, հավանաբար մասն իր հետ տանում էր ամբողջի մի մասնիկը, այսինքն իրարից բաժանվող հարազատները փոխադարձ կապի և ազդեցության մեջ գտնվելով, բաժանվելիս էլ պահում էին այդ կապը: Հայելին այդ կապի կրողն էր ու պահողը: Հայելու կտորվելը տիրոջ մահը ենթադրող հավատալիք է շատ ժողովուրդների մոտ և պահպանվել Իրանում, նաև տաջիկների և ռուսների մոտ:<sup>62</sup> Հայելու մոգական ուժի մասին հավատալիքներ կա նաև հայերիս մոտ, և հայելու կտորվելը նույնպես տան անդամի մահ է ենթադրում: Ըստ այդմ էլ պիտի ենթադրել, թե հանգուցյալի տանը հայելին փակելու հայերի սովորույթը կապվում է մոգական ուժի փոխներգործության շնորհիվ մեռածի պատկերը հայելու մեջ չտպավորվելու և ողջերին չվնասելու գաղափարի հետ: Հավատալիքը բխում է մոտ մարդու մահվան ժամանակ հայելին կտորելու սովորույթից:<sup>63</sup> Հայելին վնասելը կամ կտորելը կատարվում էր հանգուցյալի հոգին ողջերի աշխարհը չար մտադրություններով ներխուժելուց ետ պահելու համար: Քանի որ հայելին իր մեջ կրել էր նաև հանգուցյալի պատկերը, ուրեմն այն վնասելով, վնասում

<sup>52</sup> R. Girshman, *Iran. Terrasses sacrees. Bard -e Nechandeh et Masdjidi Solaiman. Paris, 1976 v.1) page 117-118.*

<sup>53</sup> А. Литвинский, *Орудия труда и утварь из могильников Западной Ферганы, М., 1978, стр. 111.*

<sup>54</sup> M. Loeffler Delachaux, *Le cercle. Gen. 1947, page 313.*

<sup>55</sup> Ե. Լալաջան, *Հուդարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, «Տեղեկագիր» ՀՄԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., 1928, 9, էջ 125:*

<sup>56</sup> С. Хедолят, *Нейрангистан. (Преднеазиатский этно-сворник). т. 1, М., 1958, стр. 258:*

<sup>57</sup> Б. Литвинский, *նշվ. աշխ., էջ 99:*

<sup>58</sup> ԴԱՆ, *իմ գրառումներից, Գյումրի:*

<sup>59</sup> Т. Кузнецова, *Зеркало в погребальных обрядах Сарматов. СА. 1988, ном. 4, стр. 52-61.*

<sup>60</sup> А. Хазанов, *Религиозно— магическое понимание зеркал у сарматов СЭ. 1964, ном 3, стр. 91—94.*

<sup>61</sup> А. Маракеев, *Китайские бронзы из Басандайски. Томск. 1947, стр. 171.*

<sup>62</sup> С. Хедолят, *նշվ. աշխ., էջ 253.*

<sup>63</sup> Б. Литвинский, *Зеркало в верованиях древних ферганцев. СЭ. 1964, ном. 3. стр.99.*

էր նաև հանգուցյալին և դրանով կանխում նրա վերադարձը: Ծիսակարգը պահպանել և մեզ է հասցրել մոզական գործողության հիմնական գծերը, որոնցում հայելու մահ նախորդել է տիրոջ մահվանը: Ելնելով վերոհիշյալից, կարելի է ենթադրել, որ հայելին նպատակամղված ձևով վնասելը կապված է թաղման ծեսի հետ և ողջերի վրա մոզական ազդեցության հետևանք է: Հայելին, որը տիրոջ արտացոլումն է պարունակում, հավանաբար դիտվել է նաև որպես նրա հոգու կրողը և ըստ այդմ էլ վնասվել է ողջերի աշխարհի ննջեցյալի վերադարձը կանխելու համար: Պատերազմի դաշտում, օտարության մեջ գտնվող հարազատների հետ հաղորդակցվելու համար հայելին դնում էին ջրի մոտ և գուշակություն անում:<sup>64</sup> Հեքիաթներում հայելու վիճակի փոփոխությունը՝ խամրելը, նախանշում էր հերոսի վիճակի վատթարացումը: Գուշակության մեջ հայելին ընկալվում է որպես կյանքի և բախտի պայծառության կամ խամրելու խորհրդանիշ:<sup>65</sup> Այս ամենը խոսում է մոզության մասին, որը բնորոշվում է որպես կոնտազիոզ ըստ Ֆրեզերի,<sup>66</sup> կամ պարգիանալ ըստ այլ հետազոտողների:<sup>67</sup> Այստեղ գործողությունն ուղղված է ոչ թե անմիջապես օբյեկտին, այլ նրա փոխարինողին և նրա միջոցով՝ արդեն հենց իրեն՝ օբյեկտին: Ըստ ամենայնի, հենց սրանով էլ կարելի է բացատրել Բենիամինում և Անուշավանում հայելիների վնասված լինելը: Վնասված հայելին փաստորեն մոզական գործողության արդյունք է՝ ուղղված ողջերին, և հոգեբանական որոշակի մթնոլորտն էլ ծնել է նման ծիսակարգը:

Բենիամինի անտիկ դամբարանների ուղեկցող որոշ իրերի ծիսական բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ինչպես ծեսն է նյութականացված, այնպես էլ ծիսականացված է ուղեկցող նյութը: Դամբարանում հայտնաբերված ամեն մի իր որոշակի ծիսական տարրի կրող է: Ունենալով տարբեր ակունքներից սերող ծիսական տարրեր բովանդակություն՝ բոլոր իրերը պահպանակի դեր են կատարել և միաժամանակ նպատակամղված են մի հիմնական գաղափարի՝ վերածնության ապահովմանը:

#### РИТУАЛЬНЫЕ ПРЕДМЕТЫ В АНТИЧНЫХ ЗАХОРОНЕНИЯХ БЕНИАМИНСКОГО МОГИЛЬНИКА

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Л. Еганян \_\_\_\_\_

*В захоронениях Бениаминского античного могильника 2–5 в.в. нашей эры найдены каменные предметы разных геометрических форм, которые не имеют бытового назначения. В нескольких захоронениях сопровождающий материал частично поврежден или поломан.*

*При сравнении мифологических, этнографических материалов с данными ритуала захоронений античного могильника показывает, что каждая деталь ритуала, каждый предмет имеет свою функцию и определенную цель в ритуальном процессе. Роль зеркала, каури, астрагала, ритуальных камней различных геометрических форм заключается в предотвращении порчи и злых сил, а весь ритуальный комплекс процесса захоронения подчинен главному – идее возрождения.*

<sup>64</sup> ԴԱՆ, իմ գրառումներից, Աշոցք:

<sup>65</sup> ԴԱՆ, իմ գրառումներից, Գյումրի:

<sup>66</sup> Д. Фрезер, Золотая ветвь. М., 1980, стр. 49-60.

<sup>67</sup> С. Токарев, Сущность и происхождение магии. Труды ИЭ. 1959, стр. 22.

РАСКОПКИ АНТИЧНОЙ УСАДЬБЫ У с. АНУШАВАН

Летом 1988-1989 гг. новостроечный отдел Института археологии и этнографии Академии Наук Армении провел раскопки у с. Анушаван, вблизи г. Артик. Раскопки проводились в связи с мелиоративными работами в местности «Սլի-տիւ իրի», где находились древние сооружения. В работе экспедиции принимал активное участие главный хранитель фондов музея «Кумайри» С.А. Тер-Маркрян. Архитектурные обмеры проведены архитектором О. Санамяном.<sup>1</sup>

Исследуемый памятник располагался на большом высоком холме на высоте 1980 м. от уровня моря, находящимся к югу от селения. С трех сторон холм имеет крутые склоны, с южной стороны он примыкает широкой перемычкой к плато. С восточной стороны у подножья холма протекает небольшая горная речка. По другую сторону речки расположены сельские усадьбы. Следы древних строений сосредоточены на вершине холма и в месте соединения холма с плато. Отдельные небольшие древние сооружения прослеживаются и по другую сторону реки.

Холм в нижней и средней части был опоясан двумя рядами ограды из огромных валунов. Часть такой же ограды, но очень сильно разрушенной прослеживается также на самой южной части холма. Значительная часть территории древнего памятника была отведена под пашню и уничтожена сельскохозяйственными работами. Особенно сильно пострадала южная часть холма, где по-видимому, находились какие-то фортификационные сооружения защищавшие проход к центру холма. Лучшая сохранность культурного слоя древнего памятника прослеживалась на западной стороне северной части вершины холма. Здесь с наружной стороны западная часть памятника, представлявшая наружную стену, сохранилась местами до 150 см в высоту.

В результате археологических работ выяснилось, что в древности основная часть памятника с примыкавшим с юга двором, простиравшимся до фортификационной южной стены, занимала 0,5 га. В то же время, хотя ограды охватывали весь холм, никаких жилых построек, кроме сооружения на вершине, на других частях холма не существовала. Центральное ядро памятника представляло собой одно большое многокомнатное здание с толстыми внешними стенами. Характер строений памятника представляет большой интерес, так как, в данном случае, мы имеем новый тип памятника античной культуры Армении.


Раскопки показали, что памятник однослойный, с двумя культурными и соответственно с двумя строительными напластованиями. Наибольшая толщина культурного слоя внутри здания достигала 80 см, при средней толщине 40-60 см. Памятник был основан во 2 в. до н.э. и прекратил существование в 1 в. н.э.

В первый строительный период здание представляло собой прямоугольник шириной около 25 м и длиной 55 м., вытянутый с севера на юг. Наружная стена здания имела большую толщину, колеблясь от 1,5 м. до 2 м. Внутренние стены имели толщину 120-140 см. Все здание построено из рваного камня, имевшего в угловых частях груботесанную поверхность. Стены сложены в виде двупанцирной кладки на глиняном растворе, с употреблением больших камней снаружи и с забутовкой средней части мелкими камнями. Внешняя, западная,

<sup>1</sup> Ֆ. Տեր-Մարտիրոսյան, Ս. Տեր-Մարգարյան. Անտիկ Անուշավանի պեղումները. Հայկական ԽՍՀ-ում 1987-1988 թթ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան: Չեկոցումների թեզիսներ. Եր., 1989, էջ 56; Ֆ. Տեր-Մարտիրոսյան, Ս. Տեր-Մարգարյան. Անտիկ Անուշավանի պեղումները. Հայկական ԽՍՀ-ում 1989-1990 թթ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան: Չեկոցումների թեզիսներ. Եր., 1990:

длинная стена была глухой. В южной части здания, судя по следам кладки из больших крупных камней, находилась квадратная башня, фланкировавшая здание с этой стороны. К сожалению она была полностью разрушена и завалена огромными глыбами камней, собранными при мелиоративных работах, что исключало возможность не только проведения раскопок, но и нанесения ее очертаний на чертеже. Восточная часть здания сохранилась плохо, на уровне камней фундамента и была лишь околтурена.

*Ситуационная схема памятников с. Анушаван*



В 1988-1989 гг был заложен раскоп в северо-западной части здания шириной в 35 метров и длиной в 40м. В северной стороне здания было открыто два прохода, ведущие в здание. Интересно отметить, что прямоугольное по форме здание было внутри разделено вдоль длины на две части глухой продольной стеной. В результате такой планировки внутри здания, с восточной и западной стороны, образовались два длинных коридорного типа проема, каждый из которых в свою очередь подразделялся на более мелкие помещения. Отметим, что аналогичное планировочное решение было засвидетельствовано и для ряда строений античного Ширакавана<sup>2</sup> и для ряда зданий Арташата, древней столицы Армении.<sup>3</sup> Наиболее крупные по размерам комнаты находились в северном проеме запад-

<sup>2</sup> Раскопки Ф. Тер-Мартirosова, материал готовится к публикации.

<sup>3</sup> А. Тоникян. О новом типе жилого дома из раскопок древнего Арташата. Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Тезисы докладов. Ер., 1988, стр. 87-89.

ного коридорного отсека. Первая комната имела размеры 8 х 6 м, а следующая, вторая комната имела размеры 6 х 4 м. Полы в этих помещениях имели Г-образную вымостку из каменных плит. В настил пола первой большой комнаты вмонтированы две каменные базы из под деревянных столбов. Одна база имела квадратный плинт с невысоким цилиндрическим выступом. Другая база имела цилиндрическую форму. Полы остальных помещений здания были глинобитные, однако дорожка коридора, соединявшего комнаты, до центральной части здания также была вымощена плитами. Можно предположить, что первые две комнаты служили стойлом для скота. Во второй комнате вдоль перегородочной стены, отделявшей ее от первой комнаты, была сооружена, скамья, высотой от пола на 40 см., с покрытием каменными плитами. Остальные комнаты, шедшие вдоль коридора, имели маленькие размеры в 6 или 8 кв.м. Ряд смежных комнат не имел дверных проемов, отделяясь одна от другой перегородками и выходя к коридору открытыми проемами. Стационарных очагов в здании встречено не было. Но во многих помещениях были обнаружены фрагменты переносных очагов в виде небольших, подпрямоугольной формы, сковородок толстого черепка. В помещениях был также найден разнообразный материал, в основном керамика, среди которой, как датирующая слой 2 в. до н.э., выступает расписная керамика коричневого ангоба с расписным орнаментом, нанесенным красной краской.

На втором этапе жизни памятника, который, судя по материалам, начался в 1 в. до н.э. и продолжался, вероятно, до второй половины 1 в.н.э., прослеживается расширение площади здания. К наружным стенам большого строения с восточной и северной стороны были пристроены новые большие помещения прямоугольной формы. Стены этих помещений имели меньшую толщину в 0,80см. Судя по полному отсутствию материала в этих помещениях, можно предположить, что они являлись складскими помещениями провианта для скота. Так как южная башня сильно разрушена, и была недоступна для раскопок, то трудно утвердительно говорить о времени ее сооружения. Однако тот факт, что камни ее основания не были связаны связкой с камнями здания, позволяет говорить, что она была сооружена отдельно, позднее постройки здания. Интересно отметить, что здание пытались укрепить также и с северной стороны. Здесь, в северо-западном углу здания, с наружной стороны, примыкая к нему под углом в 45 градусов, была возведена в виде выступа в 2м стена из крупных валунов. Данный выступ играл роль разделителя, мешая нападавшим воинским отрядам сосредотачивать силы и заставляя их разделяться на более мелкие группы.


Центральное здание, вероятно, было уничтожено в результате военного нашествия. Об этом свидетельствует слой пепла от пожара, перекрывавший верхний культурный слой во всех сооружениях.

В северной части подножья холма, местными жителями до начала археологических раскопок было раскрыто несколько захоронений в карасах без сопутствующего материала. Данные захоронения, вероятно следует относить к первому этапу жизни здания. Во время раскопок здания экспедицией были обнаружены 4 погребения, относящиеся к второму этапу жизни на памятке. Из них три погребения были обнаружены под полами комнат. Два захоронения были детскими. Одно захоронение было произведено в небольшом глинянном горшке, продолжая традицию захоронения в карасах. Другое захоронение-грунтовое было открыто как кучка сложенных костей. Интерес представляет захоронение взрослого человека. Захоронение было устроено у внешней стены здания в могиле в виде примыкавшего к стене полукруга выложенного из булыжников. Погребенный лежал в полускорченном состоянии, обращенный верхней частью туловища на восток. Голова погребенного лежала отдельно от тела, повернутая лицевой частью также на восток. Это позволяет предполагать, что при погребении

был совершен обряд расчленения покойника. В заполнении могилы были найдены два куска обсидиана. Рядом лежали лепная глиняная грубая корчага и глиняный горшочек с носиком. Ритуал захоронения расчлененного трупа и положение обсидиана в могилу восходит к глубокой древности и доживает до античного периода. Горшочек с носиком, по своей форме, относится к эпохе античности. Захоронения в домах под полами характерны, для передневосточных культур, в античное время они применялись при погребении неполноправных членов общины, детей и домашних рабов.<sup>4</sup> Четвертое захоронение было обнаружено за пределами здания, в 4 метрах от западной наружной стены. Могила была устроена из больших подквадратной формы груботесанных плит, поставленных ребром вдоль стен прямоугольной могилы. Плиты перекрытия отсутствовали. Погребенный лежал в слегка полускорченном состоянии, ориентированный головой на юг. Сопровождающего материала в могиле не было.

Табл. 1

Табл. 2




Интересно рассмотрение археологического материала обнаруженного при раскопках здания. Нижний слой, как указывалось, характеризуется находками керамики коричневого ангоба с краснорасписным орнаментом. В большей части орнамент представляет собой широкую полосу красной краски в верхней части сосуда. Таковы большие миски с утончающимся в верхней части вертикальным венчиком, а также миска со слегка загнутым во внутрь венчиком и неглубокая миска с загнутым во внутрь венчиком и небольшим трубчатым носиком. Из горшков интересен большой горшок с носиком. Следует отметить, что при небольшом числе находок на памятнике, сравнительно велико число керамических сосудов. В здании в нижнем слое найдены также фрагменты лютерии с широкой горизонтально расположенной губкой венчика, фрагмент фиалы, несколько фраг-

<sup>4</sup> Ф. Тер-Мартirosов, Памятник классической античности, Вестник Ереванского университета, №3, 1993, стр. 71.

ментов большого парадного караса желтого ангоба с красным расписным орнаментом и фрагмент – горлышко фляги. Как для нижнего, так и для верхнего слоя характерны фрагменты переносных очагов. Наиболее распространенные материалы нижнего слоя представлены на таблице 1.

Материал верхнего слоя более разнообразен. Прежде всего отметим находку камней зернотерки. Верхний камень зернотерки имеет прямоугольные очертания, четко выраженную ложбинку и сквозные отверстия по краям для крепления ручки. Зернотерка найдена в западном отсеке здания. Здесь же найден комплекс предметов, связанных с ткачеством. Это грузило из пемзы в виде диска овальной формы со сквозным отверстием в центре. Центральная часть диска имеет потертости от наматывания нити и приобрело форму восьмерки. Вместе с кругилом найден фрагмент глиняной пряслицы и костяная игла. В центральной части здания найдено небольшое глиняное сопло, для раздувания огня. (табл. 3, таб.5,4)



Для коллекции керамики верхнего слоя характерно наличие полусферических чаш красного ангоба с росписью черной краской. Тут же найдены горшки и миски с носиком, фрагменты больших тонкостенных сосудов со ступенчато профилированным венчиком и миска с рельефновыпуклым, опоясавшим тулово, пояском, а также фрагменты сосудов с кольцевидным поддоном. (таб.2)

Подчеркнем, находки фрагментов венчиков большого блюда, подражающего краснолаковым блюдам пергамского производства, и фрагменты таких же краснолаковых мисок. (таб.4, 4;6:7). Сосуды этого типа встречены в слоях Iв до н.э. – I в.н.э. в Арташате<sup>5</sup> и Ширакаване.<sup>6</sup> Большой интерес представляют также находки фрагмента скифоса чернолощенного черепка местного производства (таб.4,5) и фрагмента блюда с голубой глазурью. Находки фрагментов вышеперечисленных сосудов показывают, что обитатели памятника не только были хорошо знакомы с культурой больших городов и поселений Армении, но и были в состоянии приобретать репрезентивную посуду, бывшую в то время показателем принадлежности к знати страны.

Особенно следует выделить находки из небольшого помещения в центральной части восточного блока здания. Это фрагмент ножки вазы серого черепка, украшенной в нижней части вдавленным семечковидным орнаментом. (таб.4,1). Тут же был найден фрагмент чернолощенного зооморфного сосуда. Фрагмент представляет коническую ножку, завершающуюся трапецевидной лапкой. Судя по форме ножки, можно предполагать, что зооморфный сосуд представлял собой керамический ритон в виде утки. (таб.5,1). Отмечу, что зооморфный сосуд, сохранившийся также фрагментарно, был найден в одном из погребений эллинистического времени в с.Карнут.<sup>7</sup> Из находок выделяется фрагмент красноангобированного кувшина, украшенный на шейке сосуда рельефным орнаментом в виде головы козла. (таб.4,2). Аналогичный рельефный орнамент представляющий шествие козлов встречен на красноангобированном культовом кубке из святилища храмового поселения Ширакаван.<sup>8</sup> Очень интересен обнаруженный здесь фрагмент полусферического кубка черного лощения, украшенный процарапанным орнаментом в виде трех рядов треугольников, из которых нижний ряд представляет цепь из вписанных треугольников. (таб. 5,2). Отмечу, что орнамент традиционен как для до античного периода, а также по форме и для расписных эллинистических сосудов, в то время как манера нанесения орнамента сохраняет традиции предантичного периода. Украшением находок материалов верхнего слоя является терракотовая статуэтка, изображающая сидящего молодого мужчину. Поверхность статуэтки потерта, что привело к некоторой утрате четкости линий изображения. Статуэтка имеет высокую подставку, слегка поврежденную в нижней части. Изображение человеческой фигуры сохранилось достаточно хорошо. Как это характерно для терракотовых статуэток античной Армении, изображение в высоком рельефе представлено на лицевой стороне. Задняя сторона статуэтки представляет собой закругленную ровную поверхность. На передней части, как было уже сказано помещено изображение молодого мужчины в сидячей позе с подвинутой под себя одной ногой. Голова слегка наклонена вперед. Лицо безбородое с мягкими чертами. Потертость статуэтки не позволяет определить четко выражение глаз, но изображение улыбки на губах позволяет уверенно говорить, что изображенный предстает как дружелюбный персонаж. Мужчина имеет пышную прическу в виде рассыпающихся к плечам волос и надвигающийся на лот высоко зачесанный валик чуба. Верхняя часть тулова с широкими плечами обнажена. Ноги мужчины скрещены и он как бы восседает на плоскости земли. Правая нога согнута в приподнятом колене. На нем лежит правая рука в которой мужчина держит какой-то предмет. Из-за сильной потертости нельзя дать точную атрибуцию данного предмета. По своей форме он напоминает выпуклую трехчастную гроздь винограда. Поза фигуры статуэтки характерна для статуарных изображений писцов в древнем и эллинистическом Египте и

<sup>5</sup> ժ. Խ շ չ ի տ ր յ ն ւ, Արտաշատ II. Եր., 1981, էջ 108-115, նկ.37:

<sup>6</sup> Ֆ. Տ Ե ր – Մ ի ր տ ի ր ու ն Վ, Անտիկ Շիրակալան. Գիտություն և տեխնիկա. Եր., 1984. N7:

<sup>7</sup> Материал находится в краеведческом музее Ширака и подготовлен к печати.

<sup>8</sup> Ֆ. Տ Ե ր – Մ ի ր տ ի ր ու ն Վ, Անտիկ Շիրակալան. Գիտություն և տեխնիկա. Եր., 1984. N7:

изображений мудрецов и бога Будды в искусстве Индии и Средней Азии. Но если для статуэток писцов характерна прямая высокоподнятая постановка головы и прямоустремленный взор глаз, то для в изображениях Будды встречаются фигуры со слегка опущенной головой и потупленным взглядом. Поэтому представляется, что основой для образа нашей терракоты была скорее фигура Будды. Как показывает рассмотрение терракотовых статуэток Армении все они передают изображения богов или культовых служащих. Это позволяет определить статуэтку как изображение бога мудрости Тира<sup>9</sup>. Подчеркнем, что скульптурные антропоморфные изображения богов в Армении на предыдущих этапах характеризуются архаичностью построения фигур, а большинство из них передано в зооморфном облике. Поэтому в эллинистическую эпоху, когда происходит переход к господству антропоморфных изображений богов, многие образы привносятся в страну в готовом облике. Вероятно разработка образа бога Тира проходила на территориях Парфии, где были характерны культурные взаимосвязи с Бактрией и Индией. Говоря о культе бога Тира, отмечу, что в настоящее время следует отказаться от существовавшего определения Тира как бога смерти.<sup>10</sup> Судя по форме имени Тиридат-Трдат, Тиран, распространенного среди царей династии Аршакидов, можно утверждать, что культ бога Тира в Армении укрепился в парфянский период. Вероятно правящая в Армении ветвь аршакидской династии принадлежала до воцарения в Армении к младшей ветви, носившей жреческие обязанности, о чем свидетельствует и Тацит<sup>11</sup>. Утвердившись на армянском престоле она тем не менее сохранила жреческие традиции, что обусловило традиционное употребление имени Тиридат.

О том, что в поселении были и другие терракотовые статуэтки свидетельствует находка в центральной комнате восточной части комплекса фрагмента подставки от еще одной терракоты. К сожалению, фигурка статуэтки этой терракоты не сохранилась. (таб.5,3). Вместе с ней был найден альчик с процарапанным на поверхности косым крестом имевшим отверстие в верхнем правом углу. Это свидетельствует, на то, что он использовался как амулет-подвеска. (таб.4,8;9) Здесь же найдено несколько фаланг овцы, заканчивавшихся искусственно сделанным крестообразным распилом. Такие фаланги использовались как амулеты и в виде печатей для получения оттисков на ритуальных предметах, в том числе и на хлебе. Таким образом, к сожалению, это небольшое по размерам помещение плохо сохранилось, но комплекс находок здесь ритуальных сосудов, терракотовых статуэток с антропоморфным изображением бога и зооморфных сосудов, свидетельствуют в пользу предположения, что оно являлось домашним святилищем..

Главное здания усадьбы, представляло собой дом из двух отсеков, в которых комнаты располагались по коридорной системе. При публикации этого типа домов, обнаруженных в Арташате в слоях 1-2 вв. было высказано предположение, что такие дома появились в Арташате, при новых застройках после разрушений, когда жители из-за нехватки пространства вынуждены были строить дома с небольшими помещениями по коридорной системе.<sup>12</sup> Более ранняя датировка усадьбы, и ее свободное в пространстве расположение позволяют выдвинуть другое предположение для сооружения домов этого типа. Усадьба несомненно являлась местом обитания большой семьи. Возможно, что разделение дома на блоки было обусловлено процессом выделением малых семей. Не исключено, что появление домов коридорного типа в Арташате отразило процесс переселения

<sup>9</sup> Ф. Тер – Мартиросов, *Медвежонок и другие персонажи армянской мифологии*, Ер., 1996, стр 47.

<sup>10</sup> Ф. Тер – Мартиросов, *Образование царства Армения в контексте исторических данных и исторической памяти*, Ер.1995, стр.64.

<sup>11</sup> *Cass. Dio*, LXIII, 1-7.

<sup>12</sup> А. Тоникян. *Նշվ. շջի.*

какой-то части новой земельной знати в город, где она сооружала дома в традиционной форме. Не исключено однако, что этот тип зданий обусловлен соображениями технического характера с целью экономного расходования деревянных сооружений крыши дома.

Однако все высказанные по данному вопросу предположения нуждаются в дальнейшем уточнении.

Судя по форме укреплений, можно говорить, что они были предназначены для отражения небольшого разбойничьего набега, но не предназначались для ведения долговременных военных действий. Поэтому, памятник не может быть определен как крепостное сооружение. В целом данные раскопок памятника на холме позволяют определить его как усадьбу, состоявшую из укрепленного большого дома и окружающей его территории. Время основания усадьбы – 2в. до н.э. – синхронно времени земельной реформы, проведенной царем Арташесом.<sup>13</sup> Можно утвердительно говорить, что проживавшая ранее в сельских поселениях земельная знать, ставшая в результате реформы собственницей земельных владений, стала сооружать укрепленные усадьбы, прообразы будущих феодальных замков. То есть данные раскопок отражают процесс расширения прав собственности на землю, выделение новой земельной знати. Как представляется, к этому же типу поселений относится открытый у селения Неркин Базмаберд памятник, условно определяемый как воинское поселение.<sup>14</sup>

Обнаружение античной усадьбы у селения Анушаван позволяет сопоставить процессы развития частной земельной собственности в Армении с аналогичными процессами в других странах эллинистического мира.<sup>15</sup> Таким образом, памятник у селения Анушаван является важным объектом для понимания процессов развития истории и культуры Армении античной эпохи.

## ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԱՆՏԻԿ ԿԱԼՎԱԾԱՏԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

\_\_\_\_\_ *Ամփոփում* \_\_\_\_\_

\_\_\_\_\_ *Ֆ. Տեր - Մարտիրոսով* \_\_\_\_\_

1988–1989թթ. ամռանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներ կատարեց Արթիկ քաղաքի մոտ գտնվող Անուշավան գյուղում: Հուշարձանի կենտրոնական մասը զբաղեցնում է բլուրի զագաթը: Բլուրը ստորին և միջին հատվածներում գոտևորված է երկու շարք ահռելի զետաքարերով: Հուշարձանի միջուկը իրենից բազմաթիվ սենյակներով մի մեծ շինություն է՝ ներքին հաստ պատերով: Հուշարձանը հիմնադրվել է մ.թ.ա.III դ. և զոյատևել է մինչև մ.թ.ա. I դ.: Հետագուովել են կյանքի երկու փուլերը:

Բլուրը շինությունները կառուցված են անմշակ քարից, որոնք անկյուններում ունեն կռախտ տաշված մակերես: Ձևով ուղղանկյուն շենքը խուլ երկայնակի պատով ներսից երկայնքով բաժանված է եղել երկու մասի: Այս շինություններում հատակները ունեն *Γ* - աձև սալահատակ: Սալարկի մեջ տեղադրված էին փայտե սյուների քարե բազաներ: Ստորին շերտը բնորոշվում է շագանակագույն անգորով պատված, կարմիր նախշով խեցեղենի գտածոներով:

Վերին շերտի խեցեղենի համար բնորոշ է կիսագնդաձև, սև զարդանախշով, կարմիր անգորապատ գավաթի, մեծ սկուտելի շուրթերի և կարմրալաք թասերի բեկորների առկայությունը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև տեղական արտադրության սև սկիֆոսի անգորապատ բեկորը, երկնագույն ջնարակով սկուտելի

<sup>13</sup> Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Եր. 1971, էջ 534 :

<sup>14</sup> А. А к о п я н, *Новые памятники фортификации античной Армении, Третий всесоюзный симпозиум по проблемам на Востоке*, Ер. 1988, стр. 4.

<sup>15</sup> А. Ш е г л о в, *Полис и хора, Симферополь*, 1976.

և կենդանակերպ սև փայլեցրած անոթի բեկորները: Գտածոներից առանձնանում է կարմիր անգորբապատ անոթի բեկորը, որի վիզը զարդարված է այծի գլխի տեսքով ռելիեֆ զարդանախշով: Վերին շերտի գտածոների զարդն է կավե արձանիկը, որ պատկերում է նստած երիտասարդ տղամարդու, որը նույնացվում է իմաստնության աստված Տիրի հետ: Հուշարձանը կալվածատուն է, որը բաղկացած է ամրացված մեծ տնից և այն շրջապատող տարածքից և իրենից ներկայացնում է ֆեոդալական դոյակների նախատիպը:

Պեղումների տվյալները արտացոլում են հողի նկատմամբ սեփականության իրավունքի ընդարձակումը, նոր հողատեր վերնախավի առանձնացումը և թույլ են տալիս համադրել Հայաստանի մասնավոր հողային սեփականության զարգացման գործընթացները հելլենիստական աշխարհի մյուս երկրների նմանատիպ գործընթացների հետ:

ՆՈՐԱՀԱՅՏ ԴԱՄԲԱՐԱՆ ՇԻՐԱԿԱՎԱՆՈՒՄ

1982 թվականին Նոր Շիրակավանի շինարարական աշխատանքների ժամանակ գյումրեցի բանվոր Տիգրան Ֆարգադյանը հայտնաբերել է մեկ սալարկղային դամբարան, որի ուղեկցող նյութերը (երկու կճուճ, երկու քրեղան, մեկական դաշույն, ասեղ, ապարանջան, 12 ձվածիր օղակ և 8 կոճակ) 1996 թվականին հանձնել է Շիրակի երկրագիտական թանգարան:

Կճուճներից առաջինը (աղ.1, նկ.1) մեծ է. բարձրությունը 15սմ է, բերանի տրամագիծը՝ 11սմ, նստուկինը՝ 7,5 սմ: Կճուճը սև գույնի է, ունի դեպի դուրս հակված շուրթ, գնդաձև իրան, հարթ նստուկ: Իրանի վրա կան խորակոս երկու գծանախշեր, որոնց միջև ալիքանախշ է, իսկ ներքևի խորակոսի տակ թեք, իրար զուգահեռ հասիկանախշեր են:

Այս զարդանոտիվը բնորոշ է ուշ բրոնզի դարի վերջի և վաղ երկաթի անցման փուլի խեցեղենին: Նմանօրինակ կճուճներ հայտնաբերվել են Արթիկի դամբարանադաշտից, Մեծամորից, Լոռի-բերդից, մեծավ մասամբ թվագրվում են մ. թ. ա. 12-11-րդ դարերով և հանդիպում են նաև 10-9-րդ դդ. թվագրվող դամբարաններում<sup>1</sup>: Կճուճների նման ձևեր կան նաև Վրաստանի համաժամանակյա հուշարձաններում՝ Մելասնիում, Սամտավրոյում, Գուրգուլայում<sup>2</sup>:

Երկրորդ կճուճը (աղ.1, նկ.3) փոքր է, բարձրությունը 7սմ է, բերանի տրամագիծը՝ 5սմ, իսկ նստուկինը 4սմ է: Այն սև գույնի անգարդ աման է, ունի դեպի դուրս հակված շուրթ, երկթեք իրան, տափակ, քիչ ելուստավոր նստուկ: Արթիկի մ.թ.ա. 12-11-րդ դարերով թվագրվող թիվ 230, 263, 279, 288, 314, 334, 371 դամբարաններից հայտնաբերվել են նման անգարդ անոթներ<sup>3</sup>: Վրաստանում հայտնաբերվել են Սամտավրոյից, Թրեյյան դամբարանադաշտից, Գուրգուլայից<sup>4</sup>:

Քրեղանները ևս երկուսն են: Առաջինն ունի հետևյալ չափերը (աղ.1, նկ.4). բարձրությունը 8 սմ է, բերանի տրամագիծը՝ 25 սմ, նստուկինը՝ 7,5 սմ: Քրեղանը սև գույնի է, ներսից քայքայված, շուրթն իրանի անցման մասում փոքր ինչ ներս է հակված, իրանը թեք է, նստուկը՝ տափակ:

Երկրորդ քրեղանն (աղ. 1, նկ.2) ունի 12սմ բարձրություն, բերանի տրամագիծը 20 սմ է, նստուկինը՝ 8 սմ: Այն սև գույնի է, շուրթը դեպի դուրս է հակված, իրանը քիչ ուռուցիկ, նստուկը՝ հարթ: Իրանի վրա խորակոս նախշ է, որից վերև՝ շուրթի տակ, աջ և ձախ թեքությամբ արված են իրար զուգահեռ զարդանախշեր:

Նմանօրինակ քրեղաններ հայտնաբերվել են Արթիկի թիվ 113,122,127,145, 148,147 և այլ դամբարաններից,<sup>5</sup> Քեթիից<sup>6</sup>, և մեծամասամբ թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դարերով: Վրաստանում հայտնաբերվել են Գուրգուլայից<sup>7</sup>:

Ի դեպ, երկրորդ քրեղանի զարդանոտիվը հանդիպում է նաև Արթիկի մ.թ.ա.14-13 դարերով թվագրվող նյութերում: Խեցեղենի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ձևերը և զարդանոտիվները լայնորեն տարածված են Անդրկովկասի մ.թ.ա. 12-11րդ դարերով թվագրվող հուշարձաններում:

1 Т. Х а ч а т р я н, Арктикский некрополь, Ер., 1979, погр. 393, 492, 636; А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 195 рис. 76/7, стр. 209 рис. 81/11. С. Деведжян, Лори-верд I, Ер., 1981,тавл. XVI, рис. 5.

2 К. П и ц х е л а у р и, Основные проблемы истории племен Восточной Грузии в XV-VII в.в. до н. э., Тбилиси, 1973, тавл. LIX, LX, LXV<sub>2</sub>; К. Пицхелаури, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, тавл. XVI<sub>6</sub>, XVII<sub>6</sub>; Է. Խանգաղյան, Կ. Սլրուշյան, Է. Պարիսյան, Մեծամոր, Եր. 1973, աղ. XXXVII նկ. 2, աղ. XXXVIII նկ.3-4:

3 Т.Х а ч а т р я н, Арктикский некрополь, Ер., 1979, стр. 15.


4 К. П и ц х е л а у р и, Основные проблемы истории племен..., тавл. LXII, LXV<sub>2</sub>; Р. Абрамшвили, Тбилиси I, рис. 50<sub>336</sub>

5 Т.Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 14-15 :

6 Л. П е т р о с я н, Раскопки памятников Кети и Воскеаска, Ер., 1989, тавл. 49<sub>2,4</sub>.

7 К. П и ц х е л а у р и, Основные проблемы истории племен..., тавл. LXV<sub>2</sub>.

## Աղյուսակ 1



Դամբարանում մեծ քիվ են կազմում մետաղյա իրերը, որոնց մեջ առանձին խումբ են կազմում ձվածիր օղակները (աղ.2): Մրանք պատրաստված են բրոնզալարից, որին մեկ ու կես պտույտ տալով՝ ստացել են ձվածիր տեսք: Ծայրերը քիչ սրված են և գալիս են իրար վրա: Ձվածիր օղակները շրթայի նման հագցված են եղել իրար մեջ՝ երեք-չորս հատը միասին: Տ. Ֆարգադյանը դրանք առանձնացրել է՝ թողնելով միայն երեք օղակից բաղկացած մեկ շրթան:

Նմանատիպ օղակներ հայտնի են դեռևս մ.թ.ա. երրորդ հազարամյակից սկսած և հայտնաբերվել են Ֆասկատից,<sup>8</sup> Կաբարդինո Բալկարիայից,<sup>9</sup> Դադատանից<sup>10</sup>: Գ. Շմիդտը դրանք անվանում է բունքազարդեր և գտնում է, որ բրոնզե բունքազարդերից հնագույնները հայտնաբերվել են Հունգարիայից և Տրոյայից<sup>11</sup>: Այն, որ դրանք բունքազարդեր են, պնդում է մահ. Բ. Տեխովը: Կենտրոնական Կովկասում, Թլիի դամբարանադաշտից հայտնաբերվել են մեծ քանակությամբ բրոնզե բունքազարդեր, որոնք թվագրվում են մ.թ.ա. 14-11-րդ դարերով<sup>12</sup>: Հայտնաբերվել են մահ Վրաստանում՝ Մաչխերիից, Աբխազիայի դոլմեններից, Թրիլյան դամբարանադաշտից, և մեծամասամբ թվագրվում են մ.թ.ա. 12-11 դարերով<sup>13</sup>:

Սակայն թե՛ կենտրոնական Կովկասից, թե՛ Վրաստանից և թե՛ Եվրոպայից հայտնաբերվածներից ոչ մեկը մյուսին հազցված չի եղել, բոլորն էլ հայտնաբերվել են առանձին, մի փաստ, որը դժվարություն է առաջացնում Շիրակավանից հայտնաբերվածների կիրառական նշանակությունը ճշտելու հարցում: Սակայն մի բան է պարզ, որ դրանք հանդես են եկել դեռևս մ.թ.ա. երրորդ հազարամյակից, հարատևել են մինչև մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջերը և ունեն տարածման բավական լայն արեալ:

Շիրակավանի դամբարանում մետաղյա իրերի ևս մի խումբ են կազմում վահանաձև կոճակները (աղ.2, նկ.2-9): Դրանք թելի անցկացման համար պատրաստված անցքի տարբեր ձևեր ունեն և բաժանվում են խմբերի:

Առաջին խումբը կազմում են երեք բրոնզե կոճակներ (աղ.2 նկ. 2-4), որոնք ունեն կիսագնդաձև ուռուցիկ տեսք: Սրանք ներսից ունեն կամրջակ, որը կտրվածքում կտր է և չունի զոգավորություն: Կամրջակը ներսի կողմից նմանվում է շրջանագծի տրամագծին, փաստորեն այդ կամրջակով է թելը կարվել՝ կաշվի կամ կտորի վրա ամրացնելով կոճակը: Կոճակներից երկուսի (աղ.2 նկ.2,4) տրամագծերը 20 մմ են, իսկ բարձրությունները՝ 10 մմ, երրորդի տրամագիծը՝ 18 մմ, իսկ բարձրությունը՝ 7 մմ (աղ. 2, նկ 3):

Նմանօրինակ կոճակներ հայտնաբերվել են Արթիկի դամբարանադաշտից, Քեթիից և Հայաստանի այլ հնավայրերից: Թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դարերով<sup>14</sup>: Արթիկից հայտնաբերված կոճակները ևս թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դարերով<sup>15</sup>: Նույն դարերով են թվագրվում մահ Կենտրոնական Կովկասից՝ Թլիից հայտնաբերված կոճակները<sup>16</sup>: Նմանօրինակ կոճակներ հայտնաբերվել են մահ Մինգչաուրից և Մցխեթից<sup>17</sup>:

Երկրորդ խումբը կազմում են երեք բրոնզե կոճակներ (աղ.2, նկ.6,5,8), որոնք, ի տարբերություն առաջին խմբի կոճակների, ունեն փոքր ինչ հաստ, կտրվածքում ուղղանկյուն և քիչ զոգավոր կամրջակ: Այս կոճակներից մեկի (աղ.2, նկ.6) կամրջակը կտրված է: Երեք կոճակներն էլ ունեն միևնույն չափերը. տրամագծերը՝ 20 մմ է, բարձրությունը՝ 10 մմ: Նմանօրինակ կոճակներ հայտնաբերվել են Դիլիջանից, Լոռի-բերդից,<sup>18</sup> Թլիից,<sup>19</sup> Գուրջիանիի շրջանի Գադրեկիլի դամբարանադաշտից<sup>20</sup> և թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ և 10-9-րդ դարերով:

<sup>8</sup> Е.Крупинов, *Материалы по археологии Северной Осетии докуванского периода*, МИА, 83, М.-Л., 1959, стр. 48,75, рис. 19.

<sup>9</sup> А.Круглов, Б.Пиатровский, Г.Подгаецкий, *Могильник в г. Нальчике*, МИА, 3, М.-Л., 1941, стр. 114, табл. IV.

<sup>10</sup> М.Гаджиев, *Из истории культуры Дагестана в эпоху бронзы*, Махачкала, 1969, стр. 186.

<sup>11</sup> G. Schmidt, *Troja, Moukeno-ingarn*, Berlin 1904, p. 608.

<sup>12</sup> Б.Техов, *Центральный Кавказ в XVI-X в.в. до н. э.*, М., 1977, стр. 56-58, 169-170.

<sup>13</sup> Б.Куртин, *К вопросу о ранних стадиях бронзовой культуры на территории Грузии*, КСНИМК, 8, М.-Л. 1940, стр. 9,11, рис. 1,3.

<sup>14</sup> Л.Петросян, *Раскопки памятников Кети и Воскеаска*, Ер., 1989, табл. 48.


<sup>15</sup> Т.Хачатрян, *Армянский некрополь*, Ер., 1979, стр. 15.

<sup>16</sup> Б.Техов, *Центральный Кавказ в XVI-X в.в.*, стр. 177, рис. 114<sub>56,59,60</sub>.

<sup>17</sup> Г.Асланов, Р.Вайдов, Г.Ионэ, *Древний Мингечаур*, Баку, 1959, стр. 62, 83; А.Каланалзе, *Автореферат докт. дисс.*, Тбилиси, 1969, стр. 68.

<sup>18</sup> С.Деведжиян, *Лори-берд I*, Ер., 1981, табл. VI, рис. 4; С.Есаян, О.Оганясян, *Каталог Дилиджанского краеведческого музея*, Ер., 1969, табл. XXVII<sub>5,6</sub>; Б.Техов, *Центральный Кавказ в XVI-X в.в.*, стр. 114<sub>55,61</sub>.

<sup>19</sup> Б.Техов, *Центральный Кавказ в XVI-X в.в.*, стр. 114<sub>55,61</sub>.



Երրորդ խմբին պատկանում է մեկ կոճակ (աղ.2, նկ.9), որը ևս բրոնզից է, տրամագիծը 25 մմ է, իսկ բարձրությունը 10 մմ: Այս կոճակը ներսից ունի ձվաձև կտրվածքով փոքրիկ, աղեղնաձև կամրջակ՝ թելի համար անցքով: Կամրջակի մի կողմից՝ աջ և ձախ ուղղություններով, հարելով հատակին, կոճակի ներքին պատին են միանում երկու համեմատաբար նեղ կամրջակներ՝ կազմելով Y տառը: Դրանք առաջացնում են

<sup>20</sup>К П и ц х е л а у р и, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, табл. XXIII<sub>28</sub>, XXV<sub>17</sub>.

երեք հատված կարելու համար: Հավանաբար այս կոճակը նախատեսված է եղել զրահաշապիկի համար, այդ իսկ պատճառով այն ամրացվել է լրացուցիչ կամրջակներով:

Չորրորդ խմբին պատկանում է ծարիրից պատրաստված մեկ կոճակ (աղ.2, նկ.7), որի տրամագիծը 30 մմ է, բարձրությունը՝ 10 մմ: Մրա մակերեսին կան խորակոս զարդանախշեր: Կոճակի եզրերը զարդարված են խորակոս գծանախշերով, իսկ կենտրոնում կա փոսիկ ունեցող ուռուցիկ ելուստ: Կոճակը ներսից ունի ռելյեֆ կամրջակ՝ անցքով:

Ծարիրից պատրաստված կոճակներ հայտնաբերվել են Արթիկի թիվ 287 դամբարանից, Էլլառից և թվագրվում են մ. թ.ա. 12-11-րդ դարերով<sup>21</sup>:

Ընդհանրապես կոճակները ծառայել են հագուստը կոճկելուն, միաժամանակ հանդես են եկել որպես պերճանքի առարկա: Մետաղյա կոճակները հանդիպում են նաև զրահաշապիկների վրա և ունեն կրկնակի գործառնություն՝ որպես զարդ ու միաժամանակ որպես զրահաշապիկն ամրացնող դետալ:

Շիրակավանի դամբարանից հայտնաբերվել է նաև բրոնզե դաշույն (աղ.1, նկ. 5): Այն ունի ձգված եռանկյունաձև շեղք, որը կտրվածքում շեղանկյունաձև է: Շեղքն ունի կենտրոնական ող: Ոչ ցայտուն արտահայտված ուսերի վրա, վնասված հատվածներում նշմարվում են երկու անցքեր՝ նախատեսված փայտե կամ ոսկրե բռնակի ամրացման համար: Դաշույնի երկարությունը 11 սմ է:

Նմանատիպ դաշույններ հայտնաբերվել են Արթիկի թիվ 635 դամբարանից, Լեհնականից, Կիրովականից, Բժնիից, Ռեդկին Լագերից, Պակերից և թվագրվում են մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջերով<sup>22</sup>: Հայտնաբերվել են նաև Մամտավրդից, Սաչխերից, Չոքիսիսից, Կվասատալից, Կասպի շրջանի Ռենե գյուղից և այլ վայրերից<sup>23</sup>:

Սայրերի կենտրոնական մասում փոքր ինչ ներձկվածությունը և շեղքի ձևը հաճախ ուսումնասիրողներին հանգեցրել է այն մտքին, որ այսօրինակ դաշույնները Կովկաս ներթափանցել են Միկենից: Սակայն Ե.Կրուպնովը գտնում է, որ դրանք հանդիսանում են ավելի հին տեղական դաշույնների շեղքերի ձևերի շարունակություն<sup>24</sup>:

Շիրակավանի դամբարանից հայտնաբերված ապարանջանը (աղ.1,նկ.6) պատրաստված է ձվաձև կտրվածք ունեցող բրոնզալարից, որի ծայրերը թեթևակի սրված են և անցկացված մեկը մյուսի վրա: Ապարանջանի տրամագիծը մոտ 5,5 սմ է: Նմանօրինակ ապարանջաններ հայտնաբերվել են Կամոյում, Այրիվանքում, Լեհնականում, Արթիկում և այլուր<sup>25</sup>:

Դամբարանի մետաղյա իրերից է ասեղը (աղ.1, նկ.7), որը պատրաստված է բարակ, կտրվածքում կլոր բրոնզալարից: Ունի սուր ծայր, իսկ վերևի մասում աննշան հաստանում է և ունի օվալաձև անցք թելի անցկացման համար: Նմանօրինակ ասեղներ հայտնաբերվել են Արթիկի թիվ 334, 572, 206 դամբարաններից,<sup>26</sup> Պակերից, Աստղի բլուրից<sup>27</sup> և այլ վայրերից:

<sup>21</sup> Т. Х а ч а т р я н, Арктический некрополь, Ер., 1979, стр. 15, 232.

<sup>22</sup> Т. Х а ч а т р я н, Древняя культура Ширака, Ер., 1975, стр 199; С. Есаян, О. Оганисян, Каталог Дилиджанского..., стр 9-10, табл. I<sub>6,7</sub>; С. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ер., 1966, стр. 59-61, табл. XI<sub>5,8</sub>; С. Есаян, Культура племен северо-восточной Армении, Ер., 1976, табл. 128<sub>1-7</sub>; Հ.Միրովիտյանի, Հայաստանի ու թրոնգեղարյան բնակավայրերն ու ամրարանադաշտերը, ՀՀՀ, 2, սրակ 2, Եր., 1969, աղ. XV, նկ.6,7, էջ 29, աղ. XV, նկ.1; Մ. Եսայան, Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 9-10, աղ. I, նկ.6-7:

<sup>23</sup> К. П и ц х е л а у р и, Основные проблемы истории племен... табл. LXIX<sub>116,137</sub>; Г. Ломтатидзе, Археологические раскопки в Мцхета, Тбилиси, 1955, стр. 112, табл.4; Б. Куфтин, Археологическая маршрутная экспедиция в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949, стр. 70; Б.Техов, Центральный Кавказ в XVI-X в.в..., стр. 87-110, рис.84<sub>7-12</sub>.

<sup>24</sup> Е. К р у п н о в, Древняя история Северного Кавказа, М., 1960, стр. 99

<sup>25</sup> Մ. Ե ս ա յ ա ն, Հայաստանի պատմական քանդարանի բրոնզե ապարանջանները, ՀՍՍՌ ԳՄ Տեղեկագիր, 2, Եր., 1964, էջ 82-94, աղ. I, նկ.12-14:

<sup>26</sup> Т. Х а ч а т р я н, Арктический некрополь, Ер., 1979, стр. 14-17.

<sup>27</sup> С. Е с а я н, Культура племен северо-восточной Армении, Ер., 1976, табл. 128<sub>17-21</sub>, 121<sub>15</sub>.

Այսպիսով, Շիրակավանի նորահայտ դամբարանի նյութերի համեմատությունը Հայաստանի, Անդրկովկասի և Կենտրոնական Կովկասի վերոհիշյալ համալիրների ստույգ թվագրված նյութերի հետ թույլ է տալիս անելու հետևյալ եզրահանգումները.

ա.) թվագրման սահմաններն են մ.թ.ա. 14-13-րդ դարերից մ.թ.ա. 10-9-րդ դարերը, բ.) նյութերն ընդգրկում են տարածական բավականին լայն արեալ, գ.) ի տարբերություն վերոհիշյալ հուշարձանների գտածոների, Շիրակավանում քունքազարդերը հանդես են գալիս 3-4 հատը միացած շղթայի ձևով:

Հիմք ընդունելով, որ Շիրակավանի նյութերը ժամանակագրորեն մոտ են մ.թ.ա. 12-11-րդ դարերով ստույգ թվագրված համալիրներին, դամբարանը կարելի է թվագրել հիշյալ ժամանակաշրջանով: Նորահայտ դամբարանը գալիս է ամբողջացնելու Շիրակավանի դամբարանադաշտի ժամանակագրական պատկերը:

## НОВОНАЙДЕННОЕ ПОГРЕБЕНИЕ ИЗ ШИРАКАВАНА

\_\_\_\_\_  
*Резюме*

\_\_\_\_\_  
*Г. Мсрян*

В 1982 году во время строительных работ на территории нового Ширакавана, рабочий из Гюмри Т.Фарзадян обнаружил погребение. Сопутствующий инвентарь состоял из двух кувшинов, двух мисок, бронзового кинжала, враслета, иголки, 7-и пуговиц, 12-и овальных височных колец и одной пуговицы из сурьмы. Найденные материалы аналогичны материалам памятников Армении, Закавказья и Центрального Кавказа 12-11 веков до н. э.

На основании подробного анализа формы захоронения и сопутствующего инвентаря, новонайденное погребение датируется 12-11-ми веками до н.э., что соответствует общей датировке Ширакаванского некрополя /14-11 вв до. н.э./.

## Արմեն ՆԱԽՇԶԱՐՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունագարդ խեցեղենի ուսումնասիրությունը, լինելով գիտականորեն հույժ կարևոր և անչափ հետաքրքիր, ի սկզբանե գրավել է ուսումնասիրողների մի ստվար խմբի ուշադրությունը: Հատկապես կարևորվել է հարցի ծագումնաբանական կողմը, որը ստացել է տարբեր մեկնաբանություններ: Չգալի աշխատանք է տարվել գունագարդ խեցեղենի առանձին ձևերի և զարդաձևերի ուսումնասիրման բնագավառում: Գունագարդ խեցեղենի զարդապատկերներն ըստ իրենց բնույթի կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերի՝ երկրաչափական, բուսական և կենդանական: Վերջինս գունագարդ խեցեղենի ուսումնասիրման բնագավառում ցարդ ներկայացվել է ընդհանուր – հատկանշական գծերով և առանձին ուսումնասիրման առարկա չի եղել՝ պայամանավորված նյութի սակավությամբ և մեծ մասամբ բեկորային վիճակով: Մինչ այժմ գիտական շրջանառության մեջ գունագարդ խեցեղենի կենդանական զարդապատկերների առկա հավաքածուն ներկայացվել է 12 օրինակով: Այս հոդվածում վերջինս հարստացվում է ևս 9 օրինակով\*:

Հողվածի սահմաններում նպատակ է դրվում՝ ա) դասակարգել Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունագարդ խեցեղենի կենդանական զարդապատկերները, բ) դիտարկել դրանց գունագարդման առանձնահատկությունների, բուսական և երկրաչափական զարդապատկերների հետ փոխառնչությունները, գ) քննել Հայաստանի հարակից երկրների համաժամանակյա և համանման զարդապատկերների հետ առնչությունները, դ) պարզաբանել կենդանական զարդապատկերներով գունագարդ անոթների ֆունկցիոնալ նշանակությանը վերաբերող մի շարք հարցեր:

Զարդանոտիվների դասակարգման պարագայում հիմք է ընդունվել գունագարդ խեցեղենում բոչնակերպ և կենդանակերպ զարդապատկերների առկայությունը, որոնք ըստ հերթականության մտցվել են երկու առանձին դասերի մեջ: Միաժամանակ, այս երկու դասերի ներսում նկատվում են որոշակի տարբերություններ, որոնք ընդգրկվել են առանձին խմբերի մեջ: Իրենց հերթին՝ խմբերի մեջ ևս նկատվում են առանձին տարբերություններ, որոնք դասվել են առանձին տիպերի: Դասակարգումը կողմնորոշվել է եռանիշ թվանշանային համակարգով: Լատինական թվանշաններով ներկայացված է զարդապատկերի դասը, արաբական թվանշաններով՝ հաջորդաբար խումբը և տիպը (դաս– խումբ–տիպ):

Թռչնակերպ զարդապատկերներն, իրենց տիպերով հանդերձ, բաժանվել են 3 առանձին խմբերի: Խումբ I–1–ի դասակարգման պարագայում հիմք է ընդունվել քննվող նյութերում կենաց ծառի կամ նմանատիպ զարդապատկերի առկայությունը: Վերջիններս թեմատիկ–հորինվածքային առումով որոշակիորեն աղերսվում են Մինգեչաուրի գունագարդ խեցեղենի համանման օրինակների հետ<sup>1</sup>:

Տիպ I– 1– 1, տափաշիչ,<sup>2</sup> (աղյուսակ I, նկ. 8-9): Հայտնաբերվել է Օշականի # 15 քարարկղային դամբարանից: Չափերը՝ 27.6 x 22 սմ: Տափաշիչի դեղին, խնամքով կոկված, վիայլեցված մակերեսը երկու կողմից նկարագարոված է կարմիր և մուգ շագանակագույն ներկերով: Մի կողմում պատկերված են 3 համակենտրոն շրջաններ՝ ներգծ-

\* Շիրակի երկրագիտական թանգարանում պահվում են 2 գունագարդ անոթներ, որոնցից մեկը Կառնուտից է (այժմ զարդապատկերով կրատերիսկ) իսկ մյուսը՝ Բենիամինից (թռչնի և կենդանու զարդապատկերներով տափաշիչ): Վերոհիշյալ նյութերը պատրաստվում են հրատարակության, ուստի վերջիններիս քննությանը սույն հոդվածում չենք անդրադարձել:  
1 С. К а з и е в, Археологические раскопки в Мингечауре: Альбом кувшинных погребений, Баку, 1960, табл. VII, 1, IX, 1; Н. Рзаев, Художественная керамика Кавказской Албании, Баку, 1964, рис. 80,81,82,85,86.  
2 С. Е с а я н, А. К а л а н т а р я н, Ошакан I, Ер., 1988, стр. 61, табл. XLIII, 1, 2.

ված նույն գույնի 3-4 քառակուսիներով, որոնց կենտրոնում պատկերված է երկար վզով, հատակ արտահայտված աչքով, կեռ կտուցով, փետրավոր պոչով թռչուն: Թռչնի մոտ պատկերված է նետով խոցված սիրտ, որի ծայրը ավարտվում է օղակաձև ելուստով: Անոթի հակառակ կողմում նույն գույներով պատկերված են չորս համակենտրոն շրջաններ, որոնց կենտրոնում նկարված է կենաց ծառ, իսկ նրա աջ և ձախ կողմերում՝ գլուխները ներքև կախած թռչուններ: Թվագրվում է Բ.ժ.ա. II-I դդ.<sup>3</sup>:

Տիպ I- 1-2, Արմավիր (աղյուսակ I, նկ. 3)<sup>4</sup>: Կիսագնդաձև, փոքր-ինչ հաստապատ, մոխրագույն միջնաշերտով, թասի բեկոր է: Բաց դարչնագույն մակերեսը գունազարդված է սև և կարմիր գույներով: Կենտրոնում՝ եռանկյունաձև պատկերի զազաթին, նկարված է օձ կամ ճյուղ հիշեցնող զարդապատկեր: Վերջինիս աջ և ձախ կողմերում թռչուններ են: Մեկը խիստ ոճավորված, մյուսը՝ հավանաբար, բաղ է: Շուրթը եզերված է սև և կարմիր գույներով արված գոտիանման և ալիքաձև զարդապատկերներով:

Կիսագնդաձև գունազարդ թասերը հանդես են գալիս դեռևս Բ.ժ.ա. III դ. և հարատևում մինչև Բ.ժ.ա. I դ. ներառյալ: Սրանց լայն տարածման ժամանակաշրջանը համընկնում է Բ.ժ.ա. II-I դդ. հետ: Եթե առավել վաղ օրինակների համար (Բ.ժ.ա. III-III դ.) հատուկ է պատերի զանգվածեղությունը և վատ թրծված թուխ միջնաշերտի առկայությունը,<sup>5</sup> ապա Բ.ժ.ա. II-I դդ. օրինակների համար (Արտաշատ<sup>6</sup>, Բենիամին<sup>7</sup>) հատուկ է պատերի բարակությունը և լավ թրծվածությունը, ինչպես նաև ներքին և արտաքին բազմերանգ գունազարդումը: Ելնելով Արմավիրի կիսագնդաձև թասի պատերի զանգվածեղությունից, ինչպես նաև վատ թրծված թուխ միջնաշերտի առկայությունից, գունազարդման ձևից, հարդարանքից ու մշակումից՝ վերջինս կարելի է թվագրել Բ.ժ.ա. III-II դարերով:

Տիպ I-1-3, Բենիամին<sup>8</sup>, (Աղյուսակ I, նկ.4) Կիսագնդաձև թասի բեկոր: Բեկորի կարմիր փայլեցված մակերեսը գունազարդված է սևով: Կենաց ծառ հիշեցնող զարդապատկերի աջ և ձախ կողմերում պատկերված են երկար վզով, փետրավոր պոչով թռչուններ՝ հավանաբար կարապներ: Թռչուններից մեկը դեմքով ուղղված է դեպի կենաց ծառը, իսկ մյուսը՝ դեմքով դեպի աջ: Թվագրվում է Բ.ժ.ա. I դ.<sup>9</sup>:

Խումբ I - 2 - ի դասակարգման պարագայում հիմք է ընդունվել քննվող նյութերում թռչներամի հորինվածքի առկայությունը: Թռչներամի հորինվածքը հանդիպում է թե՛ փակ, թե՛ բաց տիպի անոթներում՝ գոտևորելով վերջիններիս տարբեր մասերը: Վերոհիշյալ հորինվածքը հանդիպում է ուշ փոյուզիական (Բ.ժ.ա. VI-V դդ.)<sup>10</sup>, ինչպես նաև վերջինիցս մեծապես ազդված Սամաղոյի<sup>11</sup> (Վրաստան, Բ.ժ.ա. III-II դդ.) գունազարդ խեցեղենում: Ավելացնենք, որ թռչներամի հորինվածքը (հիմնականում ջրային թռչուններ) Հայկական լեռնաշխարհում հայտնի է դեռևս միջինբրոնզիդարյան խեցեղենից: Քննվող նյութերից մի քանիսը թե՛ թեմատիկ - հորինվածքային առումով, թե՛ զարդապատկերների պատկերազրույթյան առանձնահատկություններով, զարմանալիորեն աղերսվում են վերջիններիս հետ:

Տիպ I- 2- 1, տափաշշի բեկոր, Դ-վին (աղյուսակ I, նկ.2)<sup>12</sup> Դեղնավուն մակերեսի վրա՝ դարչնագույն և շագանակագույն կամարների միջև, նույն գույներով պատկերված են թռչուններ: Թվագրվում է Բ.ժ.ա. II-I դդ.: Թեմատիկ - հորինվածքային առումով (կամարների միջև պատկերված թռչնազարդը), ինչպես նաև թռչնազարդի, կա-

<sup>3</sup> С. Е с а я н, А. К а л а н т а р я н, *Նշվ. աշխ., նույնը*:

<sup>4</sup> Գ. Տ ի ր ա ղ յ ա ն, *Արմավիրի 1973թ. պեղումների նյութերից, ՊԲՀ, 1974, 3, նկ. 3*:

<sup>5</sup> Գ. Դ ր ա զ յ ա ն, *Древнеармянская керамика из раскопок Армавира, ИФЖ, 1971, 1, стр. 225*.

<sup>6</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, *Արտաշատ II, Եր., 1981, էջ 99-100*:

<sup>7</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, *Բենիամինի անտիկ դաստակերտի հեղինատական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն II). ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, հ.3, Գ-յումբի, 2000, էջ 33-35*:

<sup>8</sup> Նշվ. աշխ., (մասն I), Գ-յումբի, 1999, հ. 2, էջ 56, նկ. 9 (3,4):

<sup>9</sup> Նույնը:

<sup>10</sup> Prayon Friedhelm, *Phrygische Plastik, Tubingen, 1987, d. Keramik Kunsthandel*.

<sup>11</sup> Ю. Г а г о ш у г з е, *Самагло I, Тбилиси, 1982, стр. 75*.

<sup>12</sup> Գ. Զ ն չ ա ղ յ ա ն, *Դ-վինը անտիկ դարաշրջանում, Եր., 1991, էջ 49, տխտ. XIII, 4*:

մարների պատկերագրության առանձնահատկություններով հիշեցնում է Վանի քանդարանում պահվող միջինբրոնզիդարյան գունազարդ քրեղանի զարդապատկերները<sup>13</sup>:

Տիպ 1–2–2, Օյնոխոյա, Թուփրաք – Կալե, (աղյուսակ I, նկ.10)<sup>14</sup> Անոթը բոլորված է զուգահեռ գոտիներով և վերջիններիս մեջ պատկերված ջրային թռչունների զարդապատկերներով: Չևաբանորեն, աղերսվում է Գեղաղիի IV–III դդ. թվագրվող համանման անոթի հետ<sup>15</sup>: Թեմատիկ – հորինվածքային առումով (իրանը բոլորող գուգահեռ գոտիների մեջ պատկերված ջրային թռչուններ), ինչպես նաև զարդապատկերների կատարողական առանձնահատկություններով դարձյալ հիշեցնում է միջին բրոնզի դարաշրջանի կարմիր – վանքյան տիպի գունազարդ խեցեղենի կճուճներից մեկի զարդապատկերները<sup>16</sup>:

Տիպ I–2–3, Գառնի (աղյուսակ I, նկ.11):<sup>17</sup> Չևը դժվարությամբ է վերականգնվում: Պահպանվել են բարակ պատերով անոթի վզի և ուսամասի հատվածները: Բեկորը թերևս փակ անոթի է պատկանել (պուլիկ կամ փոքր կճուճ): Պատրաստված է լավ հունցված, փոքր-ինչ ավազախառնուրդով կավից: Կարմիր փայլեցված մակերեսը գունազարդված է վիզը ուսից բաժանող զույգ ալիքաձև գծերով: Գծերից ներքև, նույն գույներով պատկերված է երկար վզով, կետանշանով արտահայտված աչքով, կլոր քթով թռչուն՝ հավանաբար բադ: Մնացած մասը չի պահպանվել: Թվագրվում է Ք.ծ.ա. II–I դդ.: Դիշտ է, անոթը բեկորային է, բայց կարելի է ենթադրել, որ գոտերով է եղել թռչներամի հորինվածքով: Թեմատիկ – հորինվածքային առումով (ջրային թռչուն, ինչպես նաև ալիքաձև զարդապատկերներ) աղերսվում է Վանում պահվող միջինբրոնզիդարյան գունազարդ խեցեղենի կճուճներից մեկի զարդապատկերների հետ<sup>18</sup>:

Տիպ I–2–4, տափաշիշ, (աղյուսակ I, նկ.7)<sup>19</sup> Հայտնաբերվել է Եր.Լալայանի կողմից պեղված Նախիջևանի Բյուլթեփեի վերին շերտի դամբարանից: Այն փոքր է, մի կողմը՝ ուռուցիկ, մյուսը՝ տափակ (չափերը՝ 18 x 20 սմ): Ուռուցիկ մասի վրա սրճագույն, վեցանկյունի մի աստղ է պատկերված: Աստղը եզերված է 3 զուգահեռ գծերով, մեջտեղինը՝ սրճագույն, դրսիցները՝ մոխրագույն: Սրճագույն նեղ մի գոտի անցնում է անոթի ամենալայն մասով, կանթերի վրայով, շրթերի տակով և վրայով: Գունազարդումը կատարված է դեղին ֆոնի վրա: Աստղազարդի առումով վերջինս բաղդատվում է Արտաշատի Ք.ծ.ա. II – I դդ. թվագրվող տափաշի աստղազարդին<sup>20</sup>, իսկ թռչնազարդի առումով՝ նույն Արտաշատի Ք.ծ.ա. I դ. թվագրվող պնակի պսակի զարդապատկերների հետ: Բ.Կոֆտիցի բերած զուգահեռները պատահական և ոչ համոզիչ համարելով՝ Գ.Տիրացյանը նշում է. «Տափաշի թռչունները հեռավոր կերպով հիշեցնում են Սուգա (Շոշ) քաղաքի 7-6-րդ դդ. գունազարդ խեցեղենի նույնանման մոտիվները, իսկ գունազարդ աստղը՝ Ք.ծ.ա.4-2 դդ. թվագրվող Խորեզմում պեղված մի տափաշի ռելիեֆ գծերով արված վեցանկյուն աստղը»<sup>21</sup>: Բյուլթեփեի տափաշի արտաշատյան Ք.ծ.ա. II –

<sup>13</sup> A. Çilingiroğlu, Van Gölm, Ö, II, binyıl çanak çömleği, Ege Universitesi, Arkeoloji Dergisi II, 1994, 1-31.

<sup>14</sup> C. Lehmann-Haupt, Materialien zur älteren Geschichte Armeniens and Mesopotamiens, Göttingen, 1907, Taf. VIII, 1.

<sup>15</sup> Г. Т у р а ц я н, Культура древней Армении, Ер., 1988, стр. 123; Ժ. Խաչատրյան, Հայաստանում հայտնաբերված գունազարդ մի քանի նմուշներ, ՊԲՀ, Եր., 1966, I, տխտ. I/2:

<sup>16</sup> A. Simonián, Pasteurs et chefs de guerre au Bronze Moyen (XXIII – XXII siècles au. J.C.) Arménie; Tresors de l' Arménie ancienne, des origines au IVe siècle, Paris: 54-69, fig. 124.

<sup>17</sup> Կոլեկցիոն համարը՝ 2282149:

<sup>18</sup> A. Çilingiroğlu, The second millenium painted pottery tradition of the Van Lake Basin, Anatolien stuolies, XXXIV, 1984, p. 129-140.

<sup>19</sup> Д. К у ф т у м, Урартский колумбарий у подошвы Арарата у куроараксинский энеолит, ВМГ, XIII–B, Тбилиси, 1944, стр. 95–96, рuc. 52.

<sup>20</sup> Z. k h a c h a t r i a n, Artaxata Capitale dell' Armenia Antica (II sec. A.C.-IV sec D.C.), Ai piedi dell' Ararat, Artaxata El'Armenia Ellenistico-Romana, a cura di A. Jnvernizzi. Torino, 1998, p. 124, fig. 35.

<sup>21</sup> Գ. Տիրացյան, Հին հայկական գունազարդ խեցեղեն, ԼՀԳ, Եր., 1970, էջ 79, ծանոթ. 43-44:

Իդր. քվադրվող գուգահեռների և գունազարդման առանձնահատկություններից ելնելով՝ վերջինս կարելի է քվադրել Ք. ծ. ա. II – I դդ.:

Տիպ I–2–5 (աղյուսակ I, նկ.12) Արտաշատի VII թղ բլուր<sup>22</sup>, 8-B քառ. խոր.՝ 1մ: Դարչնագույն, նրբալենցի փոքր պնակի բեկոր է: Ունի դուրս լայնացող, քիչ կլորավուն պսակ, ներճկված, շեշտված անցումով վիզ: Մակերեսը պատած է դարչնագույն անգորով և թեթև փայլեցված է: Պսակի վրա կարմիրով թռչներամ է պատկերված: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.: Պնակի թռչունների զարդապատկերները, ինչպես վերը նշեցինք, մնանվում են Քյուլթեփեի տափաշշի զարդապատկերներին:

Տիպ I–2–6, Բուդղաշեն (Շիրակ) (աղյուսակ I, նկ.5)<sup>23</sup> Կիսազնդաձև քաս: Մակերեսը դրսից պատված է կարմիր, իսկ ներսից՝ դարչնագույն անգորով: Ներսի դարչնագույն մակերեսը գունազարդված է սևով: Չափերը՝ բարձր. 7.9 սմ, տրամ.՝ 14.6 սմ: Պատերը զարդարված են միմյանց գուգահեռ թռչունների երկու շարք երանով: Հատակի ոճավորված պատկերների միացությունից սրանց միջև ընկած դարչնագույն տարածքը ստացել է աստղազարդի տեսք: Թվագրվում է Ք.ծ.ա. II – I դդ.<sup>24</sup> Թեմատիկ-հորինվածքային առումով աղերսվում է Ք.ծ.ա. V–IIդդ. քվադրվող Իրանի «արդաբիլյան» ոճի քասերի զարդապատկերների հետ: Կարելի է քվադրել Ք.ծ.ա. II – I դդ.<sup>25</sup>:

Տիպ I–2–7, Արմավիր, (աղյուսակ I, նկ.1)<sup>26</sup> Տափակ ճստուկով կիսազնդաձև, գլանաձև ծորակով քաս է: Չափերը՝ բարձր. 9 սմ, պսակի տրամ. 15 սմ, ծորակի պահպանված մասի երկարությունը՝ 5.5 սմ: Բաց դարչնագույն, լավ փայլեցված մակերեսը դրսից գունազարդված է սև և կարմիր ալիքաձև, շրթայաձև, գոտիանման և թռչնակերպ զարդապատկերներով: Թռչունները պատկերված են գծային եղանակով: Կտուցները տրված են գծերով, աչքերը՝ կետանշաններով: Թռչուններից մեկի աչքը ունի հարցական նշանի ձև: Ելնելով վերոհիշյալ կիսազնդաձև քասի մնամատիկ և համաժամանակյա գուգահեռներից՝ այն կարելի է քվադրել Ք.ծ.ա. II – I դդ.<sup>27</sup>:

Խումբ I–3 – ի դասակարգման պարազայում հիմք է ընդունվել սրանց մեջ առանձին թռչնազարդի առկայությունը:

Տիպ I–3–1 – ի մեջ (աղյուսակ I, նկ.8) ներառված է Օշականի թռչնազարդ տափաշշի հակառակ երեսի առանձին թռչնազարդը: Տիպ I–2 – ի մեջ՝ Արտաշատի թռչնազարդ տափաշշի բեկորը (աղյուսակ I, նկ.6)<sup>28</sup>, որ պատահական գտածո է: Բեկորի մուգ սպիտակավուն մակերեսը գունազարդված է սև և կարմիր գույներով: Մակերեսը ունի թեթև փայլեցման հետքեր: Պահպանված մասի կենտրոնում սև և կարմիր գույներով պատկերված է կենդանու մարմին հիշեցնող իրանով, երկար, փոքր – ինչ կորացած վզով, հստակ արտահայտված աչքով, բաց կտուցով, ծալված ոտքերով, երեք գծերով արտահայտված մագիլներով ոճավորված թռչուն: Պատկերը վերարտադրված է գծային եղանակով: Իրանի մի մասը և կրծքավանդակը ընդգծող սրտաձև՝ դեպի վիզ ուղղված զարդապատկերը գունազարդված է կարմիրով, իսկ սրանց միջև ընկած սահմանում մուգ սպիտակավուն ֆոնը չի գունազարդվել: Վիզը գունազարդված է սևով, գլուխը և կտուցը վերարտադրված են գծային եղանակով, աչքն ընդգծված է սև կետանշանով: Ոտքերը ամբողջովին սև են: Պատկերը վերևից և ներքևից զարդարված է կարմիրի և սև համակենտրոն շրջանների հետքեր հիշեցնող, վերջիններիս մեջ ներգծված, անփութորեն արված զիզագաձև և ալիքաձև զարդապատկերներով: Ելնելով

<sup>22</sup> Կովեկցիոն համարը՝ 26173:

<sup>23</sup> Ե. Բ ա յ բ ո յ ա ն, Հայաստանի գունազարդ կերամիկայի պոքրիները, ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտ, «Տեղեկագիր», II, Եր., 1973, էջ 191-192: А. Мартыросян, Аргументы и факты, Ер., 1974, р. 27.

<sup>24</sup> F. Ter-Martirosyan, *Coup à décor peint*, p. 212, 193; *Armenie; Tresors de l' Arménie ancienne des origines au IVe siècle*, Paris, 1994.

<sup>25</sup> E. H a e r t n c k, *Jainted pottery of the Ardabil style in Azerbaibjan (Iran)*, “Iranica Anitidva, Vol, XIII, E. J.” Brill, heiden, 1978, p. p. 75-92; Նույնի՝ *La ceramique un Iran pendent la periode parthe*, 1983, *Gent*, p. 124-143, Fig. 20, 1, 2, 3, 4; Г. Нариманашвили, *Керамика Кармли*, V–I вв. До н. э., Тбилиси, 1991, с. 74.


<sup>26</sup> Գ. Տ ի բ ա յ ա ն, Արմավիրի պեղումները, ԼՀԳ, Եր., 1974, 12, նկ. 3 գ:

<sup>27</sup> Ժ. Խ ա չ ա տ բ յ ա ն, Արտաշատ II, Եր., 1981, էջ 99-100:

<sup>28</sup> Կովեկցիոն համարը՝ 296712:

բեկորի մակերեսի մշակման, հարդարման և գունագարդման առանձնահատկություններից՝ վերջինս կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դարով: Քննվող նյութերը թռչունների պատկերագրությամբ (գծային եղանակ), ինչպես նաև սրտաձև զարդապատկերներով, միմյանց հետ որոշակիորեն աղերսվում են:

Տախտակ 1



Նկ. 1



Նկ. 2




Նկ. 3




Նկ. 4



Նկ. 5




Նկ. 6



Նկ. 7




Նկ. 8



Նկ. 10



Նկ. 9



Նկ. 11

Կենդանալերպ զարդապատկերները, իրենց տիպերով հանդերձ բաժանվել են 6 առանձին խմբերի: Խումբ II-1-ի մեջ ներառված են Արմավիրի<sup>29</sup> և Արտաշատի եղջերվի զարդապատկերներով գունագարդ կարասների բեկորները: Հայկական լեռնաշխարհում եղջերվի պատկերման ավանդույթները գալիս են ժայռապատկերներից<sup>30</sup>,

<sup>29</sup> Д. А р а к е л я н, О некоторых результатах археологического изучения гревнего Армавира, ИФЖ, 1969, 4, стр. 44-60, табл. IV, I.

<sup>30</sup> Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Ռ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, նկ. 1, 193-1:

միջինբրոնզիդարյան խեցեղենից<sup>31</sup> և շարունակվում մինչև միջնադար: Ստորև նկարագրվող զարդապատկերներից մեկը՝ տիպ II-1-1 (Արմավիր) պատկերագրության գծային եղանակով մոտավոր կերպով հիշեցնում է Արմավիրի՝ Ք.ծ.ա.VI-IV դդ., թվագրվող խնկամանի եղջերուների փորագիր զարդապատկերները<sup>32</sup>, ինչպես նաև՝ ուշ փոյուզիական (VI-VIII դդ.)<sup>33</sup>, Սամաղույի (Վրաստան)<sup>34</sup> գունազարդ խեցեղենի զարդապատկերները, իսկ տիպ II-1-2-ի եղջերվի զարդապատկերը՝ Մինգեչաուրի գունազարդ խեցեղենի համանման օրինակները<sup>35</sup>:

Տիպ II-1-1, կարասի բեկոր, Արմավիր (աղյուսակ II, նկ.6)<sup>36</sup> Պատրաստված է լավ հունցված, քիչ ավազախառնուրդով կավից: Բեկորի բաց դարչնագույն անգորով պատած մակերեսին կարմիրով պատկերված է եղջերվի զարդապատկեր: Պատկերը վերարտադրված է գծային եղանակով: Կենդանու անատոմիական մանրամասները չեն տրված: Մակերեսը ունի թույլ փայլեցման հետքեր: Ելնելով բեկորի մշակման առանձնահատկություններից՝ վերջինս կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դ.:

Տիպ II-1-2, կարասի բեկոր, Արտաշատ 18c քառակուսի, խոր՝ 30 սմ, (աղյուսակ II, նկ.1)<sup>37</sup> Պատրաստված է լավ հունցված, քիչ ավազախառնուրդով կավից: Բեկորի մարմնագույն անգորով պատած մակերեսը գունազարդված է սևով և կարմիրով: Պահպանվել են կենդանու (հավանաբար եղջերու) իրանի մի մասի և երկու ոտքերի հատվածները: Կենդանու ոտքերի տակ սև և կարմիր գույներով պատկերված են շեղանկյունազարդ, թեք եռանկյունիներ: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.:

Խումբ II-2-ի մեջ ներառված են Բենիամինի այծերի զարդապատկերներով գունազարդ թասի<sup>38</sup>, ինչպես նաև Արտաշատի խիստ ոճավորված կենդանու զարդապատկերով տափաշշի<sup>39</sup> և այծի զարդապատկերով ծորակավոր անոթի<sup>40</sup> բեկորները: Պատկերագրության առանձնահատկություններով սրանք մտնում են Գեղամա լեռների ժայռապատկերներին:

Տիպ II-2-1, կիսագնդաձև թասի բեկոր, Բենիամին (աղյուսակ II, նկ.8) Բեկորի կարմիր անգորով պատած մակերեսին սև գույնով պատկերված են այծի զարդապատկերներ: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.: Վերը նկարագրված այծերից մեկի եղջյուրը հակված է դեպի իրանը: Հանդիպում են նաև Գեղամա լեռների ժայռապատկերներում<sup>41</sup>:

Տիպ II-2-2, ծորակավոր անոթի բեկոր, Արտաշատի VII-րդ բլուր, 1-ի a քառակուսի, խոր՝ 10 սմ: Պահպանվել է անոթի վերին կեսը: Պատրաստված է լավ հունցված, քիչ ավազախառնուրդով կավից: Անոթի դարչնագույն անգորով պատած մակերեսը գունազարդված է կարմիրով: Վերջինս գոտեզարդով բաժանված է երկու մասի: Իրանի վերին հատվածում պատկերված են ծաղկաշղթայաձև, ալիքաձև և շղթայաձև զարդապատկերներ, իսկ ստորին մասում՝ պատկերված է աստիճանաձև եղջյուրներով, փոքրինչ ոճավորված այծի զարդապատկեր: Կանթը զարդարված է կարմիր ժապավեններով: Մակերեսը թեթև փայլեցված է: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.: Վերը նկարագրված աստիճանաձև եղջյուրներով այծի զարդապատկերը, զարմանալիորեն, կրկնում է Գեղամա լեռների համանման ժայռապատկերները<sup>42</sup>:

Տիպ II-2-3, տափաշշի բեկորներ, Արտաշատի I բլուր, 5a քառակուսի, խոր՝ 90 սմ: Պատրաստված է լավ հունցված, փոքր-ինչ ավազախառնուրդով կավից: Մակերեսը

<sup>31</sup> Ա. Ք ա լ ա ն թ ա թ յ ա ն, Ժ. Խ ա չ ա տ թ յ ա ն, Հնագիտական հազվագյուտ հայտնագործություններ Սևանի ավազանից, ԼՀԳ, Եր., 1969, 4, էջ 75-77:

<sup>32</sup> Ի. Կ ա թ ա պ է տ յ ա ն, Արմավիրի խեցեղործության մի նոր տարատեսակ, ԼՀԳ, Եր., 1973, N11, էջ 71, նկ. II, նկ. III, 3:

<sup>33</sup> Prayon Friedhelm, Phrygische Plastik, Tubingen, 1987, d. Keramik Kunsthandel.

<sup>34</sup> Ю. Г а г о ш у г з е, С а м а г л о I, Т б у л у с у, 1982, с т р. 75.

<sup>35</sup> Н. Р з а е в, ն շ վ. ա շ խ, տ ա ճ լ. VI, ս ու ճ. 83, 84.

<sup>36</sup> Ա. Р а к е л я н, ն շ վ. ա շ խ, տ ա ճ լ. IV, 5

<sup>37</sup> Կոլեկցիոն համարը՝ 1972137:

<sup>38</sup> Հ. Խ ա չ ա տ թ յ ա ն, ն շ վ. ա շ խ, է ջ 56, ն կ. .9/2:

<sup>39</sup> Կոլեկցիոն համարը՝ 19721176:

<sup>40</sup> Կոլեկցիոն համարը՝ 197315:

<sup>41</sup> Հ. Մ ա թ ա ի թ ո ս յ ա ն, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1981, էջ 121, տխտ. XI:

<sup>42</sup> Նույնը:

պատված է բաց դարչնագույն անգորով: Գունազարդումը կատարվել է կարմիրով և շագանակագույնով:


Տախտակ 2



Նկ. 1




Նկ. 2



Նկ. 3



Նկ. 10



Նկ. 4



Նկ. 5




Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9

Բեկորներից մեկի վրա պահպանվել են համակենտրոն շրջանների հետքեր, իսկ մյուսի վրա պատկերված է երկար վզով, հստակ արտահայտված աչքով, կեռ, թռչնի կտուց հիշեցնող քթով, խիստ ոճավորված կենդանի: Իրանի մասը չի պահպանվել: Կենդանին պատկերված է գծային եղանակով: Վիզը հորիզոնական գծով բաժանված է երկու մասի: Ստորին մասը զարդարված է եղևնազարդ հիշեցնող զարդապատկերով, իսկ վերինը՝ միմյանց հաջորդող թեք գծերով: Գլուխը մասամբ է գունազարդվել: Աչքը պատկերված է դարչնագույն կիսաշրջանի մեջ ներառված կարմիր կետանշանով: Քթի պահպանված մասը հուշում է, որ վերջինս պատկերված է եղել գծային եղանակով:

Եղջյուրները աստիճանաձև են և հիշեցնում են Գեղամա լեռների այծերի համանման ժայռապատկերները: Թվագրվում է Զ.ժ.ա. I դ.:

Տիպ II-3-1, Օյնոխոյա, Պատնոց (աղյուսակ II, նկ.2)<sup>43</sup> Պահվում է Ադանայի թանգարանում: Հավանաբար բերվել է Պատնոցից: Տափակ նստուկով, ուռուցիկ, ձրգված իրանով, գլանաձև վզով, երեքնուկաձև պսակով (ծորակի մասը կտրավուն), պսակից ներքև սկավոդ և ուսերին միացող, ստորին մասում փոքր-ինչ ակոսված, տափակ կանթով օյնոխոյա է: Չափերը՝ բարձր. 32 սմ, տրամ. 24.5 սմ, նստուկի տրամ. 11 սմ: Ունի բաց դարչնագույն փայլեցված մակերես: Անոթի վերին մասը բոլորված է 4 մուգ դարչնագույն գուգահեռ գոտիներով, որոնցից վերին երկուսի մեջ կան երկշեղ գծեր, միջին երկուսի մեջ՝ իրար գուգահեռ ալիքաձև գծեր, ստորին երկուսի մեջ՝ շղթայաձև զարդապատկերներ: Անոթի կենտրոնում՝ սև ֆոնի վրա, մուգ դարչնագույնով նկարված է շարժման մեջ գտնվող, դեպի աջ ուղղված, ոտքերը առաջ պարզած առյուծի պատկեր: Առյուծի աջ և ձախ կողմերում պատկերված են երեքական եռանկյունիներ, որոնցից ամեն մեկի մեջ ներգծված են սևով և դարչնագույնով արված եռանկյունիներ:

Հայկական լեռնաշխարհում առյուծի զարդապատկերներ հանդիպում են միջին բրոնզի դարաշրջանում (ոսկե գավաթ, Կիրովական)<sup>44</sup>, ուրարտական որմնանկարներում<sup>45</sup>: Հենց նույն Պատնոցի հետուրարտական շերտից (թվագրվում է վաղ հայկական կամ հելլենիստական ժամանակաշրջանով) հայտնաբերվել է առյուծի պատկերով գունազարդ կենդանակերպ անոթ<sup>46</sup>: Պատնոցի օյնոխոյայի զարդապատկերը աղերս ունի զարգացած փռյուզիական ոճի անոթներից մեկում պատկերված առյուծի զարդապատկերի հետ<sup>47</sup>:

Տիպ II-4-1, Օյնոխոյա, Պատնոց, (աղյուսակ II, նկ.3) Պահվում է Ադանայի թանգարանում: Հավանաբար բերվել է Պատնոցից<sup>48</sup>: Տափակ նստուկով, գլանաձև վզով, ուռուցիկ, ձրգված իրանով, երեքնուկաձև պսակով (ծորակի մասը կտրավուն), պսակից սկավոդ և ուսերին միացող, ստորին մասում փոքր - ինչ ակոսված, տափակ կանթով օյնոխոյա է: Անոթի վիզը՝ բաց դեղնավուն իրար գուգահեռ գոտիներով, որոնցից վերին երկուսի մեջ՝ սևով ներգծված են երկշեղ գծեր, միջին երկուսի մեջ՝ գուգահեռ ալիքաձև գծեր, իսկ ստորին երկուսի մեջ արաբական երեք թվանշանը հիշեցնող, հավանաբար թռչներամ խորհրդանշող, իրար գուգահեռ երեք շարք զարդապատկերներով: Դրանցից մեկը կարմիր է, իսկ մյուսները՝ սև: Անոթի կենտրոնում կարմիր գույնով նկարված է գլանաձև պատվանդանին երկայնակի նստած քարայծի պատկեր: Վերջինիս կողքին պատկերված է բուսազարդ: Քարայծի աջ և ձախ կողմերում պատկերված են գազաթները դեպի ներքև ուղղած եռանկյունիներ: Հրատարակող հնագետի կարծիքով, վերոհիշյալ օյնոխոյաները համարվում են ուրարտական: Սակայն, սրանք, իրենց ձևաբանական որոշ առանձնահատկություններով տարբերվում են ուրարտական նմանատիպ անոթներից: Օյնոխոյաների կտրավուն ծորակները Գ.Տիրացյանի կարծիքով հիշեցնում են վերջիններիս հունական նախատիպերը,<sup>49</sup> իսկ իրանի ձգվածությամբ ավելի շատ նմանվում են վաղ հայկական ձևերին: Ինչ վերաբերում է օյնոխոյաների գունազարդմանը, ապա պետք է նշել, որ մինչ այժմ ուրարտական գունազարդ խեցեղենի գոյության հարցը մնում է չպարզված: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով վերջինիս գոյության շրջանը համընկնում է ուրարտական պետության կազմավորման փուլի հետ, իսկ հաջորդ շրջանում այս տարածաշրջանի համար բնորոշ է կարմիր փայլեցված

<sup>43</sup> O. T a s y ü r e k, *Urartian Polychrome pottesy in the Adana Regoinal Museum, Turk Arkeoloji Desgisi XXVI 1, 1977, p. 182-183.*

<sup>44</sup> A. M a r t u r o c y a n, *Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, рис.*

<sup>45</sup> Կ. Հ ն վ հ ա ն ն ի ս յ ա ն, *Էրեբունիի որմնանկարները, Եր., 1975, աղ. 45:*

<sup>46</sup> Б. Т у р а ц я н, *Новые археологические материалы послеурартского времени на территории западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры, Древний Восток, Ер., 1976, 2, стр. 148.*

<sup>47</sup> E. A k u r g a l, *Die Kunst anatoliens, von Homer bis Alexander, Berlin, 1960, p. 83, 84 pl. 50*

<sup>48</sup> O. T a ջ y r e k, *նշվ. աշխ., էջ 182. նկ. 2:*

<sup>49</sup> Գ. Տ ի ր ա ց յ ա ն, *Արմավիրի պեղումները, ԼՀԳ, Եր., 1974, 12, էջ 61:*

խեցեղենը<sup>50</sup>: Մյուսների կարծիքով գունազարդ խեցեղենը շարունակում է իր գոյությունը նաև ուշ ուրարտական ժամանակաշրջանում: Այս ենթադրության հիմնական կովանը Կարմիր բլուրում հայտնաբերված գունազարդ ասկն է<sup>51</sup>, սակայն վերջինս հավանաբար փռուցիական ներմուծման արդյունք է<sup>52</sup>: Վերոհիշյալ տարակարծությունների հիմնական պատճառը Վանա լճի ավազանի հնագիտական հուշարձանների շերտագրական իրավիճակն է և պակաս ուսումնասիրված լինելը: Այստեղ գունազարդ խեցեղենը շերտագրորեն նախորդում է կարմիր փայլեցված խեցեղենին (Վանում նյութը հայտնաբերվել է լանջին թափված շերտից, որը կարող էր շփոթությունների տեղիք տալ): Ենթադրվում է, որ գունազարդ խեցեղենը արտադրվել է տեղական ցեղերի կողմից, իսկ ուրարտացիների նվաճման հետևանքով մղվել է երկրորդ պլան՝ իր տեղը զիջելով կարմիր փայլեցված խեցեղենին: Ուրարտուի անկումից հետո այս ցեղերի տեղաշարժերի հետևանքով գունազարդ խեցեղենը լայն տարածում է ստանում Հայկական լեռնաշխարհում<sup>53</sup>: Գունազարդման առանձնահատկություններով (գազաքները դեպի ներքև ուղղած եռանկյունիներ, գուգահեռ գոտիներ, ալիքաձև և շրթալսաձև զարդապատկերներ) օյնոխոյաների զարդապատկերները բաղդատվում են հելլենիստական Հայաստանի գունազարդ խեցեղենի զարդապատկերների հետ: Իսկ ինչ վերաբերում է օյնոխոյաներից մեկի առյուծի զարդապատկերին, իհարկե վերջինս հանդիպում է ուրարտական որմնանկարչության մեջ<sup>54</sup>, սակայն հենց նույն Պատնոցի հետուրարտական շերտից (թվագրվում է վաղ հայկական կամ ավելի շատ հելլենիստական դարաշրջանով), որից հավանաբար ծագում են վերոհիշյալ օյնոխոյաները, հայտնաբերվել է առյուծի պատկերով գունազարդ կենդանակերպ անոթ<sup>55</sup>:

Տիպ II- 5-1, մեծ անոթի բեկոր, Արտաշատ<sup>56</sup>, 12h քառակուսի, խոր. 2 մ, (աղյուսակ II, նկ.9) Ձևը դժվար է վերականգնել: Պատրաստված է լավ հունցված, փոքր-ինչ ավազախառնուրդով կավից: Պահպանված մասի բաց դեղնավուն մակերեսին, մուգ մազանակագույնով պատկերված են կենդանու, հավանաբար՝ ձիու ոտքեր: Մնացած մասը չի պահպանվել: Ոտքերից մեկը ամբողջական է, մյուսը՝ թերի, վերարտադրված են գծային եղանակով: Հաշվի են առնվել կենդանու ամատմիակական առանձնահատկությունները: Հստակ արտահայտված են ազդրը, ծունկը, թույլ՝ սմբակը: Ունի թերևս փայլեցված մակերես: Թվագրվում է Ք.ծ.ա. II- I դդ.: Պեսք է նշել, որ ձիու զարդապատկերներ հանդիպում են Թեփե-Սիպլ Բ շերտի<sup>57</sup>, ուշ փռուցիական խեցեղենի<sup>58</sup>, Սամադոյի<sup>59</sup> գունազարդ անոթներում: Ավելացնենք, որ ձիու կենդանակերպ անոթներ հայտնաբերվել են Արմավիրից<sup>60</sup>, Շիրակավանից<sup>61</sup> և Բենիամինից<sup>62</sup>:

Խումբ II-6- ի մեջ ներառված են այն զարդապատկերները, որոնք գտնվում են հայտնի նյութերում չունեն իրենց մոտավոր գուգահեռները:

Տիպ II- 6-1, կճուճի բեկոր, Դ-վին (աղյուսակ II, նկ.4)<sup>63</sup> Տափակ, հարթ հատակով, ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս հակված պսակով կճուճ է: Վարդագույն մակե-

<sup>50</sup> Б. П и о т р о в с к и й, Ванское Царство, М., 1959, стр. 108; Г. Турацян, О расписной керамике, стр. 271-272.  
<sup>51</sup> Г. Т у р а ц я н, նշվ. աշխ., էջ 271-272:  
<sup>52</sup> Ф. Т е р - М а р т и р о с о в, О происхождение расписной керамики гревней Армении, ИФЖ, 1974, 1, стр. 65.  
<sup>53</sup> Ф. Т е р - М а р т и р о с о в, նշվ. աշխ., էջ 67:  
<sup>54</sup> Կ. Հ ն վ հ ա ն ն ի ղ յ ա ն, Էրեբունիի որմնանկարները, Եր., 1975, աղ. 46:  
<sup>55</sup> Б. Т у р а ц я н, Новые археологические атериалы, стр. 148.  
<sup>56</sup> Կոլեկցիոն համարը՝ 1973111:  
<sup>57</sup> N. M e d v e d s k a y a, K study on the chronologicale parallels betwente giik geometrick tigde and Sialk B painted pottny "Jraniqa Antiqva, vol XXII, Gantt, 1986, p. 89-120, pl II-A, pl XII-2.  
<sup>58</sup> P r a y o n F r I e d h e l m, Phrygische Plastik, Tubingen, 1987, d. Keramik Kunsthandel.  
<sup>59</sup> Ю. Г а г о ш у г з е, Самагло I, Тбилиси, 1982, стр. 75.  
<sup>60</sup> Գ. Տ ի ր ա ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 61:  
<sup>61</sup> Ф. Т е р - М а р т и р о с о в, Раскопки поселения и некрополя античного Шуракавана, Ը-Հ կենտրոնի Գիտական աշխատություններ, Գյումրի, 1988, հ. 1, էջ 21-22:  
<sup>62</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., տխտ. I, նկ. 5:  
<sup>63</sup> Գ. Զ ն չ ա ղ յ ա ն, նշվ. աշխ., տխտ. XV-7, XXIII-8:

րեսին կարմիր գույնով նկարված են եղջերավոր կենդանիների (մեկը ոչ ամբողջական) ոճավորված պատկերներ: Թվագրվում է Ջ.ժ.ա. II- I դդ.:

Խումբ II– 6–2, բեկոր, Արմավիր,(աղյուսակ II, նկ. 7)<sup>64</sup> Չևը չի վերականգնվում: Բեկորի մակերեսին պատկերված է ոճավորված կենդանի: Թվագրվում է Ջ.ժ.ա. III- I դդ.:

Ինչ վերաբերում է քննվող նյութերի գունազարդման առանձնահատկություններին, ապա վերջիններս ներկայացված են թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակներով: Միագույն օրինակների դեպքում կարմիր դաշտի վրա նկարազարդումը կատարված է սևով, դարչնագույն դաշտի վրա՝ սև և կարմիր գույներով, դեղնավունի դեպքում՝ մուգ շագանակագույնով, վարդագույնի պարագայում՝ կարմիրով:

Բազմագույն գունազարդման ժամանակ օգտագործվել է բավականին հարուստ ներկայանակ: Դարչնագույն դաշտի վրա նախշազարդումը կատարված է սրճագույն և կարմիր, կարմիր և շագանակագույն, մուգ դարչնագույն և սև, կարմիր և սև գույներով: դեղին դաշտի վրա գունազարդումը կատարված է կարմիր և մուգ շագանակագույն, դարչնագույն և մոխրագույն, դարչնագույն և շագանակագույն երանգներով: Սպիտակ դաշտի գունազարդումը կատարված է սև և կարմիր գույներով:

Կենդանական զարդապատկերների վերլուծությունը ցույց է տալիս, որ սրանցից շատերը թե՛ թեմատիկ – հորինվածքային առումով, թե՛ պատկերազարդությամբ, ինչպես նաև գունազարդմամբ (կարմիր ֆոնի վրա սևով գունազարդում) նմանվում են միջին բրոնզիդարյան գունազարդ խեցեղենի զարդապատկերներին:

Վերոհիշյալ նմանությունները (երկրաչափական զարդապատկերների առումով) վաղուց նկատվել են գունազարդ խեցեղենի այլ ուսումնասիրողների կողմից: Վերջիններիս միջև ծագումնաբանական կապերի հարցում տեսակետները էապես տարբերվում են միմյանցից<sup>65</sup>: Իհարկե, դժվար է ապացուցել այս երևույթների ուղղակի կապվածությունը, սակայն պատկերազարդությամբ Գեղամա լեռների ժայռապատկերներին նմանվող մի շարք զարդապատկերներ կարող են քննարկվող նյութերի տեղական խորը արմատների օգտին խոսել:

Կենդանական զարդապատկերներում նկատվող մյուս հետաքրքիր առանձնահատկությունը կենդանիների պատկերազարդության գծային եղանակն է: Նշենք, որ վերջինս հայտնի է դեռևս վաղ հայկական ժամանակաշրջանից<sup>66</sup>: Շատ հնարավոր է, որ հելլենիստական ժամանակաշրջանում տեղի է ունեցել անցում՝ գծային փորագիր եղանակից դեպի գունազարդ գծային եղանակը: Ավելացնենք, որ կենդանիների պատկերազարդության գծային եղանակը ուշ փոյուզիական խեցեղենի, ինչպես նաև փոյուզիական խեցեղենի ավելի վաղ ձևերի տարածված միջոցներից մեկն էր<sup>67</sup>: Շատ հնարավոր է, որ քննվող նյութերը ազդված լինեն ուշ փոյուզիական ձևերից, քանի որ նման երևույթ նկատվում է Սամադդոյի<sup>68</sup> համաժամանակյա գունազարդ խեցեղենում:

Ինչ վերաբերում է կենդանական զարդապատկերներով գունազարդ խեցեղենի ֆունկցիոնալ նշանակությանը, ապա հիմք ընդունելով Ֆորրերի և Արժիմբայի կողմից առաջադրված կենդանակերպ անոթների պաշտամունքային նշանակության մասին վարկածը, կարծիք է հայտնվել, որ վերջիններիս նման կենդանական զարդապատկերներով գունազարդ անոթները ևս ունեցել են պաշտամունքային նշանակություն<sup>69</sup>: Ընդ որում, պատկերված կենդանիներից շատերը հին հավատալիքներում խորհրդանշել են տարբեր աստվածություններ: Մեր կարծիքով քննվող զարդապատկերների մի մասը կապված են եղել լուսնի, իսկ մյուս մասը՝ արևի պաշտամունքային ցիկլերի հետ: Հին

<sup>64</sup> Б. Т у р а ц я н, О расписной

, табл. III, 6.

<sup>65</sup> Б. Т у р а ц я н, *նշվ. աշխ.*; Մ. Խաչատրյան, *Հայաստանում հայտնաբերված... էջ 259*: Փ. Թեր-Մարտիրոսով, *նշվ. աշխ.*; Դ. Արակելյան, *Очерки по истории искусства древней Армении, Ер., 1976, стр. 71.*

<sup>66</sup> Ի. Կարապետյան, *Արմավիրի խեցեղազարդության մի նոր տարատեսակ, ԼՀԳ, Եր., 1973, 11, էջ 71, նկ. I; III/3:*

<sup>67</sup> Prayon Friedhelm, *Phrygische Plastik, Tubingen, 1987, d. Keramik Kunsthandel.*

<sup>68</sup> Ю. Гагошугзе, *Самагло I, Тбилиси, 1982, стр. 75.*

<sup>69</sup> Փ. Թեր-Մարտիրոսով, *Керамика эллинистической Армении как исторический источник, рукопись кандидатской диссертации, Ер., 1984, стр. 45.*

հավատալիքներում պտղաբերությունը և, ընդհանրապես, կյանքը կախված են համարվել ջերմությունից և խոնավությունից: Ընդ որում ջերմությունը ճանաչվում էր, որպես արական նախասկզբ, իսկ խոնավությունը՝ իգական: Ջերմության աղբյուր համարվում էր արևը, իսկ խոնավությանը՝ լուսինը<sup>70</sup>: Հայտնի է, որ կենդանիներից առյուծը, ձիան<sup>71</sup>, ինչպես նաև թռչուններից ագռավը և աքաղաղը կապված են եղել արևի, իսկ եղջերուն, այծը, քարայծը<sup>72</sup> և ջրային շատ թռչուններ՝ լուսնի պաշտամունքային ցիկլերի հետ: Ամենայն հավանականությամբ, քննվող նյութերի զարդապատկերների մի մասը կապված են եղել լուսնի պաշտամունքային ցիկլերի հետ (եղջերու (տիպ II-1-1, II-1-2, եղջերավոր կենդանիներ(տիպ I-2-3, II-6-1, այծեր (տիպ II-2-1, II-2-2), թռչուններ և ալիքաձև զարդապատկերներ<sup>73</sup>, (տիպ I-2-7), սրտաձև զարդապատկերներ (կտեխս), որոնք կապված են կանացի նախասկզբի հետ (տիպ I-3-2, I-1-1, I-3-1), ջրային թռչուններ (տիպ I-2-3):

Վերոհիշյալ նյութերի մյուս մասն էլ խորհրդանշում է արևի պաշտամունքային ցիկլերը (առյուծ(տիպ II-3-1 ձի(տիպ II-5-1), աստղազարդի շուրջ պատկերված թռչններ (տիպ I-2-6, I-2-5, ինչպես նաև տիպ I-2-1(զարդապատկերի վերականգնման դեպքում կատացվի աստղազարդի շուրջ պատկերված թռչններամ)):

Ինչ վերաբերում է կենդանական զարդապատկերների պաշտամունքային տարրերին, ապա ուսումնասիրողների կարծիքով պատկերագրության ժամանակ ընդգծվել են դրանց սրբազան համարվող կետերը: Այդպիսիք են համարվել կենդանիների եղջյուրների և սրանց միջև ընկած տարածքի, ինչպես նաև մեջքի հատվածները: Այս երևույթը նկատվում է նաև վերոհիշյալ զարդապատկերների պատկերագրության մեջ. աստիճանաձև եղջյուրների պատկերագրություն , քարայծի մեջքից անող բուսազարդ, որոնք կապված են եղել մեռնող և հարություն առնող լուսնի զաղափարի հետ<sup>74</sup>:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի կենդանական զարդապատկերներով գունազարդ խեցեղենը արժեքավոր է ոչ միայն գեղարվեստական տեսանկյունից: Վերոհիշյալ ժամանակաշրջանի հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրման բնագավառում այն կարող է ունենալ աղբյուրազիտական մեծ նշանակություն:

## ЗООМОРФНЫЕ ОРНАМЕНТЫ РАСПИСНОЙ КЕРАМИКИ ЭЛЛИНИСТИЧЕСКОЙ АРМЕНИИ

Резюме

А. Нахшарян

Зооморфные орнаменты расписной керамики эллинистической Армении практически не были изучены. В статье дана попытка классификации зооморфных орнаментов расписной керамики. Рассмотрены некоторые особенности росписи, взаимосвязь геометрических и растительных орнаментов с зооморфными. Выяснены некоторые вопросы функционального назначения расписной керамики с зооморфным орнаментом.

<sup>70</sup> Ա. Արաքեղյան, *Очерки о*, стр. 48.

<sup>71</sup> Նույնը:

<sup>72</sup> Նույնը:

<sup>73</sup> Ա. Գեմիթյան, *Կենդանակերպ պատկերների սրբազան համարվող կետերի մասին, Երիտասարդ գիտնականների կոնֆերանս՝ նվիրված Վ. Լենինի ծննդյան 110 ամյակին, գեղարվեստների թեզիսներ, Եր., 1980, էջ 39:*

<sup>74</sup> Նույնը:

*ДЕНЕЖНОЕ ОБРАЩЕНИЕ АРМЕНИИ В XII – НАЧАЛЕ XIII вв.*

В начале XIIв. монетная система Передней Азии подверглась значительным изменениям ввиду грандиозного "Серебряного Кризиса" (далее: "СК"). Начавшись в Иране, он вскоре охватил всю Переднюю Азию. Длвшийся до первой четверти XIIIв. кризис явился началом биметаллизма, когда денежное обращение (далее: д.о.) стран Востока осуществлялось золотыми и медными монетами. Это не означало, что серебряные монеты совсем не выпускали. Некоторые мусульманские династии чеканили серебро, однако их выпуск был чрезвычайно малочисленен и недостаточен для постоянного обращения. Исчезновение серебра в регионах происходило в разное время. В целом оно совпало с нашествием сельджукских племен. Сельджуки, начавшие чеканить собственную монету в правление султана Тогрул Бека (1038-68гг.),<sup>1</sup> выпускали в основном золотые динары. С этого момента монеты сельджукского происхождения играли существенную роль в общей монетной системе Передней Азии. В вопросе д.о. самостоятельность сохраняла Византийская империя. Она чеканила монеты из двух металлов. Золото, с динарами Сельджуков обеспечивало нужды внешней торговли, а медная монета использовалась в качестве основной денежной массы для внутренней торговли.

В XIIв. Армения также оказалась в сфере влияния сельджукской экспансии. Сельджукское завоевание и 'СК' своеобразно отразились на д.о. страны. В XIIв. в Армении существовали две монетные системы, которые в корне отличались друг от друга. В северо-восточных областях в обращении присутствовали монеты Византии, Ильдегизидов Аррана, Грузинских Багратидов, а позже Сельджуков Рума. На юго-западных территориях обращались монеты Данишмендидов, Менгуджакидов, Салтукидов, Артукидов, Зенгидов, Айюбидов, Бектимуридов, Сельджуков Рума и Византии.

Основные аспекты д.о. Армении XII-начала XIIIвв. изложены в работах Х. Мушегяна.<sup>2</sup> В них дана констатация основных монетных групп, принимавших участие в д.о. Армении. Вне поля зрения автора остались некоторые аспекты локального характера, которые требуют необходимого дополнения, корректировки и новые интерпретации. Целью данной работы является описание д.о. Армении в XII-начале XIIIвв.

Принято считать, что структура д.о. северо-восточной Армении XIIв. была едина. В своих работах, Мушегян утверждает, что в I-ой половине XIIв. в северо-восточной Армении обращались сельджукские и византийские медные монеты. Для II-ой половины XIIв. характерными были монеты Ильдегизидов, грузинских Багратидов и византийских императоров. Автором было установлено, что состав д.о. территорий обоих берегов

<sup>1</sup> N. Nicol, R. al-Nabaraawy, J. Bacharach, *Catalog of the Islamic Coins, Glass Weights, Dies and Medals in the Egyptian Library, Cairo, Malibu, 1982, p.106; D.Sourdel, Inventaire les Monnaies Musulmanes Anciennes du Musee de Caboul, Damaskos, 1953, p.82; I. Artuk, Istanbul Arkeologi Muzeleri Teshirdeki Islami Sikkeler Katalogu, Vol.1, Istanbul, 1970, pp. 106-107; Т. Холджания, К вопросу о начале монетного чекана в государстве Великих Сельджуков, Нумизматика и Эпиграфика, X, 1972, стр.155-159.*

<sup>2</sup> *Խ. Մուսիշեանի և Հին և միջին դարերի Հայաստանում տարածված հիմնական դրամական խմբերը, ՊԲՀ, I, 1976, էջ.120; Խ. Մուշեղյան, Գրամական շրջանառությունը Հայաստանում V դ.մ.ա. - XIV դ.մ.ա., Եր., 1983, էջ 218-222; Kh. Mousheghian, The Origin and Development of the Monetary Circulation in Armenia VBC - XIVAD, ANI, 2, 1976, pp. 32-33.*

реки Аракс был одинаков и составлял одно целое.<sup>3</sup> Однако сравнение монетных групп, полученных при раскопках Ани и Двина, Гарни и Амберда, а также кладов из Гарни, Айгестана, Арзни, Аштарака, Гюлистана, Двина, Егварда, Еревана, Абовяна, Птгни, Степанавана показало, что это было не так. Д.о. региона в определенное время было различно по составу. На территории северо-восточной Армении в XIIв. существовали две различные системы. Среди 1793 монет, найденных в Ани, 1275 принадлежат Византии, 203- Сельджукам, 37- Ильдегизидам и 52- Грузии. В двинском материале соотношение иное. Среди 2250 монет, 993 монеты - Ильдегизидов, 50- Византии, 26-Сельджуков Рума и 115-Грузии.<sup>4</sup> Фактически наблюдается контрастное несоответствие структур д.о. двух крупных городов Армении, которые существовали на территории одного региона. Чем было вызвано несоответствие денежных систем одного региона?

Чеканка медной монеты у Сельджуков Рума началась в правление султана Масуда I (1116-56гг.) в I-ой половине XIIв. Все его монеты были из меди. На них название двора и время выпуска никогда не обозначалось. Султан чеканил монеты одного типа: с изображением византийского императора Алексея I (1081-1118гг.), держащего в руках шар и крест на л.ст. и четырехстрочной арабской легендой на об.ст.<sup>5</sup> Трудно определить время и место выпуска его монет. Предположительно, монеты Масуда I начали чеканиться со времени его сошествия на престол в 1116г., чем объясняется появление на л.ст. изображение императора Алексея I. Если же рассматривать его монеты как продукцию имитации, то допустима возможность выпуска таких монет и после смерти императора. Также трудно выяснить время обращения его монет. Возможно, они выпускались в течении всего правления султана.

При определении ареала обращения монет Масуда I следует обратить внимание на сведения о находках его монет как в пределах государства сельджуков, так и в закавказских областях. Топография находок свидетельствует, что сельджукские монеты не получили широкого распространения в Армении. Говоря о монетах Масуда I надо сказать, что они считаются очень редкими, а факты обнаружения их по Закавказью единичны. Монеты султана не переходили реку Аракс, поскольку в регионе отсутствуют признаки, доказывающие возможность обратного. Эмиссия монет Масуда I была настолько малочисленна, что едва ли обеспечивала нужды внутреннего обращения султаната.

Последователь Масуда I, Кылыч Арслан II (1156-92гг.) чеканил монеты из трех металлов. Он продолжил выпуск медных монет, а с 1178г. в Иконии начал чеканить золотые динары. С 1185г. там же, не в большом количестве, им была начата эмиссия серебряных дирхемов.<sup>6</sup> Султан чеканил два типа медных монет: с всадником или изображением восседающей на троне фигурой на л.ст. и четырехстрочной арабской легендой на об.ст.<sup>7</sup>

Несмотря на увеличение выпуска медных монет при Кылыч Арслане II, их опять не хватало для широкого обращения вне государства. На территории левобережья реки Аракс они встречаются в виде редких, еди-

<sup>3</sup> Խ. Մ ո ս հ ե ղ յ ա ն, Հին և Միջին դարերի Հայաստանում..., էջ.121; Kh. Mousheghian, *The Origin and Development...*, p.32; Խ. Մ ո ս հ ե ղ յ ա ն, Հրաձագի շրջանառությունը ..., էջ 218-219:

<sup>4</sup> Kh. M o u s h e g h i a n, *Coins Circulated in the Cities of Ani and Dvin and the Data of Their Synthesis*, ANJ 15, 1989, pp.113-125.

<sup>5</sup> A. N e z i h i, *Some Coins of Mas'ud I, Qilijarslan II, and the Maliks*, ANS AJN 7/8, 1995/96, p.177.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>7</sup> S. A l b u m, *A Checklist of Islamic Coins*, Santa Rosa, 1998, p.62.

ничных находок. Это объясняется тем, что с 1161г. в этих провинциях началось поступление медных монет атабеков Ильдегизидов.<sup>8</sup> Эти монеты снабжали д.о. левобережья реки Аракс на протяжении более 40 лет и не позволили сельджукской монете закрепиться там. В Ани и сопредельных территориях происходило иначе. Во II-ой половине XIIв. сельджукские монеты вместе с византийскими становятся основным средством внутренней торговли. К монетам Кылыч Арслана II надо также отнести монеты его сыновей-последователей. Еще в правление Кылыч Арслана II государство Рума было разделено между сыновьями на 11 княжеств. Пятеро из них чеканили собственную медную монету.<sup>9</sup> Эмиссия этих султанов была похожа на типологию Кылыч Арслана II с той разницей, что их монеты расходились хуже.

Из сельджукских династий, монеты которые играли заметную роль в монетном деле Передней Азии в XIIв., необходимо обособить султанат Ирака. Султаны этой линии чеканили золотые динары,<sup>10</sup> которые были в хождении вместе с византийскими солидами. Известны выпуски всех представителей этой династии, кроме Меликшаха III (1152-3гг.) и Тогрула III (1176-94гг.). Богата эмиссия золотых динаров трех султанов: Тогрула II (1132-4гг.), Масуда (1134-52гг.) и Сулейман Шаха (1160-1гг.), чеканенные в интервале между 1132-60гг.<sup>11</sup>

Резюмируя данные, приходим к выводу, что сельджукская медная эмиссия I половины XIIв. была неспособна участвовать в д.о. региона. Ее количественные параметры ограничили степень обращения монет, получивших только локальную функцию. Монеты сельджукского происхождения стали обращаться в закавказском регионе только со второй половины XIIв. Это происходило не ранее времени правления султана Кылыч Арслана II.

Вышесказанное дает право заключить, что д.о. северо-восточной Армении XIIв. не было монолитным. С XIв. и до II половины XIIв. одни и те же монетные группы обеспечивали д.о. региона. Изменения, произошедшие в д.о. региона, имели место только во второй половине XIIв. и были связаны с локальными изменениями политической ситуации. На основе этого д.о. северо-восточной Армении может быть разделено на два хронологических периода. Каждый из них в свою очередь делится на два периода, обуславливающих особенностями торговых отношений. Для областей, сопредельных с Ани, это периоды: XIв.-1156г. и 1156-1225гг. Для Двина и всего левобережья Аракса: XIв.-1161г. и 1161-1225гг.

#### Ани.

Со времени 'СК' Византия перешла к выпуску монет из золота и меди. Монеты, представленные в Ани, в основном чеканены в период X-XIвв. В период Багратидов в городе фигурировали анонимные фолисы Иоанна Цимисхия, Василия II, Константина VIII и Михаила IV. С 1045 по 1071гг. Ани находился во власти Византии. Тогда в город в большом количестве продолжали поступать монеты как предыдущих императоров, так и правителей времени доминации - Теодоры, Константина X и Евдокии, а также Романа IV. Монет, чеканенных после 1071г., в городе практически не обнаружено. В 1071г. в битве при Маназкерте сельджуки разбили войска императора Романа IV. После этого структура д.о. Ани практически не

<sup>8</sup> A. V a r d a n i a n, *Some Peculiarities of Coinage in Dvin in the Twelfth and Thirteenth Centuries*, *RNS Numismatic Chronicle* 161, 2000, p.199-205.

<sup>9</sup> A. N e z i h i, pp.174-177; *S. Album*, p.62.

<sup>10</sup> N. N i c o l, R.al-Nabarawy, J. Bacharach, pp.106-107; I.Artuk, pp.342-348; *S. Album*, pp.85-86.

<sup>11</sup> G. M i l e s, *The Numismatic History of Rayy*, New York, 1938, pp. 214-216.

изменилась и повторяла характерные черты системы, имевшей место в ХІв. Выше было показано, что сельджукские монеты первой половины ХІв. не могли обращаться в регионе наравне с византийской монетой, чеканенной в несравненно большем количестве. Отсутствие в монетном материале Ани других монетных групп доказывает, что период ХІв.-1156г. характеризуется единоличным обращением в регионе византийских медных монет, чеканенных в X-ХІвв.

Второй период д.о. Ани характеризуется постепенным притоком в обращение монет Сельджуков Рума. В первую очередь обоих типов монет султана Кылыч Арслана II, а также его сыновей, чеканивших в различных частях государства свою монету. С конца ХІв. сельджукские монеты обращались в Ани уже наравне с византийскими. Чуть позже туда же устремился поток грузинских медных монет. Учитывая общий спектр распространения монет царя Георгия III(1156-84гг.) и локальный характер его эмиссии в Закавказье, можно предположить, что в регионах вокруг Ани они не имели широкой популярности. Обнаруженные при раскопках около 50 монет принадлежали царицам Тамаре (1184-1212гг.) и Русудан (1224-45гг.). Как и в случае с Двином, выводы должны строиться на основе анализа политической ситуации, имевшей место в Ани. Как и территории левобережья р.Аракс, в конце ХІв. Ани тоже был включен в состав княжества Захаридов. В вопросе денежного хозяйства обоих территорий предположения относительно времени и условий обращения грузинских монет должны быть тождественны. Являясь третьей основной монетной группой, вступившей в обращение с начала ХІІв., грузинские монеты, помимо византийских и сельджукских, обеспечивали внутреннее хозяйство Ани вплоть до окончания кризиса серебра.

#### *Двин*

История д.о. Двина делится на два периода: ХІв.-1161г. и 1161-1225гг. Первый этап характеризуется обращением византийских монет. Второй этап характеризуется обращением монет Ильдегизидов, а с 1203г., монет грузинских царей. Монетная среда левобережья р.Аракс в интервале ХІв.-1161г. повторяла структуру обращения Ани и правобережных областей.

Период с 1161 по 1225гг. существенно отличается от предыдущего. Он характеризуется обращением большого количества монет Ильдегизидов, а с 1203г. монет Грузинских Багратидов. С определенного времени монеты обоих государств стали обращаться в регионе одновременно. Сравнительный анализ типологических особенностей монет Ильдегизидов из Двина показал, что период д.о. этих регионов может быть разделен на три основных этапа:

I период (1160-89гг.) - период широкого обращения монет, чеканенных Шамс ал-дин Ильдегизом (1136-75гг.).

II период (1189-99/1202гг.) - характеризуется широким обращением медных монет ильдегизидской династии.

III период (1203-25гг.) - обусловлен доминанцией грузинских монет. С правления султана Кай Кобада I (1219-36гг.) монеты сельджуков Рума стали дополнять обращение.<sup>12</sup>

С освобождением Двина начался период проникновения в Армению большого количества монет грузинских Багратидов. Принято считать, что монеты грузинского царства, в особенности Георгия III, начали появляться в Армении еще во второй половине ХІв. Однако топография находок показала обратное. "Клады" Пахомова, например, показывают, что пределы

<sup>12</sup> А. Vardanian, *Ազգ. աշխ.*, էջ 199:

распространения монет Георгия III были целиком ограничены пределами грузинского царства.<sup>13</sup> Крупная медная эмиссия Ильдегизидов не позволила монетам Георгия III добиться обращения в Армении. Об этом определенно свидетельствует факт единичных находок монет царицы Тамары, выпущенных в 1187г. обращение которых было тоже ограничено пределами грузинского царства. Немногочисленные монеты Георгия III стали проникать только после 1203г. в виде незначительных примесей к основной монетной массе царицы Тамары.<sup>14</sup> С того времени в Армению в большом количестве поступали монеты Тамары чеканенные в 420г. грузинского короникона (1200г.). Такие монеты найдены кладами и единично по всей территории северо-восточной Армении и Закавказья. Далее, из грузинских монет в Армении повсеместного обращения достигли монеты Георгия IV (1212-24гг.) и царицы Русудан (1224-45гг.). Так продолжалось до 1225г., когда монетная система всей Передней Азии опять подверглась серьезным изменениям. В первую очередь, это было связано с окончанием 'СК' и изменениями политической среды Закавказья.

#### *Сельджуки Рума*

Признавая факт чеканки ранними сельджуками в XI и I половине XIIвв. золотых динаров, а медную эмиссию румского султана Масуда I неспособной к внешнему обращению, нужно обозначить роль участия монет Сельджуков Рума в масштабном обращении только с определенного времени. Регулярная чеканка медной монеты в султанате Рума приняла оборот в правление султана Кылыч Арслана II и его последователей. В конце XIIIв. эта эмиссия получила распространение в том числе и в местах, где уже имелось собственное монетное дело. После смерти Кылыч Арслана II в 1196г. власть унаследовал Кай Хосроу I (1192-6гг.). Следующий султан-Сулейман Шах II (1196-1203гг.) - в 1202г. аннексировал территории Салтукидов, а город Эрзрум передал в правление своему брату Мугиз ал-дин Тогрулшаху. Последний чеканил в Эрзруме монеты как из серебра, так и из меди.

Когда трон Эрзрума унаследовал Джаханшах (1225-30гг.), эмиссия монет в Эрзруме была продолжена. Из его монет известен тип с восседающей на троне фигурой, схожей по происхождению со стилем византийской модели чекана.<sup>15</sup>(чекан 1228г.)

Когда власть Данишмендидов в их областях была приостановлена, в городах Малатья и Сивас установилась власть Сельджуков Рума. В Сивасе выпуск монет продолжил Меликшах II, а в Малатье- Кайсершах-ибн- Кылыч Арслан. Первый чеканил монеты похожие на монеты отца, в то время как Кайсершах немного другого типа. На его монетах одновременно изображены всадник и дракон.<sup>16</sup> В 1213г. в Сивасе султан Кай Кавус I (1210-9гг.) начал выпускать серебряные дирхемы, а с 1220г. султаном Ала ал-дин Кай Кобадом Итам же продолжилось производство медных монет.<sup>17</sup>

Л.ст.:/Сивас/ султан величайший /Кай Кобад ибн Кай Хосроу/. По краям обозначен номинал: /дирхем/ и дата словами - 617.

Об.ст.:/Правоверных/ Имам ан-Насир /ал-дин Аллах повелитель/.

ГИМА, АЕ 18844/151; Д=23мм; В=3.46г; С↑=11 (Фото 1).

<sup>13</sup> *Е. Пахомов, Монетные Клады Азербайджана и других республик, краев и областей, Том.1-9, Баку, 1926-1966.*

<sup>14</sup> *A. Vardanian, Աշխարհ, էջ 125:*

<sup>15</sup> *Nezihci, Աշխարհ, էջ 191:*

<sup>16</sup> *Նույն տեղում, էջ 179:*

<sup>17</sup> *I. Artuk, Աշխարհ, էջ 362; S. Album, Աշխարհ, էջ 62:*

*Салтукиды Эрзрума*

В Эрзруме чеканили монеты Салтукиды. Они обосновались в городе в 1103г., когда Али ибн Салтук захватил его, до этого принадлежавший Данишмендидам. Первоначально династия Салтукидов являлась вассалом ветви Великих Сельджуков, однако, к 1145г. Салтукиды получили независимость.<sup>18</sup> Они правили в Эрзруме до 1202г., когда город был захвачен Сельджуками Рума и передан Кылыч Арсланом II сыну Мугиз ал-дин Тогрулшаху.

Монеты династии чеканились исключительно из меди. На всех образцах место выпуска отсутствует, что позволяет предположить, что они чеканились только в Эрзруме. Известны эмиссии пяти династий. Особенно часто встречаются монеты Салтука ибн Али (1145-75гг.). На его монетах на л.ст. изображены две фигуры держащие длинный крест, а на об. ст. дана четырехстрочная легенда.

Л.ст.: Сцена инвеституры.

Об.ст.:/Султан/ высочайший Масуд/ ибн Мухаммед Изз ал-дин /Салтук ибн Али/.

ГИМА, АЕ 18454/17; D=23.5мм; B=4.01г; C↑=3 (Фото 2).

Описание монеты показывает, что монеты Салтукидов имеют значительную схожесть с монетами Данишмендидов Малатьи, особенно чеканенных Насиром ал-дин Мухаммедом в на 1162-70гг. и 1175-8гг.

Монеты Салтукидов обеспечивали нужды торговли на территориях их выпуска. С правления Салтука ибн Али и далее при Насире ал-дин Мухаммеде монеты стали расходиться легче и даже изредка проникали в другие области. В северо-восточной Армении монеты Салтукидов встречаются редко. Вариант регулярного обращения таких монет в этом регионе исключен.

*Менгуджакиды Эрзинджана и Диврижи*

Из тюркских династий, осевших в Анатолии, одной из первых была династия Менгуджакидов. Территория Менгуджакидов тянулась от Эрзинджана до Кемаха и от Диврижи до Восточного Карахисара. Эти владения были подарены Менгуджаку еще султаном Алп Арсланом (1058-64гг.).<sup>19</sup> После смерти Ишак Шаха, сына Менгуджака, владения были разделены между тремя сыновьями. Эрзинджан был отдан Даудшаху, Диврижи-Сулейман Шаху, а Кемах-Мелик Махмуду.<sup>20</sup> Поскольку Фахр ал-дин Бахрамшах (1167-1225гг.) был женат на дочери султана Кылыч Арслана II, а его дочь, в свою очередь, вышла замуж за султана Кай Кавуса I (1210-9гг.), династия успешно просуществовала до 1228г., пока султан Кай Кобад I не захватил Эрзинджан и Кемах у Ала ал-дин Давудшаха (1225-8гг.).<sup>21</sup> Этим был положен конец династии Менгуджакидов в Эрзинджане и Диврижи.

Нет никаких оснований полагать о существовании ранней эмиссии у Менгуджакидов. Поскольку они не добились полной независимости, нумизматам неизвестны ранние выпуски их монет. По примеру Салтукидов Менгуджакиды чеканили монеты только из меди. Только на монетах Эрзинджанской ветви помещено название монетного двора. На остальных типах место выпуска не указывается. Известны выпуски четырех представителей династии. Наиболее многочисленным является выпуск правителя Эрзинджана Фахр ал-дин Бахрамшаха. На территории северо-восточной

<sup>18</sup> В. Гордлевский, *Государство Сельджукидов Малой Азии*, Л., 1941, стр.32.

<sup>19</sup> *Երզրուի տնտեսական*, էջ 32:

<sup>20</sup> G. Kurkman, *A Divani Dated Coin of 567 of the Manguchakids: and Coins of 936 (not 1036 of Sulayman the Magnificent ANS AJN 3/4, 1991/92, p.96.*

<sup>21</sup> A. Nezihi, *Երզրուի տնտեսական*, էջ 171:

Армении при раскопках Двина была найдена одна такая монета, без упоминания даты чеканки.

Л.ст.: Стертое изображение.

Справа /ал-дин/. В круговой легенде /чеканен в Эрзинджане/.

Об.ст.: /Эмир/ шах Гази /Бахрамшах/.

В сегментах /Помощь/ повелитель правоверных /ибн Давуд/.

ГИМА, АЕ 17170/12; D=24мм; B=3.18г; C<sub>1</sub>=9 (Фото 3).

Находка уникальна для территории Армении и Закавказья. Других случаев обнаружения монет Менгуджакидов в Армении не зарегистрировано.

В Диврижи монеты чеканил Сейф ал-дин Шахиншах ибн Сулейман. Известны выпуски 1172 и 1178гг.<sup>22</sup>

Л.ст.: /Фахр ал-умара Сейф/ ал-дин Шахиншах /ибн Сулейман ибн / Ишак Хусам /повелитель правоверных/.

Об.ст.: /Султан величайший/ Изз ал-дунья ва-л-дин/ Абу-л-вера Кылыч Арслан /ибн Масуд Насир/ повелитель правоверных/.

ГИМА, АЕ 17170/125, D=25мм; B=7.15г; C<sub>1</sub>=12 (Фото 4).

Монеты Сулеймана ибн Ишака 1181г. и ал-Хусейна ибн Сулеймана примечательны изображением на них крестов, часто орнаментированных. На монетах ал-Хусейна ибн Сулеймана, например, изображен армянский крест.<sup>23</sup> Увы, такие монеты настолько редки, что и речи не может быть об их широком обращении. Вообще степень распространения монет Менгуджакидов была слишком мала. Все монеты этой династии считаются редкими. Будучи вассалами сельджуков Рума и так и не получив независимость, Менгуджакиды не сумели обеспечить выпуск своих монет в количестве, необходимом для широкого обращения вне княжества.

#### *Данишмендиды Малатьи и Сиваса*

Как уже отмечалось, Данишмендиды закрепились в Малатье и Сивасе. Эта династия вела свое начало от Сейид-Баттала, родоначальника Гази.<sup>24</sup> Сперва осев в Нискаре, Данишмендиды с начала XIII в. начали представлять угрозу для государства сельджуков. В течение первой половины XIII в. Данишмендиды пытались оспаривать власть у сельджуков. В этой борьбе им помогали византийцы и атабек Сирии Зенгид Махмуд ибн Зенги (1146-74гг.).<sup>25</sup> Однако с 1174г. мощь последователей Мелика Гази начала уменьшаться, и вскоре им пришлось преклониться перед султаном Кылыч Арсланом II. В 1175г. султан отобрал Сивас у Данишмендида Имад ал-дин Дзун Нуна (1142-75гг.) и в 1186г. вместе с Аксараяем отдал сыну Кутб ал-дин Меликшаху II (1142-75гг.).<sup>26</sup>

Эмиссия монет Данишмендидов была тоже медная. На монетах не было упоминаний о месте и времени чекана. Правители династии выпускали монеты не только в Малатье и Сивасе, но и в Кайсери,<sup>27</sup> где чеканил свои монеты Имад ал-дин Дзун Нун. Все монеты данишмендидского происхождения очень интересны. Особенность чеканки в первую очередь заключается в том, что несмотря на свое мусульманское происхождение, надписи на монетах часто встречаются на греческом языке, а на одной из сторон монеты можно встретить бюст Христа, а также сцену инвеституры

<sup>22</sup> G. Kurkman, *ibid.*, т. 96-97:

<sup>23</sup> S. Albut, *ibid.*, т. 94:

<sup>24</sup> Е. Багдасян, *К Истории Княжества Данишманов*, ВОН, 9, 1987, стр. 52-58; P. Wittek, *Deux Chapitres de l'Histoire des Turcs de Roum, Byzantion*, 11, 1936, pp. 285-319; T. Rice, *The Seljuqs*, London, 1966, p. 51.

<sup>25</sup> В. Гордлевский, *ibid.*, т. 28:

<sup>26</sup> A. Nezihi, *ibid.*, т. 166:

<sup>27</sup> S. Albut, *ibid.*, т. 63:

с крестом. Например, в 1162г. в Малатье Имад ал-дин Дзун Нун выпустил монету с изображением Мадонны.<sup>28</sup>

Рассматривая данишмендидский чекан стоит обратить внимание на заимствования и имитации. Установлено, что Данишмендиды имитировали чекан византийского анонимного фолиса. Этот пример находит свой аналог при рассмотрении монет второго правителя, Мелика Гази (1104-34гг.).<sup>29</sup> По мнению Ф.Гриерсона имитация византийских медных монет началась не ранее 1081г.<sup>30</sup> Выше нами уже отмечалась определенная идентичность монет данишмендида Насир ал-дин Мухаммеда с монетами его современника Салтукида Изз ал-дин Салтука ибн Али.

Данишмендидские монеты осуществляли д.о. юго-западных областей Армении, конкретно, территорий, лежащих между городами Малатья и Сивас. Сложно сказать, в каком количестве чеканились монеты Данишмендидов и какова была интенсивность выпуска монет той или иной династии. Сегодня в Армении они практически не встречаются. Они редки и для регионов Закавказья. Из единичных находок следует отметить монету данишмендида Мухаммада II ибн Гази (1134-42гг.), по заявлению Пахомова идентичную описанной А.Тевйидом под #102.<sup>31</sup> Монета была найдена в 1939г. в Старой Гяндже. Другой пример нахождения отмечен в 1953г. в Дербенте. Монета выпущена в Сивасе Имад ал-дин Дзун Нуном.<sup>32</sup>

#### *Бектимуриды (Шах Армены) Хлата*

В 20ые гг. XIIв. в Хлате утвердился одна из сельджукских ветвей. Родоначальником рода, впоследствии получившего титул 'Шах Армен', был некий Сукман из рода Артукидов.<sup>32</sup> В их территории входил город Хлат и северные части Ванского озера. В середине XIIв. Бектимуриды предприняли походы для завоевания северных областей Армении, однако, в обоих случаях потерпели поражение.<sup>33</sup> Со времени айюбидского завоевания области Шах Арменов отошли к султану Ал-Ахваду Айюбу (1200-10гг.), а позже к Ал-Ашрафу ал-Мусе (1210-21гг.).<sup>34</sup>

Монетная эмиссия Бектимуридов была столь же немногочислена, как и у предыдущих династий. Хотя на монетах место выпуска никогда не обозначалось, принято считать, что все они выпущены в Хлате. Наибольшего распространения достигли монеты Сейф ал-дин Бектимура (1189-93гг.) с изображением лошади и атакующего волка, а также его же монеты, чеканенные в 1182г. с изображением лошади скопированной с монет селевкида Антиоха Великого.

Чекан Мцбина 1186г.

Л.ст.: Изображение.

Об.ст.: /Повелитель правоверных/ эмир ал-дин /повелитель правоверных /Бадр ал-Дунья/.

Справа - /Султан величайший/. Слева - /ал-дин Гийас/.

ГИМА, АЕ 17617/18; Д=23мм; В=8.40г; С↑=1 (Фото 5).

<sup>28</sup> *Խ. Մ ու ի զ Ե ղ յ Կ ի, Դրամավանի շրջանառությունը...*, էջ 219-220:

<sup>29</sup> *E. W h e l a n, A Contribution to Danishmendid History: The Figured Copper Coins, ANS MN 5, 1980, pp.137-138.*

<sup>30</sup> *A. B e l l i n g e r, Ph. Grierson, Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection, Vol.2, Washington, 1973, p. 74.*

<sup>31</sup> *Е. Па х о м о в, Монетные Клады Азербайджана...*, том.4, Баку, 1949, стр.39.

<sup>32</sup> *Е. Па х о м о в, Монетные Клады Азербайджана...*, том.7, Баку, 1957, стр.53-54.

<sup>33</sup> *Պ. Ղ ա տ ի ղ յ Կ ի, Վաստրիավանի Տան Արմենիները, «Դրամագիտական հարցեր», Հայկից, 1986, էջ 32-33:*

<sup>33</sup> *Նույն տեղում, էջ 33:*

<sup>34</sup> *Նույնը:*

Продолжая тему заимствований и имитаций следует заметить, что у Шах Арменов монеты Бадр ал-дин Аксункура (1193-7гг.) во многом заимствованы у византийских анонимных фолисов, которые бектимурид перечеканил и пустил в обращение как свои собственные.<sup>35</sup>

Монеты Бектимуридов обеспечивали д.о. областей Васпуракана, охватывающих города Хой, Муш, Салмаст, Сасун, Хлат. На территориях к северу от него (Ани и Двин) монеты этой династии в торговых отношениях не использовались.

#### *Айюбиды Майяфаркина и Хлата*

В 1182г. Саладин (1169-93гг.), подозревая Зенгида Мосула Сейф ал-дин Гази II (1169-80гг.) в создании против него военной коалиции, предпринял поход на Мосул.<sup>36</sup> Ему удалось аннексировать столицу Зенгидов, а также города ал-Джазира, Едесса, Ракка, Сарудж, Мцбин и Синджар. В конце капитулировал Диарбекир. Фактически, все государство Зенгидов оказалось под контролем Айюбидов. В этих провинциях он оставил верных ему наместников, а сам вернулся в Египет. В 1185г. Саладин повторил кампанию в территории атабеков. В этом ему помогали Артукид Кайфа Нур ал-дин Мухаммад (1174-85гг.), Имад ал-дин Абу Бакр (1185-1203гг.) правивший в Харберде и Хусам ал-дин Юлук Арслан (1184-1201гг.) – атабек Мардина. Саладин сумел воспользоваться взошеством на престол Шах Армена Сейф ал-дин Бектимура и вместе с Мосулом установить свое влияние в Майяфаркине.<sup>37</sup> После смерти Саладина, в начале XIIIв., Майяфаркин, Синджар и территории Шах Арменов перешли во владение к брату, султану ал-Ахваду Айюбу (1199-1210гг.), а затем к ал -Ашрафу ал-Мусе, которые обозначили рождение самостоятельной ветви Айюбидов в этих областях. Они унаследовали титул 'Шах Армен', который стал появляться на монетах.<sup>38</sup>

Военные кампании айюбидов нашли свое отражение в иконографических монетах, художественное исполнение которых ни чем не уступало монетам Зенгидов и Артукидов.<sup>39</sup> После установления султанской власти в Майяфаркине и во владениях Шах Арменов, султаны начала XIIIв. начали выпускать высококачественные, толстые и рельефные монеты. Из монет султана ал-Ахвада Айюба, кроме выпущенных им в Хлате серебряных дирхемов, известен тип описывающийся ниже.

Выпуск 1203г. Майяфаркина.

Л.ст.: Изображение монарха. По бокам: /Мелик/ Ахвад/. В круговой легенде: /чеканен в Майяфаркине в 600/.

Об.ст.: /Сейф ал-дин/ Нет Бога кроме Аллаха /Мухаммед посланник / Аллаха Имам /ан-Насир ли-дин/Аллах повелитель /правоверных/.

Слева: /Абу Бакр ибн Абу.../. Справа: /Мелик правосудный/.

ГИМА, АЕ17475/11; Д = 30мм; В = 11.80г; С↑ = 10 (Фото 6).

Ал-Ашраф ал-Муса выпускал серебряные монеты в Дамаске. Кроме них, в 1215г. в Майяфаркине он чеканил монеты с изображением монарха на л.ст. и пятистрочной легендой на об.ст.

Л.ст.: Султан с шаром в руке. Сверху и снизу дата - 612. По окружности: /Мелик ал-Ашраф Музаффар ал-дин Абу ал-Муса, Майяфаркин /.

<sup>35</sup> S. A l b u m , *Աշխ. Էջ 97:*

<sup>36</sup> B. L e w I s , *Saladin and the Assassins, BSOAS XV/2, 1953, p.239.*

<sup>37</sup> B. C u r t i s , *Salah ad-din and the Jazira Campaigns of AH 578 and AH 581: The Evidence of the Figured Coins, Israel Numismatic Journal 10, 1988/89, pp.167-169.*

<sup>38</sup> P. B a l o g , *Coinage of the Ayyubids, London, 1980, p.257; I.Artuk, pp.245-247; Պ. Մալախյան, Աշխ. Էջ.33:*

<sup>39</sup> B. C u r t i s , *Աշխ. Էջ 88-97:*

Об.ст.: /Правоверных/ Имам ан-Насир /ли-дин Аллах /повелитель /.  
Круговая надпись: /Мелик правосудный/ Сейф ал-дин/ Абу Бакр ибн Айюб/.

ГИМА, АЕ 17427/47; Д=31.5мм; В=11.92г; С<sub>↑</sub>=1 (Фото 7).

Несомненно, оба султана имели эмиссию в Хлате<sup>40</sup>, однако она не была так популярна как типы, описанные выше. Монеты Айюбидов конца XII- начала XIIIвв. имели большую степень обращения, в основном в южных областях Армении. Качественные параметры свидетельствуют, что эти монеты имели определенное кредитное значение в период кризиса серебра. Трудно определить ареал их обращения. На наш взгляд, на север от владений Айюбидов они не проникали. Нет свидетельств, доказывающих обращение таких монет в Ани и на территориях северо-восточной Армении. Монеты Саладина и его последователей не проникали в области княжества Захаридов и использовались в качестве денежной массы только в южных областях Армении.

#### *Артукиды Диарбекира, Хисн Кайфы, Мардина и Харберда*

Из династий тюркского происхождения Артукиды занимали южные территории исторической Армении. Это-области Диарбекира, Хисн Кайфы, Мардина и Харберда. Мардинская ветвь Артукидов, включавшая в себя город Майяфаркин, просуществовала дольше всех и пала в 1408г. Каждая из ветвей имела собственный монетный выпуск. На большинстве типов монет, чеканенных в районе Диарбекира, отсутствуют данные о месте и времени выпуска, хотя считается, что они должны были быть чеканены в Диарбекире и ал-Хисне. Несмотря на малочисленность, выпуск харбердской линии артукидов, в основном принадлежит Абу Бакру I (1185-1203гг.) и датируются 1186 и 1189гг., а также 1187-93гг. и 1195гг.<sup>41</sup> Его монеты весьма редки и вероятно были результатом работы местного монетного двора. Атабеки Мардина дали наиболее богатую эмиссию. Фактически, только они сумели добиться серебряной эмиссии, появившейся в Дунайсире к 1218-26гг.,<sup>42</sup> а позже в Кайфе, Амиде и самом Мардине.<sup>42</sup> Это были первые серебряные дирхемы конца 'СК', во многом скопированные с оригиналов айюбидского и сельджукского происхождений.

Из монетных типов мардинской линии выделяются чеканенные Наджм ал-дин Алпи (1152-76гг.), Кутб ал-дин Иль-Гази II (1176-84гг.) и Хусам ал-дин Юлук Арсланом (1184-1201гг.). Из этих монет следует выделить монеты первых двух атабеков. В собрании монет из Двина имеется монета Наджмад-дин Алпи с именем халифа ал-Мустанджида (1160-70гг.).

Л.ст.: В центре женская голова. Вокруг нее легенда: /Наджм ал-дин / мелик Дийарбекир / Алпи ибн Иль-Гази / ибн Артук/

Об.ст.: В центре две головы, вокруг которых надпись: /Нет Бога кроме Аллаха/ Мухаммед посланник Аллаха/ ал-Мустанджид биллах / повелитель правоверных/.<sup>43</sup>

ГИМА, АЕ 18722/216; Д=33мм; В=14.68г; С<sub>↑</sub>=7 (Фото 8).

В той же коллекции хранится дирхем Кутб ал-дин Иль-Гази II, чеканенный 1183г. с именем халифа ан-Насира ли-дин Аллаха (1180-1225гг.).

<sup>40</sup> P. Balog, *ibid.*, т. 250-260; N. Nicol, *ibid.*, т. 152.

<sup>41</sup> N. Nicol, Ral-Nabara wy, J. Bacharach, *ibid.*, т. 110-111; I. Artuk, *ibid.*, т. 400-405.

<sup>42</sup> W. Spengler, W. Sayles, *Turcoman Figured Bronze Coins and Their Iconography, Vol.1, Lloyd, 1992, pp.61-68.*

<sup>42</sup> L. Ilich, *Die Münzprägung des Letzten Artuqiden von Qayfa und Amid, Münsterische Numismatische Zeitung 69, 1976, pp.9-13*

<sup>43</sup> X. Мушегян, *Денежное обращение Двина по нумизматическим данным, Ер., 1962, стр.85.*

Л.ст.: Два бюста, где левый больше правого. Сверху словами написано - 579.

Об.ст.: / ан-Насир ли-дин / повелитель правоверных / проклят тот кто подделывает этот дирхем /. По сторонам написано: / Наджм ал-дин ибн / Кутб ал-дин ибн / Хусам ал-дин /.<sup>44</sup>

ГИМА, АЕ 7707; Д=34мм; В=14.89г; С↑=9 (Фото 9).

Трудно судить о степени распространения монет других атабеков этой ветви Артукидов. Однако, описанные монеты, отображающие определенные типы артукидской медной эмиссии, видимо наиболее распространенные, подтверждением чему могут служить обнаружения аналогичных монет на территории северо-восточной Армении и Грузии.

#### *Зенгиды Мосула, Синджара, Алеппо и ал-Джазиры*

Хотя территории Зенгидов фактически находились вне границ исторической Армении и в основном составляли области Северной Месопотамии и Сирии, их прекрасно чеканенные художественные монеты также в большом количестве обращались по всей территории Передней Азии и Ближнего Востока.

Родоначальник династии Касим ал-Даула Аксункур был сыном раба Султана Меликшаха I (1072-92гг.). За службу и преданность в 1086г. он был назначен правителем Алеппо, где был в подчинении у Тутуша ибн Алп Арслана до смерти Меликшаха в 1092г. После смерти Аксункура его сын Имад ал-дин взял себе имя 'Зенги', значение которого пока не ясно. В 1127г. он был назначен правителем Мосула и атабеком двух сыновей султана Ирака Мугиз ал-дин Махмуда (1118-31гг.). Вскоре, предприняв успешную кампанию, Имад ал-дин Зенги овладел крупными городами Северной Месопотамии ал-Джазирой, Мцбином и Синджаром. После его смерти территории были разделены между его двумя сыновьями. Старший, Кутб ал-дин Мавдуд (1149-70гг.), унаследовал Мосул, а Нур ал-дин Махмуд (1146-74гг.) - Алеппо. Еще позже и эти владения были разделены на уделы, в результате чего, впоследствии появились ветви Зенгидов ал-Джазиры, Синджара и Шахразура.<sup>45</sup>

По примеру Артукидов, Зенгиды Алеппо производили превосходные иконографические монеты. В различных частях владений монетное дело развивалось по разным путям. Например, в Шахразуре монеты чеканились только из золота. Они принадлежали Имад ал-дин Зенги и Нур ал-дин Иль-Арслану и были чеканены в I половине XIIIв.<sup>46</sup> Выпуск монет у сирийских атабеков был намного популярнее и нашел свое широкое применение во многих областях Армении. Преимущественно это эмиссии двух городов: Алеппо и Дамаска. Немногочисленные серебряные дирхемы чеканенные в период 'СК' являются продукцией Зенгида Алеппо ал-Салих ибн Махмуда (1173-81гг.), чекана 1176г.<sup>47</sup>

Основная масса монет Зенгидов появилась в Мосуле и Синджаре. Монеты выпуска ал-Джазиры хронологически относятся к концу XII и I половине XIIIвв. Они встречаются в Армении, но численно уступают монетам из Синджара и Мосула. Среди выпусков Синджара надо отметить монеты Кутб ал-дин Мухаммеда (1197-1219гг.). Ему принадлежат 4 типа монет, датированные 1197-1210гг. Они не редки и иногда попадаются на

<sup>44</sup> X. Мушегян, *Денежное обращение Двина по нумизматическим данным*, Ер., 1962, стр. 85:

<sup>45</sup> W. Spen gl e r, W. S a y l e s, *Turcoman Figured Bronze Coins and Their Iconography*, Vol.2, Lloyd, 1996, pp.1-2.

<sup>46</sup> S. A l b u m, *ԱԶԷ. ԶԶԷ*, էջ 94:

<sup>47</sup> N. N i c o l, R a l - N a b a r a w y, J. B a c h a r a c h, *ԱԶԷ. ԶԶԷ*, էջ 113; I. A r t u k, *ԱԶԷ. ԶԶԷ*, էջ 419:

территории нынешней Армении. Одна из его монет была найдена при раскопках Двина.



Монета чеканенная в Синджаре в 1203-1205гг.

Л.ст.: В центре голова женщины. Вокруг: / Мелик Мансур Кутб ал-дин Мухаммед ибн Зенги ибн Мавдуд в эпоху Санджара Шах Нуха /.

Об.ст.: /Имам ан-Насир / ли-дин Аллах повелитель / правоверных мелик/ правосудный Сейф ал-дин /Абу Бакр ибн Айюб/. Справа: /чеканен в Синджаре/. Слева: /600/.<sup>48</sup>

ГИМА, АЕ17170/157, D=27-29мм; В=11-13гг; C↑=12 (Фото 10).

Из монет атабеков мосульской линии в обращении Армении большую роль играли монеты Кутб ал-дин Мавдуда (1149-70гг.), Сейф ал-

<sup>48</sup> Х. Мушегян, *Денежное обращение Двина...*, стр. 86.

дин Иль-Гази II (1170-80гг.), Изз ал-дин Масуда I (1180-93гг.) чекана Мосула 1189-91гг. и Насира ал-дин Махмуда (1219-34гг.) выпущенные в Мосуле в 1223г. В коллекции Двина имеется одна монета Сейф ал-дин Иль-Гази II чеканенная в Мосуле в 1176г.

Л.ст.: В центре голова, слегка обращенная влево. По бокам словами - 572. Об.ст.: /Гази ибн/ мелик правосудный/ справедливый мелик умара / Востока и Запада /Тогрул Текин атабек/. По краям дано - /Мавдуд ибн Зенги/.<sup>49</sup>

ГМИА, АЕ 17818/261; Д=28мм; В=12.42г; С↑=6 (Фото 11).

Говоря о городах и монетном деле областей исторической Армении надо сказать, что Зенгиды имели определенную медную эмиссию в Мцбине. В 1179г. Сейф ал-дин Гази II выпустил медный дирхем в Мцбине, который, возможно одновременно выпускался и в ал-Джазире.<sup>50</sup> В 1197г. там же был выпущен дирхем Нур ал-дин Арсланшахом (1193-1211гг.).<sup>51</sup>

Монета чеканенная в Мцбине в 1179г.

Л.ст.: Мужская голова со шлемом повернутая влево. Вокруг написано: /Нет Бога кроме Аллаха, Мухаммед посланник Аллаха/.

Рев: /Биллах/ ал-Мустади /Гази ибн/Мавдуд/. Имеется указание монетного двора: /Нисибин (Мцбин)/.

ГМИА, АЕ19675; Д=31мм; В=15.09г; С↑=5 (Фото 12).

## ՀԱՅԱՍՏԱՆԻ XII-XIIIրդ. ԴՐԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

\_\_\_\_\_ Ամփոփում \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Ա.Վարդանյան \_\_\_\_\_

Հողվածը նվիրված է Հայաստանի XII-XIIIրդ. դրամական շրջանառության ուսումնասիրմանը: Այն բաղկացած է երկու հիմնական մասերից:

Առաջին մասում քննարկվում են Հյուսիս-արևելյան Հայաստանի դրամական շրջանառության որոշ հարցեր, ինչպես նաև քննության են առնվել տեսակետներ, որոնք կան դրամագիտական մասնագիտական գրականության մեջ:

Հողվածի երկրորդ մասում տրված է “Արծաթե ճգնաժամի” ժամանակաշրջանում Հարավ-արևմտյան Հայաստանում գերիշխող մուսուլմանական հարստությունների՝ շրջանառության մեջ զտնվող հիմնական դրամական խմբերի նկարագրումը:

<sup>49</sup> X. М у ш е г я н, *նշվ աշխ.*, էջ 113:

<sup>50</sup> W. S p e n g l e r, W. S a y l e s, *Turcoman Figured Bronze Coins and Their Iconography*, Vol.2, (Lloyd, 1996), p.12.

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 24:

ՄՈՒՐՍԻԼԻ Ի-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՐԹՈՒՂԻՆ

Խեթական թագավորությունը Առաջավոր Ասիայի հզոր պետության վերածած Մուրսիլի I-ը (1620-1590 թթ. մ.թ.ա.) նվաճումներ է իրագործել ինչպես Փոքր Ասիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Վերջիններս ուղղված էին Ասորիքի, Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի բնակիչների դեմ: Ասորիք և հարավային Միջագետք Մուրսիլի I-ի ձեռնարկած նվաճումների մասին հանվան է հիշատակում է նրա Տարեգրության այն հատվածը, որը վաղուց է արժանացել արևելագետների ուշադրությանը:

Տարեգրության մեջ խոտիների և Խոտի երկրի մասին ասվածները կարող են վերաբերել ոչ միայն հյուսիսմիջագետքյան խոտիներին և նրանց երկրին՝ Միտանի // Խանիզայրատին, այլև Հայկական լեռնաշխարհին և նրա հնդեվրոպական բնակչությանը: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհում գտնվող երկու նույնանուն քաղաքներից՝ սեպագրությամբ <sup>u</sup>U-uš-šu-ha-na<sup>1</sup> և <sup>u</sup>U-uš-šu-ha-an-na<sup>2</sup> միայն առաջինն է, որ կրում է Hur-la-aš մակդիրը. Hur-laš Uššuhana նշանակում է «Խոտիական Ussuhana» և իր երկրորդ մասով տարբերակն է ներկայացնում Միտանի // Խանիզայրատի Uššukanni // Uaššukanni մայրաքաղաքի անվան: Մյուս Ussuhana-ն՝ Հայկական լեռնաշխարհում գտնվողը<sup>3</sup>, այդպիսի մակդիր չունի:

Մուրսիլի I-ի հարավ-արևելյան և արևելյան արշավանքներին է վերաբերում Տարեգրության այն հատվածը<sup>4</sup>, որն սկսվում է 16-րդ տողից LUGAL-uš-ša pa-it<sup>u</sup> ... («Թագավորն ուղևորվեց քաղաք...») բառերով: Քաղաքի անունը՝ մասնավորապես, և արձանագրությունն՝ ընդհանրապես, պակասավոր են: 21-րդ տողում պահպանվել է <sup>u</sup>Ha-ma-ra-an, որը հնարավոր է դարձնում նախորդ տողի <sup>u</sup>Ha-ն առնչել նրան և վերականգնել Ha-ma-ra քաղաքի անունը: Հաջորդ պահպանված տեղանունն է 27-րդ տողում առկա Hur-la-aš <sup>u</sup>U-uš-ša-..., որի ջնջված վերջնամասը վերականգնվում է ha-na ձևով: Սա «Խոտիական Ուսուխանա քաղաքն» է՝ Միտանի-Խանիզայրատի մայրաքաղաքը և Մուրսիլի I-ի հարավ-արևելյան արշավանքի վերջնակետը: Ուրեմն, Խամարա // Համարան, որը գտնվում էր Մավաթիայից հյուսիս<sup>5</sup> լինելու էր Մուրսիլի I-ի հարավ-արևելյան արշավանքի ելակետը: Մրա դիմաց՝ Եփրատի ձախ ավիին է գտնվում Իզդուլ // Իզդուլու բնակավայրը, որը Խամարա// Համարա բնակավայրի հետ է կապվում Եփրատի հայտնի գետանցով: Վերջինս գոյություն է ունեցել նաև հին դարերում<sup>6</sup>, երբ հայտնի էր իր մոտ գտնվող Տոմիսա//Թմնիս բերդի անունով<sup>7</sup>: Իզդուլի մոտ գտնված ուրարտական թագավոր Մարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) արձանագրությունը<sup>8</sup> ցույց է տալիս, որ այս գետանցից են օգտվել ուրարտական թագավորները անդրեփրատյան տարածքներ արշավելիս: Ըստ երևույթին, այս նույն գետանցով էր Մուրսիլի I-ը անցել Եփրատը Խամարա // Համարայի մոտ և Իզդուլից հարավ-արևելյան ուղղությամբ իր բանակը հասցրել մինչև «Խոտիական Ուսուխանա քաղաք», այսինքն՝ Միտանի // Խանիզայրատի Uššukanni // Uaššukanni մայրաքաղաք:

Մուրսիլի I-ի տարեգրության 30-րդ տողից սկսվում է նրա արևելյան արշավանքին վերաբերող տեղանունների հիշատակումը: Այստեղ ևս արձանագրությունը պակասավոր է: Տարեգրության 30-րդ տողում հիշատակված է <sup>u</sup>U-Ta...-ն, 31-րդում՝ <sup>u</sup>U-La-ն (վերականգնված է La-wa-an-da), 32-րդում՝ <sup>ku</sup>Tak-ša-an-na-ն, 33-րդում՝ <sup>u</sup>U-Ha-am-ša-...-ն,

<sup>1</sup> Keilschrifturkunden aus Boghazköi, Staatliche Museen zu Berlin, Vorderasiatische Abt., Hf. 1-30, Berlin, 1923-1939 (այսուհետև՝ KUB), XXXI, 64, II, տող 27:

<sup>2</sup> KUB, XXXIV, 43, I, տող 7:

<sup>3</sup> В. Х а ч а т р я н, Восточные провинции Хеттской империи, Ер., 1971, стр. 123.

<sup>4</sup> KUB XXXI, 64, II, տող 16-38:

<sup>5</sup> В. Х а ч а т р я н, Գշվ. աշխ., էջ 97:

<sup>6</sup> Н. А д о н ц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 33.

<sup>7</sup> Մ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 53:

<sup>8</sup> Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 178, 201:

34-րդում՝ <sup>9</sup> <sup>U</sup>Ha-aš-šu-wa-aš-ը և <sup>U</sup>...a-ra-a-aš-ը (վերականգնված է Hal-la-ra-a-aš), 37-րդում՝ <sup>U</sup>Ta-ga-ra-mi-ն, իսկ 38-րդում՝ խեթերի մայրաքաղաքի <sup>U</sup>Ha-at-tu-ši անունը<sup>9</sup> :

Մուրսիլի I-ի այս երկրորդ՝ արևելյան արշավանքի ելակետը եղել է <sup>U</sup>Ta...-ն, որը, հավանաբար նույնական է 37-րդ տողում հիշատակված Tagarami-ի հետ: Մայրաքաղաք Hattusi-ից առաջ հիշատակված այս Tagarami-ն նույն Թեգարանա // Թեգարանան է<sup>10</sup>, որի վրայով Մուրսիլի I-ը վերադարձել էր իր մայրաքաղաք: Նույնանուն կենտրոնով այս երկիրը գտնվում էր Արևելյան և Արևմտյան Եփրատների միացման վայրից արևմուտք՝ ներկայիս Հասանչեղերի շրջանը ներառյալ<sup>11</sup>: <sup>U</sup>Ta...-ի և <sup>U</sup>Tagarami-ի նույնության դեպքում կարելի է ենթադրել, որ Մուրսիլի I-ը Եփրատի աջ ափից ձախն էր անցել հետագա Ճոփքի Լուսաթառին բնակավայրի (ավելի ուշ Կասյան-Մադեն) <sup>12</sup> մոտ:

Եփրատից արևելք հետագա Ճոփքում, Արածանիի ստորին հոսանքի շուրջ տարածված է Խարբերդի դաշտը, որտեղ և գտնվելու էր <sup>U</sup>Ta...-ից հետո հիշատակված <sup>U</sup>Lawanda-ն: Սա ևս լինելու էր երկրանուն: Նրա տեղադրությունը ճշտվում է խեթական մեկ ուրիշ քաղաքների՝ Սուպիլուլիումա I-ի (մ.թ.ա. 1380-1346 թթ.) թողած այն արձանագրության միջոցով, որտեղ Lawanda-ն հիշատակված է Aya(<sup>U</sup>A-wa) և Ururuwa (<sup>U</sup>U-ru-ru-wa) քաղաքների միջև<sup>13</sup>: Ururuwa (<Uru-uwa) քաղաքը հետագա Ռոքոն է Բդիի շրջանում, որի անվան հայկական նախաձևին ավելացված է խեթալուվիական -uwa տեղանվանակերտ վերջածանցը<sup>14</sup>: Իսկ Aya-ն լինելու էր հետագա Ավշենը (Ավշենի, Ավշին), որը գտնվում էր Արևմտյան Եփրատի ձախ ափին, Կամախ քաղաքից 32 կմ հարավ-արևմուտք<sup>15</sup>: Ավշեն<\*Ավաշեն (հմտ. Բագրատ<Բագարատ, Մրմանց<Մրամանց, վարպետ < վարդպետ<վարդապետ, աշկերտ<աշակերտ և այլն), որտեղ \*Ավա- արմատին ավելացված է հայերն շեն «ավան, գյուղ» բառը: Ավշենի և Ռոքոնի միջև հիշատակված Layanda-ն կարող էր լինել միայն Խարբերդի դաշտը: Ժամանակին այս դաշտը Պոլիբիոսը կոչում էր Καλωπεδίων<sup>16</sup> <Καλω-πεδιός «Գեղեցիկ դաշտ»<sup>17</sup>: Նույն

այս դաշտը բյուզանդացի մատենագիր Միքայել Ատտալիաստեղը կոչում է 'Ανθίος ('Ανθίος, 'Ανθίος)<sup>18</sup>: Նրա հիմքում հայերեն *անդ* «անդաստան, ագարակ, արտ, արտոբայք»<sup>19</sup> բառն է՝ արևմտահայ բարբառներին բնորոշ *դ>թ* հնչյունափոխությամբ: Անդ//հանդ բառը հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանող բառերից է: Հավանաբար նույն ծագումն ունի նաև Մուրսիլի I-ի հիշատակած Layanda (\*Lay-anda) տեղանվան երկրորդ բաղադրիչը: Բայց հմտ. նաև հայկական այնպիսի տեղանունների երկրորդ բաղադրիչները, ինչպիսիք են *Եռանդ-ը*, *Հարանդ-ը*, *Մարանդ-ը*, *Վանանդ-ը*, *Վարանդա-ն*: Ի դեպ, բացառված չէ, որ տեղանվանակերտ վերջածանցների վերածված սրանց -անդ բաղադրիչները գոնե իրենց մի մասով նույն ծագումն ունենան, ինչ *անդ* // *հանդ* բառը: Խարբերդի դաշտի հնագույն Layanda (Lay-anda) անվան առաջին բաղադրիչը, ըստ այսմ, կարող է նույնական լինել հայերեն լալ «լավ, աղեկ», «շահավետ, օգտակար» բառի հետ, որի ազգակիցներն են համարվում հուն. λωίς «լավ, շա-

<sup>9</sup> KUB, XXXI, 64, II, տող 30-38:

<sup>10</sup> B. X a ч а т р я н, նշվ. աշխ., էջ 97:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 94 - 96:

<sup>12</sup> U. Եր ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 54:

<sup>13</sup> KUB, XXXIV, 43, I, տող 5:

<sup>14</sup> B. X a ч а т р я н, նշվ. աշխ., էջ 124:

<sup>15</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն, U. Մ ե լ ի թ -Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ռ ս ե դ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, (այսուհետև՝ Տեղ.բառ.) հ. I, Եր., 1986, էջ 367:

<sup>16</sup> Հմտ. հ.-ե. \*au- «գիշերել», որից հայերեն օթեան<աթեան և այլն (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1979, էջ 609 - 610):

<sup>17</sup> Polib., VIII, 25, (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր., 1944, էջ 108, 112; U. Երեմյան, նշվ. աշխ., էջ 43):

<sup>18</sup> U. Եր ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 43, Կոստանդին Ծիրանածին, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1970, «Fines orientales imperii Byzantini C, Annuaire 960» քարտեզը:

<sup>19</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. I, Եր., 1971, էջ 186; Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 17:

հավետ», λωϊον «ավելի լավ», լիտվ. *labas* «լավ» (կասկածով) բառերը<sup>20</sup>: Ուրեմն, *Lauanda*-ն ուղղակի նշանակում է «լավ հանդ» // «Գեղեցիկ դաշտ» // հուն. *Κολλο-πεδιός*:

Խարբերդի դաշտից Հայկական լեռնաշխարհի խորքերը կարելի էր թափանցել Արածանիի հոսանքն ի վեր: Հենց այդպես է, մեր կարծիքով, վարվել Մուրսիլի I-ը: Նրա հիշատակած հաջորդ տեղանունը <sup>kur</sup>Taksana (<sup>kur</sup>Tak-ša-an-na) երկրանունն է: Այն կազմված է -ana տեղանվանակերտ մասնիկով (հմմտ. *Գերջան, Երեսան, Մուսան* և այլն) Taks-արմատականից: Վերջինս նույնական է հ.-ե. \*tek- արմատից սերած \*teks- նախածին հետ, որից են մաս խեթ. takš- / takkeš- «անել, միացնել», «կազմել, շինել», «պատրաստել», հին հնդկ. *tákṣati* «անում է, հմտորեն շինում է», *tákṣā* «հյուսն» բառերը<sup>21</sup>: Նույն արմատն են պարունակում մաս հուն. *τέχνη* «արհեստ», «արվեստ», *τέκτων* «հյուսն» և հայերեն *թեքել* «կռնով կոկել, շինել, արել», «ծեծել, կռանել, ծռել՝ հարկավոր ձևը տալու համար» բառերը<sup>22</sup>:

Հայերեն այս արմատն է ընկած Քսենոփոնի հիշատակած *Θήχης* // *Θήχτι* լեռնանվան հիմքում, որի «արհեստագործական-մետաղագործական» ստուգաբանության առթիվ մախ ուշագրավ է Քսենոփոնի հետևյալ վկայությունը. «(Մոսինոյկների) երկրի միջով, ինչպես թշնամական, այնպես էլ բարեկամական, հեղեմներն անցան ութ կայան և հասան խայրուքներին (*Χάλυβες, Χάλυβος, Χάλυψ*): Մրանք փոքրաթիվ էին և հպատակվում էին մոսինոյկներին. նրանց մեծագույն մասի ապրուստի աղբյուրը երկաթագործությունն էր»<sup>23</sup>: Մրանք Պարխարյան լեռնաշղթայի հյուսիսային լանջերին բնակված ցեղեր էին: Նույն լեռնաշղթայի հարավային լանջերին էին բնակվում Պլինիոսի հիշատակած արմենոխալիքները (*armenochalybes* < *armen - o - chalyb-es*)<sup>24</sup>: Մրանց անունները բացահայտ կապի մեջ են հունարեն *Χάλυβος* // *Χάλυψ* «պողպատ» բառի հետ<sup>25</sup>: Պատահական չէ, որ Էսքիդսը (մ.թ.ա. 525-456թթ.) խայրուքներին որակում է *θεδρο-τέκτων* (*θεδρο-τέκτωνος*) «հմուտ երկաթագործ» բառով<sup>26</sup>: *Θήχτι* անունը կրած լեռան նման արհեստի և հատկապես մետաղամշակման տարբեր ճյուղերի տեղերում գոյությանը պետք է բացատրել Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում *Թեքման* // *Թարքման* անվամբ տեղանունների գոյությունը<sup>27</sup>: Այս տեսանկյունից ուշագրավ է Փավստոս Բուզանդի այն վկայությունը, որը վերաբերում է Հակոբ Մծբնացու (և նրա մերձավորների) Հայաստան ժամանմանը: Նա «գայր հասան էր ի լեռն Երկաթահատացն եւ Կապարահատացն, եւ որ ընդ նմայն էին, ընդ Ըորջտունիս»<sup>28</sup>:

Մուրսիլի I-ի հիշատակած <sup>kur</sup>Taksana երկիրը համապատասխանում է հետագա Մեծ Հայքի Բայախովիտ // Արշամաշատ և Պաղնատուն գավառներին: XIX դարում ևս սրանք հայտնի էին իրենց հայ հմուտ արհեստավորներով, մանավանդ՝ մետաղագործներով: <sup>29</sup>Պատահական չէ, որ «Մոքոս» վիպերգի կենտրոնական դեմքը՝ շինարար վարպետ Մոքոսը պաղինցի/բաղինցի է (Պաղինը գտնվում էր Պաղնատուն գավառում)<sup>30</sup>: Նախ և առաջ հիշարժան է *Մոքոս* անվանը Հովսեփ Դանիելյանի տված

<sup>20</sup> Հ. *Ա ճ ա ն յ ա ն, նշվ. աշխ., հ II, Եր., 1973, էջ 268; Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 21, ծան. 43:*  
<sup>21</sup> *Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в, Индоевропейский язык и индоевропейцы, т I-II, Тбилиси, 1984, стр. 148,706.*  
<sup>22</sup> Հ. *Ա ճ ա ն յ ա ն, նշվ. աշխ., հ II, էջ 178; Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ II, Եր., 1944, էջ 102:*  
<sup>23</sup> *Xen., Anab, V, V, I, Քսենոփոն, Անարախիս, Թարգմանությունը Մինոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 121:*  
<sup>24</sup> *Plin. Nat. Hist., VI, 11, 1 (Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Եր., 1944, էջ 12):*  
<sup>25</sup> *Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, стр. 1763.*  
<sup>26</sup> *Նույն տեղում, էջ 1472:*  
<sup>27</sup> *Տեղ. բառ., հ II, Եր., 1988, էջ 445-446; Գ. Սրվանձադյանց, Երկեր, հ II, Եր., 1982, էջ 401:*  
<sup>28</sup> *Փ ա տ ո ս ը ն ի Բ ի ղ ա ն ղ ա գ ը յ ա յ պատմություն Հայոց, Եր., 1987, Գ, Ժ:*  
<sup>29</sup> *Գ. Սրվանձադյանց, նշվ. աշխ., հ II, էջ 394, 406, 409:*  
<sup>30</sup> *Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 76:*

բացատրությունը: Նա գրում է, «Մօքոս «մեծ» ըսել է, կ'ըսեն դարբինք եւ որմնադիրք եւս մեծ մուրճ մ'ունին գոր «մօքոս» չաքունն (չեքիճ) կը կոչեն»<sup>31</sup>: Ըստ վիպերգի, «Վարպետ Մոքոսն ու նրա հայ գործակիցները քաղաքներից բացի կառուցում են բերդեր, գյուղեր, եկեղեցիներ, բաղնիքներ, ավազաններ, շատրվաններ, հուշադրություններ, խաչքարեր, ջրադացներ և հասարակական այլ կառույցներ: Այս կերպ Չարսանձագ և Տերսիմ գավառների ընդարձակ տարածքը և նրա սահմանակից վայրերը դառնում են շինարարական վիթխարի հրապարակ, որտեղից լավում է շինարար մուրճի ձայնը և կառուցման հոգեպարար հեքը», - գրում է բանագետ Գր. Գրիգորյանը<sup>32</sup>:

Խարբերդի դաշտից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած այս շրջանների՝ հնագույն Taksana երկրի, արհեստագործության հետ ուղղակի կապ ունենալու մասին է խոսում նաև Հայաստանի դիցարանի <sup>d</sup>U.Taksana (<sup>d</sup>U.ták-ša-an-na-áš)<sup>33</sup> դիցանունը: Ինչպես ցույց է տալիս դիցանվան <sup>d</sup>U բաղադրիչը, սա եղել է ամպրոպային բնույթի մի աստվածություն, իսկ դիցանվան Taksana բաղադրիչը ցույց է տալիս նրա կապը արհեստների՝ մասնավորաբար մետաղամշակության հետ (հմմտ. հայերեն նույնաձագում *թեթել* բայի նախնական իմաստը): Համեմատական դիցաբանությունից հայտնի է նաև, որ ամպրոպային աստվածները սերտ կապի մեջ էին դարբնության հետ և անգամ կարող էին հանդես գալ դարբնի դերում<sup>34</sup>:

Այս տեսանկյունից ուշագրավ է հայաստանի U.Taksana աստվածության պաշտամունքի վայրը Arhita (<sup>uu</sup>Ar-hi-ta) անունը.<sup>35</sup> \*Arhit- անվան առաջին բաղադրիչը կարելի է կարդալ ինչպես \*արիս-, այնպես էլ \*արի- (սեպագրությունը այդ հնարավորությունը տալիս է): Կարծում ենք, որ երկրորդ դեպքում մենք գործ կունենանք հայերեն *արհեստ* բառի *արի-* արմատի հետ: Այստեղ *-եստ-*ը վերջածանց է. հմմտ. *գով-եստ*, *համ-եստ*, *ուտ-եստ*, *պահ-եստ*<sup>36</sup>: Եթե ճիշտ է Մխիթարյան հայերի դիտողությունը հայերեն *արհեստ* և լատիններեն *ars/artis* բառերի ազգակցության վրաբերյալ<sup>37</sup>, ապա բառին կարելի է վերագրել նաև հնդեվրոպական-հայկական ծագում, մանավանդ, որ նրանում առկա *-եստ* վերջածանցը հնդեվրոպական է<sup>38</sup>, բայց իրանական չէ: Մեր վերոհիշյալ դիտողությունների և դատողությունների ճշմարտացիության դեպքում կարելի է եզրակացնել, որ հայաստանի U.Taksana աստվածությունը ներկայացրել է Մուրսիլի I-ի հիշատակած և Հայաստան-Ազգի ցեղամիության մեջ ընդգրկված Taksana (<sup>uu</sup>Taksana) երկիրը, որը տարածված է եղել Արածանիի ստորին հոսանքի ավազանում, Խարբերդի դաշտից արևելք:

Մուրսիլի I-ի արձանագրության մեջ հիշատակված հաջորդ տեղանունը Hamsa-ն է (<sup>uu</sup>Ha-am-ša-), որը տեղադրվում է Taksana-ից արևելք (որովհետև արշավանքի ուղղությունը Արածանիի հոսանքն ի վեր է), այսինքն՝ հետագա Հաշտեանք գավառի տարածքում: Հաշտեանք <\*Հաշտ-եան-ք գավառանվան առաջին բաղադրիչը համարվում է հայերենի իրանական ծագումով *յաշտ*/*աշտ* բառի երրորդ տարբերակը. Հաշտեանք // \*Յաշտեանք<sup>39</sup>: *Յաշտ*/*աշտ* նշանակում է «կուռքերին եղած գոհ», որից՝

<sup>31</sup> Հ. Ճ ա ն ի կ ե ա ն, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 51:

<sup>32</sup> Գր. Գ Ր Ի զ Ո Ր Ղ Վ Ա Ն, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, Գիրք II, Միջնադար, Եր., 1981, էջ 250:

<sup>33</sup> KUB, XXVI, 39, IV, տող 32:

<sup>34</sup> В. Иванов, Кузнец, Мифы народов мира, т. II, М., 1988, стр. 21-22.

<sup>35</sup> KUB, XXIV, 39, IV, տող 32: Հայաստան Արխիթա բնակավայրը Վ. Խաչատրյանը տեղադրում է այժմյան Քղիից հյուսիս-արևելք (В. Хачатурян, նշվ. աշխ., էջ 110, 140), այսինքն՝ հետագա Մեծ Հայքի Պաղնատուն և Հաշտեանք գավառներին հյուսիսից հարող Խորձեան (Ս. Երևնյան, նշվ. աշխ., էջ 55, 62, 76) գավառում:

<sup>36</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, նշվ. աշխ., հ IV, Եր., 1979, էջ 672:

<sup>37</sup> Նոր Բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Եր., 1979, էջ 371: Ի դեպ, լատիններեն բառի հիմքում հ. - ն. \*ar- «կցել, միացնել, արվեստով հորինել» արմատն է, որից են ծագում նաև հայերեն *արդ* «ձև, կարգավորություն, սարք», *արդեալ* «տաշված, կոկված», *արդուած* «ծորինված», *յարդարել* «ուղղել, կանոնավորել, կարգավորել, շինել» բառերը (Հ. Ա ճ ա ն յ ա ն, նշվ. աշխ., հ I, էջ 306):

<sup>38</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, նշվ. աշխ., հ IV, էջ 672-673:

<sup>39</sup> Ս. Ե Ր Ի Վ Յ Ա Ն, նշվ. աշխ., էջ 62:

յաշտարար // աշտարար «զոն մատուցանող» և այլն<sup>40</sup>: Անվան այսպիսի ստուգաբանությունը ցույց է տալիս, որ Հաշտեանք գավառը ժամանակին եղել է քրմապատկան տարածք և վաղ ժամանակներում կառավարվել է քուրմ-արքաների կողմից: Կարծում ենք, որ այս նույն տեսանկյունից էլ կարելի է ստուգաբանել նրա առավել հին *Hamsa* անունը: Պարզ է, որ տեղանվան մեջ –sa բաղադրիչը այն նույն տեղանվանակերտ մասնիկն է, որն առկա է նաև խեթական արձանագրություններից հայտնի բազմաթիվ տեղանուններում՝ դրանց թվում և Հայկական լեռնաշխարհից հայտնիներում (հմմտ. *Hajasa*, *Tametasa*, *Hatarsa*, *Ardusa* և այլն): Տեղանվան *ham-* արմատը, մեր կարծիքով, առկա է նաև հայերեն հազվագյուտ «*խամար-գիտուն*»<sup>41</sup> բառում: Վերջինիս մեջ –արը հնդեվրոպական ծագումով վերջածանց է. հմմտ. *արդ-ար*, *երկ-ար*, *մոլ-ար* և այլն<sup>42</sup>: Այս տեղանվան և *խամար* բառի *խամ-* արմատը պահպանված է նույն շրջանի հետագայի այնպիսի տեղանուններում, ինչպիսիք են *խամուկ*-ը և *խամուրշին*-ը (<խամուր-շեն) Բիթլիսի մահանգի Գենջի գավառում<sup>43</sup>: Ըստ երևյալի, այս տեղանունները ևս հնագույն *hamsa* տեղանվան նման իրենց հիմքում ունեն այն նույն արմատը, որն առկա է նաև *խամար* «գիտուն» բառում: Հաշտեանք գավառի մասին ասվածները կարելի է վերագրել նաև նրա հարևան Տարոն գավառին, որը զբաղեցնում էր Հաշտյանք գավառից արևելք, Արածանիի շուրջ տարածված Մշո դաշտը իր շրջակայքով: Մեր կարծիքով, սա Մուրսիլի I-ի հիշատակած *Hasaya*-ն է (<sup>am</sup>*Ha-as-šu-wa-as*): Իսկ, որ վերջինս ևս եղել է քուրմ-արքաների կողմից կառավարված երկիր, վկայում են ինչպես Տարոնի անվանադիր Տարբանի և տեղի քրմական դասի հիմնադիրն համարված Մեղտեսի մասին ավանդազրույցներն ու նրանց անունների ստուգաբանությունները,<sup>44</sup> այնպես էլ *Hasaya* տեղանվան ստուգաբանությունը:

Ուշադրություն դարձնենք, որ Տարոնում էր գտնվում համահայկական հռչակ ունեցած հեթանոսական սրբավայրերից մեկը՝ Աշտիշատը. «*Յաշտից տեղիք* քազաուրացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարբեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տարոսի, որ Եւ անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն *Յաշտիշատ*»<sup>45</sup>: Ն.Արմենը փոխադարձ կապի մեջ էր դիտում *Հաշտեանք* // \**Յաշտեանք* և *Աշտիշատ*/*Յաշտիշատ* տեղանունները<sup>46</sup>:

Քրմերի գործունեության ոլորտին առնչվող և նրանց բնութագրող տերմիններից է եղել *հաս-* // *հես-*. «Հասու-իմաստուն, կամ գիտուն», իսկ երկրորդ տարբերակը պահպանված է «Հեսայք- գործնականք, կամ իմաստունք» բառում<sup>47</sup>: *Հաս-//հես-* արմատի առաջին տարբերակը նշանակել է նաև «պատասխան». հմմտ. «Հաս Եւ հակ-պատասխանի»<sup>48</sup>, երբ կա նաև «Հակ- պատասխանի»<sup>49</sup>: Ըստ երևույթին *հաս-*ի այս

<sup>40</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, *նշվ. աշխ.*, հ III, Եր., 1977, էջ 383:

<sup>41</sup> Բառգիրք հայոց, Զննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Անայանի, Եր., 1975, էջ 138:

<sup>42</sup> Գ. Ջ ա հ ու ի յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԺ), Եր., 1987, էջ 234-235:

<sup>43</sup> Տեղ. բառ., հ. II, էջ 636-667:

<sup>44</sup> Մ ո վ ս ի ի Ն ո թ ե ն ա ց ի ո յ պատմութիւն Հայոց, Եր., 1981, Ա, գ, Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարոնոյ, Եր., 1941, էջ 107-109 (տես՝ Ս. Պետրոսյան, Լ. Պետրոսյան, Եռյակ բնակավայրերի համակարգը հին Հայաստանում և Ռուսիայում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, II, Գյումրի, 1999, էջ 135-139; Ս. Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղ միջնադարյան Հայաստանում, Գյումրի, 2001, էջ 27-28):

<sup>45</sup> Ազաթանգեղայ պատմութիւն Հայոց, Եր., 1983, ՃԺԳ, 809:

<sup>46</sup> Կ. Ա ճ Օ Ն Մ, *նշվ. աշխ.*, էջ 30:

<sup>47</sup> Բառգիրք հայոց, էջ 181, 184: Հեսայք, <\* հես-ու- ա- թ, որում երկրորդ բաղադրիչը ուս արմատն է (որից ուսանի, ուսումն և այլն) երրորդը՝ -այ վերջածանցն է (հմմտ արթ- ալ, մօր- ալ, յօր- ալ և այլն):

<sup>48</sup> Բառգիրք հայոց, էջ 176, 180: Ըստ երևույթին, սրանց հիմքում հնդեվրոպական այն նույն արմատի տարբերակներն են, որոնցից են սերում ազգակից լեզուների հետևյալ բառերը. հին պարս. *ni-piš-* ta- «գրված», թոյս. *riškam* «գրում է», լատին *pingo* «նկարել, ասեղնագործել», լիտվ. *piěšti* «նկարել, գծագրել (ածուխով), գրել», ռուս. *писать* «գրել» և այլն: (Т. Гамк-релидзе, В. Иванов, *նշվ. աշխ.*, հ. I, էջ 110; М.Фасмер, *Этимологический словарь русского языка*, т. III, М., 1971, стр. 266):

վերջին նշանակությունը գալիս է քրմերի գործունեության այն ոլորտից, որը սերտ առնչություն ունի հարցուկային գուշակության հետ: Հնագույն Տարոնի քրմերի գործունեությանը կարող է պայմանավորված լինել նաև Մեսրոպ Մաշտոցի ծննդավայրի *Հացեկաց* անունը: Ըստ Կորյունի, նա էր «ի Տարոնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ»<sup>50</sup>: Հայոց գրերն ստեղծած սրբի ծննդավայրն հետագայում հայտնի էր *Խաս գեղ* անունով<sup>51</sup>: Վերջինս մղում է այն ենթադրությանը, թե տեղանվան նախնական ձևը եղել է \**Հասեկաց* *Հացեկաց*-ի վերածված *ս-ց > ց-ց* առնմանությամբ: Հնագույն \**has* տերմինն էլ, մեր կարծիքով, տալիս է *Խասուվա* տեղանվան բանալին. *Խասուվա* <\**has*-սյա, որտեղ –սյա-ն խեթալուվիական լեզուներին բնորոշ տղանվանակերտ վերջածանց է: Այսպիսով, *Hasuua* տեղանունն ամբողջությամբ նշանակել է «իմաստունի տեղ, իմաստունի երկիր»:

Մուրսիլի I-ինի Տարեգրության մեջ *Hasuua*-ին անմիջապես հաջորդում է *Halara* տեղանունը (<sup>տ</sup>*Hal-la-ra-a-aš*), որն, այսպիսով գտնվելու էր *Hasuua*//Տարոնից արևելք: Կարծում ենք, որ խոսքը հետագա Բզնունիք գավառի մասին է՝ Տարոնի և Վանա լճի արևմտյան ափի միջև: Տարոնից Վանա լճի արևմտյան ափ տանող բանուկ ճանապարհը եղել է Մուշ-Գատվան ճանապարհը, որով էլ Բզնունիք էին թափանցելու Մուրսիլի I-ինի գորքերը: Խալարայի և Բզնունիքի տարածքային համապատասխանության մասին կարող է վկայել դրանց անունների նույնիմաստ ստուգաբանությունը: Ինչպես Իսուվայի (հետագա Ծովքը) <sup>Վ</sup>Ս աստծու պաշտամունքի կենտրոն *Halara*-ի<sup>52</sup>, այնպես էլ Տարոնի և Վանա լճի միջև գտնված *Halara*-ի անունների հիմքում ընկած է \**խալ-// \*խաղ-* արմատը, որն առկա է նաև *խալարակայք* «խոյակ» և *խաղախ* «կաշի, մորթի» բառերում: Այս արմատն, անկասկած, ներկայացնում է *քաղ* «արու այծ, նոխսագ» բառի հնչյունական տարբերակը: Հմնտ. *խաղ/քայլ, խարել/քերել, ախսագ/աքիս, ցախ /ցաք - ատ* նույնարմատ գույզերը<sup>53</sup>: Իսկ *Halara*-ի –ar(a)- բաղադրիչը հնդեվրոպական ծագմամբ այն նույն վերջածանցն է, որն առկա է նաև *արդար, երկար* և այլն բառերում<sup>54</sup>:

Հետագա Ծովքի տարածքը բռնած խեթական արձանագրությունների Իսուվա երկրի ամպրոպային <sup>Վ</sup>Ս աստծու պաշտամունքի կենտրոն *Halara*-ն, հավանաբար, գտնվել է այն վայրում, որտեղ ուշ ժամանակների *Խալի* կոչված գյուղն էր՝ Արածանիի ճախակողմյան վտակներից մեկի ակունքների մոտ, Խարբերդ քաղաքից մոտ 17 կմ հարավ<sup>55</sup>: *Halara* անունով երկու բնակավայրերն էլ կրելու էին ամպրոպային բնույթի հիշյալ աստվածության համապատասխան մակդիրը: Ծովք//Իսուվայի դեպքում դա եղել է <sup>Վ</sup>Ս-ն, իսկ Բզնունիք//Խալարայի դեպքում լինելու էր հայասական դիցարանը գլխավորած <sup>Վ</sup>Ս.GUR-ը, որովհետև այստեղ էր գտնվում սրբազան Գրգուռ լեռը: *Գրգուռ* էր կոչվում ոչ միայն այս լեռը, այլև հայոց հին տոմարի 21-րդ օրը: Մրանց հետ համահունչ է ժողովրդական հավատալիքներում *Գոգո բարա* կոչված առասպելաբանական կերպարի անունը<sup>56</sup>: Մրանց բոլորի հնչյունաբանական և իմաստաբանական փոխադարձ կապը պայմանավորված է վաղնջական բնապաշտական ժամանակներից եկած առասպելաբանական պատկերացումների ընդհանրությամբ (հմնտ. միև-

<sup>49</sup> Հմնտ. նաև «Յասուկ- խորհուրդ սուրբ» (Բառգիրք հայոց, էջ 225):

<sup>50</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Արեղյանի, Եր., 1941, էջ 36:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 107, ծան. 51: Մեկ ուրիշ կարծիքի համաձայն, դա եղել է հետագայում *Հացեկ*, *Խասիկ* անուններով հայտնի գյուղը (Տեղ.բառ., հ. II, էջ 681):

<sup>52</sup> *KUB*, VI, 45, II, տող 64:

<sup>53</sup> Г. Д ж а у к я н, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ер., 1967, стр. 306-307.

<sup>54</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, ՀԼՊՆԺ, էջ 234-235: *Halara* տեղանունն ունի իր դիցանվանական գույզաները ի դեմս խեթական արձանագրություններում հիշատակված *Halara* դիցանվան: Վերջինիս հիմքում ևս *hal-* արմատն է (տես Գր.Капанцян, *Об урартском божестве Шабиты*, «ՀՄՍՈՒ ԳՄ տեղեկագիր. հասարակական գիտություններ», 11-12, Եր., 1946, էջ 17):

<sup>55</sup> Տեղ. բառ., հ. II, էջ 623:

<sup>56</sup> Մ. Ա բ ե ղ յ ա ն, *Երկեր*, հ. VII, Եր., 1975, էջ 78, ծան. 1:

նույն *qon* // *qnn* բնածայն արմատը պարունակող *qoqonay*, *qonay* և բարբառային *qonay*, *qonqonay* բառերը<sup>57</sup>:

Անդրադառնալով Բզնունիք գավառանվանը, պետք է նշել, որ այն կրկնում է *Բզնունի*-ք նախարարական տոհմանունը, իսկ վերջինս տոտեմական ծագում ունի և իր հիմքում ունի *բուծ* «կաթնկեր գառնուկ կամ ուլիկ» բառի մի տարբերակը: Նրան ազգակից են հնդեվրոպական մյուս լեզուների հետևյալ բառերը. հին հնդկ. *bukka* «բուծ», *bukkā* «այծ», ավեստ. *būza* «ուլ», պարս. *buz* «այծ, ուլ», գերմ. *Bock*, անգլ. *buck*, հին իտալ. *boc/bocc* «նոխազ» և այլն<sup>58</sup>: Ըստ երևույթին, *բուծ*-ի \**բուծն* տարբերակից (*բուծ-ն* հմմտ. *գառ-ն*, *եզ-ն*, *ձուկ-ն* և այլն) էլ ունենք \**Բուծնունի*>\**Բծնունի*>*Բզնունի*: Ոչ միայն տոհմի անվանադիր նախնին, այլև նրա հովանավոր աստվածությունը (հաճախ դրանք նույնանուն էին) կարող էր նման «կենդանական» անուն կրել: Օրինակ, դա է ցույց տալիս փոյուզական Ջևաի Բօճւօճ մականունը<sup>59</sup>, որը, կարծում ենք, վերոհիշյալ բառերի նման ծագում է հ.-ե. \**bhug-* արմատից և «նոխազ» է նշանակում: Ըստ այսմ, Բզնունի նախարարական տոհմի և նրա ժառանգական տիրույթ Բզնունիք գավառի հիմնադիր-անվանադիրը, որը, հին հայկական ավանդազրույցների համաձայն, Հայկ նահապետի Բազ անունով թոռն էր<sup>60</sup>, եղել է նոխազը որպես տոտեմական նախատիպ ունեցած առասպելաբանական մի կերպար՝ այժաստված:

Բզնունիքի *Halara*-ի և հնագույն Ծոփքի (Բսուվա) Ամպրոպի աստծու պաշտամունքի կենտրոնը *Halara*-ի անվանական նույնությունը մղում է մի այսպիսի ենթադրության. Վանա լճի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափերին գտնվող Բզնունիքը ևս եղել է այժակերպ ամպրոպի աստծու պաշտամունքի վայրերից մեկը: Անկասկած, մեր հեռավոր նախնիները, իրենց առասպելաբանական պատկերացումների համաձայն, շեշտելու էին տարբերությունը մի կողմից Վանա լճի *արևմտյան և հյուսիսային*, մյուս կողմից՝ *արևելյան և հարավային* (այսինքն՝ մի կողմից խավար, մյուս կողմից՝ լուսավոր) ափերի միջև: Նեղ կամրջի վրա դեմ դիմաց ելած երկու կամակոր այծերի մասին հայտնի առասպելաբանական մոտիվը նախ և առաջ արտացոլում է գետի հակադիր՝ ձախ և աջ, ափերի առասպելաբանական հակադրամիասնությունը, որն արտահայտված է նաև այծերից մեկի սև, մյուսի սպիտակ գույների միջոցով: Մեր խավարը, հյուսիսը, արևմուտքը պատկանում է «ձախի», իսկ սպիտակը, լուսավորը, հարավը, արևելքը՝ «աջի» առասպելաբանական խորհրդանշային շարքին<sup>61</sup>: Այս շարքերից առաջինը փոխադարձ իմաստաբանական կապի մեջ էր Ամպրոպի (անձրևաբեր ամպի), երկրորդը՝ Արևի (պայծառ երկնքի) աստծու հետ<sup>62</sup>: Մեր հեռավոր նախնիների առասպելաբանական պատկերացումների համաձայն, եթե Վանա լճի արևմտյան և հյուսիսային ափերը առնչվում էին Ամպրոպի մռայլ աստծուն, ապա արևելյան և հարավային ափերն առնչվում էին Արևի պայծառ աստծուն: Ըստ այսմ լճի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափերը բռնած Բզնունիքը համարվել է Ամպրոպի այժակերպ աստծու տիրույթը, իսկ լճի արևելյան ու հարավային ափամերձ շրջաններում գտնվող հետագայի Բոզունիք և Բուծունիք գավառները<sup>63</sup> տիրույթը Արևի այժակերպ աստծու:

<sup>57</sup> Մ. Պ Ե տ ր ո ս յ ա ն, Հին հայոց եռամսն ամսուայ խորհուրդը, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1996, էջ 427-429:

<sup>58</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, նշվ. աշխ., հ I, էջ 482:

<sup>59</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները, էջ 114:

<sup>60</sup> Մ. Խ ո ռ Ե ն ա գ լ ո յ լ... Ա, ժր, Բ, ք:

<sup>61</sup> А. Н о с а г т, *Kings and councillors, Cairo, 1936, p.,273-276*; С. Петросян, *Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «Լրարեր հասարակական գիտությունների», 1986, քիվ 4, էջ 53-64*; Նույնի, *Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений, Նույն տեղում, 1987, քիվ 3, էջ 77-87*; Նույնի՝ *Երկգույն-երկհարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում, նույն տեղում, 1991, քիվ 2, էջ 126-131*, Նույնի՝ *Արջի և եղջերվի հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը հնագույն Շիրակի տեղանուններում, ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 45-46*:

<sup>62</sup> Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в, նշվ. աշխ., հ. II, էջ 793-794:

<sup>63</sup> Մ. Ե ռ Ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 45, 109:

Վերջիններիս *Բոզ-ունի-ք* և *Բուժ-ունի-ք* (հմմտ. մանկ. բոթով. *բժո* «գառ, ուլ») անունների հիմքում վերոհիշյալ \**bhug-* արմատի centum-ային և satəm-ային տարբերակներն են: Որ վերջին տեղանուններն իրենց «այծային» ստուգաբանությամբ առնչվել կարող էին հենց Արևի աստծուն, վկայում է «*Բուզի-արեգակն*» բառը<sup>64</sup>: Այս առթիվ հիշենք նաև, որ Վանա լճի արևելյան ափին գտնվող Վան քաղաքն իր շրջակայքով հեթանոսական դարերում եղել է արևային-լուսեղեն Վահագն և Միհր աստվածների պաշտամունքի նշանավոր վայրերից, իսկ ուրարտական դարաշրջանում Վան (Տոսպա) քաղաքը պաշտամունքի կենտրոնն էր նույնպիսի բնույթ ունեցող Տիլինի աստծու:

Պատահական չէ, որ ավելի վաղ ժամանակներից սկսած Վանա լճի հարավ-արևելյան ափերն ընդգրկած Հայոց ձորը համարվել է հայոց լուսեղեն նախահոր՝ «քաջագանգուր, խայտակն» աղեղնավոր հսկայի, Բելի դեմ մղած հաղթական ճակատամարտի վայրը<sup>65</sup>: Առասպելաբանական գուգորդմամբ՝ աղեղից արձակված նետ // արևի արձակած ճառագայթ: Ի հակադրության Վանա լճի արևելյան ափին առնչվող լուսավոր-արևային Հայկի, լճի արևմտյան ափին գտնվող Նեմրոթ լեռանն առնչվող Բելը<sup>66</sup> մռայլ-ամայրոպային է. հմմտ. բրբ. *նեմրոթ*, *նմրոթ* «մռայլ, խոժոռ, նոթոտ» բառը<sup>67</sup>: Ըստ այսմ, նրա տոտեմական նախատիպը լինելու էր սև նոխազը՝ ի հակադրություն Հայկի տոտեմական նախատիպ սպիտակ նոխազի: Այդպիսիք էին լինելու նաև Բելի և Հայկի վիպական կերպարների գուգահեռներն հանդիսացած տեղական ամայրոպային և արևային աստվածների նախատիպերը:

<sup>uu</sup>Halara-ից հետո եկող տեղանունից պահպանվել է միայն <sup>uu</sup> մասը<sup>68</sup>: Մեր կարծիքով, դա լինելու էր Բիթլիսի լեռնանցքին մերձ մի վայրի անուն, որովհետև Դատվանի մերձակա Խախրև գյուղը գտնվում էր Բիթլիս քաղաքից ընդամենը 12կմ հեռավորության վրա<sup>69</sup>: Ընդ որում, մենք չենք կասկածում, որ Արածանիի հոսանքի հակառակ ուղղությամբ Հայկական լեռնաշխարհի խորքն հասած, ապա Մուշ-Դատվան ճանապարհով Վանա լճի հարավ-արևմտյան ափին մոտեցած Մուրսիի I-ինի նպատակը եղել է ոչ միայն Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների ցեղերին խեթական գերիշխանությանը ենթարկելը, այլև Բիթլիսի լեռնանցքով Հյուսիսային Միջագետք դուրս գալն ու նրանց դաշնակից Միտանի // Խանիզարատին թիկունքից հարվածելը: Այդ բանն իրագործել խեթական թագավորին չէր հաջողվել:

Մուրսիի I-ինի արևելյան արշավանքի առնչությամբ հիշատակված տեղանունների տեղադրությունը և դրանց, ինչպես նաև դրանց հետ ուղղակի կապի մեջ եղած մյուս տեղանունների և հատուկ անունների մեծ մասի, հնդեվրոպական ու հայկական ստուգաբանությունները կասկածի տեղիք չեն տալիս, որ Հայկական լեռնաշխարհի քննարկման առարկա դարձած շրջանների բնակչությունը մ.թ.ա. XVII-XVI դարերում ևս եղել է հնդեվրոպական և մասնավորաբար ներկայացրել է հնդեվրոպական-հայկական էթնիկական տարրը:

Հայասա անվան բացակայությունը Մուրսիի I-ի Տարեգրության քննարկման առարկա դարձած հատվածում պետք է բացատրել կամ արձանագրության պակասավոր լինելու հանգամանքով, կամ նրանով, որ Մուրսիի I-ի օրոք Հայասական ցեղամիությունը դեռևս կազմավորված չի եղել: Այսուհանդերձ, եթե ոչ այդ ժամանակ, ապա հետագայում թվարկված բնակավայրերն ու երկրներն ամբողջությամբ կամ մասամբ ընդգրկվել էին Հայասական ցեղամիության մեջ: Դրա մասին է խոսում, օրինակ, հայասական դիցարանում Taksana (<sup>kur</sup>Tak-ša-an-na) երկիրը ներկայացնող U.Taksana (<sup>dU</sup>ták-ša-an-na-aš) աստվածության առկայությունը:

<sup>64</sup> Բառգիրք հայոց, էջ 58:

<sup>65</sup> *Մ. Խ ռ թ ն մ ա գ լ ն յ ...*, Ա, ժ, Ա, ժա:

<sup>66</sup> *Գ. Մ ը վ ա ն ձ տ յ ա ն գ, նշվ. աշխ., հ. I, Եր., 1978, էջ 34, 49-50, 405:*

<sup>67</sup> *Ա. Մ ո թ ի ա ս յ ա ն, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 469:*

<sup>68</sup> *KUB, XXXI, 64, II, տող 34:*

<sup>69</sup> *Տեղ. բան., հ II, էջ 629:*

**МАРШРУТ ВОСТОЧНОГО ПОХОДА МУРСИЛИ I***Резюме**С.Петросян*

В востоковедческой и арменоведческой литературе до сих пор не уточнен маршрут проникновения армии хеттского царя Мурсили I (1620-1590 гг. до.н.э) в Армянское нагорье. Исходя из данных летописи Мурсили I, мы пытаемся доказать, что хеттская армия из Малой Азии проникла в юго-западные районы Армянского нагорья тем путем, который в последующие века вел из Малой Армении через южные районы Цопка (Армения IV) и Туруберана к Битлисскому проходу. Следовательно, упомянутые новопокоренные заевфратские города и страны (Лаванда, Таксана, Хамса, Хасува, Халара) надо локализовать вокруг этого пути.

Исходя из сопоставления и этимологии разновременных топонимических и других данных, можно утверждать, что индоевропейский, в частности индоевропейско-армянский, этнический элемент был доминирующим среди местного "хурритского" населения юго-западных районов Армянского нагорья XVII-XVI вв. до. н. э.

## Սերգեյ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՓՈԽԴԱՍՍՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Մասնագիտական գրականության մեջ այս կառույցները հայտնի են մահ *կրավորած* անունով, որպես *ներգործած* կառույցների շարահյուսական հոմանիշներ<sup>1</sup>: Օրինակներ. Մայր ծնաւ գորդի – Որդի ծնաւ ի մարտ, Քամին բացեց դուռը - Դուռը բացվեց քամուց և այլն: Ընդ որում, եթե ներգործած կառույցն ունի *ենթակա - ստորոգյալ – ուղիղ խնդիր*, ապա կրավորածը՝ *ենթակա - ստորոգյալ – ներգործման խնդիր* նույնպես եռանդամ կաղապարը, որում ներգործական բայ-ստորոգյալի քերականական ենթական (մայր, քամին) վերածվում է կրավորական բայի քերականական խնդրի (ի մարտ, քամուց), որ տրամաբանորեն գործողություն կատարողն է և «ցույց է տալիս մի առարկա, որի գործողությունը ենթական կրում է իր վրա, այսինքն ենթական ազդվում, ներգործվում է կամ իբրև արդյունք առաջ է գալիս գործողությունից»,<sup>2</sup> իսկ ներգործական կառույցի ուղիղ խնդիրը (գորդի, դուռը)՝ կրավորական կառույցի քերականական ենթական է (որդի, դուռը)՝ գուրկ գործող լինելու հատկանիշից, ենթակա, որից, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «գործողությունը օտարվում է»:<sup>3</sup> Ուղիղ խնդրի մասն՝ ներգործման խնդիրը և «բայի ներխուսքիմասային իմաստով և սեռով այժմանավորված «ոչ ընդհանուր կամ հատուկ լրացում է»<sup>4</sup> և շնորհիվ այն կարևոր դերի, որ ունի այդպիսի նախադասությունների քերականական կառուցվածքի ավարտումության, նրանցով հաղորվող մտքի լիարժեքության, այլև նրանցում շարահյուսական միավորների փոխդասավորության կարգավորման տեսակետից, կրավորական կառույցի հիմնական միավորներից մեկն է: Մա նշանակում է, որ եթե ներգործած կառուցվածքի նախադասություններում շարահյուսական առանցքի հիմնաբաղադրիչներ էինք համարում ենթակայից և ստորոգյալից բացի մահ ուղիղ խնդիրը,<sup>5</sup> ապա դրանց հետ շարահյուսորեն համանշավոր կրավորած կառույցներում այդպիսիք պիտի դիտվեն ինչպես ենթական, կրավորական սեռի բայ-ստորոգյալը, այնպես էլ ներգործման խնդիրը: Ըստ այսմ՝ հայերենի կրավորած լրիվ կառույցներում հնարավոր ենք համարում շարահյուսական հիմնամիավորների փոխդասավորության բոլոր վեց տարբերակները՝ SPO, SOP, PSO, POS, OPS, OSP: Ի դեպ, ինչպես այլ լեզուներում, հայերենում ևս լրիվ (եռանդամ) կրավորած կառույցները համեմատաբար փոքրաթիվ են, դրան հակառակ՝ ակնհայտ է երկանդամ (հիմնականում *ենթակա-ստորոգյալ* հիմնաբաղադրիչներով) կառույցների քանակական գերազանցությունը: Մ.Ասատրյանը այս առիթով նշում է. «Կրավորական կառուցվածքի նախադասությունը՝ ի հակադրություն ներգործական կառուցվածքի նախադասության, լայն հնարավորություններ ունի միշտ կամ համարյա միշտ չփոխադասելու գործողություն կատարողին՝ անգամ այն դեպքում, երբ այդ գործողություն կատարողը հայտնի չէ խոսողին»:<sup>6</sup>

Թեև լրիվ կրավորած կառույցների հիմնաբաղադրիչների փոխդասավորության վերոհիշյալ բոլոր վեց տարբերակներն էլ մեր լեզվի հին, միջին և նոր գրական վիճակներում վկայված են, սակայն մեր կողմից նույնաձևով բնագրային հատվածների վիճակագրական ուսումնասիրության տվյալների վերլուծության հիման վրա կարելի է աներկբա պնդել, որ հայերենի բոլոր գրական վիճակներին առավել բնորոշ, ամենա-

<sup>1</sup> Տե՛ս Վ.Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները*, Եր., 1957, էջ 135; Ն.Պառնասյան, *Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում*, Եր., 1974, էջ 118-121; Հ. Հարությունյան, *Կառավարումը ժամանակակից հայերենում*, Եր., 1983, էջ 175 և ուրիշներ:

<sup>2</sup> Մ. Ա թ է դ յ ա ն, *Հայոց լեզվի տեսություն*, Եր., 1965, էջ 375:

<sup>3</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Եր., 1974, էջ 268:

<sup>4</sup> Հ. Հ ա թ ո թ յ ո Ւ Մ յ ա ն, *Նշվ. աշխ.*, էջ 111:

<sup>5</sup> Մ. Հ ա յ ը ա պ ե տ յ ա ն, *Հայերենի անցողական կառույցների շարահյուսության մի քանի հարցեր*, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, հ. 1, Եր., 1998, էջ 99:

<sup>6</sup> Մ. Ա ս ա տ ը յ ա ն, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Եր., 1959, էջ 135:

գործածական տարբերակները դրանցից երկուսն են՝ SPO և SOP, ընդ որում՝ առաջին տարբերակն ունի գործածության ակնհայտորեն ավելի բարձր հաճախականություն:

Ներկայացնենք կրավորաձև եռանդամ կառույցների հիմնաբաղադրիչների փոխդասավորության բոլոր տարբերակային դրսևորումները հայերենի գրական վիճակներում.

ա. Ենթակա → ստորոգյալ → ներգործման խնդիր (SPO) գծային հաջորդականություն

Այս տարբերակը գրաբար բնագրերում եռանդամ կրավորաձև կառույցների ամենահաճախական դրսևորումն է (ներ հաշվումներով՝ միջին հաշվով 100-ից 33 դեպքերում). Օրինակներ՝ *Մոքա ծնան նմա ի դստերէն* /Ա.Մնաց., Բ/: *Երկիր լուսաւորեցաւ ի փառաց* նորա /Յայտն., ԺԸ/: *Վէմք խորտակեցան ի նմանէ* /Լատում, Ա/: *Խնորեալք եփեսցին յառաջնոց* /Գևտ., ԻԳ/: *Խորք խռովեցան ի ձայնէ* ջուրց /Մաղմ., ՀԶ/: *Հոգին առաքեցաւ Հարբն և Որդուլն* /Ազաթ., 665/:

Այս առումով գրաբարին բավականին հարազատ է նաև միջին գրական հայերենը, այն տարբերությամբ, որ այստեղ վերոհիշյալ եռանդամ տարբերակի գործածության հաճախականությունը գրաբարի համեմատությամբ մի փոքր թուլանում է (միջին հաշվով 100-ից 31 դեպքեր):

Օրինակներ՝ *Մա ... դիրաւ իմանի կարդացողին* /ՊԱԴ, 406/: *Խասան կոտորեցաւ ի Չիթաղէն* /ԺԵՀՀՀԲ, 351/: *Եւ թէ ոք...տուժվի ի դարպասէն* /ԳՄԻ, 23/: *Բնութիւն արգիլեցաւ ի շոգերոյն* /ՄՀԶՄ, 13/: *Շատ զօրաւոր մարդիք խարուին ի տկարաց* /ԼՄԺԱՎ, 420/: *Օձն պարարտանայ ի հոտոյն* /ԼՄԺԱՎ, 235/: *Որք...տանջին խաւարով* /ՀԵ, 187/: *Ագրան ... հպարտացաւ ի սուտ գովութիւնն* /ԼՄԺԱՎ, 29/:

Գրական արևմտահայերենը կրավորաձև եռանդամ կառույցներում հիմնաբաղադրիչների փոխդասավորության SPO տարբերակի գործածական ակտիվության տեսակետից նկատելիորեն զիջում է գրաբարին, նույնիսկ միջին գրական լեզվին: Այլ խոսքով՝ գրաբարի համեմատությամբ միջին հայերենում շարադասական այս տարբերակի գործածության նվազման գրեթե աննկատելի միտումը արևմտահայերենում ստանում է բավականին ցայտուն դրսևորում (միջին հաշվով՝ 100 օրինակներից ընդամենը 25-ը): Այնուհանդերձ, այս տարբերակը արևմտահայերենում ևս, ինչպես կտեսնենք ներքևում, շարունակում է մնալ եռանդամ կրավորաձև կառույցի հիմնական շարադասական տարբերակներից մեկը:

Օրինակներ՝ *Տղան հետզհետէ տարուեցաւ* անոնց *ընկերութեանը* /ԵԵ, 269/: *Ես արբեցած կը տարուիմ աղբիւրներուն* երգեցիկ /ՄԲ, 328/: *Չօրավարն գերի բռնուեցաւ Թորոսէն* /ԾԵ, 203/: Ասիկա բաւ կ'լլայ, որ *մանկուհին* քանի մը ժամ ետքը *վարակուի* մահացու *հիւանդութենէն* /ԵՕԵԺ, 4, 331/: *Պաշտպանեալներս կը կեղեքուին* օտար տղայէ մը /ԱԾՄՉՄ, 176/: *Խեղճ տղան պատուհասուած էր* նաև այլ *հիւանդութեամբ* /ն. տ., 21/: *Գիւղը* ամբողջովին *գրաւուած էր տոթթորով* և իր շնորհալի *ասպնջականուհիովը* /ԵԵ, 348/: Իր գրական *արժանիքները* կասկածի ներքեւ *կ'իյնային* նոր հասնող քննադատներ *ոմանց կողմէ* /ԶԳՀ, 85/:

Նույնը չի կարելի ասել գրական արևելահայերենի հետ կապված, որի մեջ եռանդամ կրավորական կառույցի հիմնաբաղադրիչների փոխդասավորության SPO տարբերակը ամենագործածականն է (42 %) հայերենի բոլոր մյուս գրական վիճակների համեմատությամբ, և այդ հարցում արդի հայերենը զգալիորեն գերազանցում է նույնիսկ հին գրական լեզվին, որտեղ վերոհիշյալ տարբերակը ուներ ամենաբարձր (33 %) հաճախականություն:

Օրինակներ՝ Որքան այսպիսի *դժբախտներ զոհվել են* քո չար *կրքերին* և քո անիրավ *փառասիրությանը* /Բ, 7, 428/: Ահա *պոետն* էլ պատրանքով հարբած՝ *Գերվեց* մի անգամ ժպտուն *աչքերի* /ՀԹ, 1, 240/: *Խելքս է տարվել* քո *ալ-վարդին* /Իս., 1, 239/:\* Մամվելը շատ սիրված էր ժողովրդից /Բ, 7, 70/: Այդ *սրիկաները վարձված են* *Ղուլամյանից*

\* Ի դեպ, միանգամայն իրավացիորեն տրականով ներգործման խնդիրը այսօր համարվում է արդի հայերենի համար գործածությունից դուրս եկող, գերազանցապես հնաժամ: Այս մասին մանրամասն տես Վ. Առաքելյան, *նշվ. աշխ.*, էջ 109; Վ. Զոսյան, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները*, Եր., 1975, էջ 230:

/Շիրվ.,4,158/: Ոչ մի զեղեցիկ կին կամ աղջիկ չազատվեցավ նրանց ձեռքից /Մուր.,4,70/: Նրա առաքինության ու պարկեշտության զգացումը վիրավորվում էր այդ ծառաների ներկայությունից /Շիրվ.,3, 99/: Իսկ զաղթական ժողովուրդը կոտորվում էր սովից, ցրտից /Բակ.,13/: Բոլոր ուս գրողները ներշնչված են նրանից մինչև այսօր /Իս.,4,24/: Լուսինը խանգարվում էր միայն գրքացի կիսաձայն ընթերցումով /ՆԴ.,1,17/: Մենք բոլորս ... կախարդված ենք նրա Ապոլոնյան հանճարով /Իս.,4,177/: Հինավուրց ամբողջը պատասպարված էր ամեն կողմից ... ամբողջուններով /Մուր.,4,8/:

Ինչպես փաստում են վիճակագրական ուսումնասիրության տվյալները, եռանդամ կրավորաձև կառույցի SPO շարադասական տարբերակը գրական հայերենի բոլոր վիճակներում եղել և հատուկ է մնում ամենասովորական, ոճականորեն չեզոք պատմողական խոսքին:

*բ. Ենթակա → ներգործման խնդիր → ստորոգյալ (SOP) գծային հաջորդակալություն*

Այս տարբերակը, բացառությամբ արևմտահայերենի, հայերենի գրեթե բոլոր գրական վիճակներում, դրսևորում է գործառական համարյա մույն ակտիվությունը. գրաբարում՝ 24, միջին հայերենում՝ 26, արևելահայ գրական լեզվում՝ 21: Ութն քանակապես այն զգալիորեն զիջում է նախորդին, սակայն մույնքան ակնհայտորեն էլ առանձնանում է մյուս չորս տարբերակներից իր գործառական ակտիվությամբ:

Օրինակներ՝ Երբեք այսպիսի գործք յումեթէ ի վերայ երկրի ոչ գործեցան /Բուզ.,-4,ԺԵ/: Մեր կեանքս քեզ նուաճեսցին /Ազաթ.,39/: Տեսիլ... ոչ առ յընկերէ պատմեալ /ԿՎՄ,40/: Այս այնչափ միայն առ ի յինէն քեզ տեսցի /ՅԳՊՀ,7/: Դու ի մնանէ ծնար /ՆՄԺԱՎ,200/: Դու ի մնանէ ընծայեցար /ն.տ.,203/: Լոյս ի լուսոյ ծնաւ /ԿԵՏ,129/: Եղբայրասպանությունը աստծուց և մարդկանցից անիծված է /Մուր.,4,158/: Գութանի խոփը ժանգից էր նեղվում /ՊՍԱԶ,86/: Դաշտ ու ձոր, լեռ ու անտառ հազարացի գորբերով ու հեղուակներով էին բռնված /Մուր.,4,73/: Դու այդ մարդով հակաշտակված ես /Շիրվ.,-3,333/:

Մինչդեռ գրական արևմտահայերենում հիմնաբաղադրիչների SOP շարադասական տարբերակը ընդգծված ձևով ամենագործածականն է (ավելի քան 37%) մնացած բոլորից:

Օրինակներ՝ Տղաքը ձիթաստաններուն քովը քունի կը քաշուին /ՀՕԵ,255/: Աղջիկ մը շատ անգամ նոր հագուստներու կը խաբուի /ՀՊԵԺ,1,175/: Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան պօլսեցիներէն կ'անուանուի հրաշագործ /ն.տ.,2,236/: Աս ալ ձեր խօսքին զարնուած էր /ն.տ.,1,230/: Գիշերները դուրս ելնողներն հարբուխէ կը բռնուին /ն.տ.,4,479/: Ան քնռն... գայլերուն կը հաղթուէր /ԹԲԱԵ,106/: Թթերուն ճամբուն վրայ Տափան Մարգար կայծակէն զարնուած էր /ՀԵԱԳԱ,17/:

Անկասկած, այս տարբերակում ներգործման խնդրի՝ ստորոգյալին առաջադասվող դիրքը ոճականորեն ակտիվ է, այստեղ խնդիրը, որպես հաղորդվող մտքի կենտրոն, տրամաբանորեն ընդգծում է, և սա առավել ցայտուն է հատկապես այն դեպքերում, երբ առաջադաս ներգործման խնդիրը անմիջապես հարում է իր լրացյալին (Տես «Դու ի մնանէ ծնար» կամ «Գութանի խոփը ժանգից էր նեղվում» և այլն):

Այսպիսով, հիմնաբաղադրիչների փոխդասավորության SPO և SOP տարբերակները միասին՝ քննության առնված բնագրային հատվածներում հանդիպում են գրաբարում՝ 58, միջին գրական հայերենում՝ 57, արևմտահայերենում՝ 62 և արևելահայերենում՝ 63 % հաճախականությամբ, ընդ որում նկատելի է նաև, որ նոր գրական հայերենը սույն տարբերակների գործածման աճի միտում ունի (արևելահայերենը հիմնականում ի հաշիվ առաջին, իսկ արևմտահայերենը՝ երկրորդ տարբերակի):

*գ. Ստորոգյալ → ենթակա → ներգործման խնդիր (PSO) գծային հաջորդակալություն*

Ըստ վիճակագրական տվյալների՝ այս տարբերակը հայերենի բոլոր գրական վիճակներում հանդես է գալիս գրեթե հավասարաչափ և կրկնակի (գրական արևելահայերենում՝ մույնիսկ եռակի) պակաս առաջին տարբերակից:

Օրինակներ՝ Սկսաւ սատակումն ի ժողովրդեան /Բ. Թագ.,ԻԴ/: Եղիցին ամենեքեան ուսեալք Յաստուծոյ /Յովհ.,Ձ/: Ի փայտուստ դարձցին նոքա յերեսաց ձերոց /Յուդ.,ԺԴ/: Ծանիցի Տէր Եզիպտացոցն /Եսայի,ԺԹ/: Որպէս վառեսցի եղեգն ի կայ-

*ծականց* /ն.տ.,Ե/: *Աներեցաւ աշխարհս* ամեն ի անօրէն *քորքմանէ* /ԺԵՀԶԱ,361/: *Լուսաւորի հոգի* քո կրկին *լույսով* սուրբ աւագանին /ԼՍԺԱՎ,263/: Եւ *կը զարնուի եղբայրն եղբօրէն* /ՎԹԵ,231/: *Գերվել են անցորդներ* քո ծով *գեղեցկութեամբ* /ՀՄՀԵՄ,209/: *Կեղեքվում է* իմ անտեր մնացած *երկիրը թշնամիներից* /Բ,7,247/: Ինչպես իզուր *խաբվել ես դու Սուտ խոսքերին* չար աղվեսի /ՀԹ,1,310/:

Ակներև է, որ վերոբերյալ նախադասությունների մեջ իր լրացյալից ենթակայով ընդմիջված ներգործման խնդրի դիրքը պետք է դիտել որպես տրամաբանորեն ընդգծված առաջադաս ստորոգյալի առկայությամբ նրա վերջադաս լրացման ոչ պակաս ընդգծումն վիճակ, «իբրև անդամ, որի մասին իրագեկում է հաղորդվում»:<sup>7</sup> Ասվածը վերաբերում է ոչ միայն եռանդամ, այլև երկանդամ (առանց ենթակայի) կրավորաձև կառույցներում ներգործման խնդրի՝ իր առաջադաս լրացյալից այլ անդամներով ընդմիջված վերջադասությանը, ինչպես օրինակ՝ Ի պարտութիւն մատնեցան *ի նոցանէ* /Ա.-Սակ.,Թ/: Որ ծածկեալն էր յամենայն յախտեանց *առ Աստուծոյ* /Ազաթ.,353/: Ի տղայութենէ սնեալ և ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամբաց *ընդ* հաւատարիմ *վարդապետօք* /Բուգ.,4,Գ/: Չինչ մեծամեծ վաստակ արի՝ տանիլ տուի զինքն *հեղեղի* /ՅԴ,289/: Այս օրերս յաղթուեցաւ Միմոն անուն *բեռնակրէ մը* /ՀՊԵԺ,4,478/: Խիստ տարբերվում էր փողոցներում վազվզող հասակակիցներից /Շիրվ.,3,451/: Ամբողջովին մտասուզվեց զիշերվա իր լսած իրադարձությունների հիշողությամբ /ԶԴՄՆ,2,378/:

դ. *Ստորոգյալ* → *ներգործման խնդիր* → *ենթակա (POS) գծային հաջորդականություն*

Եռանդամ կրավորաձև կառույցում հիմնաբաղադրիչների փոխդասավորության այս տարբերակը, թեև խիստ սակավադեպ, սակայն վկայված է բոլոր գրական լեզվավիճակներում: Հատկապես այն դեպքերում, երբ քերականական ենթական եզրափակում է մնան նախադասությունը, ապա վերաձվում է տրամաբանորեն ընդգծված բառի:

Օրինակներ՝ *Սարտեսու ի նմանէ հարձն* իւր /Դատ.,ԺԹ/: Երկրորդ սիկառին հետ *կը տարուի մոմտութի Գօլօն* /ՀՕԵ,125/: *Չհամոզեցաւ* սակայն այս *ըստածներէն Էմիլիօն* /ՎՄՀԲ,156/: Գրքի էջերից *երազվում էր նրան* տխրամային *մի մարդ* /Զ,431/:

Տարբերակը համեմատաբար ավելի գործածական է (մոտ 12 %) արևմտահայերենում, որն ինչպես հայտնի է, մատնանշելու նպատակով ենթական հաճախ տանում է նախադասության ամենավերջը:<sup>8</sup>

ե. *Ներգործման խնդիր* → *ենթակա* → *ստորոգյալ (OSP) գծային հաջորդականություն*

Քիչ հանդիպող (մոտավորապես 8-10 %) շարադասական տարբերակ է, գերազանցապես օգտագործվում է իր լրացյալից ենթակայով (նաև այլ անդամներով) ընդմիջված առաջադաս ներգործման խնդրի ոճական ընդգծման նպատակով:

Օրինակներ՝ *Յանօրինաց մեք հալածիմք* /ԼՄՀԶԳ,6/: Եւ յայն *համբուրէ* ծերին *լռյս ծագեաց* մթան զիշերին /ԼԲՀԿ,286/: Չեմ այլոց *ձեռօք ես խաբուէր* /ն.տ.,303/: Մեծ ապարանքին վրայ իջնող *կայծակէն* կարծես ամեն *մարդ* շատ քիչ *հարուածուած էր* /ԵԵ,33/: *Չափազանցութիւններէ սիրտս կը խառնուի* /ՀՊԵԺ,390/: *Անձրկից ծառերը լվացվել էին, մաքրվել էին* /Բ,7,69/: *Արկերից* մեր վաշտում *մարդ չէր սպանվել* /ԲՀՄԶ,74/: Սև *ամպերով* երկնից *դեմքը քողարկվեց* /ՀՀ,92/:

զ. *Ներգործման խնդիր* → *ստորոգյալ* → *ենթակա (OPS) գծային հաջորդականություն*

Տարբերակը գործածության գրեթե մույն ակտիվությունն է դրսևորում, ինչ նախորդը, թերևս մի փոքր ավելի հաճախադեպ է (11-12 %), նաև առանձնահատուկ է նրանով, որ տրամաբանորեն ընդգծված են և՛ առաջադաս խնդիրը, և՛ սովորաբար՝ այսպիսի կառույցը եզրափակող ենթական:

Օրինակներ՝ *Չկամք գայթակղիցի եղբայրն* /Եզն.,4,ԺԲ/: *Մտաց իմանի գորութիւն* նորա /Եղ.,7/: *Ի սպանելոց* անտի *լցեալ եղեն հիմունք* երկրի մերում /Դև.,Պատմ.,276/: *Ի սպարարտութենէ լցցի անձն իմ* /Մաղմ., ԿԲ/: *ՅԱստուծոյ ուղեացին* զնացք նորա /Ա-

<sup>7</sup> Ա. Մ ա ղ ս յ ա ն, Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ. զուգադրա-տիպաբանական քննություն, Եր., 1985, էջ 294:

<sup>8</sup> Այդ մասին տե՛ս Ա. Մարգարյան, *մույն տեղում*:

ռակ., ԺԶ/։ *Ի տեսիլ մերձադրութեան նորա զգաստացան լկտիք /Եղ., 7/։ Ի կարճոյ հնարեցաւ վախճան նոցա /Իմաս., ԺԳ/։ Ի քաղցրութենէն, երբարք, բռնկեր է պոկունքս ... /ՆՍՀԿ, 112/։ Այդ տեսիլքէն կը դողան դեռ հիմա միտքս ու հոգիս /ՎԹԵ, 363/։ Բողոքին կողմէն արհամարհուած էր փնթի Մկուն /ՀԵԱԳԱ, 247/։ Կաթնագոյն մի լույսով որողվել էր երկինքն ու քաղաքը /ԳՍԼՁ, 426/։ Նրա ստեղծագործութիւններով դաստիարակվել են սերունդներ /Իս., 4, 180/*

Եռանդամ կրավորաձև կառույցները, ինչպես իրավացիորեն նկատվել է արդի հայ քերականագիտութեան մեջ,<sup>9</sup> իրենց գործածութեան ակտիվութեամբ ակնհայտորեն զիջում են երկանդամ կառույցներին։ Չնչին տարբերություններով հանդերձ՝ վերջիններս հայերենի բոլոր գրական վիճակները ներկայացնող բնագրային հատվածներում մեր հաշվումներով կազմում են դիտարկված կրավորաձև կառույցների 68-70 %։ Սրանցում առկա չէ կամ ներգործման խնդիրը, կամ ենթական, կամ երբեմն՝ ստորոգյալը։ Այսպիսի կառույցները հանդես են գալիս երկու հիմնաբաղադրիչների փոխդասավորութեան վեց տարբերակային դրսևորումներով, որոնք բոլորն էլ, իհարկէ միանգամայն տարբեր հաճախականություններով, բայց վկայված են հայերենում։

*ա. Ենթակա → ստորոգյալ (SP) գծային հաջորդականություն*

Կրավորական բայերը շատ ավելի հաճախ, քան ներգործականները, խոսքում հանդես են գալիս առանց իրենց սեռի խնդրի։ «Կրավորական կառուցվածքի նախադասությունը... լայն հնարավորություն ունի միշտ կամ համարյա միշտ չիշատակելու գործողություն կատարողին՝ անգամ այն դեպքում, երբ այդ գործողություն կատարողը հայտնի չէ խոսողին»։<sup>10</sup> Առհասարակ նկատելի է, որ «ներգործող խնդիրը սովորաբար բառական արտահայտություն չի ստանում այն դեպքում, երբ հայտնի է խոսքաշարից կամ անկարևոր է, հարկ չկա այն շեշտելու, երբեմն էլ կարող է լինել անհայտ»։<sup>11</sup> Ի դեպ, ներգործման խնդրի բացակայությունը կրավորաձև կառույցը կազմությամբ նույնացնում է երկանդամ կրավորաձև չեզոք կառույցների հետ։ Մակայն հասկանալի է, որ այդ նույնացումը զուտ ձևական է, որովհետև խնդրի չգոյության (այսպես ասած՝ զրո խնդրի) դեպքում բայը երբեք էլ չի դադարում կրավորական սեռին պատկանելուց, ուրեմն նաև ներգործման խնդիր ունենալու հնարավորությունից, բոլորովին այլ է նրա հարաբերության բնույթը իր ենթակային հետ, որն, ի տարբերություն չեզոք կառույցի ենթակայի, «ինքը չի ստեղծում բայինաստով դրսևորվող հատկանիշ, այլ այդ հատկանիշը կրում է իր վրա», այդ պատճառով էլ «մեր մեջ առաջանում է այն պատկերացումը, որ... գործողությունը կատարել է ինչ-որ մեկը, որը տվյալ նախադասության մեջ չի արտահայտված»,<sup>12</sup> բայց կարող է ի հայտ գալ։ Այնուամենայնիվ երկանդամ կրավորաձև կառույցներում շատ դեպքերում ներգործման խնդիրը չի կարելի վերականգնել, որովհետև նրա պատկերացումը խիստ անորոշ և ընդհանուր է («Դրա համար մեծ ջանքեր են պահանջվում»։ «Երկրի հարստությունները անխղճորեն վատնվում են»։ «Ընդերքը լավ չի ուսումնասիրվում»)։

Ենթակայով և ստորոգյալով երկանդամ կրավորաձև կառույցի SP շարադասական տարբերակը գործածության բավականին լայն շրջանակներ ունի (62-64 %) մեր գրական լեզուների՝ հատկապես արտահայտչական գունավորումից զուրկ պատմողական, գործնական, պաշտոնական կամ գիտական ոճերում։

Օրինակներ՝ Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ /Բուգ., 4, ԺԵ/։ Կոյր գրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն գրկի ի կատարեալ կենաց /Եղ., 14/։ Բանն հաստատեսցի /Եզն., 1, ԺԸ/։ Երկինք շրջիցին /ն.տ., 2, ԻԵ/։ Անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է /Իս., 3, 322/։ Նրա հրավերը ընդունվեց ուրախությամբ /ՍԳ., 54/։ Ամբողջ կյանքը նա չարչարվել է /ԳԼՆ., 67/։

*բ. Ստորոգյալ → ենթակա (PS) գծային հաջորդականություն*

Տարբերակը, նախորդին հակառակ, ունի ոճաարտահայտչական նկատելի գունավորում, համեմատաբար քիչ գործածական է (մոտ 36-38 %), և նրանում հատկա-

<sup>9</sup> Տե՛ս Մ. Մասարյան, *նշվ. աշխ.*, էջ 135; Հ. Հարությունյան, *նշվ. աշխ.*, էջ 177 և ուրիշներ։

<sup>10</sup> Մ. Ասատրյան, *նշվ. աշխ.*, էջ 136։

<sup>11</sup> Հ. Հարությունյան, *նշվ. աշխ.*, էջ 177։

<sup>12</sup> Մ. Ասատրյան, *նշվ. աշխ.*, էջ 138։

պես ստորոգյալի առաջադաս ու որոշ չափով մաս ենթակայի վերջադաս դիրքերը տրամաբանորեն ընդգծում են, ինչպես օրինակ՝ *Ծածկեսցի խորհուրդ* ամբարշտութեանը /Եղ.,10/: *Յայտնեցաւ խորամանկութիւն* խորհրդոյն /ն.տ.,16/: *Տոնեալ լիցի քեզ քազաւորութիւնն* ինն հազար ամի /Եզն.,2,Ա/: *Հեռու հորիզոնում նշմարվում էր Ազատ լեռը* /ԳԼՆ,31/:

«Կրավորաձև կառույցը ենթական «ազատելով» «գործող լինելուց», ստեղծում է բարենպաստ շարահյուսական պայմաններ այն չարտահայտելու համար»<sup>13</sup> Ձեղչված ենթակայով կամ անենթակա երկանդամ կրավորաձև կառույցները, թեև քիչ չեն հանդիպում, սակայն առանց ներգործման խնդրի երկանդամ կրավորաձև կառույցների համեմատությամբ ավելի սակավաթիվ են: Եվ եթե վերջիններս կազմում են բնագրային հատվածներում դիտարկված այդպիսի կառույցների շուրջ 60%, ապա առաջինները, որ իրենց զույգ դիրքային տարբերակներով գրեթե հավասարաչափ են գործածական հայերենի բոլոր գրական ձևերում, միայն 36 %:

*ա. Ստորոգյալ → ներգործման խնդիր (ՊՕ) գծային հաջորդականություն*

Երկու շարադասական հիմնաբաղադրիչներ ունեցող այս տարբերակին հայերենի բոլոր գրական վիճակներում էլ բնորոշ է պատմողական չեզոք ոճը, հանդարտ շարադրանքը, այն երբեմն էլ ունի նախադասության վերջը տարված ներգործման խնդրի բավականին ակներև տրամաբանական ընդգծվածություն:

Օրինակներ՝ *Տապալէր երկդիմի մտօք* /Եղ.,16/: *Ոչ զգեցցին ի գործոց* ձեռաց իրեանց /Եսայի,ԾԹ/: *Ծածկեալ իցէ յամեն նորա* /ԹԻԽԵ/: *Օրինեցաւ և դրուատեցաւ ի հեռաւորաց և ի մերձաւորաց* /ԹԱՊՏԱ,3,ԺԳ/: *Անիծած լինաւ սուրբ Յարութենէս* /ԺԵՀՀԶԲ,449/: *Ո՛ր մահու մատնեցաւ յիւր արարողէն* /ՀԵ,192/: *Կը դիմաւորուի խոշոր կնիկէ մը* /ՀՊԵԺ,3,189/: *Հիասթափուեցան* գաւառին *կեանքէն* /ՇՇ,1,133/: *Հափշտակված զմայլանքին* կախարդական քո երգի... /ՀԹ,2,154/: *Կրոնվեր* կամուրջի գիշերային *պահակներից* /Բ,7,18/:

*բ. Ներգործման խնդիր → ստորոգյալ (ՕՓ) գծային հաջորդականություն*

Տարբերակն իր հաճախականությամբ բնագրային հատվածներում քիչ է զիջում նախորդին: Ստեղծում է գեղարվեստական ոճ, արտահայտչական գունավորումով հարուստ խոսք՝ խնդրի հատկապես նախադասության սկիզբը զբաղեցնող դիրքի շնորհիվ, ինչպես օրինակ՝ *Յամենայն հողմոյ շարժի և յամենայն բանէ խռովի և յամենայն իրաց դողայ* /Եղ.,14/: *Ի բերանոյ քումմէ դատեցայց* /Դուկ.,ԺԹ/: *Հազարացոց ազգէն գերեցաք*, ճաղաքայից *սրէն խոցեցաք* /ԽԿ,130/: *Մեր ազգայիններէն մեկէն վնաս տեսած է առուտորի մէջ* /ՀՊԵԺ,4,412/: *Անհաղթահարելի ուժից մղվում էր* դեպի աղքատիկ բնակարանը /Շիրվ.,3,245/:

Հանդիպում են մաս երկանդամ կրավորաձև կառույցներ՝ հիմնաբաղադրիչների գծային հաջորդականության SO և OS տարբերակներով (ստորոգյալի զեղչման դեպքում): Ի տարբերություն մյուս կառույցներում հիմնաբաղադրիչների փոխդասավորության վերը քննված չորս տարբերակների, սրանցում ենթակայի և ներգործման խնդրի փոխդասավորությունը (SO կամ OS) գերազանցապես որոշվում և կարգավորվում է խոսքային իրադրությամբ՝ անմիջապես նախորդող լրիվ (առանց ստորոգյալի զեղչման) եռանդամ կառույցում այդ հիմնաբաղադրիչների շարադասության գոյություն ունեցող ձևի պատճենմամբ :

Օրինակներ՝ *Անուշավան կը* տանջուէր խղճի *խայթէն, հայրը՝* անորոշութեան *զգացումէն*: *Նա* մոռացվել էր իրեն ճանաչող *մարդկանց կողմից, սրանք էլ՝* երկի իրենց *աստծուց*: Անախորժ *մտքերով* էր շրթայված *մարմինը*, և ունայն *հույսերով՝* *հոգին*:

Բնագրային հատվածներում երբեմն կան մաս մեմանդամ կրավորաձև կառույցներ, որոնցում ենթակայի և ներգործման խնդրի զեղչման պատճառով հիմնաբաղադրիչներից առկա է միայն կրավորական սեռի բայ – ստորոգյալը՝ մեմակ կամ իր այլ լրացումների, երբեմն մաս նախադասության անդամ չհանդիսացող բառերի հետ:

Օրինակներ՝ *Գալարէր* իբրև զօճ բունաւոր /Եղ.,16/: *Ձի այրիս, զի բորբոքիս* /ն.տ.,7/: *Ցանեալ ցրուեցան* /ն.տ.,119/: *Կը հալածուէր* անխղճորեն /ԹԲԱԵ,58/: *Վերջապես գտնվեց* /ԳԳՎ,187/: *Երկի պիտի կառուցվի* կրկին / Շիրվ., 52 /:

<sup>13</sup> *Проблемы теории грамматического залога, Л., 1978, стр. 21.*

Միանգամայն հասկանալի պատճառով (առկա է հիմնաբաղադրիչներից միայն մեկը) այսպիսի կրավորաձև կառույցները հիմնաբաղադրիչների փոխդասավորության տեսակետից բնականաբար որևէ հետաքրքրություն ներկայացնել չեն կարող:

Ի մի բերելով սավաճը կրավորաձև կառույցներում հիմնաբաղադրիչների շարադասական տարբերակների՝ հայերենի տարբեր վիճակներում ունեցած դրսևորումների վերաբերյալ, կարելի է դրանց վիճակագրական ուսումնասիրության արդյունքների հիման վրա արձանագրել.

- Հայերենում կենսունակ են եռանդամ և երկանդամ կրավորաձև կառույցների բոլոր տասներկու շարադասական տարբերակները:

- Երկանդամ կրավորաձև կառույցներն իրենց գործածությամբ ակնհայտորեն գերազանցում են եռանդամ կառույցներին. հայերենի բոլոր գրական վիճակները ներկայացնող բնագրային հատվածներում մեր հաշվումներով դրանք կազմում են դիտարկված բոլոր կրավորաձև կառույցների 68-70 %-ը: Ընդ որում, երկանդամ կառույցներում հիմնաբաղադրիչների փոխդասավորության վեց տարբերակներից առավել ակտիվը երկուսն են՝ SP և PS՝ համատեղ 60 % հաճախականությամբ:

- Եռանդամ կրավորաձև կառույցների մեջ շարադասական հիմնատարբերակները երկուսն են՝ SPO և SOP՝ դրանցից առաջինի, իբրև սովորական, գերազանցապես ոճականորեն չեզոք շարադասության տարբերակի, նկատելի գերակշռությամբ:

- Հայերենի բոլոր ժամանակային կտրվածքներում եռաբաղադրիչ կրավորաձև կառույցների մեջ ակնհայտորեն գերիշխողը ներգործման խնդրի՝ ստորոգյալին հաջորդող դիրքն է՝ 65 % գործածական հաճախականությամբ: Ներգործման խնդրով երկանդամ կրավորաձև կառույցներում խնդրի ետադասությունը նույնչափ ցայտուն դրսևորում չունի (ընդամենը 56 %):

#### Համառոտագրություններ

Ագաթ. - «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914:

ԱԾՄՉՄ - Ա.Ծատուկյան, Մանկություն չունեցող մարդիկ, Երևան, 1963:

Բակ. - Ա.Բակունց, Երկեր, Երևան, 1975:

ԲՀՄՉ - Բ.Հովսեփյան, Սերմնացանները շվեդադարձան, Երևան, 1962:

Բուզ. - «Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912:

ԳԲՆ - Գ. Բաբկենց, Նորեկ, Երևան, 1961:

ԳՄԼՁ - Գ. Մահարի, Լռության ձայնը, Երևան, 1962:

ԴԴՎ - Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1988:

ԵԵ - Երուվսան, Երկեր, Երևան, 1980:

Եզն. - Եզնկայ Կողբացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:

Եդ. - Եդիշէի «Կասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957:

ԶԳՀ - Զ. Գալսեփեարյան, Հասկարադ, Երևան, 1965:

ԶԴՄԵ - Զ.Դարյան, Սայաթ-Նովա, 1-2, Երևան, 1960-1963:

ԹԱՊՏԱ - Թովմայի վրդ. Արծրունույ «Պատմութիւն տանն Արծրունեաց»:

ԹԲԱԵ - Թղկատինցի, Լ.Բալաշյան, Առանձար, Երկեր, Երևան, 1982:

ԺԵՀՉՀԱ - ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955:

ԺԵՀՉՀԲ - ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958:

Իս. - Ավ. Իսահակյան, Երկեր, 1-4, Երևան, 1988:

ԽԿ - Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958:

ԾԵ - Ծերենց, Երկեր, Երևան, 1957:

ԿԵՏ - Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962:

ԿՎՄ - Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1941:

ՀԵ - Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958:

ՀԵԱ - Համաստեղ, Երկեր, Ա, Պեյրուք, 1966:

ՀԹ - Հովհ.Թումանյան, Երկեր, Երևան, 1998:

ՀՀ - Հովհ.Հովհաննիսյան, Երկեր, Երևան, 1959:

ՀՊԵԺ - Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, 1-10, Երևան, 1962-1979:

ՀՄՀԵՄ - Հ.Մահյան, Հայաստանը երգերի մեջ, Երևան, 1962:

ՀՕԵ - Հ.Օջախյան, Երկեր, Երևան, 1979:

Ղև., Պատմ. - «Պատմութիւն Ղևոնդայ մեծի վրդ. Հայոց», Սանկտ-Պետերբուրգ, 1887:

ՄՀՁՄ - Մխիթարայ Հերացոյ Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1831:

Մուր. - Մուրացան, Երկերի ժողովածու, 1-7, Երևան, 1961-1965:

ՅԴՊՀ - Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակեղուցոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912:

ՆԴ - Նար-Դոս, Երկերի ժողովածու, Երևան, 1989:

ՆՄԺՄՎ - Ն.Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մաս Բ, 1894:

ՆԷՀԿ - Նահապետ Քուչակ, Հայրենի կարգաւ, Երևան, 1957:

Շիրվ. – Շիրվանգադե, Երկերի ժողովածու, Երևան, 1981:

ՇՇ – Շ.Շահնուր, Երկեր երկու գրքով, 1, Երևան, 1963:

Չ – Շղ.Չարենց, Երկեր, Երևան, 1996:

ՊԱԳ - Պատմության Առաքել վրդ. Դավրիժեցայ, Վաղարշապատ, 1896:

ՊՄԱԶ - Պ.Մակ, Անլուսի զանգակատուն, Երևան, 1969:

ՎԹԵ - Վ.Թերեյան, Երկեր, Երևան, 1988:

ՎՄՀԲ - Վ.Մավյան, Հայու բեկորներ, Երևան, 1967:

Բ – Բաֆֆի, Երկերի ժողովածու, 1-10, Երևան, 1977-1984:

ՖԴ - Ֆրիկ, Դիան, Նյու Յորք, 1952:

Մ. Գրքի /Աստուածաշունչ: մատենան հնոց և նորոց Կտակարանաց, Կ. Պոլիս, 1895/ համառոտագրություններին Գ. Առակ.-Առակը Մոտորանի, Ա.Մակ.-Առաջին Մակարայեցոց, Ա.Մնաց.-Առաջին Մնացորդաց, Բ. Թագ.-Երկրորդ Թագաւորաց, Դ.առ. -Գիրք Դատաւորաց, Յայտն. – Յայտնութիւն Յոհաննու, Յովհ.-Սրբոյ Ավետարանիս Յիսուսի Զրիստոսի ըստ Յովհաննու և այլն:

## ВЗАИМОРАСПОЛОЖЕНИЕ ОСНОВНЫХ КОМПОНЕНТОВ КОНСТРУКЦИЙ СО СТРАДАТЕЛЬНЫМ ЗАЛОГОМ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ С. Айрапетян \_\_\_\_\_

На основе статистических данных богатого материала языковых под-  
ленников проводится сравнительный анализ всех возможных вариантов  
взаиморасположения основных компонентов конструкций со страдательным  
залогом в габаре, средневековом и современном литературных языках,  
фиксируется активность и частотность применения каждого типа этих  
конструкций, проводится их классификация с учетом порядка составных  
компонентов по их стилистически нейтральной или стилистически и  
эмоционально окрашенной значимости

**Վարդան ՄԵԼՔՈՆՅԱՆ**

**ԲԱՌԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ  
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

Ի տարբերություն լեզվական նորաբանությունների՝ խոսքային /անհատական/ նորաբանությունները գերազանցապես ոճական, արտահայտչական նպատակադրումով են կյանքի կոչվում: Վերջիններիս էության ըմբռնումն ամբողջական և համակողմանի դարձնելու առումով առանձնակի կարևորություն ունի դրանց արտահայտչական դերի և հնարավորությունների բացահայտումը:

Ի՞նչ սկզբունքով ու նպատակադրումով է կատարվելու անհատական նորաբանությունների ոճական արժեքավորումը, դրանց արտահայտչական դերի բացահայտումը: Բնական է, որ այդ հարցը գրողների, բանաստեղծների լեզվի և ոճի ուսումնասիրությանը վերաբերող աշխատություններում այլ լուծում պիտի ստանա, քան այն դեպքում, երբ բառային անհատական նորաբանություններն ուսումնասիրության նյութ են դառնում որպես գեղարվեստական խոսքի բառապաշարի առանձին մասնաշերտ: Նախ որ ոչ բոլոր գրողներն ու բանաստեղծներն են այնքան համապատասխան նյութ տրամադրում, որ դա առանձին, համակողմանի քննարկման առարկա հանդիսանա: Եթե անգամ որոշ գրողներ, բանաստեղծներ համապատասխան նյութ էլ տրամադրում են, ապա դա ուշադրության առարկա է դառնում այլ խնդիրների ոլորտում, ինչպիսիք են գրողի լեզվի ձևաբանական, շարահյուսական յուրահատկությունները, բառապաշարի մյուս շերտերը (բարբառային բառեր, հնաբանություններ և այլն), խոսքի պատկերավորության միջոցները, տաղաչափական հարցեր և այլն: Հասկանալի է, որ այդպիսի ընդգրկում ունեցող ուսումնասիրություններում հնարավոր էլ չէ անհատական նորաբանություններին ավելի ծավալուն տեղ հատկացնել: Անհատական բառաստեղծմանը վերաբերող աշխատություններում բառապաշարի այդ կարևոր մասնաշերտի՝ որպես ամբողջական իրողության ոճական արժեքի քննությունը սովորաբար կամ ուղղակի անհրաժեշտ չի համարվում, կամ երկրորդ պլանում է գտնվում: Նշված հանգամանքների հետևանքով որոշակի մոտեցում չի մշակվել, թե ինչ սկզբունքով է կատարվելու անհատական նորաբանությունների ոճական արժեքի բացահայտումն ու քննությունը:

Այնպիսի հարուստ նյութի ուսումնասիրությունը, ինչպիսին 20-րդ դարի արևելահայ չափաժոյի նորաբանություններն են, բնականաբար առաջադրելու էր այդ-պիսի սկզբունքի որոշման անհրաժեշտությունը: Նյութի ուսումնասիրությունը հանգեցրել է այսպիսի հետևության: Անառարկելի է, որ անհատական նորաբանությունները խոսքային իրողություն են, խոսքային միջավայրի պահանջով կյանքի կոչված բառեր՝ օժտված ոճական, արտահայտչական դերով: Իսկ ի՞նչ է այդ *ոճական, արտահայտչական* ասվածը, եթե ոչ առաջին հերթին խոսքի դրական հատկությունների ապահովմանը նպաստելը: Հայտնի է, որ այդպիսի հատկություններ են խոսքի սեղմությունը, բազմազանությունը, բարեհնչությունը և այլն: Ուրեմն՝ երբ խոսք է գնում անհատական նորաբանությունների ոճական արժեքի մասին, հիմնական ելակետ է ճանաչվելու այն հանգամանքը, թե դրանք ինչ դեր ունեն խոսքի այդ հատկությունների ապահովմանը նպաստելու գործում:

Հայտնի է, որ անհատական բնույթի նոր բառերը ոչ թե նոր երևան եկած առարկաների, երևույթների անվանումներ են, այլ հիմնականում հասկացությունը, երևույթը նոր ձևով արտահայտող լեզվամիջոցներ: Սա էլ նշանակում է, որ անհատական նորաբանությունները հիմնականում հանդես են գալիս որպես լեզվում գոյություն ունեցող համապատասխան իրակությունների հոմանիշներ: Կասկածից դուրս է, որ, օրինակ, *երջանկասպիտու*-ը նոր բառ է:

Երջանկասպիտու քո լույս-գիրկը բաց,

Ես սիրաբորբոք քոչում եմ դեպ քեզ /ԱԻ, 2, 76/:

Այս բառի արտահայտած հասկացությունը հոմանշային առնչության մեջ է գտնվում «երջանկություն սփռել» բառակապակցության հետ, ինչպես և, ասենք, *հոգեօգուտ* նորաբանությունը՝ *հոգեշահ* բառի հետ:

Երգերը գրավիչ, մեղմ, *հոգեօգուտ...* /ՋԶ, 59/:

Որտեղ հոմանշություն, այնտեղ էլ անհրաժեշտ լեզվամիջոցի ընտրություն և խոսքի բազմազանեցման հնարավորություն: Գոյություն ունեցող լեզվամիջոցի փոխարեն նորաբանության գործածությունը գրողին, բանաստեղծին հնարավորություն է տալիս խուսափել շրջանառության մեջ եղած բառերի, բառակապակցությունների հաճախակի գործածությունից, կրկնությունից:

Այդ իմաստով էլ միանգամայն հնարավոր կլինի, եթե ոճական արժեքավորման ժամանակ անհատական նորաբանություններն ուշադրության արժանանան որպես *խոսքի բազմազանությանը* նպաստող կարևոր միջոց: Ուշագրավն այն է, որ նորաբանությունների միջոցով խոսքի բազմազանեցման ձգտումը երբեմն այսպիսի ակնհայտ դրսևորում է ունենում՝ փոքր ծավալի խոսքային միջավայրում:

Ժայռերի կրծքի վրայով հոսում էր երկինքը,

Եվ նրա *կապույտ քարֆիչներից*

Սաղմոսներ էին թափվում անդունդների մեջ,

Երգի ծաղկաթերթերը չէին դժգունում

*Կապտաքարֆիչ* երկնքի սև շուրթերի տակ /ՌԴՌ, 136/:

Նկատելի է, որ մի դեպքում հասկացությունների հարաբերությունն արտահայտված է բառակապակցությամբ, իսկ մյուս դեպքում՝ նորաբանությամբ: Նույն իրողությունն ենք տեսնում նաև հետևյալ գործածությունում:

Ասում են, թե չկար երկրում ոչ մի ծաղիկ՝ *սիրտը սև,*

Այն օրվանից աշխարհ եկան կակաչները *սրտասև* /ՀՇՀ, 326/:

Հետևյալ քառատողում համապատասխան հասկացությունը մի դեպքում արտահայտված է *բյուրասար*, մյուս դեպքում՝ *հազարասար* հոմանիշ նորաբանությամբ՝ նպաստելով խոսքի բազմազանությանը:

Գերի միայն Մասիսը չէ, իմ *բյուրասար*, իմ անգին,

Դու իմ Գրգուռ, դու իմ Սիփան, իմ Ծովասար, իմ անգին,

*Հազարասար* իմ Հայաստան, հազարից մեկն է գիրկս,

Ու հազար է սիրտս դողում մեկիդ համար, իմ անգին /ՀՇ, Յոթ., 78/:

Անհատական նորաբանությունները գործածության հաճախականության առումով գրեթե անուշադրության մատնված լինելու պատճառով միայն կարող էր երևան գալ այնպիսի կարծիք, թե իբր դրանք կարող են վնասել խոսքի բազմազանությանը, երբ մեկից ավելի գործածություն են ունենում, թե իբր այդպիսի նորաբանությունները որպես «պոետական շտամպ» են հանդես գալիս<sup>1</sup>:

Մեզ հայտնի ավելի քան 250 նորաբանություններ, որոնք ունեն երկուսից մինչև տասը գործածություն և ո՛չ իմաստային, ո՛չ էլ ոճական առումով բնավ կրկնության, շտամպի տպավորություն չեն թողնում: Դրանց մեծ մասը հատկանշվում է իմաստային բազմերանգությամբ և ինքնատիպ գործածությամբ: Որպես օրինակ ուշադրության արժանացնենք *հրաթև* բառը, որը մեզ հայտնի է Հ.Թումանյանի, Վ.Տերյանի, Հ.Շիրազի գործածությամբ.

Կարոտ է հոգիս, թռչում է *հրաթև*

Այս մենաստանի բարձրը պարսպից /ՀԹ, 2 26/:

Ոսկեբուսիկ, օ՛, *հրաթև*, այնպես բոսոր

Փայլում ես դու /ՎՏ, 2, 37/:

Ճերմակ մազերս քանի սև էին՝

Աղջիկներն, ասես *հրաթև* էին /ՀՇԵ, 3, 151/:

Ինչպես կարելի է նկատել, մեզ հետաքրքրող բառը տարբեր հեղինակների կողմից իմաստային և շարահյուսական կապի, առնչության մեջ է դրված տարբեր բառերի հետ: Առաջինում սիրահարված արեղայի հոգին է հրաթև թռչում, երկրորդում «թագուհու պես տիրող» գեղեցկուհին է հրաթև, երրորդում երիտասարդից խուսափող աղջիկներն են հրաթև: Թումանյանից բերված օրինակում բառի նշանակության մեջ առաջին

<sup>1</sup> *М. Б а к и н а, Потенциальные слова, мотивированные прилагательными, в современной поэзии; - Слово в русской советской поэзии, М., 1975, էջ 135:*

պլանում է գտնվում արագության, շտապողականության իմաստային առումը: Տերյանական գործածության մեջ իշխողը հրեղենության գաղափարն է. այդ գեղեցկուհին ոսկերուսիկ է, «այնպես բոսոր փայլում է», բանաստեղծության հաջորդ տողերում ներկայացվում է *արեգակ, ուղղակի՝ հրեղեն* («Ինքդ արեգ...», «Օ, հրեղեն, չար արեգակ, ում որ նայես՝ Այրում ես դու»):

Շիրազյան գործածության մեջ բառիմաստի ձևավորման հարցում ավելի կարևոր դեր ունի նորաբանության երկրորդ բաղադրիչը, այսինքն՝ *թև* բառը՝ բառիմաստի մեջ որպես հիմնական հասկացություն ներկայացնելով թռչելու, հեռանալու, փախչելու գաղափարը: Կարծում ենք՝ միանգամայն իրավացի կլինի, եթե ընդգծվի, որ *հրաթև* նորաբանության այս գործածություններում «պոետական շտամպի» նշույլ անգամ չի կարելի նկատել:

Հրահրում բառը Վ. Տերյանի բանաստեղծություններում *վերք* բառի լրացում է, Ս. Տարոնցու բանաստեղծությունում՝ *կույս* բառի. Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ, Թե՞ վերքերն իմ *հրահրում* /ՎՏ, 1, 249/: Եվ երագում է չքնաղ, բողբոջ կույսեր *հրահրում* /ՄՍՄ, 53/:

Ե. Չարենցը *գայիքնաբեր* է համարում իր ժամանակը, իր օրերը, Հ. Շիրազը՝ Աստծուն. Եվ առաջին խորհուրդս, որ հղում են կարմիր Մեր օրերից այս բոբբ ու *գայիքնաբեր...* /ԵՉ, 4, 395/: Եվ լոկ մի բան կուզեի *գայիքնաբեր* աստծուց՝ Որդիներս իրենց հոր տեսած կյանքը չտեսնեն /ՀՇ, ԶՀ, հ.3, էջ 351/:

*Երկնածին* նորաբանությանը Հ. Թումանյանը բնութագրում է սիրահարված արեղայի սիրո առարկան, Վ. Տերյանը՝ քնարական հերոսի անուրջները. Եվ հանկարծ կանգնեց նրա գլխի մոտ Լուսեղեն մարմնով մի կույս *երկնածին* /ՀԹ, հ.2, էջ 12/: Անուրջներս *երկնածին* զնացին, զնացին... /ՎՏ, հ.1, էջ 33/:

Անհատական նորաբանությունները կարևոր դեր ունեն մաս խոսքի սեղմության ապահովման, լեզվի մեջ գործող խնայողության սկզբունքի դրսևորման առումով: Այդ իրողությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ դիտվում է փոխակերպման հայեցակետով:

Բաղադրյալ բառերն ուշադրության արժանացնելով դերբայական դարձվածի՝ նախադասության հետ ունեցած առնչությունների մեջ՝ Գ. Ջահուկյանն առաջինների համար հատկանշական է համարում հարաբերությունները, հասկացություններն «ավելի համառոտ ձևով» արտահայտելու կարողությանը օժտված լինելը: «Այն հարաբերությունները, որոնք արտահայտվում են դերբայական դարձվածների միջոցով, ավելի համառոտ ձևով կարող են արտահայտվել բաղադրյալ գոյականների, ածականների և մակբայների միջոցով»<sup>2</sup>: Մևաչյա բարդ բառը փոխարինում է մի ամբողջ բառակապակցության՝ «սև աչքեր ունեցող» (սևաչյա կին) (ն.տ.):

Անհատական նորաբանությունների մեջ կան այնպիսիները, որոնք խտացնում են հարուստ բովանդակություն: Այդպիսին է, օրինակ, *աստվածախանդ* բառը՝ որպես Գր. Նարեկացուն բնութագրող մակդիր. Այստեղ է մեզ դյուրեթև *աստվածախանդ* Նարեկացին /ՆՁ, ՄՍ, 193/: Ընդգծված բառի մեջ խտացված է մի բովանդակություն, որ ամենաստեղծ ձևով ասած՝ Նարեկացուն ներկայացնում է որպես իդեալական կատարելության ձգտող, այդպիսի կատարելության հարցում Աստծո հանդեպ բարի նախանձ տածող, աստվածային բացառիկ խանդ, հոգեկան տանջալից ապրումներ ունեցող անգուզական երևույթ: Ավել կամ պակաս չափով խտացումներ, բովանդակությանը հագեցված, տարողունակ բառեր են մաս *մահաթնջուկ, այբբենաթուր, հազարազանձ, եղեռնագարկ* և այլ նորաբանություններ:

Շուրջով շողա երկնաշնորհ, Օշականում շուշանաբույր,

Պատյան չունի՝ Թուր-կեծակի հայոց լեզուն *այբբենաթուր...*

/ՀՇ,ԶՀ, հ.2, էջ 221/:

Այսօրվանից հանձնում են քեզ  
Հայոց լեզուն *հազարազանձ* /ՄԿ, 44/:

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, 1974, էջ 563:

Բանաստեղծական զգացումը խտացված ձևով արտահայտելու, գեղարվեստական խոսքի սեղմությամբ նպաստելու առումով կարևոր են նաև հատուկ անուններից կազմված նորաբանությունները: Խոսքն հատկապես այն հատուկ անունների մասին է, որոնց կրողները սրբացված դեմքեր, իրադարձություններ են մեր ժողովրդի ու մշակույթի պատմության մեջ: Այդպիսի նորաբանություններ են՝ *ավարայրվել, վարդանվել, կոմիտասվել, անդրանիկվել* և այլն:

Մահով փրկեն հայրենին,

*Ավարայրվեն* դեռ դարեր... /ՀԸ, ՀՄ, 172/:

*Վարդանվելով*՝ այս էլ ահա տասն ու վեց դար անդադար *Մասիսվել* է,- ահա ինչու չի մահանում հայ ոգին /ՀԸ, Յոթ., 39/: Եվ անցնում էինք եղեռնին ի տես. Կանցնեինք, կարծես, *կոմիտասվելով*... /ՀԸ, ՀԳ, 85/:

Սրանք բառ-խորհրդանիշ են, արտահայտում են ոչ թե սովորական իմաստով հասկացություն, այլ մարմնավորում են գաղափարներ, մտքերի խտացումներ են:

Ընդունված կարծիք է, որ լեզվում դրսևորվող կրճատումները, նույնիսկ «երկն-չունների կրճատումը տնտեսման ձգտումի արտահայտություն են»<sup>3</sup>: Բառերի կրճատ ձևով գործածությունը, բաղադրյալ բառաձևի փոխարեն արմատի գործածությունը, որ նկատելի տեղ ունի գեղարվեստական խոսքում, նպատակամիտված է ոչ միայն խոսքի թարմության, այլև սեղմության ապահովմանը: Նշենք համապատասխան մի քանի գործածություն. Չի լսում *սաստի*, ոչ էլ խրատի /ԱԻ, հ.2, էջ 84/: Սիրտս, ծերանում ես դու, բայց քո գիշերն էլ է *ջեռ*: Գնացեք,- ասաց,- Չեր երկրում *կեզ* Ապրեք ազատ, ապրուստով վես /ԵԶ, հ.4, էջ 199, հ.3, էջ 426/: Օդանավերի *շաչը* արագ /ՄՍ, 14/:

Հատկապես չափածո խոսքի կարևոր հատկություններից մեկը բարեհնչությունն է, որի ապահովման հարցում ևս նորաբանությունները մեծ դեր ունեն: Այս դեպքում նկատի է առնվում ոչ միայն նորաբանության հնչյունական կազմը, այլև դրաներից առկա հնչյունային բանաստեղծական հնչյունական շրթայի հետ:

Խոսքի բարեհնչության ապահովման գործում անհատական նորաբանությունների կարևորությունը դրսևորվում է հատկապես առձայնային, բաղաձայնային ստեղծման, հանգավորման հարցում: Հանգավորումը սովորաբար ապահովվում է լեզվում գոյություն ունեցող բառի և նորաբանության զուգակցումով /*կայծակնացան* – ծիածան, *ծովական* - գովական /ԵԶ, ԱՍ, 55, ՄՍՄ, 101/:

Սակայն բանաստեղծական խոսքի բարեհնչությանն առավել չափով է նպաստում այնպիսի հանգավորումը, որն արտահայտված է լինում միայն նորաբանություններով, ընդ որում այդպիսի հանգաբառեր կարող են լինել ոչ միայն երկուսը, այլև՝ երեքը: Նկատվում է, որ այդպիսի կիրառություն ունեցող նորաբանությունների վերջին բաղադրիչը հաճախ նույն բառով է արտահայտվում՝ սևաթև - խոլաթև, ահաշուք - գահաշուք, գեղիքան – մեղմիքան: Աշխարհ, ես էլ գիշեր ունեմ *սևաթև*, Գա-րուն ունեմ, ճըմեռ ունեմ *խոլաթև* /ԳՍ, 12/: Արշալույսը մահանում է վերջալույսին *ահա-շուք*, Վերջալույսն է վերածնվում արշալույսին *գահաշուք* /ՀԸԵ, հ.1, էջ 299/:

Խոսքի բազմազանությանը, թարմությանը նպաստելու առումով ավելի կարևոր է տարբեր վերջնաբաղադրիչներ ունեցող նորաբանություններով դրսևորված հանգավորումը, ինչպես՝ տխրանուշ - դառնահուշ /ՀԸ, ԶՀ, հ.2, էջ 134/, շների հաչ – հողմաշաչ /ԵԶ, ԱՍ, 121/, մարդաբեր – համբեր /ՀԸԵ, հ.2, էջ 302/ և այլն: Օրինակ՝ Իսկ շուրջը վիթխարի այդ բուրգի, մշուշում, բռնած *խոլասպար* Թռչկոտում էին ու պարում ավերված քաղաքներ ու շեներ,- Եվ երթի ելած նրանց հետ՝ ամենի խանդով, *խոլասպար*՝ Թռչկոտում էին ու պարում նախիրներ գառան ու շներ /ԵԶ, հ.4, էջ 265/: Եվ իրիկունն անգամ ինչու՞ այսքան կարճ է, *տխրանուշ*, Գիշերն ինչու՞ է, ով աստված, անվախճան ու *դառնահուշ* /ՀԸ, ԶՀ, հ.2, էջ 134/: Ինչ որ չունեն եղնիկները *գեղիքան*, Զո մեջ գտա, դու եղնիկից *մեղմիքան* /ՀԸԵ, հ.3, էջ 106/:

Խոսքի բարեհնչության առումով նորաբանություններն իրենց նպաստն են բերում հնչյունական կրկնության այնպիսի կարևոր եղանակներում, ինչպիսիք են բաղաձայնայինը և առձայնայինը: Նման դեպքերում նորաբանությունները հանդես են գալիս հնչական ընդհանրություն ունեցող սովորական բառերի միջավայրում: Այդպիսի

<sup>3</sup> *Новые слова и словари новых слов, Ленинград, 1978, стр. 81.*

գործածություններում մի դեպքում գերակշիռ է նորաբանությունների, մյուս դեպքում՝ սովորական բառերի դերը:

*Լուսաշաղ, հուսաշաղ ջինջ շողին*

*Անհառաչ ընդառաջ ես կերթամ /ԾԿ, 251/:*

Ծափ ու ծիծաղ ու ծաղկածո՞ւյ ծիածան /ՀՀԲ, գիրք 1, էջ 15/:

Ինչպես կարելի է նկատել, առաջին դեպքում հնչյունական կրկնության ապահովման գործում առավել կարևոր դեր ունեն *լուսաշաղ, հուսաշաղ, անհառաչ* նորաբանությունները, երկրորդ օրինակում՝ *ծափ, ծիծաղ, ծիածան* սովորական բառերը, որոնց միջավայրում *ծաղկածույ* նորաբանությունը հնչյունական կրկնության գորացմանը նպաստող դեր ունի միայն: Նշենք համապատասխան մի երկու գործածություն էլ:

*Վշտահար, վշտոտ, վշտունեղ,*

*անատամ բառերի շարքով*

*թող Ազատն ազատ-վշտունե /ԵԶ, հ.2, էջ 40/:*

Բանաստեղծական խոսքի կարևոր հատկություններից մեկը կենդանությունն է, որի շնորհիվ երևույթի նկարագրությունը, ապրումի գեղարվեստական մարմնավորումը կոնկրետ, կենդանի դրսևորում է ունենում: Խոսքի այդ հատկությանը նպաստելու իմաստով ուշագրավ են հատկապես այնպիսի նորաբանությունները, որոնք օժտված են գործողության նշանակությամբ, նկարագրվող առարկան ներկայացնում են շարժման մեջ: Մեր լեզվում առանձին դժվարություն չկա գետի, լճի, ծովի նկատմամբ ժայռի ունեցած դիրքի արտահայտման իմաստով: Նման դեպքերում սովորաբար գործածվում է *կախվել* բայը՝ «Կախված է ժայռը ջրերի վրա...» /ՀՀԵ, 26/։ Հ. Սահյանի բանաստեղծություններից մեկում էլ այդպես է՝ «Կախվել է ժայռը...» /ՀՄ, 303/։ Բայց Հ. Սահյանն այդքանով չի բավարարվել, կամեցել է մասնավորել նկարագրությունը, և բերված արտահայտությանն անմիջապես հաջորդել է մեկ ուրիշ հոմանիշ կապակցություն՝ «Կախվել է ժայռը, *կորընթաց* իջել...»: Ընդգծված բառը չկա Ստ. Մալխասյանցի բառարանում, Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում էլ միայն Հ. Սահյանի այս օրինակով է տրված /տե՛ս հ.2, էջ 196/։ Մեր սովորական ըմբռնումով շարժումը չի առնչվում ժայռի հետ: Բայց ընդգծված նորաբանության շնորհիվ անշարժության խորհրդանիշ հանդիսացող ժայռը շարժման մեջ է ներկայացվում և ասես կենդանագրվում է ընթերցողի հիշողության մեջ: Եվ դա շնորհիվ այն բանի, որ նորաբանության երկրորդ բաղադրիչն արտահայտված է ընթաց(ք) բայանունով:

Ուշադրության արժանացնենք նաև այլ գործածություններ:

*Թունիրն էի հիշում, որ առավոտ կանուխ*

*Միշտ լեցուն էր լինում մի շեկ *հրախաղով**

*Ու լեցուն էր լինում թրթիռներով կապույտ /ՎԴԱ, 214/:*

Համապատասխան երևույթն ուշադրության արժանացրած ընթերցողը լավ կզգա, թե ընդգծված նորաբանությունն ինչպես կենդանի պատկերով է ներկայացնում թե՛ պահին թոնրի մեջ թրթռացող դեղնակարմիր և կապույտ բոցերի լեզվակների խաղը:

Խոսքի կենդանությանը նպաստում է նաև նորաբանության և դրա համագործածական հոմանիշ բառի համատեղ գործածությունը: Ծիծաղով հնչում ու *արծաթաձայն* Միանում է նա կրկին շարքերին /ԵԶ, հ.4, էջ 105/։ Ինձ ափ հանեց դողդոջ մի ձեռք, ախ, ձյունորակ, ճերմակ մի մազ /ՀԸ, ԳԽՄ, 20/։ Ինչքան *կառափնեց*, գլխատեց ինչքան՝ Ինչքան կործանեց՝ կատաղեց այնքան /ՀԸԵ, հ.1, էջ 110/։ *Արծաթաձայն, ձյունորակ, կառափնել* նորաբանությունների և դրանց հոմանիշ *հնչում, ճերմակ, գլխատել* բառերի համատեղ գործածության շնորհիվ ընդգծվում է համապատասխան հասկացությունը, տարբեր նրբերանգներով է արտահայտվում դա, և գորեղանում է խոսքի ներգործուն ուժը:

Խոսքի կենդանության, ներգործուն ուժի գորացման միտումով է, որ գեղարվեստական խոսքում, հատկապես չափածոյում այնքան կենսունակություն են ցուցաբերում համադասական հարաբերությամբ և նույն արմատի կրկնությամբ կազմված նորաբանությունները: Այդպիսի բաղադրյալ ձևերի համար բնորոշ է իմաստային սաստկությունը, հասկացությունն ընդգծված ձևով արտահայտելը: Դրանց յուրաքանչյուր բաղադրիչով արտահայտված հասկացությունն առանձին է ուշադրության արժանացվում, և ասես մեկ բառով միանգամից երկու հատկանիշ է արտահայտվում. Աշ-

խարհի ծայրն ընկած մի գորշագորշ քաղաք... /ԵԶ, հ.4, էջ 132/: Չարմանահրաշ մի մշտահանդես... /ՀՇԵ, հ.2, էջ 32/: Փչում էր աշման քամին *ցրտացուրտ...* /ԳՄԵ, 65/: Թո նվազն ավելի է դառնում *քնքշանորթ* /ԼԴԲ, 275/ և այլն:

Մեծ է անհատական նորաբանությունների կարևորությունը գեղարվեստական խոսքի պատկերավորության ապահովման գործում: Եվ դա պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով: Նախ որ դրանց գրեթե զգալի մասը հարաբերակից է պատկերավորության միջոցների որոշ տեսակներին, և ապա՝ դրանք ուղղակիորեն հանդես են գալիս որպես խոսքի պատկերավորության միջոց:

Նորաբանությունների հարաբերակցությունը որոշ տեսակի պատկերավորության միջոցների հետ այսպիսի արտահայտություն ունի: Եթե սովորական համեմատությունն արտահայտվում է բառերի ազատ շարահյուսական կապակցությամբ, ապա, օրինակ, *հողմասույր* նորաբանությունը հանդես է գալիս որպես բառային արտահայտություն ունեցող համեմատություն:

Հազած *հողմասույր* թևեր երկաթե՝

Վայրէջքի կգա քո երկրի վրա... /ՄԿ, 19/:

Ընդգծված բառի մեջ որոշակիորեն առկա է համեմատության իմաստ, «հողմի պես սուրացող» նշանակություն, այսինքն՝ նորաբանությունը հանդես է եկել որպես բառային համեմատություն: Այլ ձևով ասած՝ համեմատությունը, որպես պատկերավորության միջոց, սույն պարագայում փոխակերպված արտահայտություն ունի, դրսևորված է մեկ բառի մեջ: Համեմատության հետ առնչվող նորաբանություններն այնքան են օժտված այդ պատկերավորության միջոցի դերով, որ ոչ սակավ դեպքերում փոխնեփոխ են հանդես գալիս՝ որոշ դեպքերում ծառայելով նաև խոսքի բազմազանեցմանը:

Երզը շողա *կայծակնածև*,

Ծիածանի պես հուրհուրա /ԼԶ,ԱՍ, 113/:

Հեշտ է նկատել, որ ընդգծված նորաբանությունը նույն արտահայտչական դերով է հանդես եկել, ինչ որ «ծիածանի պես» կապակցությունը երկրորդ տողում: Արծվի և ճախրելու գաղափարը Ն. Չարյանն արտահայտել է համեմատության միջոցով՝

Տեսա, հոգին քո ցամալից

Վեր է ճախրում *արծվի նման* /ն.տ., էջ 131/:

Իսկ Հ. Շիրազը՝ նորաբանությամբ՝

Ճախրեն հայոց աղավնի հորովելներն *արծվորեն* /ՀՇԵ, հ.2, էջ 274/:

Ինչպես այլ կարգի բառերի, այնպես էլ անհատական նորաբանությունների ոճական արտահայտչականությունը ցայտուն արտահայտություն է ունենում ոչ միայն հոմանշային, այլև հականշային հարաբերությունների ոլորտում: Նորաբանությունների հականշային կարող է դրսևորվել և՛ միմյանց, և՛ սովորական բառերի հարաբերությամբ և հանդես գալ որպես հակադրության առանցք:

Հույսն ու անհույսն՝ խիղճն ու վիշտը ոգու հիմն են՝ իմ հոգում,

Կերթան-կուգան և *մշտավեհ*, և ճղճիմ են իմ հոգում /ՀՇԵ, 1, էջ 342/:

Կնոջ նման *գաղտնապղտոր*, թե՞ մոր նման ջինջ է գինին /ՀՇԵ, 137/:

Ինչպես նկատելի է, այս օրինակներում հականշայինությունը դրսևորված է նորաբանությունների (մշտավեհ, գաղտնապղտոր) և սովորական բառերի միջև: Իսկ հետևյալ գործածությունում որպես հականիշներ են հանդես գալիս երկու նորաբանությունները:

Մերթ շուկա ես *մշտաժխոր*, մերթ *մշտանդորր* տաճար /ՀՇԵ, 2, էջ 103/:

Երկու դեպքում էլ հականշայինությունը կարևոր դեր ունի խոսքի այնպիսի պատկերավորության միջոցի դրսևորման հարցում, ինչպիսին հակադրությունն է, որը հակադիր իմաստ ունեցող բառերի զուգադրության վրա հիմնված բանադարձում է:

Խոսքի պատկերավորության թարմացման, հակադիր զգացումների համատեղ արտահայտման առումով հականիշ նորաբանությունների հետ բավական սերտ առնչություն ունեն այնպիսիները, որոնք կազմված են հակադիր նշանակություն ունեցող, առաջին հայացքից իմաստով միմյանց ոչ համապատասխան թվացող բաղադրիչներով: Ահա համապատասխան մի քանի օրինակ՝ Տարավ *դառնանուշ* տանջանքը սիրո /ՀՇԷ, 184/: Ով հանճարեղ իմ վայրկյաններ, այցելեցեք ինձ հաճախ, Որ գեղգեղա վանդակում էլ իմ տխրակը *տխրուրախ* /ՀՇ,ԶԷ,2, էջ 141/: Ա՛խ, *դառնանուշ* իր կույր սիրո չճաշակած բարն է գովում /ՀՇԵ,3, էջ 184/: Դեռ իր *լրբանուշ* ծիծաղը լսեմ /ն.տ.,

131/։ Երևույթը ներկայացնելով իր տարաբնույթ, հակադիր հատկություններով՝ այսպիսի նորաբանություններն ամմիջապես ուշադրություն են գրավում, խոսքն օժտում են քարնությունը։

Խոսքի պատկերավորությանը նպաստելու առումով ուշագրավ է երգիծական բնույթի նորաբանությունների դերը, որոնք ճնշող մեծամասնությամբ մեղմ հումորի, հեզմանքի արտահայտման միջոց են։ Սուր երգիծական շնչով է հագեցած Մ. Նալբանդյանի «Մատանայի պաշտոնական մեծ հանդես» ստեղծագործությունում Տեր Սատանային ուղղված խոսքի մեջ գործածված կոչականն իր լրացումով՝ *ամենամաշայպատվելագունեղ* տեր /ՄՆ, ԵԺ, 1, էջ 377/։ Յուրօրինակ ինքնահեզմանքի համար է, որ բանաստեղծը հնարել է *սոնետացավ* բառը։

Այս նախորդված ճանապարհն անցա

Եվ սոնետացավն ինձ էլ պաշարեց /ԱՇԲ, 60/։

Առանձնապես մեծ է կատակային բնույթի նորաբանությունների դերը երգիծական ստեղծագործություններում, պարոդիաներում։ Իր մի քանի հիանալի պարոդիաներում, ուր ցանկանում է ցույց տալ, թե «Քեռին եկավ մեր բակը» մանկական ռուսավորի թեման իր գրչակիցներից ով ինչպես կմարմնավորեր գեղարվեստորեն, Գ. Էմինը երգիծական դերով գործածել է այսպիսի նորաբանություններ՝ *մածներգություն, քեռանման, ֆելիտոնեղ, մածնակաթ* և այլն /ԳԷ, ԵԺ, 2, էջեր 234, 237, 239, 238/։ Սրանք թեմայի մարմնավորման Պ.Սևակի, Գ.Սարյանի, Ս.Վահունու, Ն.Ջարյանի տարբերակներում են գործածված։ Դժվար չէ նկատել, որ առաջին նորաբանությունն ստեղծված է Պ. Սևակի «Անհաշտ մտերմություն» խորագրի համաբանությամբ՝ *Անհաշտ մածներգություն*։ Երկրորդ նորաբանությունը գործածված է հետևյալ տողերում։

Ո՞վ ծնեց այս *քեռանման* պատանին,

Ո՞վ է կտրել ծայրը նրա պարանի /ն.տ., էջ 237/։

Ակնհայտ է այս տողերի աղերսը Գ. Սարյանի «Ո՞վ է ծնել շողշողուն այս պատանին» նախադասության հետ։ *Ֆելիտոնեղ* բառը Ս. Վահունու խոսքում է։

Եվ ես ջարդեցի քեռու կճուճը,

*Ֆելիտոնեղի* քեռուն աջ ու ձախ... /ն.տ., էջ 238/։

*Մածնակաթ* նորաբանությունը Ն. Ջարյանի տարբերակում է գործածված, որտեղ խոսքը ոճավորված է մաս նրա ստեղծագործությունից վերցված *հողմաշառաչ* նորաբանության գործածությամբ։

Քեռին ի բա՛ց վանեց մածունը *հողմաշառաչ*,

Եվ որոտաց.

- Հայո՛ց քաջեր, առա՛ջ... /239/։

Խոսքի պատկերավորությանը նպաստելու առումով ուղղակի բացառիկ կարևորություն ունի նորաբանությունների մակդիրային կիրառությունը մասնավորապես մաս այն բանի շնորհիվ, որ դրանց մեծ մասը հանդես է գալիս հենց այդպիսի գործածությամբ։

Ինչպես գիտենք, մակդիրի հիմնական յուրահատկությունն այն է, որ արտահայտում է երևույթի, առարկայի ոչ թե սովորական, մնայուն, տրամաբանական բնույթի, այլ նոր, մինչ այդ տվյալ երևույթի համար սովորական չհամարված հատկանիշ։ Եթե մակդիրի համար հատկանշական է համարվում երևույթը նոր կողմով լուսավորելը, ուրեմն նորաբանությունների մակդիրային գործածության կապակցությամբ ուշադրության կենտրոնում է գտնվելու նորի, նորության հարցը։ Այդ իմաստով էլ նպատակահարմար ենք գտնում մակդիրի դերով գործածված նորաբանություններն ուշադրության առարկա դարձնել հատկապես այսպիսի հայեցակետով՝ 1/ դրանք ի՞նչ դեր ունեն գոյություն ունեցած առարկաները, հայտնի երևույթները նոր հատկանիշներով ներկայացնելու գործում, 2/ դրանց միջոցով ժամանակի գեղարվեստական մտածողության մեջ ի՞նչ արձագանք են գտնում կյանքում, գիտության, գրականության մեջ նոր առաջացած կարևոր իրադարձությունները։

Նախ՝ առաջին հարցի մասին։ Անհատական բնույթի նոր բառը կարող է օժտված չլինել երևույթը նոր կողմից լուսավորելու կարողությամբ։ Այդպիսին են, օրինակ, հետևյալ ընդգծված բառերը՝ *այիտը* դրոշակ /ԱՎ, ԵԺ, 109/, *աղմկահուն* գետ /ՄՄՄ, 139/, *վշտամաշ* սիրտ /ԱՇԵ, 65/, *սիրագեղգեղ* բլբուլ /ՇԿ, 234/ և այլն։

Միանգամայն այլ արժեք ունեն այնպիսի նորաբանությունները, որոնք օժտված են հուզական, զգացական վերաբերմունքի արտահայտման կարողությամբ, ակտիվ ստեղծագործական աշխատանքի հետևանք են, խոսքի բանաստեղծականացման կարևոր միջոց: Այդպիսի բառերի երևան գալու հարցում կարևոր դեր ունի հեղինակի ստեղծագործական խառնվածքը: Վ. Տերյանի ման բանաստեղծը կարող էր աշման գալը պատկերելու համար կերտել *միգասքող*-ը, վերակենդանացնել *ոսկեհանդերձ*-ը, աշման հետ առնչել մետաքսի գաղափարը: Այժմ մեզ հետաքրքրող խնդրի առումով առավել կարևորն այն է, որ այդ մետաքսը բնորոշվել է ձայնային այնպիսի հատկանիշով, որը նոր է, ինքնատիպ և ո՛չ միայն սովորական մահկանացուի լսողության համար:

Ոսկեհանդերձ եկար և միգասքող,  
Տխուրաչյա աշուն, սիրուն աշուն,  
Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,  
Մետաքսներով *քնքշաշրշուն*: /ՎՏ, 2, էջ 15/:

Նուրբ բանաստեղծական զգացողության շնորհիվ միայն մութը կարող էր սառնաթև լինելու հանգամանքով բնորոշվել, երազանքի բազմերանգությունը ներկայացվել *ծիածան* բառով կազմված բաղադրությամբ:

Լույսերը մեռան,-  
Մութը *սառնաթև* գրկեց ամեն ինչ... /ՎՏ, 1, էջ 264/:  
Հոգուդ մեջ բարակ  
Շղարշներ էին  
*Ծիածանաթև* երազանքների... /ՄՄ, 66/:

Այսպիսի նորաբանություն-մակդիրներ ստեղծվում են, որ դրանց մակադրյալով արտահայտված երևույթները մեզ անծանոթ չման իրենց համապատասխան հատկանիշներով: Դրանց նշանակությունը մասնա աշմ է, որ հարստացնեն մեր գեղագիտական ըմբռնումները, այլև խորացնեն հավատը մեր լեզվի արտահայտչական հարուստ հնարավորությունների հարցում: Այդ հնարավորությունները գրեթե անսպառ են, ի հայտ բերելու հարցում ձիրք ու նպատակամիտվածություն, այլև ստեղծագործական համարձակություն է պետք:

Աստղերն իջել են Վանա ծովին ու ջուր էին դեռ խմում,  
Մինչդեռ կույսը *սիրածարավ*՝ արցունքի ծովն էր քամում /ՀՇԵ, 2, էջ 22/:

Կույսը Խջեզարեն է՝ այն հոգեկան վիճակում, երբ արդեն երեք տարի է, ինչ Միփանից վտարված Միամանթյից ոչ մի լուր չունի և նրա կարոտով է տանջվում: Հ. Թումանյանին շատ է դուր եկել «սերը - քաղց է» արտահայտությունը: «Բայց որքան դուր եկավ, - շարունակում է Թումանյանը, - այնքան էլ ծանոթ թվաց: Չէ՞ որ մենք էլ ենք ասում, թե կշտացանք - կարոտը, սիրո, կրքի հագուրդն առնելու մտքով...» /հ. 5, էջ 212/:

*Միրածարավ* բառի հայտնությունը, այն էլ այդպիսի տեղին գործածությամբ լիովին հիմք է տալիս սերը ճանաչելու մասն իբրև ծարավ, ծարավանք: Իր այս պահի զգացումներով Խջեզարեն սիրո ծարավից պապակած չէ՞, կարոտից տոչորված չէ՞, Միամանթյի վերադարձը գովություն չափտի՞ պատճառի նրա հոգուն, ինչպես լեռան սառնաղբյուրի ջուրը՝ ամռան տապին լեռներով անցնող պապակած մարդուն:

Այժմ՝ համառոտակի այնպիսի մակդիրային գործածությունների մասին, որոնք պայմանավորված են ժամանակաշրջանը բնորոշող իրադարձություններով, գրական կյանքում երևան եկած, իշխող ուղղությամբ, ստեղծագործական մեթոդով:

Հայտնի է, որ 20-րդ դարի 20-30-ական թվականների չափածոյում բավական բարձր հանախականություն ունեն *երկաթ*, *հրաբուխ* և այդ բնույթի բառերով ստեղծված նորաբանությունները: Սհա մակդիրային գործածությամբ այդպիսի մի քանի բառեր: *Երկաթաքայլ* բանակ, *երկաթադեմ* կեսօր, *երկաթաթերթ* վարդեր, *երկաթավորվող* հայրենիք /ԵՉ, 4, էջեր 297, 58, 129, 19/, *երկաթածայն* քայլեր, *երկաթածայն* երգ /ԳՄ, 45, 141/, *երկաթավոր դար* /ԳՄԵ, 119/ և այլն:

Տիեզերքի նվաճման գեղարվեստական արձագանք հանդիսացող ուշագրավ մակդիրային գործածությամբ նորաբանություններ կան հատկապես Մ. Մարգարյանի, Հ. Շիրազի ստեղծագործություններում: Դրանք բանաստեղծաշունչ, խոսքի թարմությանը նպաստող լեզվամիջոցներ են՝ օժտված մակադրյալի բովանդակությունը նոր

ընկալումով ներկայացնելու կարողությամբ: Տիեզերագնացությունն առիթ հանդիսացավ, որ Հ.Շիրազը գտներ բանաստեղծական ինքնաբացահայտման նոր եղանակներ: *Դու ես առաջին տիեզերաթիռ* էակն, ով բանաստեղծ,

.....  
Սրանով ես դու մեծ, պոետ, *տիեզերատիպ* հյուլե... /ՀՇԵ, 2, էջ 107/:

Ես *լուսնահաս* իմ դարի խոհերի խոհն եմ... /ն.տ., էջ 123/:

Տիեզերագնացության շրջանի անհատական նորաբանությունները Մ. Մարգարյանի պոեզիայում էլ հիմնականում բանաստեղծական ինքնաբնութագրման դերով են հանդես գալիս: Նրա քնարական հերոսը «մաքուր, մաքուր ու *լուսնատես*» է /ՄՄ, ՉՀ, 102/, նրա սերը *աստղածին* է /ն.տ., 21/, օժտված է *աստղատարագ* հիացումներով /ՄՄ, LL, 141/, *աստղագիր* բախտի տեր է /ՄՄ, LL, 141/, երջանկության *աստղե* ճամփաներ փնտրելու տենչով է համակված /ն.տ., 105/ և այլն:

#### Համառոտագրություններ

- ԱԻ - Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, 1973, հ.2, 1974:  
 ԱԾԵ - Ա. Ծատուրյան, Երկեր, 1948:  
 ԱՇԲ - Ա. Շեկոյան, Բախտ, 1987:  
 ԱՇԱ - Ա. Շեկոյան, Անտիպոեզիա, 2000:  
 ԱՎԵԺ - Ա. Վշտունի, Երկերի ժողովածու, 1948:  
 ԳԷԵԺ - Գ. Էմին, Երկերի ժողովածու, հ.1, 1975, հ.2, 1977:  
 ԳՄԵ - Գ. Մահարի, Երկեր, 1954:  
 ԵԶ - Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ.1, 1986, հ.2, 1986, հ.4, 1968:  
 ԼԴԲ - Լ. Դուրյան, Բերդ, 1983:  
 ՀԹ - Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.1, 1950, հ.2, 1940:  
 ՀՀԲ - Հր. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, 1971:  
 ՀՀԵ - Հ. Հովհաննիսյան, Երկեր, 1959:  
 ՀՇԵ - Հ. Շիրազ, Երկեր, հ.1, 1981, հ.2, 1982, հ.3, 1984, հ.4, 1986:  
 ՀՇ, ՀԴ - Հ. Շիրազ, Հայոց դանթեական, 1990:  
 ՀՇ, ՅՈՒ - Հ. Շիրազ, Յոթնապատում, 1977:  
 ՀՇ, ԶՀ - Հ. Շիրազ, Զնար Հայաստանի, հ.1, 1958, հ.2, 1964, հ.3, 1974:  
 ՀՄ - Հ. Մահյան, Հայաստանը երգերի մեջ, 1962:  
 ՀՄՎ - Հր. Մարուխան, Վկայություն, 1989:  
 ՄԱ - Մ. Արմեն, Երկաթավորվող երկրի երգեր, 1927:  
 ՄՄ - Մ. Մարգարյան, Բանաստեղծություններ, 1978:  
 ՄՄ, ՉՀ - Մ. Մարգարյան, Չնհալից հետո, 1965:  
 ՄՆ, ԵԺ - Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու, հ.1, 1940:  
 ՆԶ, ԱՄ - Ն. Չարյան, Արև ու ստվեր, 1957:  
 ՇԿ - Շ. Կուրդիկյան, Երկերի ժողովածու, 1947:  
 ՋԲ - Ջիվանու քնարը, 1959:  
 ՌԴՌ - Ռ. Դավոյան, Ռեքվիեմ, 1969:  
 ՄԿ - Մ. Կապուտիկյան, Յոթ կայարաններ, 1966:  
 ՄՏՄ - Մ. Տարոնցի, Մերթապետ, 1980:  
 ՎԴԱ - Վ. Դավթյան, Անքնություն, 1987:  
 ՎՏ - Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ.1, 1972, հ.2, 1973:

#### ВОПРОСЫ СТИЛИСТИЧЕСКОГО УПОТРЕБЛЕНИЯ АВТОРСКИХ НЕОЛОГИЗМОВ

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ В. Мелконян \_\_\_\_\_

При рассмотрении авторских неологизмов в своей целостности как слоя словаря художественной речи, основным критерием их оценки должно стать установление их значимости и роли в обеспечении признаков речи: точность, сжатость, образность, разнообразие и т. д.

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Ծովինար ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՆԱԳՈՒՅՆ ԾՈՓՔԻ ԴԻՑԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՌՅԱԿԻ ՇՈՒՐՉ

Հայոց հնագույն աստվածների բազմաշերտ կերպարներում կարելի է առանձնացնել առասպելաբանական հատկանիշների երկու խումբ: Դրանցից առաջինի մեջ խմբավորվում են այն հատկանիշները, որոնք ուղղակի կապի մեջ են տվյալ աստվածության անձնավորած բնական – տիեզերական երևույթների հետ, իսկ երկրորդ խմբի մեջ՝ նրանք, որոնք գալիս են տվյալ աստծու տոտեմական նախատիպերից: Դրանց առկայությամբ են ձևավորվել նախնական կերպարները ինչպես հայաստանի դիցարանի գլխավոր եռյակի՝ <sup>d</sup>U.GUR, <sup>d</sup>INANNA, <sup>d</sup>Izzi-istanu, այնպես էլ նախատիպերը հայոց հին տոմարի ամսվա երեք տասնօրյակների առաջին օրերին (1-ին, 11-րդ, 21-րդ) իրենց անունները տված աստվածների՝ Արեգի, Երեզկանի, Գրգուռի, վերջիններիս ժառանգորդ - գուգահեռների՝ Արամագրի, Անահիտի, Վահագնի և վիպական Ծովինարի, Մանասարի, Բաղդասարի<sup>1</sup>:

Հնդեվրոպական Ամարոսի աստծու ժառանգորդներից է համարվում լեռների պաշտամունքին առնչված հին խեթական Պիրվա աստվածությունը (հմմտ. խեթ. peruna «ժայռ», գոթ. fairguni «լեռ» և այլն): Pirwa//Perwa//Perua դիցանվան հնդեվրոպական նախաձևն համարվում է \*Perunos-ը (հմմտ. հին. սլավ. Perun)<sup>2</sup>: Խեթական դիցարանում Պիրվան կորցրել էր շանթառաք աստվածության իր ֆունկցիաները, պատկերացվում էր հեծյալ երիտասարդ զինվորի տեսքով և, ըստ այդմ, նույնացվում էր խուռիական Շավուշկա աստվածության հետ, որը ևս կարող էր հանդես գալ հեծյալ զինվորի տեսքով<sup>3</sup>: Հետզհետե պաշտամունքային ոլորտի հետնաքեն մղված Պիրվան ավելի ուշ անհետացել էր խեթական դիցարանից<sup>4</sup>: Տարօրինակ է, որ նույն անվամբ մի աստվածություն հիշատակված է Խեթական թագավորության գոյության վերջին շրջանում, այն էլ ոչ թե այդ երկրում, այլ ոչ խեթական մի երկրում՝ Իսուվայում, կամ այլ կերպ ասած, հնագույն Ծովքում (ուրարտական արձանագրությունների Supa երկրում)<sup>5</sup>: Խեթական Տուրխալիա IV թագավորի (1265-1235 թթ. մ.թ.ա.) պաշտամունքային հրովարտական հիշատակվում են.

62. ŠA<sup>uru</sup> Ne-ni-ša-an-ku-wa <sup>d</sup>Pi-ir-wa-aš ŠA<sup>uru</sup> Du-ru-wa-du-ru-wa

63. <sup>d</sup>Pi-ir-wa-aš ŠA<sup>uru</sup> Ik-šu-na <sup>d</sup>Pi-ir-wa-aš

64. <sup>d</sup>INANNA<sup>uru</sup> Šu-ul-la-ma <sup>d</sup>U<sup>uru</sup> Ha-la-ra-a DINGIR. LÚ<sup>meš</sup>

65. DINGIR. SAL<sup>meš</sup> HUR. SAG<sup>meš</sup> ID<sup>meš</sup> ŠA<sup>uru</sup> KUR<sup>uru</sup> I-šu-wa.<sup>6</sup>

62.«Նենիսանկուվա քաղաքի Պիրվա աստվածը, Դուրուվադուրուվա քաղաքի 63. Պիրվա աստվածը, Իկսունա քաղաքի Պիրվա աստվածը, 64.Ինաննա դիցուհին՝

<sup>1</sup> Ս. Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն, Հին հայոց եռամսան ամսուայ խորհուրդը, «Հանդես ամսօրեայ», 1996, էջ 420-439:

<sup>2</sup> В. И в а н о в, Пирва, Мифы народов мира (այսուհետև՝ МНМ), т-II, М., 1988, стр.313.

<sup>3</sup> Արևիկ; В. Иванов, В.Топоров, Исследования в области славянских древностей, М., 1974, стр.84, 99.

<sup>4</sup> Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в, Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯИ), т.ІІ, Тбилиси, 1984, стр.794; В.Топоров, К древнебалканским связям в области языка и мифологии, Балканский лингвистический сборник, М., 1977, стр.54.

<sup>5</sup> Н. А р у т ю н я н, Топонимика Урарту (այսուհետև՝ ТУ), Ер., 1985, стр.92-93, 237.

<sup>6</sup> Keilschrifturkunden aus Boghazköi: (այսուհետև՝ KUB), Staatliche Museen zu Berlin, Vorderasiatische Abt., Hf. 1-30, Berlin, 1923-1939, VI, 45, II (նաև VI, 46, III, 29-32).

Սուլամա քաղաքի, Ու աստվածը՝ Խալարա քաղաքի, աստվածները, 65.դիցուհիները լեռների [և] գետերի՝ Իսուվա երկրի»:

Ինչպես տեսնում ենք, հնդեվրոպական Ամպրոպի աստծուն համապատասխանող աստվածություն կար իսուվական դիցարանի գլխավոր եռյակում: Դա եռյակում երրորդն հիշատակված և <sup>6</sup>Ս գաղափարագրի տակ հանդես եկած աստվածն էր՝ համարժեքը խեթալուվիական Դատա ամպրոպային աստծու: Ըստ այսմ, բացառվում է իսուվական Պիրվայի ամպրոպային բնույթի աստված լինելու հանգամանքը: Կարծում ենք, որ այս դեպքում գործ ունենք մեկ այլ բնույթի տեղական աստծու հետ՝ որպես Պիրվա ընկալված դրանց անունների հնչյունական մմանության պատճառով: Այս տեսանկյունից ուշագրավ են հետևյալ հանգամանքները:

1. Հնդեվրոպական նախալեզվում գոյություն է ունեցել իսուվական Պիրվա աստծու անունն հիշեցնող \*peru- բառը՝ «առաջին, առջև, առջևի» իմաստներով: Ուշադրության դարձնենք, որ իսուվական դիցարանը գլխավորում էր հենց Պիրվան, որը և հիշատակված է առաջին տեղում: Հնդեվրոպական \*peru- նախաձևից են սերում ազգակից լեզուների մի շարք բառեր, որոնցից հիշարժան են հատկապես հետևյալները. հին հնդկ. pūrvas, pūrvyas «առջևի, առաջին, նախկին», ավեստ. paurva «առջևը, առաջին», հին պարս. paruva «առաջնագույն, կանխագույն», թոխ. p. pārwesse «առաջին», հին անգլ. forwost «առաջին, առաջնորդ», ռուս. первѣй «առաջին»<sup>7</sup>:
2. Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության լեզուներում հնդեվրոպական \*peru- բառի գոյությունն հաստատվում է վրացերենի միջոցով, որի պիրվի «առաջին» բառը հնդեվրոպական փոխառություն է: Իսկ կասկած լինել չի կարող, որ վրացիների հինկովկասյան ծագում ունեցող նախնիների հնդեվրոպական հարևանները հենց Հայկական լեռնաշխարհում բնակված ցեղերն էին:
3. Հնդեվրոպական \*peru- բառը, որը նաև «առջևի» էր նշանակում, դեպի արևելք կողմնորոշման դեպքում ստանալու էր «առջևի կողմ»//«արևելք» իմաստը: Իսկ հայտնի է, որ հայերը ևս նախապես կողմնորոշվում էին՝ առջևում ունենալով արևելքը, այսինքն՝ արևածագի վայրը, աշխարհի սուրբ կողմը, աղոթարանը:<sup>8</sup> Ուրարտական Ռուսա I թագավորի (735-713 թթ. մ.թ.ա.) Ծովինարի արձանագրության մեջ «անդրծովյան բարձր լեռների» 19 ցեղային երկրների շարքում հիշատակված է նաև \*Pirvaini (<sup>kur</sup> Pirvaini) երկրանունը<sup>9</sup>: Այդ «երկրները» տեղադրվում են Սևանա լճից (ծովից) հարավ և արևելք ընկած տարածքներում<sup>10</sup>, այսինքն՝ հետագա Սյունիքում և Արցախում: Հ. Կարազյոզյանի կարծիքով Pirvaini երկրանվան հետագա ձևափոխմամբ է առաջացել Արցախի Պիանը գավառանունը<sup>11</sup>, որը մեր կարծիքով, ցեղանվանական ծագում ունի և ներկայացնում է նախնական \*Պիրվանը-ի (<\*Պիրվ-ան-ը) սղված ձևը: Անվանակիր գավառը գտնվում էր Արցախում, Խաչենագետի և Կարկառ գետի միջև՝ հովտային Ուտիքի հարևանությամբ<sup>12</sup>: Ըստ երևույթին, Հայկական

<sup>7</sup> Հ. Մ ճ ա ղ յ ա ն, Հայերեն արձատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Եր., 1973, էջ 54, Մ. Фасмер, Этимологический словарь русского языка, т. III, М., 1971, стр. 235.

<sup>8</sup> С. П е т р о с я н, Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений, Лրիբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1987, N 3, стр. 79; Նույնի՝ Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, ԼՀԳ, 1986, N 4, стр. 55.

<sup>9</sup> Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи, М., 1960, N 127, II, стр. 17.

<sup>10</sup> Н. А р у т ю н я н, ТУ, стр. 159.

<sup>11</sup> Յուլի. Կ ա ղ ա ղ ե ղ ա ն, Մեպազիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Եր., 1998, էջ 41:

<sup>12</sup> Մ. Ե ղ յ ա ն, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 77:

լեռնաշխարհի ծայր արևելքում գտնվելու պատճառով էլ հնագույն Պիանքը կոչվել է Piruaini (<\*Pirua-in- հմմտ. *Լուս-ին, կարգ-ին, վեր-ին* և այլն), իսկ նրա բնակիչները՝ \*Պիրվանք (<\*Պիրվ-ան-ք՝ կազմված \*պիրվ- «առջև») բառից -ան ցեղանվանակերտով և-ք հոգնակիակերտի հավելումով): Վերջինիս տված ձևն է ներկայացնում Պիանք գավառանունը:

Վերադառնալով խուվական Պիրվա աստծու խնդրին, հարկ ենք համարում նշել, որ եթե Իսուվան խեթական երկիր լիներ, ապա այդ դեպքում կարելի էր մտածել, որ խեթերի հնագույն Պիրվա աստծու պաշտամունքը ինչ-որ կերպ պահպանվել էր տեղում և ավելի ուշ մղվել առաջին պլան՝ արժանանալով առաջինը՝ և այն էլ երիցս, հիշատակվելու պատվին: Բայց անկասկած է, որ Իսուվան ոչ խեթական երկիր էր, ուստի և նրա Պիրվան կարող էր այլ բնույթի աստվածություն լինել՝ տարբեր խեթական Պիրվայից: Մեր խորին համոզմամբ խուվական Պիրվան եղել է արեգակնային բնույթի աստվածություն և համապատասխանում է հնագույն հայկական Արեգ աստծուն: Վերջինս նույնպես հնագույն հայկական դիցարանում զբաղեցրել է առաջին տեղը, որի վկայությունն է հին հայկական տոմարի ամսվա առաջին օրը նրան ձոնված լինելու, ուստի և նրա անունը կրելու իրողությունը (իսկ ամսվա առաջին օրը նաև տարվա առաջին օրն էր): Այս տեսանկյունից ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ խուվական դիցական գլխավոր եռյակի աստվածություններն անգամ իրենց դասավորությամբ համընկնում են հայոց հին տոմարում արտացոլված հնագույն հայկական դիցական գլխավոր եռյակում համապատասխան աստվածությունների ունեցած դասավորության հետ: Առաջին դեպքում ունենք <sup>d</sup>Pirua-<sup>d</sup>INANNA-<sup>d</sup>Ս (այսինքն՝ Արևի աստված-Մայր դիցուհի-Ամայրուպի աստված), իսկ երկրորդ դեպքում՝ Արեգ-Երեզկան-Գրգուռ (այսինքն՝ դարձյալ Արևի աստված-Մայր դիցուհի-Ամայրուպի աստված)<sup>13</sup>:

Ընդ որում, անկախ դիցական գլխավոր եռյակում իրենց զբաղեցրած տեղից, եռյակը կազմած աստվածությունները (որպես տիեզերական այս կամ այն երևույթի անձնավորումներ) համընկնում են ոչ միայն խուվական և հնագույն հայկական, այլ նաև հայ հեթանոսական և հայաստական դիցարաններում: Գ-ժվար չէ դրանում համոզվելը, եթե կողք-կողքի դնենք ինչպես վերոհիշյալ դիցական եռյակները կազմած և հայ հեթանոսական դիցարանը գլխավորած երեք աստվածություններին՝ Արամազդին (Ամայրուպի աստված), Անահիտին (Մայր դիցուհի) և Վահագնին (նախապես Արևի աստված), այնպես էլ հայաստական դիցարանի առաջին երեք աստվածություններին՝ <sup>d</sup>U.GUR-ին (Ամայրուպի աստված), <sup>d</sup>INANNA-ին (Մայր դիցուհի) և <sup>d</sup>Izzi-istanu-ին (Արևի աստված)<sup>14</sup>:

Այս համադրումներից բխում է, որ հայաստական <sup>d</sup>U.GUR-ը, խուվական <sup>d</sup>Ս-ն, հայոց տոմարում իր հիշատակը թողած Գրգուռը և հայ հեթանոսական դիցարանի նախնական Արամազդը ներկայացրել են Հայկական լեռնաշխարհի բնակչության Ամայրուպի աստծուն, հայաստական <sup>d</sup>INANNA-ն, խուվական <sup>d</sup>INANNA-ն, հայոց տոմարի Երեզկանը և հեթանոս հայերի Անահիտը ներկայացրել են Մայր դիցուհուն, իսկ հայաստական <sup>d</sup>Izzi-istanu-ն, խուվական <sup>d</sup>Pirua-ն, հայոց տոմարի Արեգը և հայ հեթանոսական դիցարանի նախնական Վահագնը՝ Արևի աստծուն: Ըստ այսմ, անառարկելի է դառնում խուվական <sup>d</sup>Pirua=<sup>d</sup>Izzi-istanu=<sup>d</sup>Արեգ=<sup>d</sup>Վահագն նույնացման հանգեցնող համադրումը: Հմմտ. նաև նույնպիսի մի իրողության հետքերը բացահայտող այն երեք սրբերի համատեղ պաշտամունքը, որոնց էին ձոնված Խարբերդի դաշտի ու ժամանակների կենտրոնն հանդիսացած Ստորին Մեզրեի (Մամուրեթ յուլ-Ազիզ) ու Վերին Մեզրեի եկեղեցիները՝ Սուրբ Լուսավորիչը, Սուրբ Աստվածածինը և Սուրբ Սարգիսը<sup>15</sup>: Այս սրբերը համապատասխան զուգահեռներ են ներկայացնում արեգակնային բնույթի <sup>d</sup>Pirua-ի, Մայր դիցուհի <sup>d</sup>INANNA-ի և ամայրուպային բնույթի <sup>d</sup>Ս-ի: Ի դեպ, դրանք իրենց զուգահեռներն ունենին ի դեմս

<sup>13</sup> Մ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Հին հայոց եռամսն ամսուայ խորհուրդը, էջ 420-439:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Գ ա ր ե գ ի ն Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց, Երկեր, հ. II, Եր., 1982, էջ 373:

նույնպես հնագույն նախատիպեր ունեցած Փոքր Հայքի Մերաստիա քաղաքում պաշտվող այն սրբերի, որոնց էին ձոնված քաղաքի գլխավոր երեք եկեղեցիները՝ Սուրբ Աստվածածինը, Սուրբ Սարգիսը և Սուրբ Լուսավորիչը<sup>16</sup>:

Հնագույն Ծովքում արեգակնային լույսի անձնավորում աստծու պաշտամունքի առաջնային լինելու մասին կարող են խոսել նաև Իսուվա-Ծովքի տեղանունները՝ նախ և առաջ խեթական և ասորեստանյան սեպագրերով վկայված, *Isua* /*Išua* անունը<sup>17</sup>: Այս երկրանվան մեջ նախաձայն *i*-ն արմատական չէ և, ըստ երևույթին, նույնն է գրաբարյան *h* նախդիրի հետ: Վերջինս ծագում է *h*-*ե*. \**in*-կամ \**en*- նախաձևից վերջաձայն *n*-ի անկումով և գործածվում էր ներգոյական, հայցական ու բացառական հոլովների հետ<sup>18</sup>: Սրա տարբերակ «*j* նախդիր-նախածանցն իբրև սին տարր է երևան գալիս այնպիսի բառերում, ինչպիսիք են՝ *j-երկ-ար* ...հմմտ. *երկար...*, *j-արգ-ատր*... հմմտ. *արգատր*»<sup>19</sup>: Ըստ երևույթին, նույնպիսին էր լինելու նաև նրա նախատիպ տարբերակը՝ *h* նախդիրը: Երկրանվան ասորական *Išua* տարբերակը ցույց է տալիս, որ *Isua*-ն կրում է խեթական տեղանունների ազդեցությունը, որոնցում հաճախ առկա է *-ua* տեղանվանակերտ վերջածանցը (հմմտ. խուվական միևնույն տեղանվան *Ikšuna* և *Ikšunua* խեթական տարբերակները): Տեղանվան արմատը, մեր կարծիքով, \**šu*-ն է՝ \**su*-արտասանությամբ նույնական հայերեն \**սյ* // \**սու*- արմատի հետ: Վերջինիս տարբերակներն են առկա հայերեն «*Սյր* - լոյս» բառում<sup>20</sup> և *սուրբ* բառի մեջ: *Սուրբ* <\**սուրբ* < *h*-*ե*. \**k*'-ս-, «որից կազմված է *bh* աճականով և *-r*- մասնիկով», այսինքն՝ ճիշտ այնպես, ինչպես և հին հնդկերեն *cubhra*- «փայլուն, պայծառ, գեղեցիկ, մաքուր» բառը<sup>21</sup>: Նույն կազմությունն ունի նաև Իսուվա-Ծովքի արևելքից հարող երկրի (Մասնա լեռներում և շրջակայքում) սեպագրային *Šubria* (<\**subr-ijā*) անունը<sup>22</sup>: Հին Ծովքի *Լուսաթառիձ* անվամբ բնակավայրերը և *Լուսաղբյուր* կոչված գետակը (հմմտ. «լուսաղբյուրները» որպես լույսի և ջրի համատեղ պաշտամունքի օբյեկտներ) ևս խոսում են հին Ծովքում լույսի պաշտամունքի ունեցած կարևոր դերի մասին:

Ինչպես տեսանք, Տուղխալիա IV-ի հրովարտական Իսուվայի Պիրվան հիշատակված լինելով առաջինը, նաև հիշատակված էր երիցս: Այս հանգամանքը ևս կարող է վկայել նրա արեգակնային բնույթի օգտին: Արեգակնային լույսի և արևի անձնավորում հին աստվածների պաշտամունքից անբաժան «երեք» թվի խորհրդանշային իմաստի տեսանկյունից ուշագրավ են հատկապես հետևյալ հանգամանքները. ա)երեքն են բնության արևային կենսատու եղանակները՝ զարուն, ամառ, աշուն, բ)երեքն են նրանցից յուրաքանչյուրի պարունակած ամիսների թիվը, գ)երեքն են արևի ցերեկային շրջապտույտի հիմնակետերը՝ հորիզոնի արևելյան ու արևմտյան ծայրակետերին և երկնականարի բարձրակետին: Հիշենք, որ արեգակնային լույսի անձնավորում Վահագն աստծուն ձոնված օրհներգում բազմիցս կրկնվում է «երեք»-ն հիշեցնող *եր*-/*էր* հնչյունակապակցությունը<sup>23</sup>, որ այդ օրհներգը բաղկացած է 9(=3x3) տողից, որ Վահագն աստծուն էր ձոնված և

<sup>16</sup> Նույն տեղում, *h*.II, էջ 249, 251: Սրանց պաշտամունքի հնադարյան ակունքների մասին տե՛ս Ս. Պետրոսյան, Մերաստիայի Մայր դիցուհին և նրա ուղեկից զույգը, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 125-131:

<sup>17</sup> В. Х а ч а т р я н, Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ер., 1971, стр.107-112, Н. А р у т ю н я н, ТУ, стр.96.

<sup>18</sup> ՀԱԲ, *h*.II, էջ 235, Գ. Ջ ա հ ո լ կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ծանանակաշրջան, (այսուհետև՝ ՀԼՊԵԺ), Եր., 1987, էջ 122, 244, 349:

<sup>19</sup> Հայոց լեզվի պատմական քերականություն (այսուհետև՝ ՀԼՊԵ), *h*. II, Եր., 1975, էջ 67:

<sup>20</sup> Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 291:

<sup>21</sup> ՀԱԲ, *h*. IV, Եր., 1979, էջ 256:

<sup>22</sup> С. Петросян, Древнейшие названия..., стр. 60-62.

<sup>23</sup> В.Т о п о р о в, Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1977, N 3, стр. 101.

Վահագն անունն էր կրում հին հայոց տոմարի 27-րդ (=3x3x3) օրը<sup>24</sup>: Եռակի դրսևորումներով հանդես եկող Արև աստծու առնչությամբ հիշենք նաև, որ եգիպտական Արևի աստվածը երկնակամարում իր անցած ուղու շրջափուլային ժամանակներից համաձայն, կրում էր երեք տարբեր անուններ. Khepri՝ առավոտյան ժամերին, Rē՝ միջօրեին և Atum՝ երեկոյան ժամերին<sup>25</sup>:

Արևի ցերեկային ուղին երկնակամարում, հայոց առասպելաբանական պատկերացումների համաձայն, սկսվում էր աշխարհի մի ծայրից՝ արևելքից (երբ արևը ելնում էր մոր ծոցեն), և ավարտվում էր մյուս ծայրում՝ արևմուտքում (երբ արևը մայր էր մտնում՝ մտնում էր մոր ծոցը)<sup>26</sup>: Ուրեմն, արևը մայր ուներ, որը կարող էր գտնվել թե՛ արևմուտքում՝ արևի մայրամուտի վայրում, թե՛ արևելքում՝ արևածագի վայրում: Արևի ավանդաբանության մեկում Արևի երեսից տուժած «որսորդի մայրն ուղևորվում է դեպի արևմուտք՝ բարեսիրտ արևամայր թագուհու մոտ, որպեսզի սա իրեն իբրև դեղ արևի աղբյուրից ջուր տա, որի մեջ հենց նոր է լողացել Արև-հերոսը»<sup>27</sup>:

Անկասկած, արևի մայր մտնելու վայրը Բսուվայի բնակիչներն համարելու էին իրենց երկրի արևմտյան սահմանը կազմող Եփրատ գետը, որի ջրերում էլ բնակված էր լինելու նրա անձնավորումն համարված արևամայրը: Մենք կարծում ենք, որ նրա անունով էլ Պիրվա-արևի հանգստարանը՝ նրա պաշտամունքի մերձեցրած վայրը, կոչվել էր Նենիսանկուվա: Neni-s-ank-uua բաղադրիչների տրոհվող այս տեղանվան –uua բաղադրիչը խեթերենի տեղանվանակերտ վերջածանցներից է: Նրա առաջին բաղադրիչը՝ Neni-s- հնդեվրոպական նախալեզվի \*nena- «մայրիկ, մամա» բառն է (հմմտ. հայ. նան, նանա, նանե, նանի)<sup>28</sup>: հնդեվրոպական նախալեզվի սեռական հոլովի –s վերջավորության հավելումով: Տեղանվան \*ank- արմատը առկա է նաև անկարճ (<անկ-արճ հմմտ. կասպ-արճ) բառում, որը նշանակում է «ծոց, գիրկ»<sup>29</sup> և արմատակիցն է անկիւն բառի: Վերջինիս արմատը ծագում է հ.-ե.\*ang-/\*ank- նախաձևից, որն է ընկած նաև ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում. հուն. α'γκών «զալար, ոլորան, կեռման», α'γκάλη «գիրկ, ծոց, գոգ», «ընդերք, խորք», լատին. angulus «անկյուն, խորշ, ծայր», ռուս. угол «անկյուն» և այլն<sup>30</sup>: Բերված գուգահեռները հնարավոր են դարձնում Neni-s-ank-ը ստուգաբանելու որպես «Մոր գիրկ, Մոր ծոց, Մոր խորք», իսկ Neni-s-ank-uua-ի տակ ենթադրելու այն վայրը, որտեղ հնագույն Ծովփքի բնակչության առասպելաբանական պատկերացումների համաձայն մայր էր մտնում (մոր ծոցն էր վերադառնում) Արևը: Իսկ, որ այդ վայրը գտնվում էր հնագույն Ծովփքի արևմուտքում, ցույց է տալիս Ասորեստանի Թիզբաթայալասար 3-րդ թագավորի (մ.թ.ա.744-727թթ.) հիշատակած Anganu բաղադրի անունը:

Վերջինս ասորեստանցիների կողմից նվաճվել էր Enzi//Enzite//Անձիտ ցեղային երկրի նվաճումից հետո<sup>31</sup>: Ըստ այսմ, նա գտնվել կարող էր միայն հետագա Անձիտ գավառից արևմուտք: Իսկ այստեղ՝ միացյալ Եփրատի ոլորանի և Անձիտի միջև գտնվում էր Ծովփքի Գարիէթ կոչված գավառը՝ Գարիենե կենտրոնով<sup>32</sup>: Դրանք համապատասխանում են Ասորեստանի մեկ ուրիշ թագավորի՝ Աշուրնասիրապալ

<sup>24</sup> Ս. Պ ե տ ռ ը յ յ ա ն, «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, ԼՀԳ, 1981, թիվ 4, էջ 78-79:

<sup>25</sup> В. Т о п о р о в, Несколько параллелей к одной древнеегипетской мифологеме, Древний Восток, сборник 2, М., 1980, стр.81, пр.25

<sup>26</sup> Ս. Ս թ ե ղ յ ա ն, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 41:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>28</sup> ՀԼ ՊԵԺ, էջ 56,140.:

<sup>29</sup> ՀԱԲ, հ.1, Եր., 1971, էջ 199:

<sup>30</sup> ՀԱԲ, հ.1, էջ 200, Древнегреческо-русский словарь, Составил И. Дворецкий (այստեղևն՝ ДГРС), т. I, М., 1958, стр.21-22; И. Дворецкий, Латинско-русский словарь, М., 1976, стр.73.

<sup>31</sup> Н. А р у т ю н я н, Биайнили (Урарту), Ер., 1970, стр. 277-278.

<sup>32</sup> Ս. Ե թ ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 47:

2-րդի (մ.թ.ա.883-859թթ.) հիշատակած Aggusu ցեղային երկրին<sup>33</sup> և հիշյալ Anganu բնակավայրին: Ի դեպ, *Գալտք* (<\*Գալ-ր-է-ք//\*Գալ-ր-եայ-ք) և *Գալրենե* (<\*Գալ-ր-ենե) տեղանունների հիմքում ևս հնդեվրոպական ծագմամբ նույնիմաստ մի արմատ է ընկած: Հմմտ. ազգակից լեզուների բառերից հատկապես սլավոնական լեզուների հետևյալ բառերը. ռուս., ուկր., բելոռ. рыба, լեհ. gęba «ծովածոց», ստորին լուծ. guba «զետարեքան», որոնք ծագում են հնդեվրոպական \*gheub(h)-// \*ghub(h)-«թեթել, ճկել, ծռել, կորացնել», «ծռվածք, կորություն» նախածնից<sup>34</sup>: Սլավոնական լեզուներում նրանից ծագած բառերը կիրառվել են նշելու համար նաև «շրջան, զավառ» հասկացությունները, իսկ ավելի ուշ՝ նաև «ծնոտ, մոտք, բերան, շրթունք» հասկացությունները<sup>35</sup>: Սլավոնական լեզուների բառերը հնարավորություն են տալիս, նույն հնդեվրոպական արմատը տեսնելու նաև հայերեն *գալառ*, *գալիթ* և *գալակ* բառերի հիմքում, որոնք ընդունելի ստուգաբանություններ չունեն: Հնդեվրոպական նույն արմատից կարող է ծագած լինել նաև Կասպուտան (Ուրմիա) լճի հյուսիս-արևելյան ափը բռնած և հնում *Գարիթեան* և *Գալթեան* կոչված զավառի անունը, որն, այս դեպքում, ճիշտ չի լինի *Կասպուտան* անվան աղավաղված ձևն համարելը (հակառակ առաջադրված կարծիքի)<sup>36</sup>:

Aggusu «երկրի» և Anganu քաղաքի նույն տարածքում գտնվելու մասին է խոսում ոչ միայն նրանց ծովափյան տեղադրությունը և արտաքին հնչյունական նմանությունը,<sup>37</sup> այլև դրանց անունների կառուցվածքային և հնչյունական համարժեքությունը: Դրանք երկուսն էլ իրենց հիմքում ունեն հնդեվրոպական ծագմամբ միևնույն արմատը և նույնպես հնդեվրոպական ծագմամբ համարժեք – *ուն* և *-ան* վերջածանցները<sup>38</sup>. Aggusu<\*Agg-un(u), իսկ Anganu<\*Ang-an(u): Ի դեպ, այս տեղանուններում առկա հնչյունական համապատասխանությունները հայերենում առկա են այլ դեպքերում ևս. հմմտ. ասոր. aggānā. «կուժ, ջրաման»// հայ. *անկան*, *անգան*, *անգանակ* «սանդ, հավան», «կոնք, տաշտ», հայ. *անկանիլ* // *անգանիլ*<sup>39</sup>, *անկին* // *անգին*<sup>40</sup>, Ծովքի տեղանուններից՝ *Անգո*//*\*Ագ(ը)*> թրք. *Էգիլ*: Ինչպես ասվեց հայոց առասպելաբանական պատկերացումների համաձայն, արևի մայրը բնակվում էր ոչ միայն արևմուտքում: Նա նաև «բնակվում է արևի պալատում, որը գտնվում է արևելքում՝ աշխարհի ծայրին»: Այստեղ «Կան իրար ետևից 12 գավիթ..., ցայտադրյալներ, որոնք ցայտում են յուրաքանչյուր բակի մեջ: Մեջտեղի բակի աղբյուրի վրա կառուցված է մի ոսկե տաղավար: Նրա մոտ մարգարտասպատ մի մահիճ է բացված, եզրին *լույսերի մեջ* նստած է արևամայրը և իր որդուն է սպասում: Եվ ահա նա բոցավառված վերադառնում է *իր պալատը*... Արև-հերոսը *լողանում է գոլյալ ջրի մեջ*, մայրը գրկում է զավակին, հանում ջրից, տեղավորում մահճում... Վերջինս հանգստանում է, որպեսզի հաջորդ օրն առավոտյան վաղ վերսկսի իր երթուղին»<sup>41</sup>: Իսկ այդ երթուղին սկսվում էր «աշխարհի ծայրից»՝ արևելքից, որտեղ և գտնվում էր 12 գավիթներով բակերից բաղկացած արևային պալատը: Դրանք խորհրդանշում են Արեգակի տարեկան շրջապատյալի ճանապարհին ընկած Կենդանակերպի 12 համաստեղությունները և արեգակնային տարվա 12 ամիսները: Արևային պալատի յուրաքանչյուր բակն ունի իր ցայտադրյալը, որոնցից կենտրոնականի վրա է կառուցված արևի լուսաշող ոսկե տաղավարը: Հենց նրա ջրերում է լողանում Արև-հերոսը:

<sup>33</sup> Н. А р у т ю н я н, *նշվ. աշխ.*, *ստր.* 90-91.

<sup>34</sup> J. P o k o r n y, *Indogermanisches Etymologisches Wörterbuch, Bd. I-II, Bern-München, Francke Verlag. 1959, S. 450.*

<sup>35</sup> *Этимологический словарь русского языка, т. I, вып. 4, Г, М., 1972, стр. 190-191.*

<sup>36</sup> Մ. Երեմյան, *նշվ. աշխ.*, էջ 46:

<sup>37</sup> Н. А р у т ю н я н, *ТУ*, *ստր.* 10-11, 27.

<sup>38</sup> Հ. Լ. Պետր, էջ 234, Հ. Լ. Պետր, *հ. 2, էջ 93:*

<sup>39</sup> Հ. Լ. Պետր, *հ. 1, էջ 197:*

<sup>40</sup> Հ. Լ. Պետր, *հ. 1, էջ 200:*

<sup>41</sup> Մ. Արտյունյան, *նշվ. աշխ.*, *հ. Է, էջ 41; С. Арутюнян, Арэв, Мифологический словарь (այսուհետև՝ МС), М., 1991, стр. 63*

Առասպելաբանական այսպիսի պատկերացումը հիմք դարձնելով փորձենք Ծովքի հնագույն բնակիչների աչքերով տեղայնացնել հիշյալ անգո օբյեկտները: Հնագույն Ծովքի՝ Իսուվա երկրի, արևելյան մասում էին գտնվում Արևմտյան Տիգրիսի ակունքները՝ արևելյանները՝ *Միհրաւան* (հմմտ. *Միհր*՝ անունը արևի աստծու) և *Սուրբ Լույս* կոչված լեռնագագաթների միջև, իսկ արևմտյանները՝ Ծովք լճում և նրա շրջակայքում: Այս լճի կղզի դարձած հրվանդանի վրա գտնվում էր Սուրբ Նշան վանքը<sup>42</sup> (Սուրբ Նշան// խաչ, որը հեթանոսական դարերում արեգակնային լույսի և նրա անձնավորում աստվածությունների խորհրդանշաններից էր): Հիշյալ լեռներից առաջինը իր անունը ստացել էր իրենից հարավ գտնվող Միհրավան բնակավայրից (այժմ՝ *Միրվան* < \**Միհրվան* < *Միհրաւան*): Որ այս լեռը արևի պաշտամունքի հետ սերտ առնչություն է ունեցել, վկայում է նաև նրանից արևելք գտնվող բնակավայրի *Միվան* անունը: Վերջինս կազմված է \**Միվ*- արմատից -*ան* տեղանվանակերտ վերջածանցով: Հմմտ. *Սեւ-ան*, *Երեւ-ան*, *Գերջ-ան* և այլն: \**Միվ*-արմատը ծագում է հ.-ե. նախալեզվի \**k'eu*-արմատից («լուսավորել, փայլել», «լուսավոր, փայլուն»), որից է նաև ուրարտական դիցարանի Արևի աստծու *Տիւնի*/\* *Միհնի* (< \**Մի-ին-ի* հմմտ. *Լուս-ին*, *վեր-ին*, *կարգ-ին* և այլն) անունը և Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջաններում իշխած հին հայկական նախարարական տոհմի *Միհնի* (< \**Մի-ին-ի* կամ *Մի-ունի*) անունը, որից էլ *Միհնիք* ցեղանունը և այլն<sup>43</sup>:

Միհրավան լեռան ներկայիս անունը՝ *Շառեկշան*-ը (թրք. Sareksan) աղավաղյալ ձևն է հայկական \**Շառեկեկ-նշանի*-ի: *Շառեկեկ* նշանակում է «կարմրավուն» (< *շառ* «մուգ կարմիր»)։ ձևի համար հմմտ. *կարմիրեկ* «կարմրավուն», *հեռուեկ* «բավական հեռու, մի քիչ ավելի հեռու»<sup>44</sup>: Հայտնի է, որ *կարմիր*-ը Արևի հայտնի մակդիրներից է, իսկ *շառ* «մուգ կարմիր» արմատը առկա է Արևին առնչվող այնպիսի բառերում, ինչպիսիք են *շառայլ* «ճառագայթ, շող, շառավիղ լուստ», *շառաւիղ* «շող, ճառագայթ, կայծ», (բարբառներում նաև «արևի լույսը, ցուլը, լույսի անդրադարձումը, օդի շարժումը տաքությունից»), *շառաւի* «լույս, ճառագայթ, փայլ»<sup>45</sup>: Սրանցից ուշագրավ է հատկապես *շառաւիղ* < \**շառ-աւիղ* բառը, որի երկրորդ բաղադրիչը օրինաչափ կերպով ծագում է հ.-ե. \**säuel*-/\**sau* Hel- նախաձևից (հմմտ. հուն. α' *Ἑλιος*, լիտվ. *säulė*, պրուս. *saule*, գոթ. *sauil*, լատին. *söl* «արև»)։ *Շառեկշան* անվան -*շան* մասը *նշան* բառի աղավաղումն է (հմմտ. թրք. *շանց տալ* < *նշանց տալ*, *շաշ տալ* < *նշան տալ*, *շանվել* < *նշանվել*),<sup>46</sup> իսկ, ինչպես ասվեց, հեթանոսական ժամանակներում խաչը (նշանը) խորհրդանշանն էր արեգակնային լույսի և նրա անձնավորում աստվածների:

Հնագույն Ծովքի արևելյան ծայրամասում՝ արևածագի վայրում, գտնվելու պատճառով Արևմտյան Տիգրիսի արևելյան ակունքների շրջանը ծովացիների կողմից, առասպելաբանական մտածողությամբ, դիտվել է որպես աղոթքան՝ Արևի աստծու «պալատով», իր «12 գավիթ բակերով» և դրանցում գտնվող «ցայտադրյուրներով»՝ սուրբ ջրերի ակունքներով: Կարծում ենք, որ այստեղ է գտնվել իսուվական Արևի աստծու՝ Պիրվայի, պաշտամունքի երկրորդ կենտրոնը՝ Գուրուվադուրուվան, որի անունն, ինչպես կտեսնենք, իր գոյությամբ պարտական է մեր հեռավոր նախնիների հիշյալ առասպելաբանական պատկերացումներից բխող լեզվամտածողությանը:

*Duruyaduru* և *Durudduru* տարբերակներով հայտնի այդ բնակավայրի անունը ևս հնդեվրոպական ծագում ունի: Այն կարելի է տրոհել երեք բաղադրիչների՝ *Dur(u)*-, \**uadur*-/\*-*u(d)dur*- և -*u*: Սրանցից վերջինը խեթերենին բնորոշ և, ըստ երևույթին, խեթ գրչի կողմից մեր տեղանվանը ավելացված տեղանվանակերտ

<sup>42</sup> Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց, *նշվ. աշխ.*, հ. II, էջ 370-371:

<sup>43</sup> Մ. Պ ե տ ր ն ս յ ա ն, *Նախնական Ուրարտուի գլխավոր աստծու հարցի շուրջ*, ԳՄԻ գիտական աշխատությունների ժողովածու, 2, Գյումրի, 1994, էջ 229-231:

<sup>44</sup> ՀԱԲ, հ. II, էջ 559, Ստ.Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ)*, հ. II, Եր., 1944, էջ 411, հ. III, Եր., 1944, էջ 96:

<sup>45</sup> ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 496-497:

<sup>46</sup> ՀԱԲ, հ. III, էջ 460:

վերջածանց է (հմմտ. Պիրվայի պաշտամունքի երրորդ կենտրոնի անվան գույգ տարբերակները՝ Iksuna և Iksunayya): Քննության առարկա տեղանվան Dur(u)-բաղադրիչը նույնական է հ.-ե. ծագումով հայերեն *դուռն* բառի հետ (<հ.-ե. \*dhur-): Հ. Աճառյանը նկատել է տալիս. «բառիս երկրորդ ձևն է (*ն*-ից ազատ) *դուր*, որ գործածվում է միայն անեզաբար՝ *դուրք*, *դրաց*, *դուրս*, *դրօք* ձևերով<sup>47</sup>: Իսկ մեր բառը նշանակում է ոչ միայն *դուռ*, այլև «պալատ»»: Հմմտ. նույնարմատ բառերի ազգակից լեզուներում ձեռք բերած իմաստները. պարս. dar «դուռ» և «դուռն արքունի», հին պարս. duvarayā «ի Դուռն արքունի», ռուս. дверь «դուռ» և дворецъ «պալատ»<sup>48</sup>:

Տեղանվան \*uadur-//ud(d)ur- բաղադրիչը նշանակում է «ջրային» և նույն-պես հնդեվրոպական նախալեզվից եկող բառ է: Նրա արմատը \*ued-//\*ud- նշանակում է «ջուր» և առկա է գրեթե բոլոր հնդեվրոպական լեզուներում: Հայերենում նրա մի տարբերակն ընկած է *գետ*, իսկ մյուսը *ուրդ* (<\*ուդր) «պարտեզները ջրելու առու» բառերի հիմքում: Դեռևս Ս. Տերվիշյանն էր վերջինս ազգակիցներն համարում հին հնդկ. udra և հուն. սծօր բառերի<sup>49</sup>: Այդ ստուգաբանությունը Հ. Աճառյանը հուսալի չի համարում,<sup>50</sup> բայց հմմտ. նաև նրան ազգակից իլյուր. udr- և փռյուգ. սծօր բառերը<sup>51</sup>:

Գր. Ղափանցյանը մեր այս բառին և նրա տարբերակներին վերագրում է խեթական ծագում: Նա գրում է. «խեթական watar-ը հայերենում պիտի տար անմիջապես vard ձևը, իսկ wetar-ից կապասեինք verd ձևը», ապա շարունակում. «խեթերեն watar>հայոց vard («վարդ») «ջուր» ես տեսնում եմ *վարդ-առ-առ* բառի մեջ... verd-ը կդառնար urd, ինչպես «վերջը»- դարձել է «ուրջ»<sup>52</sup>: Այսպես թե այնպես, բերված բոլոր բառերի հիմքում ընկած են հ.-ե. \*ued-//\*ud- արմատի տարբերակները: Նույնը կարելի է ասել նաև մեր տեղանվան uadur-//ud(d)ur-բաղադրիչի մասին: Ուշագրավ է որ նույն բառի դրափոխված \*վարդ (<\*վարդ<\*վարդ) ձևը պահպանված է ինչպես *Վարդամարգ* գետանվան (*Վարդամարգ* հմմտ. *ջրամարգ*), այնպես էլ *Նուարդ*, *Նվարթ* դիցանվանական ծագումով անձնանվան մեջ: Վերջինիս իրանական ստուգաբանությունները<sup>53</sup> անընդունելի են, որովհետև իրանական ժողովուրդներին այդպիսի դիցանուն կամ անձնանուն հայտնի չէ: Առասպելաբանական Արայի կնոջ կրած այս անունը<sup>54</sup> գալիս է հնագույն հայկական առասպելաբանությունից և նշանակում է «ջրահարս», «գետի հավերժահարս» (*նու* «հարս»+*վարդ* «ջուր, գետ»)՝ Ասվածները թույլ են տալիս տեղանվան Duruuadur-//Duruddur- մասը ստուգաբանել «ջրային պալատ» իմաստով, դրա տակ հասկանալով Տիգրիսի արևելյան ակունքների շրջանում տեղադրված և Արևի (արևածագի) աստծուն ձոնված այն սրբավայրը, որը գտնվել է նրա պալատի անունով Duruuaduruu կոչված բնակավայրում: Հմմտ. նույն շրջանում գտնվող և «արևային» ստուգաբանությամբ անուններ ունեցող Միրվան (<\*Միրվան<\*Միր-աւան) և Միվան (<\*Միւ-ան) բնակավայրերի անունները:

Ձարմանալի կլիներ, եթե այստեղ տեղանունների ձևով ավանդված չլիներ Արևի մոր՝ նույն Մայր դիցուհու, պաշտամունքի հետքերը: Արևմտյան Տիգրիսի արևելյան ակունքների շրջանին հարավից հարող տարածքում է գտնվում Հանի բնակավայրը: Միջնադարի արաբ հեղինակներին այն հայտնի էր Hānī, իսկ Մի-

<sup>47</sup> ՀԱԲ, հ. I, էջ 685:

<sup>48</sup> Նույնը:

<sup>49</sup> Ս. Տ է ր վ ի շ ե ա ն, *հնդեվրոպական նախալեզու*, Կ. Պոլիս, 1885, էջ 106:

<sup>50</sup> ՀԱԲ, հ. III, էջ 616:

<sup>51</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Եր., 1970, էջ 13, 108:

<sup>52</sup> Գ. Դ ա փ ա ն ց յ ա ն, *Հայոց լեզվի պատմություն (հին շրջան)*, Եր., 1961, էջ 151, 152:

<sup>53</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, *Հայոց անձնանունների բառարան*, հ. IV, Եր., 1948, էջ 88:

<sup>54</sup> Մովսիսի *Խորենացույ Պատմութիւն Հայոց*, Եր., 1981, գիրք Ա, գլ. ի:

<sup>55</sup> Ս. Պ է տ ր ո ս յ ա ն, *Շարայի ցեղամիությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում*, ԼՀԳ, 1979, թիվ 12, էջ 71-73:

քայել Ասորուն՝ *Hānī* անունով<sup>56</sup>: Բայց որ այս անունը շատ ավելի հին է, վկայում է «Բարեբունյան տարեգրությունը», որտեղ մ.թ.ա. 608 թ. տակ հիշատակված է, թե ինչպես Նորբարեբունյան թագավորության գահակալ Նաբոպալասարը «իր զորքերը հավաքեց և Տիգրիսի ափն ի վեր բարձրացավ Բիթ-Խանունիա երկիրը՝ Ուրարտու [երկրի] մարզը: Նա այրեց քաղաքները և ձեռք բերեց մեծաքանակ ավար: Տերտու ամսին Աքքադի թագավորը վերադարձավ իր երկիրը»<sup>57</sup>: Մեծական լեզուներում *բիթ* նշանակում է «տուն», բայց «երկիր, գավառ» իմաստն էլ է պարունակում այնպես, ինչպես հայերեն *տուն*-ը *Անգեղտուն*, *Պաղնատուն*, *Տունն Կաղմեայ* երկրանուններում: *Բիթ-Խանունիա* նշանակում է «*Խանունիի* կամ *Հանունիի տուն*» (*h* և *ju* հնչյունների համար կիրառվում է միևնույն սեպախումբը):

Այս ցեղային երկրի անունը տրոհվում է *\*հան-ունի* բաղադրիչների (հմմտ. *Արծր-ունի*, *Բագրատ-ունի*, *Սահառ-ունի* և այլն)՝ օրինաչափորեն ծագած *\*Han-ut-ia* սեպագրային ձևից: Հնդեվրոպական ծագմամբ հայերեն *-ունի* (հմմտ. *ծեր-ունի*, *տեր-ունի*, *արք-ունի* և այլն) վերջածանցը բաղադրված է հենց *-ուն* և *-ի* (<հ.-ե.\*-iā) վերջածանցներից<sup>58</sup>: Երկրանվան հիմքում հայերեն *հան* «մեծ մայր, տատ» բառն է՝ առկա նաև նույն տարածքի *Հանի* տեղանվան մեջ: Վերջինս ներկայացնում է *հան* բառի *-ի* մասնիկով ձևը՝ նրա նման ծագած հ.-ե.\*an-/\*Han-«տատ, հոր մայրը» արմատից: Սրանից են սերում նաև խեթ.*hannaš* «տատ» (>*Hanna**hanna* դիցուհու անունը), հուն. *α'ννίς*, հրգ. *ana* և ազգակից մյուս լեզուների համապատասխան բառերը<sup>59</sup>: Որ հայերեն այս բառը պաշտամունքային ոլորտում և կիրառում ունեցած բառերից է եղել, վկայում է *Նար* դիցանվան հետ նրա երբեմնի հարադրումը՝ վկայված ժողովրդական «Հանիկ մինարե-մինար» երգի «Հանիկ Նար» կրկներգում: Վերջինս նշանակում է «Մեծ մայրիկ Նար», իսկ *Նար* դիցանունը առկա է ինչպես *Ծովինար*<sup>60</sup>, այնպես էլ *Նինար* դիցանունների մեջ. *Նինար* <*\*նի-նար*, որը կազմված է նույն *Նար* դիցանունից *նի-* մասնիկով (հմմտ. *նայիլ* և *հայիլ*, *նեցուկ* և *յենուկ*, *նիթ* և *հիթ*)<sup>61</sup>: «Հանիկ Նար» -ում առկա *հանիկ* ձևը ևս գրաբարյան է<sup>62</sup>: Ասել է, թե Արևմտյան Տիգրիսի արևելյան ակունքների շրջանում և նրան հարող տարածքում պաշտվել է ոչ միայն նորածագ Արևը, այլև նրան ծնունդ տված Արևամայրը՝ Մայր դիցուհին:

Իսուվական Պիրվա աստծու պաշտամունքի երեք կետրոններից մեկն էլ *Ikšuna* անունն էր կրում: Մեր կարծիքով, այս տեղանվան մեջ առկա է *Iks-* արմատը և *-una* վերջածանցը: Ընդ որում, *Iks-* արմատը նույնական ենք համարում հուն.- պելասգ. հետևյալ բառերի համահունչ արմատի հետ. *Ἴξις* «շարժում», *Ἴξαλος* «ցատկոտ, ոստնոտ», «կայտառ, աշխույժ»: Այս բառերից երկրորդը որպես այժի (*αἴξ*, *τράγος*) մակդիր հիշատակում են Հոմերոսը և *Anthologia Palatina*-ի կազմողները<sup>63</sup>: Նրանում առկա են *\*iks-* արմատը և *-al-* վերջածանցը: Վերջինս նույնպես հնդեվրոպական ծագում ունի և առկա է ազգակից տարբեր լեզուներում՝ գործածական հասկապես կենդանիների անուններում: Հայերեն *բռնեղ* <*բռն* «իշամեղու, բորեխ, պիծակ» բառի հ.-ե.\**bhor-* արմատի տարբերակներից ծագած ազգակից լեզուների բառերը բերելով, Հ.Աճառյանն ավելացնում է. «հայ. *բռնեղ* ձևի մեջ *-եղ* մասնիկը համապատասխանում է սանս.-*al* մասնիկին»: Ի նկատի է առնված հին հնդկ. *bham-bharalī* «ճանճ»: Հմմտ.նաև լատիշ. *bimbals*, *bambals* «բզեզ»<sup>64</sup>:

<sup>56</sup> Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ.Նալբանդյան, Եր., 1965, էջ 51, 155 ծան. 140:

<sup>57</sup> *Хрестоматия по истории древнего Востока*, ч. I, М., 1980, стр. 222.

<sup>58</sup> ՀԼՊՆԺ, էջ 231, 356:

<sup>59</sup> ՀԱԲ, հ. III, էջ 33; *ИЯИ*, т. II, стр. 766.

<sup>60</sup> *Гр. К а п а н ц я н*, *Историко-лингвистические работы*, (այսուհետև՝ *ИЛР*), *Ер.*, 1956, стр. 295-300.

<sup>61</sup> ՀԱԲ, հ. III, էջ 427:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>63</sup> *ДГРС*, т. I, стр. 825.

<sup>64</sup> ՀԱԲ, հ. I, էջ 472-473:

Հունապելագյան *ἰξάλος*-ի մոտ ազգակիցն է համարվում փոյուզերեն *էջալ*, *իսկա*, *իսսեա* և այլ տարբերակներով պամոնոված բառը, որը նշանակում է «այծի մորթ»<sup>65</sup>: Ինչպես տեսնում ենք, նրանում ևս առկա է նույն *-al-/-el-* վերջածանցը: Քննության առարկա տեղանվան մեջ նրա փոխարեն *Iks-* արմատին կից է *-una* վերջածանցը, որը ևս հնդեվրոպական ծագում ունի և նույնական է հայերեն *-ուն* վերջածանցի հետ: Հմմտ. *բեղուն*, *իմաստուն*, *ձեղուն*<sup>66</sup> և *Մաքրուն*, *Տիրուն*, *Իսկուն*, *Թազուն*, որոնք Մարիամ Աստվածածնի մականիքներն են: Չնայած դրանք համարվում են բարբառային համարժեքները *Իսկունի*, *Սիրունի*, *Մաքրունի*, *Տիրունի*, *Թազունի* ձևերի,<sup>67</sup> բայց լինելու են նույն արմատներից *-ուն* վերջածանցով անկախ կազմություններ. հմմտ. *Արբուն* նահապետի անունը: Ասվածները հիմք են տալիս \**Iksun*-ը համարելու իսուվական Պիրվա աստծու մականիքը, նրա «այծային» էության բացահայտիչը: Հմմտ. հուն. *Ἰξίων* դիցանունը, որի կրողը ևս սերտ առնչություն ունի Արևի պաշտամունքի հետ<sup>68</sup>: Իսուվական Արևի աստված Պիրվայի \**Iksun* մականիքն էլ ընկած է լինելու նրա պաշտամունքի վայրի *Iksuna* // *Iksunusa* անվան հիմքում (վերջին տարբերակում առկա է նաև վերոհիշյալ *-usa* տեղանվանակերտը): Հայտնի դիցանուններից տեղանուններ (նաև հակառակը) կերտելու երևույթը լայն տարածում ունի Արևելքի բոլոր երկրներում: Հմմտ. *Անահիտ* և *Անահտական*, *Միհր* և *Միհրաւան*, *Վահագն* և *Վահագնի* և այլն:

Արևի և այծի առասպելաբանական զուգորդումը և Արևի այծակերպ ընկալումը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհի նախնադարյան բնակիչներին: Ժայռապատկերներում այծերն հաճախ պատկերված են արևանշանների ուղեկցությամբ (նկ.1)<sup>69</sup> երբեմն էլ հանդես են գալիս արևանշանի կամ արևի պատկերի փոխարեն (նկ.2)<sup>70</sup>: Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկում յոթ լուսատուների փոխարեն տեսնում ենք աչից ձախ // արեգակի ցերեկային շարժման հակառակ ուղղությամբ (ուրեմն, գիշեր է) ընթացող այծ, կիսալուսին և հինգ փոքր շրջանակներ: Վերջիններս ներկայացնում են անզեն աչքով տեսանելի հինգ մոլորակները, իսկ այծը՝ բնականաբար, Արևը: Թե ինչքան խորն են նման պատկերացման արմատները ցույց են տալիս վաղհնդեվրոպական նախալեզվում (վաղնջական ժամանակների հնդեվրոպացիների լեզվամտածողությունից եկող) *DY* արմատից ծագած բառերի կիրառումը «այծառ օր», «փայլել (ինչպես այծառ օրը)» («սպիտակ) այծ» և «աստվածություն» իմաստներով<sup>71</sup>. հմմտ. այդ նույն վաղհնդեվրոպական արմատից սերած հայերեն *տի* «ցերեկ, օրվա լույս մասը» (<h.-t\*diu-) և *տիկ* «տիկ, տկճոր» (<h.-t\*dig- «այծ») բառերը<sup>72</sup>: Ուշագրավ է, որ վաղհնդեվրոպական այդ նույն արմատից ծագած բառերը կիրառվել են նաև «երկինք», «շանթառաք», «փոթորիկ» իմաստներով,<sup>73</sup> ինչը մտածել է տալիս ֆիզիկական աշխարհի համապատասխան երևույթների հակադրամիասնական ընկալման մասին: Բնականաբար, նույն կերպ էին ընկալվելու նաև դրանք մարմնավորող առասպելաբանված կենդանիները (այս դեպքում՝ այծը) և դրանք անձնավորող աստվածությունները:

Վերջին տեսանկյունից դիտարկված հասկանալի է դառնում, թե ինչու հայերեն *մաղ* «նոխազ, քոշ»<sup>74</sup> արմատն իրենց հիմքում ունեցող բառերի մի ամբողջ շարք՝ առնչվում է «ույս» և «կրակ», իսկ մեկ ուրիշ շարք՝ «անձրև» հասկացություններին: Դրանցից են *մաղմաղ* «մարմանդ կրակ», «տաք մոխիր», «մարմանդ՝

<sup>65</sup> Գ. Չ ա հ ն ի կ յ ա ն, Հայերենը և ..., էջ 114:

<sup>66</sup> Հ.Լ.Պեժ, էջ 234:

<sup>67</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հ. II, Եր., 1944, էջ 390:

<sup>68</sup> В. Я р х о, ИКСИОН, МС, стр. 238-239.

<sup>69</sup> Հ. Մ ա ռ տ ի թ ո ս յ ա ն, Հ. Ի ս ռ ա յ ե լ յ ա ն, Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 6, Եր., 1971, աղ 302:

<sup>70</sup> Նույն տեղում, աղ. 298

<sup>71</sup> Н. А н д р е е в, Раннеиндоевропейский праязык, М., 1986, стр. 87.

<sup>72</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 405, 410:

<sup>73</sup> Н. А н д р е е в, նշվ. աշխ., էջ 87:

<sup>74</sup> ՀԲԲ, հ.III, Եր., 1944, էջ 243:

հանդարտ՝ վառվող», *մաղկտալ* «(արշալույսին) լույսը ճաճանչել», *մաղկտաւոր* «ճաճանչափայլ, փայփլող» (օրինակ, *Մաղկտաւոր աղօթրանը բացվել է*), *մաղմղել* «մաղելու պես թափվել, ցոլալ (լույսի մասին)» (օրինակ, *Աղօթրանը կմաղմղէ «լուսանալու վրա է»*), *մաղմղուկ* «մաղելու պես թափվող, մաղվող» (օրինակ, *մաղմղիկ լույսեր*), «հանգչելու մոտ կրակ, մոծիք, կայծ», իսկ *մաղիկ-մաղիկ* «մանր կաթիլներով» (օրինակ, *Անձրև կուգայ մաղիկ-մաղիկ*), *մաղել* «բարակ անձրև գալ», *մաղմաղ* «մաղիկ-մաղիկ, բարակ, հանդարտ» (օրինակ, *մաղմաղ անձրև է գալիս*), *մաղմղել* «բարակ անձրև գալ, մաղմաղ անձրևել»<sup>75</sup>: Այդ նույն տեսանկյունից դիտարկված է հասկանալի դառնում նաև հնագույն հնդեվրոպացիների այնպիսի դիցական գլխավոր գույզի գոյությունը, որոնցից մեկը անձնավորում էր արևային (անամպ, «լավ օր»), իսկ մյուսը՝ անձրևային (ամպամած, «վատ օր») երևույթները: Ընդ որում, նրանցից առաջինը համատեղում էր հետևյալ ֆունկցիաները.

- ա) գերագույն աստվածություն,
  - բ) անամպ երկնքի և արևի աստվածություն,
  - գ) քրմական ֆունկցիան իրականացնող աստվածություն,
  - դ) պտղաբերության հովանավոր աստվածություն:
- Նրանցից երկրորդը համատեղում էր հետևյալ ֆունկցիաները.

- ա) ոչ գերագույն աստվածություն
- բ) երկնամերձ ամպրոպային ժայռի և կայծակի աստվածություն,
- գ) ռազմական ֆունկցիան իրագործող և զինվորների սոցիալական դասի հետ գուգորդվող-համադրվող աստվածություն,
- դ) տնտեսական գործունեությունը և պտղաբերությունը հովանավորող աստվածություն<sup>76</sup>:

Գոյություն ունեցող տեսակետի համաձայն, հնդեվրոպական այս երկու աստվածությունների տնտեսական ֆունկցիաները հնդեվրոպական ընդհանրության վերջին շրջանում փոխանցվել էին հողագործների և արհեստավորների հովանավորը դարձած մի առանձին աստվածություն<sup>77</sup>: Սա ճիշտ է մասամբ, որովհետև հայկական ավանդույթը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում խոսքը արական աստվածության մասին է, իսկ նախապես այդ ֆունկցիան կրողը եղել է Մայր դիցուհին՝ պտղաբերության անձնավորումը և բարիքներ արտադրող դասի հովանավորը (հմտ. Ծովինար և Մանասար ու Բաղդասար, «Արշակունի մայր» և Երվանդ ու Երվազ և այլն)<sup>78</sup>: Այծակերպ երկվորյակներին ավելի ուշ հանդիպում ենք մեր միջնադարյան մանրանկարներում և եկեղեցիների բարձրաքանդակներում: Սրա լավագույն ապացույցը Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին գոտևորող բարձրաքանդակներն են: Ինչպես Սիրարփի Տեր-Ներսիսյանն է նկատել տալիս, դրանցում «Տեղ-տեղ աշխարհիկ տարրերը միահյուսվում են կրոնական տեսարաններին: Երևակայական կենդանիները, օրինակ՝ հուշկապարիկը կամ պասկուճը, և կովող կամ հակադրվող կենդանիների խմբերը չեն կարող ընգրկվել դրախտային պարտեզում, իսկ այն մարդը, որ առյուծին է միզակահարում, ոչ մի կապ չունի բիրիական միջադեպի (ի նկատի է առնված Մամտնի առյուծասպանության հոյարարքը-Ս.Պ. և Ծ.Պ.) հետ<sup>79</sup>: Աղթամարի եկեղեցու բարձրաքանդակներից այս առումով ուշագրավ են մանավանդ նրանք, որոնք ներկայացնում են «դեմ առ դեմ կանգնած երկու թռչուն, նրանց կողքին՝ իրար դիմադրող երկու այծ, որոնք կանգնել են ետևի

<sup>75</sup> Նույնը տեղում, էջ 244, 245:

<sup>76</sup> *ИЯИ, т. II, стр. 794.*

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 793:

<sup>78</sup> *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Գասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Գոկտորական ատենախոսության սեղմագիր, Գյումրի, 2001, էջ 12, 24, 27:*

<sup>79</sup> *Մ. Ս ե ր – Ն ե ր ս ի ս յ ա ն, Հայ արվեստը Միջնադարում, Եր., 1975, էջ 91-92; Տե՛ս նաև Աս. Մ ա ց ա կ ա ն յ ա ն, Հեթանոս ժամանակների քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ վանքի որմնաշարվածքում, ԼՀԳ, 1983, թիվ 2, էջ 83-92:*

ուտքերի վրա»<sup>80</sup>, «երկու դիմադարձող այծեր, որոնց առջևի ուտքերը ամուր սեղմված են արմավենուն, իսկ գլուխները ետ են շրջված»<sup>81</sup>, որոնցից մեկուն «երկու այծիկներ գլուխները խփում են իրար»<sup>82</sup>:

Վերջին բարձրաքանդակները հավանաբար արտացոլում են հնդեվրոպական արևային և ամպրոպային երկվորյակների ընդհարման դրվագը (հմմտ. հին հնդկական առասպելաբանության մեջ արևային Սուրյայի և ամպրոպային Ինդրայի հակամարտությունը, «Մասնա ծռեր» էպոսում Բաղդասարի և Մանասարի մենամարտը): Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկը, կարծես ներկայացնում է այդ հակամարտության սկիզբը (նկ.3): Այստեղ պատկերված են դիմադարձ այծեր, որոնցից մեկի գլխավերևին մեծ խաչ է պատկերված (արևի և լուսի խորհրդանշանը), իսկ մյուսի գլխավերևին՝ բուստանգ (ամպրոպի և կայծակի խորհրդանիշ առարկան)<sup>83</sup>:

Ինչպես վերևում տեսանք, խուվական դիցական գլխավոր եռյակի երրորդ անդամը հանդես էր գալիս Առաջավոր Ասիայի շատ երկրների ամպրոպային աստվածներին նշող <sup>4</sup>Ս գաղափարագրի տակ: Ըստ այսմ, խուվական այս աստվածը տեղական զուգահեռն է ներկայացնում վերոհիշյալ <sup>4</sup>Ս. GUR-<sup>4</sup>INANNA-<sup>4</sup>Izzi-istanu (հայասական դիցարանում), Արեգ-Երեզկան-Գրգուռ (ըստ հին հայկական տոմարի), և Արամազդ-Անահիտ-Վահագն (հայ հեթանոսական դիցարանում) նույնատիպ եռյակների ամպրոպային անդամների՝ <sup>4</sup>Ս. GUR-ի, Գրգուռի և Արամազդի: Իսուվական <sup>4</sup>Ս-ն զուգահեռն է նաև Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկում պատկերված ամպրոպային այն աստվածության, որը կանգնած է այծի վրա (նկ.4),<sup>84</sup> այսինքն՝ պատկերված է գրեթե այնպես, ինչպես հետագայում ներկայացվում էր ուրարտական ամպրոպ-հողմնային բնույթի Թեյշեբա աստվածը: Տարբերությունը կենդանիների միջև է՝ Թեյշեբայի սրբազան կենդանին ցուլն է, իսկ ժայռապատկերի աստվածությանը՝ վիթխարի քարայծր: Ժայռապատկերների այծերի մեծ մասը ամպրոպային բնույթ ունեն, որովհետև նրանց պատկերման սկզբունքը «յուրովի համընկնում է հայ ժողովրդական «Ինքը էծ, մեջքը՝ պեծ» հանելուկին, որով սովորաբար ներկայացվում է ամպրոպ-կայծակի երևույթը»<sup>85</sup>:

Իսուվական <sup>4</sup>Ս-ն զուգահեռն է լինելու նաև հնդեվրոպական մյուս ժողովուրդների ամպրոպային աստվածների: Հին հունական Ջևսի եղջերավոր նախատիպերից մեկը եղել է այծը: Ըստ առասպելի, մանուկ Ջևսին Իդա լեռան քարանձավում սնուցել էր Ամաթեա այծը, որն ավելի ուշ գերագույն աստված դարձած Ջևսի կամքով փոխադրվել էր երկինք (Կառավարի համաստեղության Capra «Այծ» աստղը), իսկ նրա մորթուց պատրաստվել էր Ջևսի կործանիչ վահանը՝ Այգիսը<sup>86</sup> Աի'γίς նշանակում է «այծի մորթի», «այծենի» (հմմտ. αἴξ, αἴγος «այծ»), բայց նաև «մրրիկ, փոթորիկ»:<sup>87</sup> Ջևսն, ըստ այդմ, կրում էր Աι'γίοχος «Այգիսակիր» մակդիրը<sup>88</sup>: Այծային գծեր ունեին նաև հնդեվրոպական մյուս ժողովուրդների ամպրոպի աստվածները: Բալթյան Պերկունասը այծ էր հեծնում, սկանդինավյան Թորի մարտակառքին այծեր էին լծված<sup>89</sup>, փոյուզական Ջևսը

<sup>80</sup>Ս.Տ էր - Ն էր ս ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 87:

<sup>81</sup>Նույն տեղում, էջ 87:

<sup>82</sup>Նույն տեղում, էջ 80:

<sup>83</sup> Հ. Մ ա թ ի թ ո ս յ ա ն, Հ. Ի ս թ ա յ ե լ յ ա ն, նշվ. աշխ., աղ. 330:

<sup>84</sup> Հ. Մ ա թ ի թ ո ս յ ա ն, Հ. Ի ս թ ա յ ե լ յ ա ն, նշվ. աշխ., աղ. 312:

<sup>85</sup> Հ. Մ ա թ ի թ ո ս յ ա ն, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Եր., 1973, էջ 22:

<sup>86</sup> A. Тахо-Годи, Амаффея, МС, стр. 35, А. Ф. Лосев, Зевс, Նույն տեղում, էջ 220:

<sup>87</sup> В. Т о п о р о в, Несколько соображений о происхождении древнегреческой драмы (к вопросу об индоевропейских истоках), Текст: семантика и структура, М., 1983, стр. 103, стр. 20.

<sup>88</sup> ДГРС, т. I стр. 47.

<sup>89</sup> ИЯИ, т. II, стр. 586.

կրում էր *Βωζιος* մակդիրը<sup>90</sup>, որը ծագում է հ.-ե. \**bhug-*ից և ազգակիցն է հայերեն *բուծ* «կաթնկեր գառնուկ կամ ուլիկ», ավեստ. *būza* «ուլ», «նոխագ», հին հնդկ. *bukkā* «այծ», քրակ. *βύζ(α)* «նոխագ» բառերի<sup>91</sup>: Փոյուզական Չևսը նաև *Ασεις* էր կոչվում մի անունով, որն հայերեն *այծ* բառի մոտ ազգակիցն է<sup>92</sup>:

Հնագույն Ծովքի <sup>4</sup>Մ// Ամպրոպի աստծու և դիցայծերին բնորոշ գծեր ունենալու մասին են խոսում ինչպես նրա զուգահեռների նույնպիսի գծերով օժտված լինելու հանգամանքը, այնպես էլ նրա պաշտամունքի վայրի սեպագրային *Halara* անունը: Ինչպես որ *Իքսունա*-ն կարող էր լինել այդ վայրում պաշտված Պիրվա արև-աստծու մակդիրը, այսպես էլ *Խալարա*-ն կարող էր լինել այնտեղ պաշտված ամպրոպի աստծու մակդիրը: *Halara*-ի բաղադրիչներից երկրորդը վերջածանց է (հմմտ. *կերպ-ար, մուլ-ար, պալ-ար*)<sup>93</sup> իսկ առաջինը, ըստ երևույթին, նշանակում է «այծ, նոխագ»:

*Hal-ara* անվան *Hal-* արմատին նման իմաստ վերագրելու համար հիմք են ծառայում հետևյալ իրողությունները:

1. *Hal*-ը կարող է լինել հայերեն *քաղ* «նոխագ» բառի հնչյունական տարբերակը. հմմտ. միևնույն արմատներից ծագած հետևյալ գույզերը. *քայլ/խաղ, քերել/խարել, աքիս/ախագ, ցաք-ատ/ցախ*<sup>94</sup>:

2. Հայերեն *խաղախ* «կաշի, մորթի» (որից՝ *խաղախորդ* «մորթեգործ, կաշեգործ»)՝<sup>95</sup> բառի արմատը ևս նույն իմաստն է ունենալու, որոհետև բազմաթիվ օրինակներ կան, որ «մորթ, կաշի, տիկ» նշանակող բառերը ծագում են այծի, ոչխարի կամ ուրիշ մի կենդանու անունից<sup>96</sup>:

3. *Խաղ* «այծ» բառի երբեմնի գոյությունը կարող է հաստատել նաև *խաղալ* բայը իր «ի խաղս զուարճութեան պարապիլ, պարել, կաքաւել», «խայտալ, կայտոնիլ, ոստնուլ, ճախրել, եռալ զեռալ, շարժիլ» իմաստներով<sup>97</sup>: Հմմտ. փոքրասիական փոխառության համարվող հուն. *τράγος* «նոխագ» (որից *τραγωδία* «նոխագերգություն, ողբերգություն», *τραγωδός* «ողբերգակ, դերասան») բառը և նրա արմատակիցը՝ խեթ. *tarkuiai-* «պարել, մոլեզնել» բայը<sup>98</sup>:

4. *Խալարակայք* բառի արմատը ևս լինելու է նույն \**խաղ*// \**խալ*-ը: Այս բառի «խոյակ» իմաստը<sup>99</sup> հիմք է տալիս այն համարելու այնպիսի մի կազմություն, ինչպիսին է նաև *խոյակ* բառի կազմությունը. *խոյակ* <*խոյ-ակ*, որտեղ *խոյ*՝ «արու ոչխար»: Ուշագրավ է, որ *խալ-ար-ակ-այք* բաղադրիչների բաժանվող բառն իր առաջին երկու բաղադրիչներով նույնանուն է իսովական <sup>4</sup>Մ-ի պաշտամունքի վայրի *Halara* (< *Hal-ara*) անվան հետ:

Արևային և ամպրոպային նոխագների մայրը կարող էր ըմբռնվել թե՛ մարդակերպ, թե՛ այծակերպ: Նրա մարդակերպության մասին է վկայում Գեղամա լեռների այն ժայռապատկերը (նկ.5), որտեղ նա ներկայանում է զույգ ուլեր ծնած վիճակում<sup>100</sup> (հմմտ. Չաթալ-Հյույուքի զույգ հորթուկներ ծնող Մայր դիցուհին): Արդեն մարդակերպ ընկալված երկվորյակ աստվածությունների մոր նաև այծակերպ ընկալվելու տեսանկյունից հիշարժան է Ուղտասարի այն ժայռապատկերը (նկ.6), որտեղ ևս ներկայացված է այս եռյակը: Ժայռա-

<sup>90</sup> Գ. Ջ ա հ ն ի կ յ ա ն, Հայերենը և ..., էջ 114:

<sup>91</sup> ՀԱԲ, հ. I, էջ 482; В. Г е о р г и е в, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр.118, 119, 132.

<sup>92</sup> Գ. Ջ ա հ ն ի կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 110:

<sup>93</sup> ՀԼՊԲ, հ. II, էջ 90:

<sup>94</sup> Г. Д ж а у к я н, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр.306-307.

<sup>95</sup> Նոր բառգիրք հայկազնան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. I, Եր., 1979, էջ 914:

<sup>96</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 405:

<sup>97</sup> ՆՀԲ, հ. I, էջ 915:

<sup>98</sup> В. Т о н о р о в, նշվ. աշխ., էջ 105-106:

<sup>99</sup> ՀԱԲ, հ. II, էջ 314:

<sup>100</sup> Ս. Լ ի ս ի ճ յ ա ն, [Գեղամա լեռների ժայռապատկերներից], գերմաներենից թարգմանեց Գ. Տիրացյան, ԼՀԳ, 1972, թիվ 1, էջ 53:

պատկերում<sup>101</sup> Մայր այծից աջ և ձախ պատկերված են մարդակերպ երկու աստվածություններ, որոնցից մեկի մոտ՝ նրա և այծի միջև, թեք զիծ է դրված (հավանաբար, կայծակի խորհրդանշանն է), իսկ մյուսի մոտ՝ այծի մեջքից վերև դրված են զույգ խաչեր (խաչը արևի և արևային լույսի խորհրդանշանն է): Այս ժայռապատկերների վերնամասում պատկերված հսկա օձը (վիշապ օձը) լինելու է երկվորյակ աստվածությունների թշնամին (հմմտ. Սանասարի և Բաղդասարի հակառակորդ վիշապը): Հ. Մարտիրոսյանն այս ժայռապատկերում տեսնում է Կենդանակերպի Երկվորյակ համաստեղության պատկերումը: Նա գրում է. «Կարծում ենք «երկվորյակներ» են պատկերում նաև Մյունիքի մի կոմպոզիցիայում հորիզոնաձև տարածած թևերով, իրանները օղակով ավարտվող մարդկային զույգ ֆիգուրները, որոնց արանքում առկա է այծ, իրանի մոտ իրար կպած երկու խաչերով...նրանց ոտքերին փոխարինող շրջանակները դարձյալ խոսում են նրանց լուսատու լինելու մասին»<sup>102</sup>:

Մայր դիցուհու նաև այծակերպ ընկալվելու՝ էգ այծը որպես կենդանական նախատիպ ունենալու, հանգամանքով պետք է ընդհանրապես պայմանավորված լիներ նրա նաև երկվորյակ աստվածությունների ծնող-սնողի դերում հանդես գալը, որոհետև այծերը շատ հաճախ զույգ ուլ են ծնում: Այծակերպ Մայր դիցուհու և երկվորյակ աստվածությունների՝ ամպրոպային և արևային այծերի, վերաբերյալ առասպելաբանական պատկերացումից անբաժան էր Մայր դիցուհու և անձրևաբեր այծի առասպելաբանական գույգորդումը:

Մ.թ.ա. III հազարամյակին վերագրվող միջագետքյան դրոշմակնիքներից մեկի վրա այծը պատկերված է ամպի տեսքով (նկ.7)<sup>103</sup>: Այս հանգամանքը հնարավոր է դարձնում ստուգաբանել հայերեն «Համբ-տիկ» բառը<sup>104</sup>, որի նախնական իմաստը հենց «այծ» էր լինելու: Նույնպիսի մի իմաստափոխություն, բուն իմաստի հետագա կորստով, արձանագրել է նաև տիկ բառը՝ ծագած հ.-ե.\*dig-«այծ» նախանձից: Այս առիթով Հ. Աճառյանը գրում է . «Լեզուների մեջ բազմաթիվ օրինակներ կան, որ «մորթ, կաշի, տիկ» նշանակող բառերի հառաջացած լինին այծի, ոչխարի կամ ուրիշ մի կենդանու անունից. ինչ... սանս. mēša «խոյ, ոչխար» և հետո «կաշի»// ռուս. мехъ «տիկ, մորթ, մուշտակ»,... լեհ. koziel «ուլ, պարկապզուկ», ռուս. коза «այծ, պարկապզուկ», кожа «կաշի» և հատկապես ֆրանս. bouc «բուծ», բայց նաև «տիկ»<sup>105</sup>: \*Համբ «այծ» (>համբ «տիկ») և ամպ // ամբ բառերը իրարից տարբերվում են միայն առաջինում առկա նախաձայն *h*-ի առկայությամբ (հայերենում ունենք նման երևույթի բազմաթիվ այլ դրսևորումներ ևս): Որ «այծ»/«ամպ» առասպելաբանական գույգորդումը հայի լեզվամտածողության մեջ հաստատուն հիմք է ունեցել, վկայում է Ալաշկերտում գրի առնված և «ամպ» պատասխանը պահանջող հետևյալ հանելուկը. «Ոսկե տիկ/Կարմիր գինին մեջ լողում ա»<sup>106</sup>: Իսկ որ խոսքը եղել է ամպի և անձրևի հետ գույգորդված էգ այծի և նրա կաշուց պատրաստված զինու տիկի մասին, վկայում է «տիկ» պատասխանը պահանջող շիրակյան հետևյալ հանելուկը. «Քանի սաղ էր՝ կաթ կուտար / Երբ որ մեռավ՝ հուփ կուտար / Կայնա՞մ մարդուն թափ կուտար»<sup>107</sup>: Ըստ այսմ, *համբ* բառը ծագումնաբանորեն առնչվում է հայերենի հնդեվրոպական \*mbho-/\*ṛbho արմատից սերած, *ամպ*/*ամբ* և *ամպրոպ* բառերին: Ի դեպ, *ամբ*/*ամպ* բառը իր սովորական իմաստից բացի կիրառվել է նաև «շանթ, կայծակ» իմաստով, իսկ բարբառներում նշանակում է նաև «ամպոտ, ամպամած»,

<sup>101</sup> Հ. Կ ա ռ ա խ ա ն յ ա ն, Պ. Ս ա ֆ յ ա ն, Մյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Եր., 1970, աղ. 90, նկ. 4:

<sup>102</sup> Հ.Մ ա ռ ա ի ի ռ ո ս յ ա ն, Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 11, Եր., 1981, էջ 78:

<sup>103</sup> Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն, Հայկական լեռնաշխարհի կնիքները հին Արևելքի

կնքագործության համակարգում, Եր., 1998, էջ 16, 106, աղ.9, նկ.11:

<sup>104</sup> Բառգիրք Հայոց, էջ 177:

<sup>105</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 405:

<sup>106</sup> Ս. Հ ա ռ ո թ յ ո ս յ ա ն, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 11:

<sup>107</sup> Նույնը, էջ 165:

«անձրև»<sup>108</sup>: Նույն արմատից են մահ *ամբուռք*, *ամբուռոյցք* «մրրիկ, փոթորիկ» և ազգակից լեզուների հետևյալ բառերը. հուն. 'ὄμβρος «անձրև», հին հնդկ. *abhra* «ամպ, փոթորիկ», լատին. *imber* «անձրև, ամպ», միջին իռլ. *imrim* «փոթորիկ», պարս. *abr* «ամպ» և այլն<sup>109</sup>:


Բերված բառերի և Մայր դիցայծի առնչությունների տեսանկյունից ուշադրության է արժանի Ծովքի *Ամբար* (այժմ՝ *Անբար*) գետանունը: Անվանակիր գետը Արևմտյան Տիգրիսի առաջին մեծ վտակն է, նրա մեջ է թափվում Ամիդ-Դիարբեքերից արևելք<sup>110</sup>: Նրա ակունքների շրջանում է գտնվում Մայր դիցուհու անունը կրող Հանի բնակավայրը՝ ըստ երևույթին, հնագույն կենտրոնը սեպագրային *Bit-Hanunia* երկրի: *Ամբար* (<ամբ-ար) գետանվան *ամբ-* արմատը, այսպիսով, առնչվում է թե՛ *ամբ* «ամպ», թե՛ *համբ* «տիկ» (<«այծ») բառերին, լինելով արգասիքը Մայր դիցուհու ամպ-այծային դրսևորման:

Հնագույն Ծովքի գերագույն դիցուհու դիցայծ ընկալվելու առթիվ կարող ենք բերել մի փաստ ևս: Արաբ մատենագիր Յակուտ ալ-Համավու աշխարհագրական բառարանում Տիգրիսի (արաբ. Դիջլաթ) վերաբերյալ ասվում է. «Բադդադի գետն է, որի առաջին ակը գտնվում է մի վայրում, որը կոչվում է Այն Դիջլաթ (արաբ-*այն* «աչք, ակն, ակունք»-Ս.Պ. և Ծ.Պ.), Ամիդից երկուս ու կես օրվա ճանապարհով հեռու:

<sup>108</sup> ՀԱԲ, հ. I, էջ 163, ՀԲԲ, հ. I, էջ 69:

<sup>109</sup> ՀԱԲ, հ. I, էջ 162-163:

<sup>110</sup> Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 164, ծան. 179:



Նկ. 1



Նկ. 4.




Նկ. 2.



Նկ. 5.



Նկ. 3.



Նկ. 6.



Նկ. 7

Այդ վայրը ծանոթ է Հալուրաս անվամբ և գտնվում է մի մութ քարայրի մեջ<sup>111</sup>: Առասպելաբանական ամենահին պատկերացումների համաձայն, քարայրը կանացի սկզբունքը կրող օբյեկտ էր<sup>112</sup> և Մայր դիցուհու ու նրա կենդանական նախատիպերի կացարանը: Հիշենք, որ Ամալթեա այժր Չևսին սնում էր հենց քարայրում: Որ այս վայրը սրբազան է համարվել, ցույց են տալիս այստեղ Ասորեստանի թագավորներ Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115-1070 թթ.) և Սալմասար III-ի (մ.թ.ա. 858-824 թթ.) թողած արձանագրությունները: Տիգրիսի

<sup>111</sup> Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 63:

<sup>112</sup> В. Т о н о р о в, Пещера, МНМ, т. II, стр. 311.

մասին իր հաղորդման շարունակության մեջ Յակուտ ալ- Համադին ասում է. «Մինչև հիմա մեր պատմածները քաղված են Քասրավիհց, բայց ասողներ էլ կան, որ Տիգրիսի բուն աղբյուրը Ամիդի մոտ Հիսն Չիլ-Կարնայն (արաբ. Hisn dil-qarnain - «Երկեղջյուրի ամրոց»)- Ս.Պ. և Ծ.Պ.) կոչված բերդի մերձակա լեռների ցածուն է գտնվում և ընդունում է ջրի հոսանքներ Դիարբաքի լեռներից<sup>113</sup>: Ուշադրություն դարձնենք ամրոցի անվանը՝ «Երկեղջյուրի ամրոց»: Մովորաբար, արաբ հեղինակներին այդ մականվամբ հայտնի էր Ալեքսանդր Մակեդոնացին<sup>114</sup> բայց որի այստեղ լինելու, կամ հիշյալ ամրոցը նրա կողմից հիմնադրված լինելու վերաբերյալ նրանք որևէ տեղեկություն չեն հաղորդում: Այստեղ հիշենք նաև, որ Արևմտյան Տիգրիսի արևելյան ակունքներից մեկը (Հանիի շրջակայքը եզերում է հյուսիսից և արևմուտքից) այսօր կոչվում է *Բերքլին-Չյուլքարնեյն*, այսինքն՝ դարձյալ առնչվում է «Երկեղջյուրին»: Երբ ի նկատի ենք առնում Պլուտարքոսի կողմից հիշատակված *Σόλλας* գետանունը<sup>115</sup> Տիգրիսի հին անուններից մեկը, ապա կարող ենք վստահ լինել, որ այս բոլոր դեպքերում Մայր դիցայծի դերում հանդես էր գալիս Sulama քաղաքում պաշտված իսուվական <sup>d</sup>INANNA դիցուհին (հմմտ. Sulama // \* Sol-ama և *Σόλλ-αξ* <\*sol-ak-):

Տիգրիսի և Մայր դիցայծի առասպելաբանական կապը բացահայտում է նաև գետի ասորեստանյան արձանագրություններում վկայված Diglat անունը՝ նախաձևը հայկական *Դկլաթ*, *Դկղաթ*,<sup>116</sup> ասոր. Deqlaθ, լատին. Diglito, պահլ. DGLT, արաբ. Digla, հին պարս. Tigrā (որից՝ հուն. Τίγρις, Τίγρις լատին. Tigris) ձևերի: Մրանց հիշատակելիս Հ.Հյուբշմանը նշում է, որ «Պարսիկները Diglat ձևն ըրած են Digrā- կանոնադրապես 1-ը՝ r-ի փոխելով եւ ժողովրդական ստուգաբանությամբ յեմելով այլեայլ բառերու վրայ, գ. օր. \*tigrī (=ավեստ. تیγρι) «նետ», ըրած են վերջապես Tigrā»<sup>117</sup>: Բայց սրանց բոլորի ասուրերեն նախաձևը ևս բուն սեմական ծագում չունի: Նրա առաջին բաղադրիչը h.-ե. \*dig-«այծ» բառն է (որից էլ հայ. *տիկ* և այլն): Արևմտյան Տիգրիսի «այծային» գետ լինելու տեսանկյունից ուշադրություն է գրավում նրա վտակներից մեկի ևս «այծային» անունը: «Աշխարացույց»- ում կարդում ենք. «Եւ ամենայն քամ ի լերանց Հայոց ի Դկլաթ իջանէ. նախ Քաղիթթ, որ բոխէ ի լերանց Սալմայ եւ Մանասնոյ...»<sup>118</sup>: Քաղիթթը՝ ներկայիս Բաթմանը, Ասորեստանի Թիզլաթպալասար III թագավորը (մ.թ.ա.744-727թթ.) կոչում է Kallama<sup>119</sup>: Ինչպես *Քաղիթթ* այնպես էլ Kallama անունների *Քաղ-* //Kal(1)-բաղադրիչները ներկայացնում են հայերեն *քաղ* «նոխսագ, արու այծի» բառը (*Քաղ* անունն էր կրում *Քաղիթթ* գետի ձախափնյա գավառներից մեկը)<sup>120</sup>:

Diglat անվան հ.-ե. նախաձևը, մեր կարծիքով, եղել է \*Dignat 1//n հնչյունափոխությամբ (հմմտ. *լախուր*//*նեխուր*, *լապատակ*//*նապատակ* և այլն): Այս դեպքում \*Dig-nat նախաձևի երկրորդ բաղադրիչի հիմքում կարելի է տեսնել հ.-ե. \*snθ-ից (<\*snā-«հոսել») ծագած մի ձև. հմմտ. հայ. *նայ* «թաց, խոնավ», որից *նայացուցանել* «թրջել, ջրել, ոռոգել» և այլն, հին հնդկ. snāti, snāyati, «լողանալ, լվալ, լվացվել», ավեստ. snāta «լվացված», հուն. νότιος «թաց, խոնավ», լատին. nātare «լողալ», ումբր. snata «թաց» և այլն<sup>121</sup>: Ուրեմն, Diglat//\*Dignat-ը «այծի ջուր», «այծի գետ» իմաստն ունի: Ընդ որում, այստեղ նկատի է առնված էգ այծը՝ հակադրամիասնական ընկալված *Քաղիթթ* գետին իր անունը տված քաղի (արու այծի) հետ: Այս դեպքում ի նկատի էր առնվելու Արևմտյան Տիգրիսի ակունքների արևմտյան, իսկ *Քաղիթթ*//*Բաթմանի* ակունքների արևելյան դիրքը՝ «էգ/արու», «արևմուտք /

<sup>113</sup> Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 64:

<sup>114</sup> М. П у о т р о в с к и ъ, 3у-л- Карнайн, МС, сmp. 223.

<sup>115</sup> ДГРС., т. II, М., 1958, сmp. 1489.

<sup>116</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 107, 114:

<sup>117</sup> Հ. Հիլբշման, Հին Հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1901, էջ 335:

<sup>118</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 114:

<sup>119</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 89, 107:

<sup>121</sup> ՀԱԲ, հ. III, էջ 426:



կազմած աստվածները ևս օժտված են եղել ոչ միայն տիեզերական, այլև տոտեմական հատկանիշներով: Քանի որ քարայծր եղել է հայկական լեռնաշխարհի նախնադարյան ցեղերից շատերի տոտեմական կենդանին (վկա ժայռապատկերները՝ «իծագրերը»), ուստի զարմանալի չէ, որ իսովական *Pigua*-ն ըմբռնվել է ոչ միայն որպես մարդակերպ գերբնական էակ՝ լույսի և արևի անճնավորում աստված, այլև հենց լույս ու արև, բայց նաև նոխազ, որ <sup>d</sup>U-ն ըմբռնվել է ոչ միայն նույնատիպ մի էակ՝ ամպրոպի և հողմի անճնավորում աստված, այլև ամպրոպ և հողմ, բայց նաև նոխազ, որ <sup>d</sup>INANNA-ն ըմբռնվելով նայնատիպ մի էակ՝ պտղաբերության անճնավորում Մայր դիցուհի, միաժամանակ կարող էր ընկալվել որպես ամպ, անձրև, գետ և այլն, բայց նաև Մայր այծ, Ստնտու այծ:

## ВОКРУГ ГЛАВНОЙ БОЖЕСТВЕННОЙ ТРИАДЫ ДРЕВНЕЙШЕЙ СОФЕНЫ

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_                      \_\_\_\_ *С. Петросян, Ц. Петросян* \_\_\_\_

По мифологическим представлениям предков армян, многослойные образы антропоморфных божеств включает в себя две группы признаков. Первая из них связана с тем природным явлением, деификацией которого является данное божество, а вторая своими корнями связана с тотемическими животными соответствующих божеств. В недрах этого мифологического мышления и зарождались прототипы образов главных божественных триад как Хайасы (<sup>d</sup>U, GUR, <sup>d</sup>INANNA, <sup>d</sup>Izzi-istanu) и армянского языческого пантеона (Арамазд, Анахит, Вахагн), так и древнейшей Софены-Исувы (<sup>d</sup>Pigua, <sup>d</sup>INANNA, <sup>d</sup>U). Т.о. главные божества древнейшей Софены также наделены не только космическими, но и тотемическими атрибутами. Так как горный козел (горная коза) был тотемным животным многих первобытных племен Армянского нагорья, то исувийское божество <sup>d</sup>Pigua не только антропоморфное сверхъестественное существо-олицетворение света и солнца, но одновременно свет, солнце, а также козел, <sup>d</sup>U не только антропоморфное сверхъестественное существо-олицетворение грома и молнии, но и гром, молния, а также козел, <sup>d</sup>INANNA не только антропоморфное сверхъестественное существо - богиня Мать, олицетворение плодородия, но и облако, дождь, река, а также Мать-коза, Кормилица-коза.

ՄԻ ՀԻՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՆԻՈՒՄ

Միջնադարյան Հայաստանի հռչակավոր մայրաքաղաք Անիում լայն տարածում է ունեցել Սուրբ Աստվածածնի պաշտամունքը: Քաղաքի ամենաբարձր շինությունը՝ Մայր տաճարը (Կաթողիկե եկեղեցին), ձոնված էր նրան<sup>1</sup>: Տաճարի կառուցումն սկսվել էր դեռևս Սմբատ 2-րդ թագավորի (977-990 թթ.) օրոք, բայց մեկ տարի անց նա մահացել էր, իսկ տաճարի կառուցումը շարունակելու և ավարտելու գործը Տրդատ ճարտարապետն իրականացրել էր Գագիկ 1-ին թագավորի (990-1020 թթ.) կնոջ՝ Կատրանիդե թագուհու հովանավորությամբ: Եկեղեցին օծվել է 1001թ.՝ ի նշանավորումն Քրիստոսի ծննդյան հազարամյակի:

Մայր տաճարը Անիի միակ պաշտամունքային օբյեկտը չէր, որ ձոնվել էր Սուրբ Աստվածածնին: Լեոն, նկարագրելով անմատչելի այն ժայռաբլուրը, որտեղ գտնվել է հին Անի բերդը, ավելացնում է. «Այդտեղ էր, ինչպես կարծում են, հայոց ամենագլխավոր և ամենաժողովրդական աստվածուհու՝ Անահիտի տաճարը... Այս ժայռի վրա էլ, ուրեմն, Լուսավորիչը կառուցած պիտի լինի եկեղեցի: Այժմ էլ (սրանից հարյուր տարի առաջ –Լ.Պ.) այնտեղ երևում է կարմիր քարերից շինված մի գեղեցիկ եկեղեցի, շրջապատված փոքրիկ մատուցներով»<sup>2</sup>: Ապա նա ավելացնում է. «Եկեղեցու մի պատի վրա, խորհրդավոր տառանջաններով ծածկված մի քար կա»<sup>3</sup>: Անվանի պատմաբանը իր վերջին դիտողությամբ, կարծես, շեշտում է տեղում՝ հին Անիում, Անահիտ դիցուհուն ձոնված նախաքրիստոնեական սրբավայրի գոյության փաստը: Եկեղեցու վերաբերյալ ավելի հստակ է արտահայտվում անվանի ճարտարապետ Վ. Հարությունյանը: Նա գրում է. «Միջնաբերդի սահմաններից դուրս, նրանից ավելի հարավ, եռանկյունաձև հրվանդանի ամենածայրին, որ գտնված է Ախուրյան գետի գալարով, միայնակ բարձրանում է, այսպես կոչված, Աղջկա բերդի եկեղեցին: Տեղում գտնված շինարարական մի արձանագրությունից իմանում ենք, որ այս ավանդապաշտական տեղում դեռ հայերի հեթանոսական ժամանակներից կանգնած է եղել Անահիտ աստվածուհու տաճարը: Գրիգոր Լուսավորիչը, քանդելով այն, տեղում կառուցել է եկեղեցի: Ավելի ուշ՝ Իվանե և Չաքարե Չաքարյան եղբայրների օրոք (12-13-րդ դդ.), վերջինի տեղում կառուցվել է նոր եկեղեցի...»<sup>4</sup>:

Հայտնի է, որ հեթանոս հայերի Անահիտ դիցուհու շատ գծեր նրանց քրիստոնյա սերունդները վերագրել էին քրիստոնեական Աստվածածնին, իսկ նրա պաշտամունքային օբյեկտները, վերածելով քրիստոնեական սրբավայրերի, ձոնել էին Սուրբ Աստվածածնին: Անիում նրա պաշտամունքի հնության մասին է խոսում Աշոտաշեն պարիսպներից մերս գտնվող այն եկեղեցի-մատուռը, որը կրում էր նրա անունը և հայտնաբերվել էր Ն.Մառի արշավախմբի պեղումների միջոցով<sup>5</sup>: Մայր Աստվածածնի պաշտամունքը տարածված է եղել ոչ միայն Անիի հին քաղաքում և հին ու նոր քաղաքների հարակից տարածքում (այս վերջինում էր գտնվում Մայր տաճարը), այլև նոր քաղաքում և քաղաքի արվարձաններում: Աշոտաշեն պարսպից դեպի հյուսիս, նոր քաղաքում էր գտնվում 1893թ. պեղված Աստվածամոր եկեղեցին (կոչված նաև «Հոռոմ տիրուհու եկեղեցի»)՝ Բագնայրի Անիի արևմտյան արվարձանի, վանական համալիրը բաղկացած էր չորս եկեղեցիներից, գավթից և սյունասրահից: Եկեղեցիներից գլխավորը Սուրբ Աստվածածինն էր՝ կառուցված Սմբատ Պահլավունու կողմից 1012թ.<sup>6</sup>:

<sup>1</sup> Լ ե ո, Անի, Տղավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Եր., 1963, էջ 153:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 267:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 267, ծան. 1:

<sup>4</sup> Վ. Հ ա թ ո թ յ յ ո լ ն յ ա ն, Անի քաղաքը. Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից, Եր., 1964, էջ 58:

<sup>5</sup> Լ ե ո, նշվ. աշխ., էջ 252:

<sup>6</sup> Վ. Հ ա թ ո թ յ յ ո լ ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 66:

<sup>7</sup> Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Բագնայր, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Եր., 1976, էջ 198-199:

Բագրատունի թագավորների օրոք, և հետագայում այս եկեղեցին մեծ հռչակ էր վայելում: «Ապացույց՝ այն անշարժ կալվածքները, որոնք Անիի զանազան կողմերում էին գտնվում և նվիրված էին Բագնայրի Ս. Աստվածածին եկեղեցուն»<sup>8</sup>: Ամենայն հավանականությամբ, այստեղ ևս Մայր Աստվածածնի պաշտամունքին նախորդել է հեթանոս հայերի Մայր դիցուհու՝ Անահիտի պաշտամունքը, որովհետև «այս տեղի հին անունն է Բագնայր, ուր եղել են բազիլիկներ՝ մասնավորապես այժմ գոյություն ունեցող քարայրերի մոտ»<sup>9</sup> և «քրիստոնեության մուտքը բոլորովին չէ ոչնչացրել տեղի կրոնական նշանակությունը, այլ, ինչպես և ուրիշ տեղերում, ծառայեցրել է նրան իր նպատակներին»<sup>10</sup>:

Մայր դիցուհու պաշտամունքի հետ կապված առավել խոր արմատներ, մեր կարծիքով, բացահայտում է Անիի հյուսիսային արվարձանի *Իզաձոր* անունը: Լեոն չէր ընդունում *Իզաձոր* տեղանվան *Այգեձոր* ստուգաբանությունը, որովհետև Իզաձորը «այնպիսի չոր ու այրված մի տեղ է, ուր ոչ մի ծառ չէր էլ կարող արմատ բռնել... Լեռկ հող է երևում ամեն տեղ, կարծես թե մանրած կավիճ է ցանված: Իսկ ձորի կողերը մոխրագույն ապառաժներ են»<sup>11</sup>: Ուրեմն, ի՞նչ կարող է նշանակել *Իզաձոր* տեղանունը: Կարծում ենք, որ այն հստակ ստուգաբանություն ունի և կազմված է *Էզ-ա-ձոր* բաղադրիչներից (*շեշտագուրկ է>ի*): *Էզ*-ն այստեղ մատնացույց է անում հեթանոսական Անահիտի նախատիպ հանդիսացած իզական այն աստվածությանը, որը կարող էր ընկալվել ինչպես մարդակերպ, այնպես էլ՝ կենդանակերպ (հմմտ. *երինջ* «էգ հորթ, կով», բայց նաև՝ «հարս»): Ըստ երևույթին, *Իզաձոր* տեղանվան մեջ առկա են նախնադարից եկած առասպելաբանական այն պատկերացման հետքերը, ըստ որի էգն ու արուն, ձորն ու սարը առասպելաբանական մտածողությամբ ըմբռնվում էին իմաստաբանական հակադարձ այնպիսի կապի մեջ, ինչպիսին դրսևորում էին նաև մայր-հայր, երկիր-երկինք, մերթև-վերև, անձավ-ժայռ և հակադրամիասնական ընկալված այլ գույգերը: Անձավի և ձորի առասպելաբանական նույնացման և դրանց իզական սկզբունքը կրող օբյեկտներ ըմբռնվելու տեսանկյունից հետաքրքրական է առանձնապես Անիի և նրա շրջակայքի օրինակը: Հայտնի է, որ վերերկրյա Անիից բացի գոյություն ունեին նաև ստորերկրյա-անձավային Անի, որը «առաջինից ավելի մեծ ու ընդարձակ է»<sup>12</sup>:

Նախնադարյան և նախնադարից եկող առասպելաբանական պատկերացումների համաձայն, քարանձավն ընկալվում էր երկրի և նրան անձնավորող իզական աստվածությունների մանկածնության վայրը, ծոցը, գոգը, գիրկը, բայց նաև՝ անդրշիրիմյան աշխարհի մուտքը և այլն<sup>13</sup>: Անիի և նրա շրջակայքի քարանձավները ոչ միայն բնակարաններ էին, այլ նաև դամբարաններ՝ մուտքեր դեպի անդրշիրիմյան աշխարհ: Դրանցից պեղվածների մեջ ավելի կատարյալը Բագնայրի ժայռափոր բազմահարկ դամբարաններն էին: Տիգրան Հոնենցին պատկանող մի դամբարանի պատերը ծածկված են կրոնական և աշխարհիկ բովանդակության որմնանկարներով<sup>14</sup>: Այս դեպքում ևս կարելի է խոսել անձավների և Մայր դիցուհու պաշտամունքի սերտ կապի մասին, որովհետև վերջինս ուղղակի կապի մեջ էր դրված անդրշիրիմյան աշխարհի հետ, հանդես գալով միաժամանակ ծնող և կործանող, մեռցնող և հարություն տվող սկզբունքները կրող աստվածության դերում: Անիի անձավները նաև մթերանոց-պահեստներ էին և արտադրական բազմատեսակ գործունեության օբյեկտներ<sup>15</sup>: Այս առումներով ևս անձավների պաշտամունքը բաղադրամասերից մեկն էր Մայր դիցուհու բազմաշերտ և բազմաբովանդակ պաշտամունքի, որովհետև Մայր դիցուհին, լինելով հող-երկրի ոգեղեն արտահայտությունը, անձնավորում էր բերրիությունն ու պտղաբերությունը, ուստի և նախապես նա էր հանդես գալիս բարիքներ արտադրողների հա-

<sup>8</sup> Լ. Ե. Ն., *նշվ. աշխ.*, էջ 272:

<sup>9</sup> Թ. Թ. Ռ. Ս. մ. ան. յ. ա. ն., *Նյութեր հայկական ճարտարապետության, Եր., 1942, էջ 310*:

<sup>10</sup> Լ. Ե. Ն., *նշվ. աշխ.*, էջ 272:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 201:

<sup>12</sup> Նույնը:

<sup>13</sup> В. Т о п о р о в, Пещера, "Мифы народов мира", т. 2, М., 1988, стр. 311-312.

<sup>14</sup> Վ. Հ. ա. ռ. թ. յ. յ. ն. յ. ա. ն., *նշվ. աշխ.*, էջ 36:

<sup>15</sup> Լ. Ե. Ն., *նշվ. աշխ.*, էջ 201, 206, 218, 273:

սարակական դասի (հողագործներ, անասնապահներ, ապա մաև՝ արհեստավորներ, առևտրականներ) հովանավորի դերում<sup>16</sup>:

Ի հաստատումն վերջին ասվածների, մեկ անգամ ևս անդրադառնանք Մայր դիցուհու հնագույն մակդիրներից մեկը կրած Իգաձորին: Ինչպես Լեոն է գրում. «Իգաձորը... մի ժամանակ եռուն ու աղմկալից է եղել իբրև առևտրական շուկա: Իսկ թե այստեղ շուկա է եղել, ցույց են տալիս այրերը, որոնցից շատերը խանութներ էին: Այժմ էլ, մի հայացքով կարելի է ճանաչել այդ խանութները, նրանք փորված են մոխրագույն կակուղ ժայռերի մեջ, ունեն դարակներ ապրանքների համար... Այս ձորը, իհարկե, միակ շուկան չէր: Այնտեղ, քաղաքի մեջ էլ կա շուկա: Բայց այնտեղ չկար, չէր կարող լինել այնպիսի լայնարձակ ազատություն: Գուցե ավելի գյուղական էր Իգաձորի շուկան: Բայց այստեղ էլ, անշուշտ, խոնավում էին ամեն կողմից եկած վաճառողներ և զնողներ: Այստեղ միայն շրջակա գյուղացիները չէին պարպում իրենց սայլերը, կանգնեցնում իրանց հոտերը»<sup>17</sup>: Ուշադրության է արժանի այն հանգամանքը ևս, որ Անին մայրաքաղաք դարձրած Բագրատունի թագավորները, բացառությամբ մեկի, թե՛ զինվորական գործի փայլուն ներկայացուցիչներ էին, թե՛ մեծ տնտեսավարներ: Երկրորդ դեպքում, ըստ երևույթին, գործ ունենք տեղական հին ավանդույթի շարունակական պահպանման հետ: Այսպես, ըստ Ասողիկի (Ստեփանոս Տարոնեցի), Սմբատ 2-րդ թագավորը «հացի և զինու շատ պաշարներ ուներ: Նույն Ասողիկը հաղորդում է և այն, որ մեծագործ, գոռոզ թագավորը Անիում խոտի մեծ ամբարանոց ուներ, որ հավաքված էր տարիներով: Հողի մարդ էին ամենքը»<sup>18</sup>:

Մայր դիցուհին Անիում իր տոտեմական մախատիպերից մեկի հիշատակն էլ թողել է ի դեմս Անիի զինանշան եզ առյուծի: Գա Անիի ամենամեծ բարձրաքանդակն է և գտնվում է երկրորդ պարսպի վրա, առաջինի մուտքից ոչ հեռու: Նրա վերաբերյալ Լեոն գրում է. «Ասում են, թե Բագրատունիների զինանշանն է առյուծը... Բայց ո՞վ կարող է հաստատապես ասել, թե ճիշտ որ առյուծն էր Բագրատունիների դրոշմը: Ոչ ոք չէ հաղորդել մեզ այդպիսի տեղեկություններ»<sup>19</sup>: Իսկապես, եթե այդ առյուծը ոչ թե Անիի, այլ Բագրատունիների զինանշանը լիներ, ապա անկասկած էզ չէր լինի: Բացի դրանից, եթե մա Բագրատունիների զինանշանը լիներ, ապա սելջուկ-բուրքական նվաճումներից հետո Անիին տիրացած և շուրջ 125 տարի (մինչև 1199 թ.) այստեղ իշխած մահմեդական Շադդադյանները այդ զինանշանը չէին պահպանի, որովհետև դրանով իսկ անեցիների հիշողության մեջ թարմ կպահեին հիշատակը այն օրերի, երբ Անիի տերերը Բագրատունիներն էին՝ հայոց քրիստոնյա թագավորները:

Էզ առյուծի հետ Մայր դիցուհու առասպելաբանական գուգորդման տեսանկյունից հետաքրքրական է այն փաստը, որ Ասորեստանի Ասարհադդոն թագավորը մ.թ.ա. 673 թ. Շուբրիա (հայկական Աղձնիք) հղած մամակում ուղղակի մույնացնում է նրանց: Ասարհադդոնը Շուբրիայի թագավորին կոչ էր անում վերադարձնել իր երկիր ապաստանած ասորեստանցի փախստականներին՝ գրելով. «Հրամայիր մունետիկին կանչել քո երկրում գտնվող այդ մարդկանց, հավաքիր նրանց, ոչ մի տղամարդու չթողնես և [...] էզ առյուծի առջև՝ մեծ տիկնոջ, պարտադրիր նրանց գնալ տաճար... իմ սուրհանդակի հետ նրանք թող բռնեն Ասորեստանի ճանապարհը և ներված կլինեն»<sup>20</sup>: Ինչպես Ս. Հմայակյանն է նկատել տալիս, «այստեղ Շուբրիայի գլխավոր դիցուհին անվանված է «էզ առյուծ» և «մեծ տիկին», իսկ նրա տաճարը ընկալված է որպես կառույց, ուր մեղապարտը կարող էր ապաստան ստանալ»<sup>21</sup>: Ի դեպ, ոչ միայն հայկական լեոնաշխարհի, այլև հարևան Փոքր Ասիայի և հյուսիսային Միջագետքի հնադարյան բնակիչների առասպելաբանական պատկերացումներում կատվազգի

<sup>16</sup> Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Դոկտորական ատենախոսության սեղմագիր, Գյումրի, 2001, էջ 12, 14, 24:

<sup>17</sup> Լ ե ո, նշվ. աշխ., էջ 202:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 273:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 197-198:

<sup>20</sup> Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 43:

<sup>21</sup> Նույնը:

վայրի կենդանիները՝ առյուծներ, ընձառյուծներ, հովազներ և այլն, ըմբռնվում էին Մայր դիցուհու հետ իրենց ունեցած սերտ կապի մեջ<sup>22</sup>:

Այսպիսով, թե՛ Մայր դիցուհու ու նրա նախնադարյան նախատիպերի, թե՛ նրա հետնորդների՝ հեթանոսական Անահիտ դիցուհու և քրիստոնեական Սուրբ Աստվածածնի պաշտամունքների, Անիում և նրա շրջակայքում հազարամյակներ շարունակ հարատևելու մասին են խոսում:

1. այստեղ անհամար անձավների՝ պաշտամունքային տեսանկյունից իզական սկզբունքը կրող օբյեկտների գոյությունը,
2. Անիի զինանշանում ներկայացված է գ առյուծի՝ նույն Մայր դիցուհու տոտեմական նախատիպը և նրա՝ սրբազան կենդանին համարվելու փաստը,
3. *Իզածոր* և *Բազնայր* տեղանունների ստուգաբանությունը (վերջինս կրած ավանում էր գտնվում Սուրբ Աստվածածին հռչակավոր եկեղեցին),
4. Անիի հին քաղաքի տարածքում Անահիտ դիցուհու տաճարի երբեմնի գոյությունը,
5. Սուրբ Աստվածածնի անունը կրող եկեղեցիների գոյությունը ինչպես Անի քաղաքում, այնպես էլ նրա արվարձաններում,
6. դրանցից մեկը Անիի, ուրեմն, մաս Բագրատունյաց թագավորության, գլխավոր սրբավայրը և ամենաբարձր շինությունը լինելու (խոսքը Անիի Մայր տաճարի մասին է) իրողությունը:

Ասվածները հիմք են տալիս Անին համարելու Մայր դիցուհու պաշտամունքի հնագույն օջախներից մեկը և, ըստ այսմ, ստուգաբանելու նրա անունը: Մեզ համար ուղենիշ կարող է հանդիսանալ նախ այն հանգամանքը, որ մեծավաստակ հայագետ Ղ. Ալիշանը *Անի*-ն համարում էր Անահիտ դիցուհուն տրված անվանումներից մեկը<sup>23</sup>: Սրա հետ միասին, երբ ի նկատի ենք առնում, որ Դարանաղի գավառի համանուն սրբավայրն ուներ իր անվան *Հանի* տարբերակը<sup>24</sup> և, որ հայերեն մի շարք բառեր ունեն իրենց նախածայն *հ*-ով և առանց դրա տարբերակները, ապա, ամենայն իրավամբ, մեր *Անի*-ն կարող ենք համարել հայերեն *հան*/հանի «տատ, մեծ մայր» բառի տարբերակը: Դրանք սերում են *հ.-ե.* նախալեզվի \*an-/\*Han- «տատ, հոր մայրը» արմատից: Հմմտ. իսբ. *hannaš* «տատ» (որից կրկնաբանությամբ *Hannahanna* դիցուհու անունը), հուն. *άννις* հրգ. *ana* և այլ լեզուների համապատասխան բառերը<sup>25</sup>: Ուրեմն, Անին իր անունն ստացել էր Մայր դիցուհու պաշտամունքի կենտրոններից մեկը լինելու պատճառով:

*Անի* տեղանվան այսպիսի ստուգաբանության ճշմարտացիության օգտին կարող է վկայել նրան տրված «խնամք» բացատրությունը և: Վարդան Բարձրաբերդցին գրում է. «գքադաքն Անի, որ կոչի խնամք»<sup>26</sup>, իսկ միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում կարդում ենք «*Անիացեալ* – խնամեալ, կամ խնայեալ»<sup>27</sup>: *Խնամ*/ք/ բառի բացատրություններից են. «հոգաբարձութիւն, նախահայեաց հոգողութիւն, պահպանութիւն, հովանաւորութիւն, դարման, գութ, սեր»<sup>28</sup>, «հոգատարութիւն, հոգացողութիւն, ջանադրութիւն»<sup>29</sup>, «ուշադրութիւն, հոգատարութիւն, հարկավոր օգնութիւն մատակարարում, միջոցներ, որոնք ձեռք են առնվում հիվանդին օգնելու՝ բժշկելու համար»<sup>30</sup> և

<sup>22</sup> *Е. А н т о н о в а, О характере религиозных представлений неолитических обитателей Анатолии, "Культура и искусство народов средней Азии в древности и средневековье", М., 1979, стр. 25-27, 30-31; М. Хачикян, Хебат, "Мифы народов мира", т. 2, стр. 586.*

<sup>23</sup> Ղ. Ալիշան, *Հին հասարակ կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 47:*

<sup>24</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Եր., 1981, Բ, խց. Գ, խե:

<sup>25</sup> Հ. Ա ճ ա ղ ա ն, *Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 33; Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, стр. 766.*

<sup>26</sup> Մեծիճ Վարդանայ Բարձրաբերդցույ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1960, էջ 117-118:

<sup>27</sup> Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի, Եր., 1975, էջ 21:

<sup>28</sup> Նոր Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 949:

<sup>29</sup> Հ. Ա ճ ա ղ ա ն, *նշվ. աշխ.*, հ. 2, Եր., 1973, էջ 378:

<sup>30</sup> Սո. Մ ա լ խ ա ս յ ա ն, *Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 272:*

այլն: Ինչպես տեսնում ենք, *Անի* –ի բացատրությունն հանդիսացող *խնամք* բառի բերված բոլոր իմաստներն էլ այս կամ այն չափով վերաբերում են Մայր դիցուհու և նրա հետևորդ հեթանոսական Անահիտի հասարակական ֆունկցիաներին: Հիշենք դեռևս հեթանոս Տրդատ 3-րդի հրովարտակը, որտեղ, ըստ Ազաթանգեղոսի, ասված էր. «Ողջոյն հասեալ եւ շինութիւն դիցն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, *խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ*, եւ քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս»<sup>31</sup>: Նույն Ազաթանգեղոսի երկում Անահիտ դիցուհին որակվում է նաև հետևյալ կերպ. «*Բարեբար ամենայն մարդկան բնութեան*», «*վառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ*», «*մեծն Անահիտ, որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց*»<sup>32</sup>: Այդպիսին են եղել նաև թե՛ Անիի Անահիտը, թե՛ այստեղ նրան հաջորդած Սուրբ Աստվածածինը: Այդպիսին էր լինելու նաև նախնադարյան Անիում պաշտված և նրան իր անունը տված Մայր դիցուհին:

## СЛЕДЫ ОДНОГО ДРЕВНЕГО КУЛЬТА В АНИ

\_\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_\_ *Л. Петросян* \_\_\_\_\_

В средневековой столице Армении Ани широкое распространение имел культ Святой Богородицы. Ее имя носил анийский кафедральный собор. Культ Богородицы предшествовал здесь языческий культ Анаит-Богоматери древних армян. Ее храм, находившийся на возвышенности "Девичьей крепости", после принятия христианства был разрушен, а на его месте была построена церковь.

И богиня Анаит в Ани имела своего предшественницу. Известно, что древнейшая мифология доантропоморфна, а чаще зооморфна. Известно также, что герб города Ани-львица. Она является священным животным и зооморфным прототипом многих богинь, в особенности богинь-матерей, которые часто изображены стоящими на львице, пантере, и пр. Неслучайно, что один из кварталов в Ани носил название *Игадзор* ("Ущелье самки").

Сказанное дает основание в основе топонима *Ани* видеть и.-е. корень \*an-/\*Ḥan-"бабушка, мать отца" (ср. арм. *հան*, *հանի*, греч. *аннис*, "бабушка" и т.д.). В этом аспекте интересно, что по Г.Алишану, Анаит у древних армян также носила имя *Ани* (ср. имя хеттской богини *Ханна-ханна* < ханнаханна < и.-е. \*Ḥan-).

<sup>31</sup> *Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1983, ԺԲ, 127:*

<sup>32</sup> *Նույն տեղում, Ե, 53, Ե, 59:*

## Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ

### ԽԱՉԱՏՈՒՐ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐ

18-րդ դարի հայ ժամանակագիրներից է նորջուղայեցի Խաչատուր արեղա Սահակյանը, որը պատմագրության մեջ հայտնի է «Ջուղայեցի» մականունով: Ուսումնառությունը ստացել է տեղի Սբ. Փրկչի (Հրաշակերտ) վանքում, իսկ այնուհետև եղել է Ամենափրկիչ վանքի միաբանության գործիչներից մեկը: Մահացել է հավանաբար 1795թ., Բասրայում, ուր գնացել էր իբրև միաբանության նվիրակ<sup>1</sup>:

Խաչատուր Ջուղայեցին առանձնակի կրթություն չի ստացել: Այս առումով նա գրում է. «Ձի ո՛չ էի ես տրուպ թշուառագոյն վատաբաղոս կրթեալ և հրահանգեալ ի յիմաստս համալսարանի քերթողաց, և ո՛չ ի ճեմարանս վսեմագոյն իսկ հզօր սոփեստացէի արդեօք բնաւ մարգեալ»<sup>2</sup>:

Պատմագրության մեջ զգալի հետաքրքրություն է ներկայացնում նրա «Պատմութիւն Պարսից» երկը, որի էջերում հավաքվել ու համարակալվել են Իրանի պատմության վերաբերյալ հայկական պատմագրական հուշարձաններում ամբարված բոլոր տեղեկությունները: Այն իսկապես ժամանակագրություն է, և միանգամայն ճիշտ է նշում «Պատմութիւն Պարսից»-ի հրատարակիչ Բ. Աղավելյանը, որ իսկապես Խաչատուրը ոչ թե պատմություն է գրել, այլ մի ժամանակագրություն<sup>3</sup>: Այս ամենը հաստատում է նաև ինքը՝ Խաչատուր Ջուղայեցին. «Այլ ո՛չ ապաքէն զգործս՝ և զարութիւնս նոցա ուրոյն վիպելով, զորոց որք նախ քան զմեզ էին՝ գեղեցիկ և սեթևեթեալ ոճով գրեցին. այլ և եթ միայն զանուանս նոցա յիշատակելով և եթ արդեօք մարթ ինչ իցէ՝ և զթիւս ամաց թագաւորելոյն նոցա, այսինքն՝ եթ յո՛րում ամի, և քանի ամ թագաւորեցին»<sup>4</sup>:

«Պատմութիւն Պարսից»-ը հեղինակը համարում է առաջին հատոր, որը սկսվում է Կյուրոսից՝ 559 Ջ. ա. և հասցվում է մինչև Քերիմ խանի մահը՝ 1779թ: Երկրորդ հատորի մասին պատմիչը առաջին հատորի նախադրության մեջ գրում է. «Իսկ զհատորն երկրորդ ունի յինքեան պարունակեալ զվէպս Պարսից, և Եկբատանացոց աշխարհի, այսինքն փարսստանայ և արաբստանայ. զոր ի մահու Քեարիմ իշխանի Պարսից, սկսայ ուրոյն վիպել մի ըստ միոջէ շնորհիւ Տեառն՝ զհամայն անցս՝ զորս անցեալ փոթորկարար պտուտկեցին ի կալուածս սահմանաց Պարսից աշխարհի, մինչև ուր ուրեք կամեցեալ հաճեսցի Տէր՝ յամբոկ արարեալ եզերեցից զկիր առնութիւնս իմ և զայլն»<sup>5</sup>: Նա նպատակ է ունեցել գրելու նաև երկրորդ հատորը, բայց չի հասցրել:

Փաստորեն երկասիրության երկրորդ մասը Քերիմ խանի պատմությունն է, որը Ջուղայեցին գրել է որպես ժամանակակից և ականատես: Ըարադրանքը որոշ չափով կրում է ժամանակագրական բնույթ: Երբ նյութն առատ է, Խաչատուր Ջուղայեցին պատմությունն ավելի մանրամասն է շարադրում, իսկ երբեմն ընդամենը միայն թվարկում է թագավորներին ու նրանց տարեթվերը:

Առաջին հատորի նյութը Ջուղայեցին վերցրել է հայ պատմագիրներից ու պարսից աղբյուրներից: Վերջիններիս կապակցությամբ նա գրում է. «Ուստի չոգայ առ զիտունս պարսից՝ ... բերին առաջի իմ զմեծ մատեան մի կարի թաւարձի,

<sup>1</sup> Լ. Բ ա բ ա յ ա ն, Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Եր., 1984, էջ 185:

<sup>2</sup> Խաչատուր Արեղայի Ջուղայեցոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 4:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ Թ:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 14-15:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ ԻԳ:

որ իբր ըստ դիտման և ըստ կարծեաց մտաց նոցա՝ էր Սուփեր ճշմարտաճառ վիպագրութեան որոց նախնեաց, և ստոյգ գրուցատրութիւն յառաջնոց»:<sup>6</sup>

Շահ Արասի կապակցութեամբ Ջուղայեցիին գրում է. «Արդ՝ ահաւասիկ մինչև ցաստ ծայրաքաղ արտահանեալ հաւաքեցի ի պատմութեանց Շահ Արասայ՝ ստոյգ դիտողութեամբ ի մերոց և ի պարսից մատենից: Բայց ոչ գրողորն համանգամայն գրեցի, այլ ի բիւրոց և յանբաւից գործոց նորա, զյոյժ հաւաստին և զկարևորն վասն իմոյ իսկ տենչալոյս բացայայտեալ զեկուցի»<sup>7</sup>:

Իսկ շահ Թահմազի և Նադիրի մասին նյութը վերցրել է անգլիացի վաճառական միստր Հանուեից, որը Թահմազի ու Նադիրի ժամանակ եղել է Սպահանում և գրել նրանց պատմությունը: Խաչատուր Ջուղայեցիին օգտվել է այդ պատմության հայերեն թարգմանությունից<sup>8</sup>:

Խաչատուր Ջուղայեցիին նշում է, որ ինքը «բազում անգամ է ստուգել», հետո նոր գրել: Նա մեծ չափով օգտվել է Ժամանակագրություններից ու զավագանագրերից: Ջուղայեցիին մեծապես վստահում է հայկական աղբյուրներին և միաժամանակ անվստահություն է տածում պարսից աղբյուրների հանդեպ: Նա նշում է, որ երբ իր մոտ կարդացել են պարսկական մատյանը, ապա «սքանչացեալ զարմացայ» պարսիկների կուրության վրա, թե ինչպես է այդ խորամանկ ազգը հավատում այդպիսի «շաղփաղփ և շամբուշ» գրույցների: Պատմիչը նաև նշում է, որ դրանք լեցուն են «խստապաճոյճ» առասպելներով ու «ստայօղ և ցովաբան բաջադանքներով»<sup>9</sup>:

Պարսկական աղբյուրները համեմատելով միմյանց հետ՝ պատմագիրը ճշմարտացի կերպով նկատում է, որ նրանց հաղորդումները չեն համապատասխանում իրար: Անգամ չկա երկու պատմիչ կամ ժամանակագիր, որոնց հաղորդումները մման լինեն միմյանց:

Ջուղայեցու աշխատությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում, բացի պարսից թագավորների ժամանակագրություններից, տրված է նաև Նոր Ջուղայի առաջնորդների և նրանց կյանքի պատմությունը, Հովհաննես վարդապետի դավանաբանական վիճաբանությունը պարսից Սուլեյման շահի որդի Հուսեյնի հետ և այլն: Հովհաննես Մրքուզն անգամ բանավիճել է պարսից իմաստասերների և աստվածաբանների հետ: Հուսեյն շահի հրամանով Հովհաննես վարդապետը հայերեն և պարսկերեն լեզվով գրի է առել այդ բանավեճերը, որպեսզի հետագա սերունդները օգտվեն դրանցից<sup>10</sup>: Պարսից շահերի, իմաստասերների ու աստվածաբանների հետ Հովհաննես Մրքուզի ունեցած բազմաթիվ ու տարաբնույթ վեճերի արդյունքը եղավ այն, նշում է Խաչատուր Ջուղայեցիին, որ «... կակոսոցոյց զկարծրացեալ սիրտս նոցա որ ընդ մեզ, և եբարձ զթըշմամութիւնն զայն՝ զոր յառաջն ունեին զոր և մինչև ցայսօր յոյժ քաղցրութեամբ վարին ընդ մեզ»<sup>11</sup>:

Փաստորեն Հովհաննես Մրքուզը ոչ միայն համարձակ ու հայրենասեր է եղել, այլև՝ շատ զգույշ ու խելացի, որպեսզի կարողանար բանավիճել պարսից քմահաճ շահերի հետ, քանզի այդ բանավեճերում գործում էր նաև խորամանկությունն ու խարդախությունը:

Մերված լինելով Շահ Արասի կողմից Սպահան գաղթեցված հայերից՝ մատենագիրը բազմաթիվ էջեր է նվիրում հայերի բռնազաղթին: Հետաքրքրական են նաև Նոր Ջուղայում հայկական առաջին տպարանի հիմնադիր Խաչատուր վարդապետի լուսավորչական գործունեության մասին հաղորդվող տեղեկությունները: Նրա երկում արժանահավատ տվյալներ կան նաև հայկական գաղթօջախում հայերի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, նրանց կրած ազգային ու կրոնական հալածանքների, ինչպես նաև պարսից արքունիքի կիրառած հար-

<sup>6</sup> Խաչատուր արեղայի Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 21- 22:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 136:

<sup>8</sup> Լ. Բ ա բ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 187:

<sup>9</sup> Խ. Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, ... էջ 22:

<sup>10</sup> Հ. Մ ի ռ զ ո յ ա ն, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Եր., 2001, էջ 27-28:

<sup>11</sup> Խ. Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, ... էջ 205:

կային ծանր քաղաքականության մասին: Նրա երկը նաև 17-րդ դարի առաջին կեսին Նոր Ջուղայում ծավալված աղանդավորական շարժման հիմնական աղբյուրն է:

Նոր Ջուղան հանդիսացել է նաև հայ տպագրության առաջին օջախներից մեկը: Խաչատուր Կեսարացու ջանքերով այնտեղ հիմնված տպարանը առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև ամբողջ Միջին Արևելքում<sup>12</sup>:

Հանրահայտ է, թե Նոր Ջուղան ինչպիսի տեղ է զբաղեցրել Սեֆյանների քաղաքականության մեջ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, թե՛ մշակութային առումով: Իրականացնելով մեծ բռնագաղթը /1604թ/՝ Շահ Աբասը պետության կենտրոնական մարզերում վերաբնակեցրեց 10 000 հայ ընտանիքների, որոնց մեջ բացի ջուղայեցիներից կային նաև երևանցիներ, ագուլեցիներ, դաշտեցիներ, նախիջևանցիներ, թավրիզցիներ և այլն: Բայց շահը հատկապես յուրահատուկ մտեցնում ուներ ջուղայեցիների նկատմամբ: Դրա պատճառը ակնհայտ է, քանզի շահը ցանկանում էր հայ վաճառականներին ծառայեցնել իր երկրի ներքին ու արտաքին առևտուրը զարգացնելու գործին: Միաժամանակ նա ձգտում էր բարձրացնել պետության կենտրոնական շրջանների, հատկապես նոր մայրաքաղաք Սպահանի տնտեսական նշանակությունը և հարստացնել շահական զանձարանը: Այսուհանդերձ, շահի գլխավոր նպատակը հանգում էր նրան, որ հայ վաճառականների օգնությամբ իրականացվի Իրանի արտաքին առևտրի ուղին թուրքական ցամաքային ճանապարհից դեպի հարավ՝ Պարսից ծոց տեղափոխելու վաղեմի ծրագիրը: Շահը հետապնդում էր նաև ռազմավարական նպատակներ, այն է՝ Իրանի և Թուրքիայի միջև ստեղծել «մեռյալ տարածություն»՝ դժվարացնելու համար թուրքական բանակների առաջխաղացումը դեպի Անդրկովկաս ու Իրան: Մահմեդական ամբոխից հայ վաճառականների անձի ու գույքի ապահովության համար Շահ Աբասը հրապարակեց հատուկ հրովարտակ, ըստ որի վաճառական հային սպանողը ենթարկվում էր մահապատժի<sup>13</sup>:

Պատմագիրը դառնությամբ է խոսում Շահ Աբասի իրականացրած բռնագաղթի մասին, ցավով նշում «մեծ սուրգունի» կործանարար հետևանքները: Խոսելով Նոր Ջուղայում իրականացվող շինարարության մասին՝ նա գոհունակությամբ նշում է. «...ուր շինեցին ջուղայեցիք հրաշալի յօրինուածովք, և բարձրաբերձ և գեղեցկագարդ շինուածովք, և ոսկեակար՝ և զանազան երփնափայլ երանգոց վայելչութեամբք զտունս և զյարկս բնակութեան իւրեանց. ըստ որում և զորոց պայծառութեանց ի տեսողաց գերահոչակ իսկ է արդեօք»<sup>14</sup>:

Եթե Շահ Աբաս I-ից հետո նրա գահը ժառանգած շահ Սեֆին (1629-1642թթ) և շահ Աբաս II-ը (1642-1666թթ) իրանահայության նկատմամբ վարում էին հարաբերականորեն բարյացակամ քաղաքականություն, ապա շահ Սուլեյմանի (1666-1694թթ) և նրա հետևորդ շահ Սուլթան Հուսեյնի (1694-1722թթ) տիրապետության շրջանում Սեֆյանների քաղաքականությունը կտրուկ փոխվեց: Կառավարությունը ծանր հարկեր է դնում հատկապես Նոր Ջուղայի վրա, տարբեր պատրվակներով սկսում է չարաշահումներ կատարել հայերի նկատմամբ: Սուլթան Հուսեյնը անգամ հրապարակեց մի օրենք, ըստ որի հային սպանող մահմեդականը կարող է ազատվել պատժից, որպես արյան գին վճարելով ոչ մեծ դրամական տուգանք<sup>15</sup>:

Նոր Ջուղան ծանր օրեր ապրեց հատկապես աֆղանների արշավանքի ժամանակ, և ջուղայահայությունը սկսեց ելք որոնել ստեղծված դրությունից դուրս գալու համար<sup>16</sup>: Ջուղայեցիները ցավով նշում է. «Բայց զկնի բազմաց ամաց ի

<sup>12</sup> Վ. Բ ա յ ր ու ղ յ ա ն, *Իրանն այսօր*, 1999, էջ 278:

<sup>13</sup> В. Б а й б у р т я н, *Армянская колония Новой Джульфы в XVII веке*, Ер., 1969, стр 19.

<sup>14</sup> Խ. Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից... էջ 102:

<sup>15</sup> Վ. Բ ա յ ր ու ղ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 273-274:

<sup>16</sup> Ա. Գ ա ս պ ա ղ յ ա ն, *Հայ-իրանական հարաբերությունները XVIII դարի 20-30-ական թվականներին, ԳՄԻ հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված քրիստոնեության 1700-ամյակին, Ձեկուցումների հիմնադրույթներ*, Եր., 2001, էջ 14-15:

վերայ անցանելոց՝ բոլոր Ջուղայի հարուստք բնակիչքս զբիրակերպ նեղութիւնս ի յԱղուանից, և ի Նադեր խրոխտ արքայէն, և ի յայլոց ամենի չարագոյն իշխանաց և մարգապանաց երկրիս կրեալք. փախեան ամենեքեան ի քաղաքէս... Իսկ յարդիս հազիս գտանի ի Նոր Ջուղայս՝ երեք հարիւր տունք բնակիչք ի հայոց ազգէս. իսկ շատքն ի միջի մերում բնակելոցն՝ են ի յազգէն պարսից, որք օր ըստ օրէ գան ի քաղաքէն և սեպհականեն զկալուածս բնակութեան մերոյ և ի վերայ մեր իսկ բռնացեալ կոփահարեն»<sup>17</sup>:

Պատմագիրն ատելությամբ է խոսում Շահ Աբասի մասին, նրան համարում է «ամենախարդախ նենգաւոր օձն»<sup>18</sup>: Վերջինս արտաքուստ բարեկամ է ձևանում հայերին, սակայն ներքուստ դավեր է նյութում նրանց դեմ: Ջուղայեցին վնասակար է համարում այն օրենքը, ըստ որի մահմեդական դարձած հայերը միայնակ կարող էին տիրանալ հայրական ժառանգությանը:<sup>19</sup>

Ջուղայեցին խոսում է նաև Նոր Ջուղայի եկեղեցիների մասին, որոնք կառուցվում էին Շահ Աբասի հրամանով. «Եւ մերք ընդ մերք ինքն Շահաբաս գայր՝ և կանգնէր յանդիման ճարտարացն շինողաց, և հրամայէր գեղեցիկ յօրինուածովք շինել, և երփներանգ գունովք, և պճնագարդ տեսեամբ զարդարել»<sup>20</sup>: Դրանով շահը գրավում էր հայերի համակրանքը, որոնք մնում էին Պարսկաստանում և սիրահոծար ծառայում պարսից արքունիքին:

Խաչատուր Ջուղայեցին Առաքել Դավրիժեցու մման բացահայտում է և քննադատում նաև Շահ Աբասի հեռագնա նպատակները:

Պատմագիրը զայրույթով է նշում, որ հայերը այդ ամենի նկատմամբ անզգա են և քարացած են իրենց մոլորության մեջ, չեն պայքարում, չեն ձգտում թոթափելու պարսից լուծը:<sup>21</sup> Մի շարք ուսումնասիրողներ բարձր են դասել Ջուղայեցու այս մարտահրավերը և ամենայն իրավամբ դա համարել են սկզբունք հայ այն քաղաքական գործիչների համար, ովքեր այդ պայքարի առաջամարտիկները եղան:<sup>22</sup>

«Պատմութիւն Պարսից»-ի երկրորդ մասում տրված են Նադիր շահից հետո Պարսկաստանում ստեղծված անիշխանության ժամանակաշրջանի պատմությունը, գահակալական կռիվները, կենտրոնախույս ուժերի ակտիվացումը, ինչպես նաև Քերիմ խանի գործունեությունը: Այս մասին Ջուղայեցին գրել է որպես ականատես և նշում է. «Արդ ժամ է մեզ այսուհետեւ եւ զերկրորդ մասն վճարել, որ է ճիշտ պատմութիւն գործոց Քերիմ խանի մինչեւ ի մահ նորա բովանդակելով»<sup>23</sup>:

Ջուղայեցու երկուն զգալի տեղ է հատկացված նաև Նադիր շահի գործունեությանը: Յույց է տրված, թե ինչպես աննշան տոհմից սերված ռամիկ ուղտապանը կարողացել է հասնել այդ փառքին. «Այլ ստոյգ է՝ զի սա ի ռամկաց և յաննշան տոհմից վերաբուսեալ շառաիղեցաւ, քանզի և հայր նորա էր թաղեացագործ՝ որով աշխատեալ ուտէր զհաց իւր, և անուն նորա Իմամ Դուլի»<sup>24</sup>:

Հայտնի է, որ Նադիրը միայն նվաճող չէր: Նա ունեցել է մեծ գաղափարներ: Հասկանալով, թե ինչ չարիք է պատճառում կրոնական խտրականությունը, նա ձգտում էր իրեն հպատակված աշխարհում ստեղծել մի միասնական կրոն, որը պարտադիր էր լինելու թե՛ քրիստոնյայի, թե՛ մահմեդականի և թե՛ հրեայի համար: Շահը անգամ հրամայել էր թարգմանել Ավետարանը և հրեական Թալմուդը, որպեսզի ուսումնասիրվեին բոլոր կրոնները, և հիմքեր մշակվեին նրանց

<sup>17</sup> Խ. Ջուղայեցույ Պատմութիւն ..., էջ 102-103:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>22</sup> Հ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ.2, Եր., 1964, էջ 595-596:

<sup>23</sup> Խ. Ջուղայեցույ Պատմութիւն ..., էջ ԺԱ-ԺԲ:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 255:

միացման համար<sup>25</sup>: Նույնիսկ Նադիրը մի քանի հայ հոգևորականների պատվիրել էր հայերենից պարսկերեն թարգմանել 4 սուրբ գրքերը և արաբերենից պարսկերեն՝ Ղուրանը:

Այդ աշխատանքի համար շահը հարյուր թուման պարզև էր տվել թարգմանիչներին: Պատմագիրը այս մասին գրում է. «Եւ թեպէտ դոյզն ինչ էր գոր նա պարզևեաց նոցա, որ և չև ևս էր բաւական ծախուց ճանապարհին. սակայն աստանօր զարմանք իմն մեծ երևի. քանզի ի տատասկէ թուզ քաղեն, և ի մոբենուջ խաղող»<sup>26</sup>:

Հայրենասեր պատմագիրը քննադատում է Նադիրին և խարազանում նրա գործունեությունը: Նա Նադիրի բռնակալությունն ավելի դաժան է համարում, քան աֆղաններինը:<sup>27</sup> Բայց միաժամանակ բարձր է դասում Նադիրի ռազմական ունակություններն ու քաջությունը. «Արդ՝ երանի՜ թէ Նատըր արքայն, - դառնացած գրում է Ջուղայեցին, - ըստ հաւասար քաջութեան իրոյ՝ բարոյական առաքինութեամբ պերճացեալ իցէր և բարզաւաճեալ... Բայց նա այնքան չափազանցաբար ի յանողորմութիւնս և յամբարտաւանութիւնս հակեալ ձգտեցաւ, մինչ զի ասեն թէ՛ նա երբեմն զգայլս անբանս՝ սաստկապէս տուժեաց տուգանօր»<sup>28</sup>:

Պատմագիրը կանգ է առնում նաև Նադիրի կատարած բարբարոսությունների վրա, մեծ ցավով խոսում անմեղ բնակչության կոտորածների մասին. «Որպէս և յազգէս մերոյ ևս իսկ ընդ կենդանույն այրել հրամայեաց»<sup>29</sup>:

Հայտնի է, որ Նադիրի անգթությունները հրեշավոր բնույթ են կրել հատկապես Նոր Ջուղայում: Հայ վաճառականներն անընդհատ ենթարկվում էին չարաշահումների ու կեղեքումների: Հիմնական պատճառն այն էր, որ հայկական գաղթօջախը գտնվում էր Սպահանի մոտ, իսկ Նադիրը, իր կյանքի վերջին տարիներին լինելով խիստ կասկածամիտ, Սպահանը համարում էր դավադրությունների բույն և պատրաստվում էր սրի քաշել նրա ամբողջ բնակչությանը:<sup>30</sup>

Բարբախտաբար, Նադիրի մահը խանգարեց այդ հրեշավոր ծրագրի իրականացմանը: Խաչատուր Ջուղայեցին ժողովուրդներին ու երկրներին հասած բոլոր դժբախտությունները համարում է աստծու պատիժ՝ Նադիրի սպանության մասին գրելով. «Ահա՛ այսպէս անկեալ սատակեցաւ պատուհասն երկնային Նատըր՝ ի վատսուն և մի ամի կենաց իւրոց, և ի մետասան ամի թագաւորութեան իւրոյ, և վասն խստագոյն չարութեանց իւրոց՝ ո՛չ կարաց ժամանել ի բարի վաղճանի»<sup>31</sup>:

Միաժամանակ Խաչատուր Ջուղայեցին դրվատանքով է խոսել Քերիմ խանի գործունեության մասին, որը կարողացել է վերջ տալ գահակալական կռիվներին և Պարսկաստանում ստեղծել համեմատաբար խաղաղ ու կայուն վիճակ<sup>32</sup>:

Պատմագիրը նպատակ է հետապնդել շարադրել Պարսկաստանի պատմությունը սկզբից մինչև իր ապրած օրերը: Պարսկաստանի պատմության հետ կապելով հայ ժողովրդի պատմությունը՝ Ջուղայեցին բավականչափ ամբողջացնում է հայության այդ հատվածի պատմությունը:

Խաչատուր Ջուղայեցու աշխատությանը հատուկ են միջնադարյան պատմագրության շատ ներկայացուցիչների երկերում նկատվող թերությունները, շարադրանքի թեր բազմիցս կտրվում է երկարաշունչ դատողություններով, մեծ տեղ է հատկացվում դավանաբանական հարցերին, հեղինակի գնահատականները հաճախ տառապում են կողմնակալությամբ:

<sup>25</sup> С. К и ш м и ш е в, *Локоды Надир-шаха в Афганистан, Кабул и Индию, Тифлис, 1869, стр.216.*

<sup>26</sup> Խ. Ջուղայեցույ Պատմութիւն ...ի, էջ 264:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 272:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 272-273:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 268-269:

<sup>30</sup> Լ է ո, *Երկերի ժողովածու, 3, Գիրք Բ, Եր., 1973, էջ 228:*

<sup>31</sup> Խ. Ջուղայեցույ Պատմութիւն ..., էջ 270-271:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 325-326:

Չնայած այս ամենին՝ Ջուղայեցու աշխատության երկրորդ մասը, գրված լինելով իրադարձությունների ժամանակակիցի ու ականատեսի կողմից, չափազանց արժեքավոր պատմական աղբյուր է: Այն ստուգապատում աղբյուր է Պարսկաստանի ու Անդրկովկասի հատկապես 18-րդ դարի 30-70-ական թվականների ժամանակահատվածի ռազմաքաղաքական պատմության ուսումնասիրման համար:

## ТРУД ХАЧАТУРА ДЖУГАЕЦИ КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ ПЕРСИИ

\_\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_\_ *А. Гаспарян* \_\_\_\_\_

На страницах "Истории Персии" армянского историка XVIII века Хачатура Джугаеци собраны и изложены все сведения об Иране, содержащиеся в армянских историографических памятниках предшествующего времени. Критически относясь к материалам, автор обосновывает большую достоверность армянских, нежели персидских источников. Важнейшие события, происходившие в Персии, Х. Джугаеци рассматривает в сопоставлении с историей армянского народа. Особый интерес представляют его непредвзятые сведения о политике персидских шахов (Шах Абас I, Надир шах).

В целом, книга Х. Джугаеци является достоверным источником как по персидской истории, так и по военно-политической истории 30-70-х гг. XVIII века.

ԳՅՈՒՄՐԻ - ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ

Շիրակի գավառի կենտրոն Գյումրին ունի դարերի պատմություն: Առաջին անգամ Շիրակի գավառը հիշատակվում է Մարմաշենից ոչ հեռու գտնված մ.թ.ա. VIII դարի ուրարտական մի արձանագրության մեջ: Ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ն գրում է. «Խալդի աստծո մեծությամբ Արգիշտին ասում է. «Նվաճեցի Էրիախի ցեղի երկիրը, նվաճեցի Իրդանիունի քաղաքը՝ մինչև Իշկիկուլու երկիրը»<sup>1</sup>:

Արձանագրության մեջ հիշատակված «Իրդանիունի» տեղանունը Հ.Կարազյոզյանը և Ս.Պետրոսյանը նույնացնում են «Կումայրի» տեղանվան հետ: Խնդրի կապակցությամբ Հ.Կարազյոզյանը գրում է. «Իրդանիունի տեղանունը կազմված է Իրդ (գետ) բառով և Անիու հատուկ անունով (կամ Անիո): Անիո ձևը դրված է հայերենի սեռական հոլովով, որից կարելի է բխեցնել նախնական Անիա ձևը: Այս «Անիա» քաղաքի անունը հետագայում տրվել է այն գետին, որը հոսել է հիշյալ բնակավայրի մոտով Իրդ-Անիո կամ «Անիա քաղաքի գետ»<sup>2</sup>: Մ.թ.ա.XIII դարում կառուցված Իրդանիո քաղաքը գտնվել է Էրիախի երկրի կենտրոնում՝ Կումայրիի տեղում կամ նրա մոտակայքում: Հետագայում Իրդանիո քաղաքի անունը մոռացվում է: Այն հիշատակվում է արդեն քաղաքի արվարձաններից մեկի՝ Կումայրու անունով, որը տարածվում է ամբողջ Իրդանիո բնակավայրի վրա: Կումայրին Իրդանիոյի արվարձան լինելու մասին իր կարծիքը Հ.Կարազյոզյանը հիմնավորում է Կումայրի տեղանվան ստուգաբանությամբ, որի կում և այրի բաղադրիչները ունեն գրեթե միատեսակ իմաստներ՝ «գյուղ» կամ «բնակավայր»<sup>3</sup>:

Ընդհանուր առմամբ կողմ լինելով այս տեսակետին՝ Ս. Պետրոսյանը Իրդանիունին (կամ Իրդանիուն) տեղադրում է Գյումրու տարածքում և նույնացնում «Կումայրի» հնավայրի հետ: Ավելին, նա «Կումայրի» հնավայրը տեղադրում է քաղաքի արևմտյան մասում, Չարկըզի ձոր կոչվող գետակի ձախ ավիին, նշելով, որ այդ գետակը սեպագրային շրջանի Irdan-գետն է, իսկ Կումայրի հնավայրը ավիաներձ Իրդանիունի քաղաքն է<sup>4</sup>:

Հետագայում Կումայրին որպես գյուղ հիշատակվում է մ.թ. 774 թ. հակաարաբական ապստամբության ժամանակ: Ղևոնդ Պատմիչը, արձանագրում է հետևյալը. «Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն մեծ առնէր զորաց իւրոց. և ստանայր անդ զԵն և անօթս պատերազմի, և ամենայն սպառազինութեամբք, և մտերիմ զինքն երևցուցանէր զօրացն կազմիցի: Եւ որոշեալ զինքն ի միաբանութենէ նոցա՝ հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի, և սպանանէր զհրամանատար հարկին: Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց աշխարհին, և ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս»<sup>5</sup>:

Կումայրի գյուղը հիշատակվում է նաև XIII դարում<sup>6</sup>, և այնուհետև մինչ XIX դարի սկիզբը գյուղի մասին տեղեկություններ այլևս չեն հանդիպում: Արդեն XIX դարի

<sup>1</sup> Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи. Изд. АН. СССР, М., 1960, текст 133.

<sup>2</sup> Հ. Կ ա ռ ա զ յ ո զ յ ա ն, Կումայրին ըստ սեպագիր և այլ աղբյուրների, ԵՊՄԺ Հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1996, էջ 13:

<sup>3</sup> Նույնը, էջ 14:

<sup>4</sup> Ս. Պ ե տ ը ս յ ա ն, IRDANI(NI) բնակավայրի տեղադրության և անվան ստուգաբանության շուրջ, ԵՊՄԺ Հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 18-19:

<sup>5</sup> Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի Հայոց, Մանկտ-Պետերբուրգ, 1887, գլ. ԼԴ., էջ 138:

<sup>6</sup> Այդ մասին մանրամասն տես Ս. Պետրոսյան, Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական, «Գիտություն և տեխնիկա», Եր., 1983, թիվ 4, էջ 26: Հեղինակը մեջբերում է Մատենադարանի 1886 թվահամարը կրող ձեռագրից ունի Հովսեփին վերաբերող մի պատառիկ. «Ես մեղուցեալ և յետինս ի կրանատորս Ովսափս, որ էի ազգաւ եւ տոհմիս ի մեծ գեղաքաղաքէն Կումիթոյ...»:

սկզբին Կումայրի գյուղի փոխարեն հիշատակվում է Գյումրին, որը ռուսական իշխան Ցիցխանովի առաջին Երևանյան արշավանքի ժամանակ՝ 1804թ. հունիսի 10-ին, գրավվել էր գեներալ Տուչկովի կողմից<sup>7</sup>:

Հայկական աղբյուրներում Գյումրին հիշատակվում է Գիւմրի, իսկ ռուսական աղբյուրներում Գումրի ձևերով: Գյուղի նոր՝ Գյումրի անվան առաջացումն ու նշանակությունը մի շարք հակասական, երբեմն նաև անհավանական դատողությունների առիթ է տվել: Հովհաննես Խոջայանցի կարծիքով. «Գիւմրի բառը կրճատված է: Իրականում այն նշանակում է «Գումարի», որովհետև սա եղել է զօրաց գումարման տեղը Գագիկ արքայի ժամանակներում, որը նստում էր Անիում»<sup>8</sup>: Գյումրի տեղանունը յուրովի է բացատրել Կ.Գանը: «Առաջ այստեղ եղել է ոչ մեծ թուրքական ամրություն, գրում է Կ. Գանը, կամ ինչ-որ մաքսային ուղեկալ, որը ազատ անցնելու թույլտվության համար մաքս՝ «*gumruk*» էր գանձում: Այստեղից էլ գյուղը ստացել էր իր անունը՝ Գյումրի»<sup>9</sup>: Կ. Գանին համակարծիք է նաև 1854-1855 թվականների ռուս-թուրքական պատերազմի մասնակից սպաներից մեկը, որը 1854 թվականի ապրիլի 20-ին իր զինվորական օրագրում կատարել է այսպիսի գրառում. «Ալեքսանդրապոլը, ուր եղավ մեր կորպուսը, թուրքերն անվանում են Գումրի, որ նշանակում է մաքսատուն՝ «*gumruk*», որովհետև իրոք, այստեղ եղել է նրանց մաքսատունը»<sup>10</sup>:

Վերը նշված վերջին երկու հեղինակներն էլ *Գյումրի* տեղանունը թյուրիմացաբար կապում են թուրքական «*gumruk*» բառի հետ այն դեպքում, երբ թուրք-սելջուկներն Անդրկովկաս են թափանցել միայն XI դարում, իսկ Գյումրին *Կումայրի* ձևով գոյություն է ունեցել դեռևս ուրարտական ժամանակներից: Միանգամայն անընդունելի է նաև Խոջայանցի կարծիքը, թե Գյումրին «Գումարի» բառի կրճատված ձևն է: Մենք համակարծիք ենք այն պնդմանը, թե *Կումայրի* ձևն է, որ դարերի ընթացքում հնչյունական փոփոխությունների ենթարկվելով, տվել է *Կումերի-Կումիրի-Կումրի* ձևը: Վերջինս էլ, ավելի աղավաղվելով, դարձել է *Գումրի*, իսկ որոշ ժամանակ անց՝ *Գյումրի*, որը հայերենի հնչյունական օրենքներին խորթ է, բնականաբար, մերժելի ձև է:

Չժանրանալով Կումայրի-Գյումրուն վերաբերող անցքերի շարադրման վրա՝ փորձենք պարզել, թե ինչ է իրենից ներկայացրել XIX դարի առաջին կեսի Գյումրի-Ալեքսանդրապոլը պատմաժողովրդագրական տեսակետից:

Կումայրի բնակավայրը միջնադարում գտնվել է այժմյան «Չերքեզի ձոր» («Չարքզի ձոր») կոչվող վայրում<sup>11</sup>: XIX դարի սկզբին այն մի փոքրիկ գյուղ էր, որի բնակիչները զանազան հալածանքներից ապահովվելու համար «Չերքեզի ձոր» վայրից աստիճանաբար բարձրացել են բլրի վրա, որը հետագայում դարձել է ձևավորվող քաղաքի «Գեղոց մահլեն»\*: Այստեղից ներքև ավելի ուշ առաջանում է «Չորի մահլան» կամ «Չորի բողազը»՝ քաղաքի հիմնական թաղամասերից մեկը:

Ժամանակակիցները վկայում են, որ Գյումրի գյուղը XIX դարի սկզբներին գտնվել է «Չերքեզի ձորից» դեպի հյուսիս-արևելք և ունեցել է մի հին եկեղեցի: Այդ գյուղում ապրել են մոտ 30 տուն պարսիկներ և 20 տուն պարսկահայատակ հայեր, որոնք տեղավորված էին տարբեր թաղամասերում և ապրում էին հաշտ<sup>12</sup>: Կարևոր գաղթականները պատմել են, որ իրենց՝ այստեղ գալու օրերին նույն ձորի գլխին, մի հարթ տեղում գտնվում էր 100 տնից բաղկացած Գյումրին, որն ուներ սև քարով շինված մի հին եկեղեցի: Ամրոցի կառուցումից հետո գյուղն աստիճանաբար տեղա-

<sup>7</sup> Լ. Ե. Ն, *Երկերի ժողովածու*, հ. 4, Եր., 1984, էջ 206:

<sup>8</sup> Հ. Խ օ ջ ա յ Ե և Կ Գ, *Գիւմրի, «Արարատ», Էջմիածին, 1871, թիւ Թ, էջ 312:*

<sup>9</sup> Կ. Գ ան, *Опыт объяснения кавказских географических названий, Тифлис, 1909, стр. 8.*

<sup>10</sup> *Военный сборник, т. XI, отдел II, Походный дневник, 1854-1855 г.г., СПб., 1860, стр. 483-484.*

<sup>11</sup> Հ. Գ ա բ ր ի Ե Լ յ ա ն, *Լեռնական, Եր., 1984, էջ 11:*

\* *Մահլա-թաղ, թաղամաս*

<sup>12</sup> Մ. Թ ա մ ր ա զ յ ա ն, *Հիշողություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը (1938թ.), ձեռագիր, ՊԲԱ, գործ 103, Թամրազյանի նյութերը, տետր 1: Այդ մասին տե՛ս նաև՝ Կ. Մատինեանց, Ալեքսանդրապոլի վաճառականները, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1874, 2 փետրվարի, թիվ 5, էջ 3:*

փոխվել է ավելի վեր (այժմյան քաղաքի հյուսիս-արևելյան կողմը), իսկ հին եկեղեցու տեղում 1857 թվականին կառուցվել է նորը՝ Ս.Նշան եկեղեցին<sup>13</sup>: Իրենց «Տեղագրություններ»-ում Ղ.Ալիշանն<sup>14</sup> ու Պ. վարդապետ Պետրոսյանը<sup>15</sup> նշում են, թե Մարմաշենից 5-6 մղոն վերև, 1.5 մղոն հեռու Արփայի ափից, կա մի հին գյուղ՝ Կումայրին, ուր մինչև 1800 թվականը կար մահ սամրություն: Այդ գյուղն այլազգիները անվանում էին Կիւմրի կամ Գիւմրի և ուներ հազիվ 70 տուն: Լեոն ավելացնում է. «1826 թվականին Երևանի Հյուսեին Ղուլի խանի արշավանքի հետևանքով Գյումրին վերածվել էր 50 տնից բաղկացած գյուղի»<sup>16</sup>:

1801 թվականին Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո ռուսական քաղաքական շրջաններում աճեց հայկական հողերի միավորման ձգտումը: Ռազմական նպատակների համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող Գյումրին բնակամարտ չէր կարող վրիպել ռուսական զինվորականության ուշադրությունից, և ռուսական հրամանատարության ռազմական պլաններում արդեն ուրվագծվում էին բնակավայրը ռազմական հենակետի վերածելու նկրտումները:

1804 թվականին, երբ ռուսական կազակային առաջին խմբերը մտան Գյումրի, գյուղի շրջակայքն ամայի էր: Այստեղ տեղակայված կազակային կայազորի զինվորների համար գյուղի մոտ 1804թ.<sup>17</sup> կառուցվում է բնակելի թաղամաս: Կարճ ժամանակ անց այստեղ ստեղծվում է բավականին ամրացված սահմանային կայան, իսկ 1817 թվականին մի անգլիացի ճանապարհորդի այցելության ժամանակ այդ վայրն արդեն զբաղեցնում էր ռուսական բավականին մեծ մի կայազոր<sup>18</sup>: Ռուսների գորային ուժի ներկայության շնորհիվ հուսալի դառնալով՝ Գյումրին սկսում է դեպի իրեն ձգել պատերազմներից ու զրկանքներից այս ու այն կողմ ցրված հայերին: Գյումրի են գալիս ապահով անկյուն փնտրող հայերի նորանոր ընտանիքներ, որոնք տեղավորվում են «Չորի մահլայում»:

Բնակավայրի տնտեսական կյանքն աշխուժանալ սկսեց միայն 1826-1829 թվականներին, երբ նրա տարածքում տեղաբաշխվեցին մեծ թվով գաղթականներ:

Ադրիանապոլսի պայմանագրի կնքմանը հաջորդած արևմտահայերի գաղթին որոշակի կազմակերպվածություն հաղորդելու նպատակով Թիֆլիսում գեներալ Պասկևիչի կարգադրությամբ հիմնվում է հատուկ կոմիտե՝ Վրաստանի քաղաքացիական մահաճգապետ Չավիլեյսկու զխավորությամբ<sup>19</sup>: Այս կոմիտեն զբաղվում էր գաղթականներին ընդունելու, տեղաբաշխելու, օժանդակություններ և արտոնություններ տալու խնդիրներով, որոնց վերաբերյալ կետերից մեկում պահանջվում էր, որ որպես կանոն՝ գաղթականների քրիստոնեական նոր գյուղերը խառը չլինեն մահմեդական բնակիչների հետ, քրիստոնյաները կազմեն առանձին գավառակներ կամ մահլաներ, նրանց տները կառուցվեն ուղիղ գծի վրա, «երեք սաժեն լայնությամբ» փողոցներ թողնվեն, իսկ տները լինեն հաստատուն, հարմարություններով օժտված և այլն<sup>20</sup>:

Օգտվելով ռուսական կառավարության տված վերոհիշյալ արտոնություններից և ընձեռած հնարավորություններից՝ արևմտահայ գաղթականները սկսեցին տներ կառուցել մահլան Գյումրիում: Աստիճանաբար առաջանում էին նոր թաղամասեր: Դեռ դարի սկզբին այստեղ բնակություն հաստատած ռուս զինվորները ունեին իրենց թաղը, որը գտնվում էր քաղաքի հարավային մասում և կոչվում էր «Սլաբոսկա»: Մոտ 40-50 տուն մահմեդականները Գյումրու հարավ-արևելքում (այժմյան ավտոկայանից մինչև հին գերեզմանոց) հիմնեցին «Թուրքի մահլեն»: Դրանից վերև, դեպի հյուսիս, 150 տուն հույները հիմնեցին «Ռիժմնոցը» կամ «Հունաց մահլեն»: 30-40 տուն հայ բողաները

<sup>13</sup> Ն. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն, Գյումրի-Լենինականի անցյալը (1935թ.), ձեռագիր, ՊԻԱ, գործ 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, ներածություն:

<sup>14</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, Տեղագրություն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 154:

<sup>15</sup> Տեղագրություն Շիրակայ, աշխատասիրենալ ի Պողոս վարդապետե Պետրոսեան, «Արարատ», Էջմիածին, 1870, թիւ Գ, էջ 55:

<sup>16</sup> Լ է ո, նշվ. աշխ. էջ 458:

<sup>17</sup> Кавказский календарь на 1851 год, отд. III, Тифлис, 1850, стр. 104.

<sup>18</sup> X. Л и н ч, Армения. Путевые очерки, этюды, Тифлис, 1910, стр. 162.

<sup>19</sup> АКАК, т. 7, док. 818, Тифлис, 1878, стр. 830.

<sup>20</sup> Այ. Ե ռ ի ց յ ա ն, նշվ. աշխ., էջ 325:

հիմնեցին «Բոչի մահլեն» (այժմյան Սայաթ-Նովա փողոցից մինչև նախկին հանրախանութ ընկած տարածքը): Մոտ 50 տուն հայ կաթոլիկների ջանքերով հիմնվեց «Ֆռանգների մահլեն» (Օրիորդաց գիմնազիայից մինչև զինվորական կոմիսարիատ ընկած տարածքում): «Հունաց մահլից» հյուսիս խղճուկ տներ էին կառուցել աղքատ գաղթականները, որոնց թաղը «Հողեպլան» էր կոչվում, իսկ հին գյումրեցիներն էլ բերդի կառուցման պատճառով տեղավորվել էին զերագանցապես «Չորի մահլում»<sup>21</sup>:

1836 թվականին կատարվում է Գյումրու առաջին հատակագծումը, ըստ որի քաղաքն ուներ քառանկյունի տեսք՝ երկայնքով և լայնքով իրար հասող փողոցներով<sup>22</sup>:

Բնակավայրի մեծանալու հետ մեկտեղ՝ աճում էր նաև նրա քաղաքական, ռազմական և տնտեսական նշանակությունը: Նույն 1836 թվականին ավարտվում է բերդի կառուցումը: 1837 թվականին Գյումրի այցելած Նիկոլայ Ա կայսրը դիտում է բերդը, հիմնադրում է բերդում կառուցվելիք Ս. Ալեքսանդրայի անունը կրող ռուսական եկեղեցին և Գյումրին վերանվանում Ալեքսանդրապոլ: Ռուսաց կայսեր կողմից քաղաքի անվանափոխությունը ժամանակակիցների կողմից տեղի է տվել մի շարք հակասական, հաճախ ոչ ստույգ դատողությունների:

Այս հարցին ժամանակագրական առումով առաջինը՝ 1838 թվականին, անդրադարձել են հայ ժողովրդի պատմության քննությանը վերաբերող վավերագրերի ժողովածուն կազմողները: Նրանք գրում են, թե երբ Նիկոլայ Ա-ն դիտեց նոր կառուցվող ամրոցը և Մուրք մեծ նահատակ թագուհի Ալեքսանդրայի պատվին հիմնվող եկեղեցին, Նորին Կայսերական Մեծությանը հաճելի եղավ նաև Գյումրի քաղաքն անվանել Ալեքսանդրապոլ<sup>23</sup>: Ալ.Երիցյանցը այդ մասին գրում է, որ հոկտեմբերի 4-ին կայսրը հասավ Գյումրի, ուր «նույն օրը հիմն դրեց հանուն սրբուհվոյն Ալեքսանդրի ռուսական եկեղեցվո և հրամայեց կոչել քաղաքն Ալեքսանդրապոլ»<sup>24</sup>: Ղ.Ալիշանն իր «Շիրակ» աշխատության մեջ Գյումրին Ալեքսանդրապոլ և բերդը Ս.Ալեքսանդրայի անունով կոչելը վերագրում է Նիկոլայ Ա-ի կնոջ՝ Ալեքսանդրա Ֆյոդորովնայի պատվին: Նա գրում է. «Երկրքին (քաղաքն ու ամրոցը - Ա.Հ.) միանգամայն կոչեցան հանուն կայսրուհվոյն Ալեքսանդրապոլիս»<sup>25</sup>: Այս հարցի մասին հակասական տեղեկություններ են հաղորդում նաև Վ.Պոտտոն և Կ.Գանը:

Ռազմական պատմաբան Վ.Պոտտոն իր «Հին կովկասցիների հիշատակին» գրքում (1897թ) նշում է, թե Գյումրիում հանգուցյալ կայսրը (Նիկոլայ Ա- Ա.Հ.) դիտեց կառուցվող ամրոցի շինարարական աշխատանքները, ներկա եղավ «հանուն Ս.Նիկոլայ այժմյան ամրոցային տաճարի հիմնադրմանը և հրամայեց հենց քաղաքը կոչել Ալեքսանդրապոլ»<sup>26</sup>: Ըստ Վ.Պոտտոյի, Գյումրին Ալեքսանդրապոլ է կոչվել ի պատիվ Ալեքսանդր Ա կայսեր, որի օրոք այն միացվել է Ռուսաստանին: Եվ վերջապես Կ.Գանը այս մասին իր «Կովկասյան աշխարհագրական անվանումների մեկնաբանման փորձ» աշխատության մեջ այն կարծիքն է հայտնում, թե Ալեքսանդրապոլը 1837 թվականին Նիկոլայ Ա-ի ներկայությամբ հիմնադրված քաղաքի և ամրոցի անվանումն է, ընդ որում նա նաև ընդգծում է, որ քաղաքը Ալեքսանդրապոլ է կոչվել ի պատիվ Ալեքսանդրա Ֆյոդորովնա կայսրուհու<sup>27</sup>:

Իրականում այս հարցի պատասխանը այլ է : Ինչպես վկայում է Կովկասի կառավարչապետ Գ. Ռոզենի գրությունը՝ ուղղված Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Ն. Փալավանդովին, 1837 թվականին Գյումրի ամրոցը (ընդգծումը մերն է - Ա. Հ.) Ալեքսանդրապոլ, հունա-ռուսական եկեղեցին Ս.Ալեքսանդրա և 1840 թվականին քաղաքը (ընդգծումը մերն է - Ա.Հ.) Ալեքսանդրապոլ է կոչվել ռուսական եկեղեցու մեծ նահատակ Ս.Ալեքսանդրա թագուհու և ոչ թե Ալեքսանդր Ա-ի կամ Ալեքսանդրա Ֆյոդոր-

<sup>21</sup> ՊԻԱ, գործ 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 1, գլուխ 2:

<sup>22</sup> Վ. Հ ա ղ ը ի թ յ ը ն յ ա ն, Գյումրին, նրա մարդիկ և սովորույթները, Գյումրի, 1996, էջ 7:

<sup>23</sup> Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч.2, М.,1838, стр. 420.

<sup>24</sup> Ալ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս Բ. Թիֆլիս, 1895, էջ 434:

<sup>25</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 154:

<sup>26</sup> В. П о т т о, Памяти старых кавказцев, Тифлис, 1897, стр. 42-43.

<sup>27</sup> К. Г а н, նշվ. աշխ., էջ 8:



ների շարքում որպես գյուխագործոց էր հիշատակվում մաս եռահարկ, քարե ամուր պահպաններով հիվանդանոցը<sup>33</sup>:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում Գյումրի - Ալեքսանդրապոլը XIX դարի 30-40-ական թվականներին: Ըստ ժամանակակիցների բազմաթիվ վկայությունների, այդ տարիների Ալեքսանդրապոլը տիպիկ ասիական քաղաք էր՝ կեղտոտ, կոպիտ և անկտուր տներով: Լինելով դեռ շատ երիտասարդ, այնուամենայնիվ արդեն հասցրել էր ձեռք բերել «ծեր ու քայքայվող» քաղաքի ֆիզիանոմիա: Այն ուղղակի մի «քարավան-սարա էր մեծ ճանապարհի վրա»<sup>34</sup>:

XIX դարի առաջին կեսի քաղաքային տնտեսության անմխիթար վիճակի մասին «Ախուրյանը» գրում է. «Յեխի պատճառով քաղաքի գլխավոր փողոցներն անանցանելի են, իսկ ինչ վերաբերում է այսպես կոչված «քոռ ուլիցներին», ապա աստված հեռու տանէ, այնպիսի ողորմելի դրության մեջ են, որ զլուխը և ոտը չկոտրելու համար ցերեկն անգամ պետք է կրակով ման գալ»<sup>35</sup>:

Դ. Անանուցի՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» աշխատության առաջին հատորում հրապարակված գյումրեցիների բողոք-մամակը՝ ուղղված ռուսական ցարին, թույլ է տալիս եզրակացնելու, որ քաղաքային կյանքի մմանատիպ դրությունը ինչ-որ չափով արդյունք էր մաս նրա անորոշ, ավելի շուտ երկակի կարգավիճակի<sup>36</sup>: Մինչև 1840 թվականը տեղական, պետական և ոստիկանական մարմինների կողմից ալեքսանդրապոլցիները հարկվում էին թե՛ որպես քաղաքացիներ և թե՛ որպես գյուղացիներ<sup>37</sup>: Բնականաբար, հարկային այսպիսի քաղաքականությունը չէր կարող խթան հանդիսանալ քաղաքի և նրա տնտեսության զարգացման համար: Հետևաբար դժվար է գերազնահատել քաղաքի զարգացման ճակատագրում 1840 թվականին նրա՝ նոր ձևավորված գավառի կենտրոն դառնալու հանգամանքը, ինչը կարճ ժամանակում նկատելիորեն փոխեց քաղաքի դեմքը: Գտնվելով առևտրական ճանապարհի վրա, որն իր մի հատվածով համընկնում էր մաս «աղի ճանապարհին», քաղաքն իբրև հացառատ շրջանի կենտրոն, հացահատիկ էր մատակարարում ճանապարհի երկու կողմերի շրջակա մեծ թվով գյուղերին և նույնիսկ մահանգի կենտրոն Երևանին, որը, հեռու գտնվելով պետության առևտրական կենտրոններից և հաղորդակցության ճանապարհներից, վերածվել էր որոշ չափով ինքնամփոփ, տեղական նշանակություն ունեցող արհեստներով բնակչության նեղ պահանջներն ապահովող քաղաքի<sup>38</sup>:

Քաղաքական և տնտեսական տեսակետից աստիճանաբար զգալի նշանակություն ստանալով, սկսած 1846 թվականից Ալեքսանդրապոլը երկրորդական գավառային կենտրոնից աստիճանաբար վերածվում է մահանգային առաջնակարգ գավառակենտրոնի, որն իր տնտեսական նշանակությամբ գերազանցում էր նույնիսկ մահանգի կենտրոն Երևանին:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլ քաղաքի ժողովրդագրությանը, ապա նշենք, որ քաղաքային բնակչության աճն ամբողջ գավառի օրինակով կատարվել է հիմնականում արհեստակաճորեն՝ գերազանցապես 1829-1831 թվականների թուրքահայերի

<sup>33</sup> Գ. Տ է ը ա վ թ ե ա ն ց, Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 24 մարտի, թիվ 11, էջ 3:

<sup>34</sup> Գ. Հ ռ վ հ ա ն ն ի ս ե ն ց, Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 3 նոյեմբերի, թիվ 42, էջ 3; Ալ Մյիթարեանց, Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 28 ապրիլի, թիվ 15, էջ 3; Այդ մասին տե՛ս նաև՝ Patrise Filius, Физико-номия и нравы Александрополя, "Кавказ", Тифлис, 1854, 12 июня, ном. 45, стр. 177-178; "Дневник офицера, состоящего в отряде, действующем на кавказско-турецкой границе. Отрывок 1. Лагерь под Александрополем", "Кавказ", Тифлис, 1854, 16 июня, ном 46, стр. 183-184.

<sup>35</sup> Շ ա հ է ն, Փողոցներ չունենք, «Ախուրեան», Ալեքսանդրապոլ, 1907, 16 փետր., թիվ 8, էջ 2:

<sup>36</sup> Դ. Ա ն ա ն ու ն, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ.Ա, Բարու, 1916, էջ 179-183:

<sup>37</sup> Н. Н е ф е д ь е в, Взгляд на Армянскую область, из путевых записок Н. Нефедьева, СПб., 1839, стр. 3.

<sup>38</sup> Թ. Հ ա կ ը ը յ ա ն, Երևանի պատմությունը (1801-1879), Եր., 1959, էջ 403:

գաղթի շնորհիվ: Եթե 1820-ական թվականներին Գ-յումրին ուներ ընդամենը 300 տուն<sup>39</sup>, ապա 1831 թվականի մարդահամարի տվյալներով այստեղ ապրում էր արդեն 3444 մարդ միայն արական սեռից (ի դեպ, մինչև XIX դարի 50-ական թվականները Ալեքսանդրապոլում և զավառի մի շարք այլ տարածքներում անցկացված մարդահամարների տվյալները վերաբերել են միայն արական սեռին), որից 250-ը՝ մահմեդական, իսկ 3194-ը՝ հայ<sup>40</sup>: 1842 թվականին անցկացվում է «Կամերալ ցուցակագրման վերստուգում», որի արդյունքում Ալեքսանդրապոլի բնակչության թիվը նշվում է արդեն 1 729 ընտանիք<sup>41</sup>, իսկ 1848 թվականին<sup>42</sup> 1982 ընտանիք կամ 5537 հոգի արական սեռից, որից 5269 հոգի՝ հայ, 58-ը՝ հույն, 210-ը՝ թաթար: Վերջապես, 1855 թվականի տվյալներով Ալեքսանդրապոլ քաղաքում ապրում էր 11 358 մարդ, որից 5751-ը՝ արական, 5607-ը՝ իգական սեռից<sup>43</sup>:

Այսպիսով, եթե 1830-ական թվականների Ալեքսանդրապոլի մասին խոսում էին ընդամենը որպես «գեղեցիկ ապագա խոստացող»<sup>44</sup> բայց արևելյան տիպի խղճուկ քաղաքի, ապա XIX դարի կեսին այն արդեն ոչ ասիական, բարեկարգ քաղաք էր՝ ուղիղ, լայն և զիշերը լուսավորվող փողոցներով, իսկ քաղաքի ամբողջ բնակչությունը քիչ թե շատ խոսում էր ռուսերեն, ինչը հազվադեպ երևույթ էր Երևանի մահանգի մյուս քաղաքների համար: Ավելի հանգամանալի և ընդգրկուն դարձնելու համար XIX դարակեսի Ալեքսանդրապոլի նկարագիրը՝ մեջբերենք մի քանի վկայություններ ժամանակի վիճակագրական հաշվետվություններից: Այսպես, ըստ «1852 թվականի Կովկասյան օրացույցի» տվյալների՝ Ալեքսանդրապոլում արդեն 1850 թվականին կային 240 հաստատված ճակատամասով (ֆասադով) տուն, 1808 ասիական տիպի քարե տուն, 250 կրպակ, 150 փողոց, 2 հրապարակ, 10 կամուրջ<sup>45</sup>: 1852-1853 թվականների մեկ այլ հաշվետվության մեջ նշվում են Ալեքսանդրապոլի 75 թաղամասեր, 52 աղբյուրներ, 186 ջրհորներ, 2048 քարաշեն տներ, որից 200-ը՝ լավ ճակատամասերով և այդ բոլորը՝ 11 280 բնակչության համար: Շենքերը տեղական սև տուֆից են, կան 1849 թվականին հիմնադրված ուղղափառ եկեղեցի, 2 հայկական եկեղեցիներ՝ Ս.Աստվածածինը և կաթոլիկ եկեղեցին\*, 2 շուկա՝ սովորական և անասունների վաճառքի, 7 քարվանսարա, 850 կրպակ, 3 բաղնիս, 1 հրապարակ, 1 նոր և 2 հին հայկական, 1 մահմեդական և մեկ ընդհանուր գերեզմանոցներ<sup>46</sup>: Եվ վերջապես, Երևանի մահանգի քաղաքների տնտեսական-քաղաքական կյանքի մասին 1865 թվականի հաշվետվության մեջ Ալեքսանդրապոլի մասին ասվում էր հետևյալը. «Քաղաքը, որ հյուսիսից սահմանակից է Եսաուլ, Օրթաքիլիսա, Թոփառլի, արևելքից՝ Ղոնախ-Ղոնան, Հաջի-Նազար-Ղուլի,

<sup>39</sup> Ա տ ր պ ե տ, Ալեքսանդրապոլի ապագան, «Ախուրեան», Ալեքսանդրապոլ, 1907, 30 հունվարի, թիվ 3, էջ 1:

<sup>40</sup> Չ. Կ ր կ ր տ յ ա ն, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում, 1831-1931, Եր., 1932, էջ 94-95:

<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83,84: Փաստաթղթի մեջ կա անճշտություն: Ընդհանուր ծխերի թիվը նշվում է 1807: Ընդ որում, թիվ 1581 ծուխը ընդհանրապես չի հաշվվել, իսկ թիվ 1493 ծուխը հաշվվել է մի քանի անգամ: Բացի այդ, քաղաքից հեռացել է 77 ծուխ, հետևաբար արդյունքում պիտի ստացվեր, որ Ալեքսանդրապոլն այդ պահին ուներ ոչ թե 1807, ինչպես տրվում է վիճակագրական հաշվետվությանը, այլ 1729 ծուխ:

<sup>42</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97:

<sup>43</sup> Кавказский календарь на 1855 год, Тифлис, 1854, отд. III, стр. 322-323.

<sup>44</sup> В. П е р е в а л е н к о, Поездка в Александрополь, "Закавказский Вестник", Тифлис, 1853, 22 января, ном. 4, стр. 15-16.

<sup>45</sup> Р у ц е в и ч, Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края, "Кавказский календарь на 1852 год", Тифлис, 1851, отд. III, стр. 275-276.

\* Ալեքսանդրապոլի եկեղեցիների մասին մանրամասն տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 208, էջ 1-31, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Շախաթունյանի արխիվ, թղթ. 63, վավ. 28, էջ 1-3:

<sup>46</sup> Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, СПб., 1853, стр. 259; նույնը տե՛ս. Документы и материалы по истории Армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ер., 1993, док. 134, стр. 319, док. 141, стр. 344.

հարավից՝ Դյուզքյանը, Թափաղոլյակ, Վարաքիլիսա գյուղերին, իսկ արևմուտքից՝ Արփաչայ գետին, ունի 16 337 բնակիչ, որից 8638-ը արական, 7699-ը իգական սեռի են: Քաղաքային բնակչությանն է պատկանում հետևյալ անշարժ գույքը՝ 2870 տուն, 1460 կրպակ, 17 քարվան-սարա, 6 ջրաղաց, 36 գործարան: Ընդ որում, վերը նշվածից ազնվականությանն են պատկանում 25 տուն, 145 կրպակ, 5 քարվան-սարա, 5 (օճառի) գործարան: Հոգևորականությանը՝ 37 տուն, 74 կրպակ, առևտրականներին՝ 700 տուն, 40 ջրաղաց, կրպակ և գործարան: Մնացած անշարժ գույքը պատկանում է աղքատ խավին»<sup>47</sup>:

Արդեն XIX դարի 50-ական թվականներին Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի զարգացման բավականին բարձր տեմպերը առաջին հերթին հետևանք էին այն համեմատաբար ապահով իրավիճակի, որում հայտնվել էր Ռուսաստանի տիրապետության տակ անցած այս տարածաշրջանը, ապահովություն, որը հնարավորություն էր տալիս տեղի բնակչությանն իր կյանքը նորմալ հունի մեջ դնել, այլև անմախաղեպ բարենպաստ պայմաններ էր ստեղծում ինչպես քաղաքային շինարարության, այնպես էլ նրա տնտեսական կյանքի առաջընթացի համար:

## ГЮМРИ-АЛЕКСАНДРОПОЛЬ В I-ОЙ ПОЛОВИНЕ XIX В.

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ А. Айрапетян \_\_\_\_\_

Делается попытка представить Гюмри-Александрополь в I-ой половине XIXв в историко-демографическом аспекте.

Важнейшее значение местности этого поселения с военно-политической точки зрения стало более очевидным для России именно после присоединения Грузии к ней (1801г.), наилучшим свидетельством чего стало появление в военных планах российского командования довольно реальных и серьезных намерений о скорейшем овладении этого поселения и превращения его в важный военный опорный пункт.

В 1804г. у захваченного селения в кратчайшие сроки строится приграничная станция с довольно крупным военным контингентом. Однако основательное развитие поселения, оживление его экономической жизни и усиление его военно-политического значения в основном связаны с активной иммиграцией западных армян в 1826-1829гг, с применением довольно гибкой системы государственных льгот для них, предоставляемых российскими властями, и особенно с началом и с успешным завершением строительства крепости.

Сопоставляются все исторические и архивные данные о переименовании Гюмри в Александрополь. Представлен также краткий демографический обзор Гюмри-Александрополя I-ой половины XIXв.

<sup>47</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14, I մաս, էջ 50-64; նույնը տե՛ս. Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издавал Н. Воронов, т. 1, отд. 1, Тифлис, 1869, стр. 36-38.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՆ ԸՍՏ 1897թ. ՄԱՐԴԱՀԱՍՏԱՐԻ

Պատմական աղբյուրների թվում հատուկ տեղ են զբաղեցնում ժողովրդագրական տվյալները: Ժողովրդագրության վերաբերյալ հնարավորին չափ ամբողջական պատկերացում են տալիս մարդահամարի նյութերը: Նման մարդահամար Ռուսական կայսրությունում պետական մակարդակով առաջին անգամ անցկացվել է 1897թ., և այն մեծ նշանակություն ունի հայոց պատմության ուսումնասիրման համար, քանզի Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսից կայսրության բաղկացուցիչ մասն էր կազմում: Ձեռք բերված հայկական մի շարք տարածքներից ձևավորվեց Հայկական մարզը, որը մի շարք վարչական փոփոխություններից հետո 1872թ. վերակազմավորվեց Երևանի նահանգի: Այն բաժանվեց 7 գավառի՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Շարուր - Գարալազյազի և Նախիջևանի:

Պատմական հայկական այս տարածքների միավորումը Ռուսական կայսրությանը իր հետ բերեց բազմաթիվ վերափոխումներ: Ռուսաստանն այս տարածաշրջանում հետապնդում էր իր քաղաքական շահերը և տարածում համապատասխանաբար իր տնտեսական և սոցիալական քաղաքականությունը: Այդ մասին ավելի ստույգ պատկերացում կարելի է կազմել մարդահամարի նյութերին ծանոթանալով: Տնտեսական և քաղաքական բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների հետ միաժամանակ փոխվում էր նաև երկրի դեմոգրաֆիկ պատկերը՝ նոր ձևով էին տեղաբաշխվում մարդկային ռեսուրսները: Ելնելով վերը նշվածից՝ կարելի է ասել, որ օրակարգի հարց էր դարձել երկրի ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական տվյալների մշակումը, այսինքն՝ մարդահամարի անցկացումը: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ մինչև 1897թ. անցկացրած մարդահամարները լիարժեք չէին: Կանոնավոր կերպով բնակչությունը հաշվեգրվում էր միայն Սանկտ-Պետերբուրգում և Մոսկվայում, այսինքն՝ այդ հաշվեգրումները կրում էին տեղային բնույթ: Ավելին, հաշվեգրումների կազմակերպման և մեթոդաբանության մեջ չկար միասնականություն, կարգ ու կանոն, ճշգրտված չէին անցկացման ժամկետները, քարտերի ձևերը, հարցման ծրագիրը և մշակման ծրագիրը խիստ տարբերվում էին միմյանցից, հավաքված ոչ բոլոր տվյալներն էին մշակվում և հրատարակվում:

1895թ. հունիսի 5-ին հրապարակվեց "Положение о первой всеобщей переписи населения Российской империи", որով հաստատվեց մարդահամար անցկացնելու ծրագիրը և նպատակը՝ պարզել բնակչության քանակը, կազմը, տեղաբաշխումը: Այն մշակվել էր Պ.Սեմյոնով-Տյան-Շանսկու (1827-1914) կողմից, որը 1875-1897թթ. վիճակագրական խորհրդի նախագահն էր: Մարդահամարն անցկացվեց 1897թ. փետրվարի 9-ին (հունվարի 28): Իսկ արդյունքների վերլուծությունը տևեց շուրջ 7 տարի: Դրանք հրատարակվեցին 1904-1905թթ.: Մարդահամարի՝ Արևելյան Հայաստանին վերաբերող բաժնում մյուս գավառների հետ միասին բազմակողմանիորեն ներկայացված է նաև Ալեքսանդրապոլի գավառը:

Երևանի նահանգը զբաղեցնում էր 23226,4 վերստ տարածություն՝ 829556 մարդ բնակչությամբ, որի 53.16 % հայեր էին: Բնակչության խտությունը 1<sup>2</sup> վերստի վրա կազմում էր 35,71 մարդ: Նահանգում Երևանի գավառից հետո ամենախիտ բնակեցվածը Ալեքսանդրապոլի գավառն էր: Համեմատաբար նոսր էին բնակեցված նահանգի հարավ - արևելյան և հարավ - արևմտյան հատվածները: Փոքր էր քաղաքային բնակչության թիվը. նահանգի 5 քաղաքներում բնակվում էր ընդամենը 81509 մարդ, կամ բնակչության մոտ 12%-ը: Ինչպես նահանգի, այնպես էլ Ալեքսանդրապոլի գավառի ու Ալեքսանդրապոլ քաղաքի արական բնակչության թիվը գերազանցում էր իգականը: Այդ տարբերությունը որոշ վայրերում հասնում էր նույնիսկ 25%-ի (տես աղյուսակ 1): Ալեքսանդրապոլի գավառը զբաղեցնում էր 3303.7 վերստ<sup>2</sup> տարածություն՝ 165 503 մարդ բնակչությամբ, որից 19049 արական, իսկ 76021-ը իգական սեռի էին :

Աղյուսակ 1<sup>1</sup>

	գավառներ և քաղաքներ	բնակչությունը	
		արական	իգական
1.	Երևանի ք. Երևան	82 899 17 328	67 980 11 678
2.	Ալեքսանդրապոլի ք. Ալեքսանդրապոլ	89 482 19 049	76 021 11 567
3.	Նախիջևանի ք. Նախիջևան ք. Օրդուբադ	52 984 4 666 2 458	47 787 4 124 2 153
4.	Նոր Բայազետի ք. Նոր Բայազետ	63 128 4 370	59 445 4 116
5.	Սուրմալուի ք. Իգդիր	47 269 2689	41 786 1991
6.	Շարուր - Դարալագյազի ք. Բաշնորաշեն	41 055 504	35 483 363

Բնակչության խտությունը 1վերստ<sup>2</sup>-ի վրա 50.09 մարդ էր: Գավառի բնակչությունը բազմազան էր, մեծամասնությունը հայեր էին՝ 141522 մարդ, իսկ յուրաքանչյուր 100 մարդու հաշվով հայերի թիվը կազմում էր 85:

Աղյուսակ 2

Ազգություն	Գավառում	Քաղաքում
հայեր	141522	21771
թաթարներ(տեղական թուրքեր)	7832	1090
ռուսներ	6836	5157
քրդեր	4976	101
հրեաներ	450	415
ասորիներ	34	-----
այլազգիներ	3853	2082
ընդամենը	165503	30616

1897թ. այսպիսին էր գավառի բնակչության պատկերն ըստ ծննդավայրի՝

1. Տեղում ծնվածներ 148179 մարդ
2. Երևանի նահանգի այլ գավառներում ծնվածներ 2607
3. Այլ նահանգներում ծնված եկվորներ 10749
4. Այլ պետություններում ծնված եկվորներ 3968

Քանակական փոփոխությունների էր ենթարկվել նաև գավառական կենտրոն Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչությունը: Եթե 1892թ. քաղաքի բնակչությունը կազմում էր 25990 մարդ<sup>2</sup>, ապա 1897թ՝ 30616 մարդ: Երևանի նահանգի քաղաքների մեջ Ալեքսանդրապոլն իր բնակչության թվով մինչև 20-րդ դարի սկիզբը գրավում էր առաջին տեղը՝ իրենից հետ թողնելով նաև նահանգական կենտրոն Երևանը:

Աղյուսակ 3<sup>3</sup>

	քաղաքներ	1897թ.		
		արական	իգական	ընդամենը
1.	Ալեքսանդրապոլ	19 049	11 567	30 616
2.	Երևան	17 328	11 678	29 006
3.	Նախիջևան	4 666	4 124	8 790
4.	Օրդուբադ	2 458	2 153	4 611
5.	Նոր Բայազետ	4 370	4 116	8 486
	Ընդամենը քաղաքների բնակչությունը	47 871	33 638	81 509

<sup>1</sup> Կազմված է «Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.» - ի տվյալների հիման վրա:

<sup>2</sup> Кавказский календарь на 1893 г., стр. 54.

<sup>3</sup> Կազմված է «Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.» - ի տվյալների հիման վրա :

1892թ. համեմատությամբ՝ Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչությունն ավելացել էր շուրջ 20%-ով: Սակայն բնակչության այսպիսի աճը հիմնականում պայմանավորված էր մեխանիկական գործոնով: Հայերի թիվն ըստ 1897թ. մարդահամարի կազմում էր 21 771 մարդ: Գավառի բնակչության կազմում երրորդ տեղը զբաղեցնում էին ռուսները (վեիկոռուսներ, մալոռուսներ, բելոռուսներ): Նրանց թվի ավելացումը պայմանավորված էր հիմնականում հետևյալ գործոններով.

1. ռուսական բանակի ստորաբաժանումների գոյությամբ,
2. ռուսաստանի ռազմաստրատեգիական նպատակների և տարանցիկ առևտրի զարգացման համար Թիֆլիս - Կարս երկաթուղագծի կառուցմամբ (1895 – 1899թթ.),
3. ցարական կառավարության կիրառած գաղութային քաղաքականությամբ (տարածքն օգտագործվել է որպես աքսորավայր):

Ըստ մարդահամարի տվյալների՝ բնակչության մեջ 89.1 % (147495 մարդ) են կազմում մինչև 49 տարեկանները, իսկ 80-ից ավելի տարիք ունեցողների թիվը խիստ սակավ է՝ 0.6% (1067 մարդ):

Աղյուսակ 4<sup>4</sup>

տարիքը	թիվը		
	արական	իգական	ընդամենը
1 տարեկանից ցածր	2 491	2 062	4 553
1-9	22 637	22 879	45 516
10-19	17 460	15 537	32 997
20-29	18 637	10 831	29 468
30-39	10 987	9 888	20 875
40-49	7 596	6 490	14 086
50-59	5 014	4 192	9 206
60-69	2 992	2 494	5 486
70-79	1 165	1 084	2 249
80-89	390	396	786
90-99	84	114	198
10-109	20	34	54
110 և ավելի	-	5	5
անհայտ	9	5	14
Ընդամենը	89 482	76 021	165 503

Մարդահամարի նյութերն ամբողջական և համակողմանի տվյալներ են պարունակում մաս բնակչության զբաղվածության մասին: Հիմնականում այն ներկայացված է գյուղատնտեսությամբ զբաղվածներով, չնայած որ գյուղացիական ռեֆորմից հետո շատ գյուղացիներ մեկնեցին Ալեքսանդրապոլ, Երևան և այլ քաղաքներ՝ համարելով վարձու բանվորների շարքերը:

Աղյուսակ 5<sup>5</sup>

զբաղմունքը	ինքնուրույն զբաղ. ունեցողներ		մրանց ընտանիքի անդամներ	
	արական	իգական	արական	իգական
գյուղացիական և քոչվոր տնտեսութ.	16 599	408	52 603	64 267
ընդհանուր թիվը	17 007		116 870	
մրանցից՝ կողմնակի զբաղմունք ունեցողները	1 181	38	628	2 097
ընդհանուր թիվը	1 219		2 725	

Արդյունաբերությունը զավառում մինչև 19-րդ դարի 80-ական թթ. վերջը և 90-ականների սկիզբը ներկայացված էր արհեստագործությամբ, տնայնագործությամբ, մանուֆակտուրային փոքր ձեռնարկություններով: Ալեքսանդրապոլում դեռևս 1891թ.

<sup>4</sup> Կազմված է «Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.» - ի տվյալների հիման վրա:

<sup>5</sup> Նույնը:

գործում էր 34 ման ձեռնարկություն՝ 131 աշխատողներով<sup>6</sup>: Ընդհանուր առմամբ՝ քաղաքում ինքնուրույն զբաղվածություն ունեւր 13538 մարդ:

Աստիճանաբար քաղաքում ավելանում էր պետական ծառայության մեջ ընդգրկվածների թիւը: Քաղաքի և գավառի ադմինիստրացիայի կազմում, դատարանում, ոստիկանությունում աշխատում էր 303 մարդ, զինված ուժերում՝ 6391, երկաթուղում՝ 119, կրթադաստիարակչական ծառայության մեջ՝ 54 մարդ:

Մարդահամարն ընդգրկում է մանրամասն տվյալներ նաև գավառի ազգաբնակչության կրթական մակարդակի և գրագիտության վերաբերյալ: Գավառում բավական ցածր էր գրագետների թիւը՝ ընդամենը 16 712 մարդ, որից 14 354-ը արական սեռի ներկայացուցիչներ էին, 2358-ը՝ իգական: Ալեքսանդրապոլ քաղաքում գրագետների թիւը 10 144 էր, որից 8324-ը արական, 18 206-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին: Չնայած պաշտոնական լեզուն ռուսերենն էր, բնակչության մեծ մասը չէր տիրապետում դրան: Ռուսաստանում կամ Եվրոպայում կրթություն ստանալու հնարավորություն ունեցել էր բնակչության 0.6%-ը միայն:

Աղյուսակ 6<sup>7</sup>

	համալսար. կրթությամբ	բարձրագույն տեխն.կրթությամբ	հատուկ միջն.կրթ.	միջն.ուսումն. հաստատութ.	բարձր. և միջն.գիմվ.
գավառ	5	10	10	88	3
քաղաք	29	6	30	689	126
ընդամենը	34	16	40	777	129

Գրագիտության մակարդակով հայերը զիջում էին ռուսներին, բայց 3 անգամ գերազանցում էին տեղական թուրքերին:

Մարդահամարի տվյալները ցույց են տալիս նաև դավանանքի հստակ պատկերը. հավատացյալների թիւը գավառում կազմում էր 165 503 մարդ, իսկ քաղաքում՝ 30616: Ընդհանուր առմամբ՝ հայ առաքելականները 80.47% են, մահմեդականները՝ 5.13%, ուղղափառները՝ 4.35%, հայ կաթոլիկները՝ 5.75%:

Երկարատև խաղաղ ժամանակահատվածը գավառում ապրելու, զարգանալու հեռանկար էր ստեղծում: Աստիճանաբար ավելանում էր ընտանեկան տնտեսությունների թիւը: 1897թ. Ալեքսանդրապոլի գավառում հաշվվում էր 20 460 տնտեսություն, որից 4271՝ Ալեքսանդրապոլում: Գավառում ընտանիքները հիմնականում բազմանդամ էին: 1897թ. մարդահամարի տվյալներով ընտանիքի անդամների միջին թիւը գավառում կազմել է ութ, քաղաքում՝ յոթ մարդ:

Ընտանիքի անդամների այսպիսի մեծ թիւը պայմանավորված էր նաև ընտանիքը կամ ծովաը հարկային միավոր ճանաչելու մասին 19-րդ դարի 40-ական թթ, գործող օրենքով: Հարկի ծանրությունը մեղմելու համար հազվադեպ էին առանձնացնում ծխերը, մասնատվում նոր ընտանիքների: Այս համակարգը շարունակում էր գործել նաև 90-ական թթ.: Ավելի ուշ՝ 1893թ. դեկտեմբերի 20-ին, Անդրկովկասում նոր օրենքի հիման վրա ծխահարկը ունեցվածքային հարկով փոխարինվելը ընտանիքի բազմանդամության աստիճանական նվազեցման պատճառներից մեկը եղավ:

Աղյուսակ 7<sup>8</sup>

	կնտեսությունների ընդհ. թիւը	շնչերի ընդհ. թիւը	ընդհանուր թիւն ըստ շնչերի						
			2	3	4	5	6-10	11 և ավելի	ընդհ.
գավառ	20 460	165503	814	1487	2161	2442	8846	4088	19 838
քաղաք	4 271	30 616	330	495	656	626	1658	3 229	3 994

<sup>6</sup> Кавказский календарь на 1893г., стр. 47.

<sup>7</sup> Կազմված է «Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.» - ի տվյալների հիման վրա:

<sup>8</sup> Նույնը:

Մարդահամարը տեղեկություններ է պարունակում ինչպես Երևանի նահանգի, այնպես էլ Ալեքսանդրապոլի գավառի և Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ:

Աղյուսակ 8<sup>9</sup>

գավառ	ազնվ. դաս	հոգևոր. դաս	վաճառ. դաս	քաղքենիներ	գյուղացիներ	այլահայտակներ	այլ դասերի ներկայացուցիչներ
Երևանի գ. ք.Երևան	3712 2170	1208 334	187 185	15 059 14 927	124 914 8094	4154 2122	1645 1174
Ալեքսպոլի գ. ք.Ալեքսպոլ	1394 1111	1572 302	381 363	20 745 20 240	138 515 7 999	2 296 462	600 139
Նախիջևանի գ. ք.Նախիջևան ք.Օրդուբադ	1769 626 165	717 87 12	143 1 -	10168 6027 3766	85637 1503 499	2074 511 147	263 35 22
Նոր Բայազետի գ. ք.Նոր Բայազետ	291 65	786 88	225 220	7641 7480	112840 413	123 15	667 205
Մուրմալուի գ. ք.Իգդիր	1005 142	452 61	73 31	71 18	84025 3589	2626 399	803 440
Շարուր - Դարբասյանի գ. ք.Քաշտրաշեն	1389 140	318 -	3 3	216 43	72884 589	1624 86	104 6
Էջմիածնի գ. ք.Վաղարշապատ	1263 196	1478 194	2 2	322 126	118265 3886	2591 779	316 84
Ընդամենը նահանգում	1082 3	6531	1014	54 222	737080	15488	4398
Որից քաղաքում	4615	1078	805	52627	26572	4521	2105

Ակնհայտ է, որ Ալեքսանդրապոլի գավառում, նահանգի մյուս գավառների համեմատությամբ, բացարձակ մեծամասնություն են կազմել հոգևորականները, վաճառականները, գյուղացիներն ու քաղքենիները: Ի դեպ, այս վերջին անվան տակ նկատի են առնվել արհեստավորներն ու մանր առևտրականները: Եվ քանի որ Ալեքսանդրապոլը արհեստավորական քաղաք էր, ուստի բնականաբար այստեղ այդ թիվը ամենամեծն էր՝ 20 240: Մարդահամարի նյութերում Ալեքսանդրապոլի բնակչության զբաղվածությունը ներկայացնող ցուցակներում հիշատակվում են շուրջ 37 արհեստ, 65 անուն զբաղմունք:

Ընդհանուր առմամբ 1897թ. մարդահամարի տվյալները հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու Ալեքսանդրապոլի բնակչության սոցիալ- տնտեսական կացության, զբաղվածության ու կենցաղային առօրյայի մասին և հարուստ նյութ են պարունակում հետագա բազմակողմանի ուսումնասիրությունների համար: Բացի այդ, մարդահամարը մարդկային և տնտեսական ռեսուրսների հաշվառման առաջնային հավաստի և ճշգրիտ եղանակն է: Այն տեղեկություններ է պարունակում բնակչության տեղաբաշխման, քանակի, զբաղմունքի, գրագիտության մակարդակի, ինչպես նաև ազգագրական և դավանաբանական պատկերի մասին և թույլ է տալիս եզրակացնելու, որ Ռուսաստանին միացված հայկական տարածքներում հայերի համար ստեղծվել էին խաղաղ սպրեյու և զարգանալու հնարավորություններ: Դրան նպաստեցին նաև 19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում տեղի ունեցած մի շարք կարևոր իրադարձություններ: 1861թ. անցկացված գյուղացիական ռեֆորմի արդյունքում. մեծ քանակությամբ ազատված աշխատուժը հնարավորություն ստեղծեց արդյունաբերության և առևտրի արագ զարգացման համար: Անցկացվեցին բարեփոխումներ բանկային համակարգում, ընդլայնվեց երկրի երկաթուղային ցանցը, արտերկրյա ներդրումների շնորհիվ զարգացավ արդյունաբերությունը: Ռուսաստանը վերածվում էր

<sup>9</sup> Կազմված է «Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.» - ի տվյալների հիման վրա:

արդյունաբերական տերության միաժամանակ այս գործընթացի մեջ ակտիվորեն ներգրավելով նաև Անդրկովկասը և, մասնավորապես, Արևելյան Հայաստանը, որտեղ նույնպես սկսեց զարգանալ արդյունաբերությունը, կառուցվեց երկաթգիծ, ակնրախ երասարանքադրամային հարաբերությունների աշխուժացումը: Այս առումով 1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարը մեզ համար միակ հավաստի աղբյուր է 19-րդ դարավերջի Ռուսաստանի և մասնավորապես Անդրկովկասի տարածաշրջանի հայ ազգաբնակչության զարգացման ընթացքի ուսումնասիրման համար՝ կայսրության վարած քաղաքականության ֆոնի վրա:

## АЛЕКСАНДРОПОЛЬСКИЙ УЕЗД ПО ПЕРЕПИСИ 1897 ГОДА

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Л. АСОЯН* \_\_\_

Перепись была проведена 28 января /9февраля/ 1897г. Анализ данных переписи был закончен 1904-1905гг. В материалах переписи вместе с другими уездами Ереванской губернии был представлен и Александропольский уезд. Несмотря на многие минусы, материалы переписи дают возможность составить наиболее ясное и полное представление о социально-экономическом положении, о занятости и быте населения, и являются богатейшим материалом для дальнейшего разностороннего исследования. Кроме того, перепись населения-это первый и наиболее точный метод учета людских и экономических ресурсов. Перепись населения содержит данные о распределении, численности, занятиях, уровне грамотности и образования населения. Материалы переписи позволяют заключить, что на территории, присоединенной к Российской империи, для армян были созданы мирные условия жизни и развития. Этому способствовали также позитивные перемены в политике и экономике. И в этом ракурсе материалы переписи 1897 г. для нас служат источником для изучения процесса развития армянского населения на фоне политики Российского государства.

## Հասմիկ ՄՏԵՓԱՆՅԱՆ

### ԱՆՀԱՏ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ (V-XV դդ.)

Հայ միջնադարյան մշակութային մթնոլորտում մասնագիտացված երգարվեստը զարգացել է մի կողմից խիստ կանոնակարգված օրինաչափությունների հիմքով, մյուս կողմից անհատական արվեստին պատշաճ բնորոշիչներով: Միջնադարյան երաժիշտը մեկ անձի մեջ հաճախ միավորել է և՛ հեղինակին, և՛ կատարողին:

«Դժբախտաբար,- գրել է Մ. Աբեղյանը,-մեր հոգևոր երգերի հեղինակները մեծ մասամբ անհայտ են. մենք չգիտենք, թե մեր որ երգն ումից և երբ է գրված: Սակավաթիվ ծանոթություններն այդ մասին XIII դարից են գալիս, կամ երգերի ժողովածուների՝ Շարակնոցների մեջ գրված տեղեկություններն են, որոնք նույնպես շատ հին չեն, որովհետև Շարակնոցի շատ հին ձեռագիր չունենին»:<sup>1</sup>

Ավելին, Շարակնոցներում տեղ գտած հեղինակային տարանջումները հանգեցրել են դրանց հիմքում լոկ ավանդություն դիտելու տեսակետին: Շարակնագիտական մի շարք աշխատություններում մատենագրական այլ աղբյուրների օժանդակ տվյալների հիման վրա բացահայտվել են այդ ավանդությունների ճշմարտացիության կարևոր կողմեր: Այստեղ պատմագրությունը մի արժեքավոր աղբյուր է, որը նաև կարևոր կողմնորոշիչ դեր ունի: Պատմագրական աղբյուրների հնարավորին չափով ամբողջական ուսումնասիրումը հնարավորություն կնձեռնի ստեղծելու հայ միջնադարյան անհատ երաժիշտների մասին հավաստի տվյալների մի հանրագումար, որը առայսօր բացակայում է հայագիտության մեջ: Մույն աշխատանքը մի փորձ է՝ լրացնելու այդ բացը V-XVդդ. պատմագրության սահմաններում: Կարելի է տարբերել պատմագրական տվյալների երկու խումբ.

- ա) Տվյալներ, որոնք հավաստում են միջնադարյան որևէ հեղինակի երաժշտական գործունեությունը, առանց կոնկրետ ստեղծագործության հիշատակության:
- բ) Տվյալներ, որոնք հավաստում են միջնադարյան որևէ հեղինակի կոնկրետ ստեղծագործությունը (կամ ստեղծագործությունները):<sup>2</sup>

Անդրադառնալով առաջին խմբի վկայություններին ու հիշատակություններին: Դրանց մի ստվար մասը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երաժշտական գործունեությանը, որ նրանք ծավալել են գրերի ստեղծումից հետո: Ծիշտ է, պատմագրական տեղեկությունները մասնավորեցված չեն, ընդգրկում են լայն տեսադաշտ՝ ներգրավելով նաև նրանց գործունեության երաժշտական կողմը: Դրանց մի մասը վերաբերում է գրերի գյուտից հետո Մաշտոցի և Սահակի քարգմանչական աշխատանքներին, մյուս մասը՝ նրանց մանկավարժական գործունեությանը:

Անշուշտ, վկայությունների առաջին խումբը պետք է բնութագրել ավելի լայն իմաստով, քանի որ քարգմանչական աշխատանքը վերաբերել է քրիստոնեական ողջ ծիսակարգի հայացմանը: Կորյունի վկայությամբ, Աստվածաշունչը քարգմանվել է Մաշտոցի ու Սահակի համատեղ աշխատանքով՝ «ի ձեռն երկուց հաւասարելոց»<sup>3</sup> կամ, ավելի ստույգ՝ նրանց ղեկավարությամբ:<sup>4</sup> Այս վկայությունները հաստատում են, որ երկու նշանավոր գործիչները անմիջականորեն մասնակցել են նաև հայոց եկեղեցու բարենորոգչական աշխատանքներին: Ըստ Կորյունի՝ «Եւ դարձեալ բազում և անհարմար գունդս վանականաց ի շէնս և անշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս բնակեցուցեալ հաստատեր»:<sup>5</sup> Պատմիչ

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 527-528:

<sup>2</sup> Նշենք, որ երկրորդ խումբը ինքնըստինքյան իր մեջ կրում է նաև առաջինի առանձնահատկությունները

<sup>3</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով ի ձեռն պրոֆ. Մ. Աբեղյանի, Եր., 1941, էջ 27-29:

<sup>4</sup> Դազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904, էջ 28-29:

<sup>5</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի..., էջ 80:

Ղազար Փարպեցին Մահակ Պարթևի գործունեության արգասիքն է համարել զարդարված եկեղեցական արարողությունները. «Եւ տարեալ ի գլուխ սրբոյ հայրապետին Հայոց Մահակայ զգործ մեծ հոգևոր վաստակոյն՝ կարգեցան վաղվադակի յայնմհետև դպրոցք հօտին ուսմանց. բազմանցան դասք գրչաց, արևեսալ առնելով զմիմեանքք. զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցոյ. յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տոնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց: Որք շահեալք լի հոգևոր օգտի՛ ընթանային խնդալիցք ի հաղորդմանն մեծի խորհրդոյն, արձակեալք յիրաքանչիւր ի տունս, մեծամեծք և տղայք, *սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս*, ի հրապարակս և ի փողոցս առտնին»:<sup>6</sup> Որոշ այլ արժեքավոր վկայություններով էլ հավաստվում է Մաշտոցի և Մահակի մանկավարժական գործունեությունը: Այսպես. ըստ Խորենացու՝ «Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, և հրամանաւ Վռամշապիոյ և մեծին Մահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս, *ուշեղս և քաջասունս, փափկածայնս և երկարոգիս, և դպրոցս զկարգեաց յամենայն զավատս*»:<sup>7</sup> Ըստ Կորյունի «Անդ էր այնուհետև չարբենալ զինով, այլ առաւելով հոգւով, և պատրաստել զսիրտս *երգովք հոգեւորօք*, ի փառս ի գովութիւն Աստուծոյ»:<sup>8</sup> Այս մասին Կիրակոս Գանձակեցին հիշատակել է. «Եւ ժողովեն այնուհետև մանկունս բազումս և ուսուցանեն զբովանդակ աշխարհս և բաժանեն զմանկունս մատաղս և քաջուսմունս, *փափկածայնս և երկարոգիս* յերկուս, և կարգեն դպրոցս ասորերեն և հունարեն... *Սոքա երգեցողք ծիծռունք տատրակք քաղցրախօսք և ողջախոհք*, սրբութեան սիրիչք և աղտեղութեան անարգիչք»:<sup>9</sup> Այստեղից ակներև է դառնում երգ-երաժշտության ունեցած արժանի տեղը ժամանակի կրթական համալիրում: Մաշտոցի և Մահակի ջանքերով հիմնադրվել են հայոց այն վարդապետարանները, որոնք ավելի ուշ՝ հատկապես զարգացած ավատատիրության դարաշրջանում լի են եղել փիլիսոփա երաժիշտներով, և որտեղ, սկսած VI դարից, դասավանդվել են «տրիվիում» և «քվատրիվիում» դասընթացները:<sup>10</sup>

Պատմագրական վկայությունները լիովին հավաստում են, որ V դարի սկզբում հայոց քրիստոնեական ծիսակարգի բարեկարգումը ղեկավարել են Մեսրոպ Մաշտոցն ու Մահակ Պարթևը:

Մասնակցե՞լ են արդյոք երկու մեծ գործիչները ծիսակարգի երաժշտության բարեկարգմանը: Այս մասին ուղղակի հիշատակություններ չկան, սակայն որոշ վկայություններում դա լիովին ենթադրվում է: Այդ տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում Ղազար Փարպեցու հիշատակությունը Մահակ Պարթևի մասին. «...որոց օգնելով զօրէր երանելին Մաշտոց, հանդիպեցուցանէր զհայերեն աթոթայսն ըստ կարգման սիրվբայիցն Յունաց, ստեյ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Մահակայ որ յոյժ առցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ *երգողական տառիցն* և հռետորական յորդասաց յայտնաբանությամբ, ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիր»:<sup>11</sup> Հայագիտության մեջ «երգողական տառից» արտահայտությունը դիտվել է «երաժշտական տառերի» իմաստով: Այսպես. ըստ Մ.Աբեղյանի՝ «որ Մահակ Պարթևը կատարելապէս հմուտ է եղել «երգողական տառիցն», կնշանակի՝ իրական հիմք ունի Ծարակնոցի հաղորդումը, թե «նախ սուրբ Մահակ և Մեսրոպ ասացին *գութն եղանակավոր ձայնսն*», հավանորեն և այն, որ նրանք հեղինակ են եղել կցուրդների»:<sup>12</sup> Ծարակնոցի և մատենագրական այլ աղբյուրների տեղեկություններին դեռևս կանոնադառնանք: Այժմ նշենք, որ հետազայում «երգողական տառերի» համակողմանի քննությունը բերել է այն

<sup>6</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն..., էջ 17:

<sup>7</sup> Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1865, էջ 247:

<sup>8</sup> Կ ո ը յ ո ս ի ն, Վարք Մաշտոցի, էջ 82:

<sup>9</sup> Կ ի ը ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 26-27:

<sup>10</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 72, 109:

<sup>11</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն ... , էջ 15-16:

<sup>12</sup> Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 531:

եզրահանգմանը, որ, ինչպես նշել է Ն. Թահմիզյանը, Սահակ Պարթևը «հմուտ է եղել հունական ձայնավոր տառերին վերաբերող երաժշտա-քերականական հիմնավորք ուսմունքի մասնահատուկ բնագավառում»<sup>13</sup>, մաս «ընդհանրապես երաժշտարվեստի հարցերում»<sup>14</sup> Այս առումով «խոսում» է մաս Դազար Փարպեցու «տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն» արտահայտությունը: Հայտնի է, որ միջնադարում *փիլիսոփան* մաս երաժիշտ-երգահանի կոչումն է եղել: Հիշենք Ներսես Շնորհալու այն վկայությունը, թե «ունիմք սովորաբար փիլիսոփայ ասել որք *յերաժշտական արհեստս կատարեալք են*»<sup>15</sup> Դազար Փարպեցու հիշատակությունը թույլ է տալիս Սահակ Պարթևին դիտելու որպես ժամանակի նշանավոր երաժիշտ գիտնականներից մեկը:

Այժմ անդրադառնանք Մաշտոցի երաժշտական գործունեությանը նվիրված հիշատակություններին: Այդպիսի տեղեկություններ պահպանվել են, թեև վաղ միջնադարյան աղբյուրներում դրանք չեն հանդիպում: Այդ մասին կարևոր տեղեկություն ունի XII-XIII դդ. մատենագիր Կարապետ Սասնեցին՝ Մաշտոցին նվիրված ներբողում, որտեղ ասվում է, «Եւս և զփառս թագաւորաց և զպատիւս իշխանաց և զգովութիւնս յըսմկաց, զծաղկահոտ զինիսն, և զարուեստաւոր մատռուակսն, *զբաղցրածայն տալիդս՝ և զուշատար ջնարս*, և զգողտրիկ կերակուրս, և որ ինչ մասունք հետևին սոցա: ... Սանճեր զլեզուն և աղխեր զշրթունսն, ոչ շարժիլ և ոչ բանիլ ի բանս ունայնս, այլ պարապել միշտ աստուածաշունչ մատենից. *յարմարէր զբերանն քնար՝ և զատամունսն լար, զշրթունսն մատունք, և զլեզուն կնտրնդոց. և զհոգին խառնեալ ընդ Աստուծոյ հոգւոյն, և լեալ երաժիշտ՝ երգէր քաղցրածայն զերգս հոգևորս ի փառս սուրբ երրորդութեան*»<sup>16</sup>:

Մերոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երաժիշտ լինելը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում այն գիտական կարծիքի հիմնավորման համար, որի համաձայն՝ երկու մեծերի գործունեության արգասիքն է համարվում ՈՒՔձայնի համակարգումը: Այս տեսակետից հետաքրքիր աղբյուրներ են հանդիսանում Առաքել Սյունեցու (XV դ.), Ստեփանոս Չիք Ջուղայեցու (XVII դ.) և Հակոբ Սսեցու (XVII դ.) չափածո ստեղծագործությունները.

Նոցա գրլուխըն ամենին  
Մերոպ, Սահակ էր պարթևին,  
Բուն թարգմանիչք հայոց ազգին,  
Մուրք երաժիշտք աստուածային  
Այնք որ ութեակ ձայնս կարգեցին,  
Եւ կըրկնակի Ստեղի եղին:<sup>17</sup>

Նախ մեծ Մերոպ Տարօնեցին  
Ըզկարգ Աղցիցն ամենևին:<sup>18</sup>

Նախ Աղցաց կարգն է Մերոպայ:<sup>19</sup>

Համադրելով այս քերթվածքները պատմագրական հիշատակությունների հետ, Ն. Թահմիզյանը եկել է այն եզրակացության, որ առաջինները երկրորդների մասնավորեցումն են:<sup>20</sup> «Մերոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը ձայնեղանակների վերանայման ու վերակարգավորման գործը նույնպես պետք է գլուխ բերած լինե-

<sup>13</sup> Ն. Թահմիզյան, *Սահակ Պարթևը և հայ եկեղեցական երգարվեստը, Էջմիածին, 1973, 1, էջ 10:*

<sup>14</sup> Նույնը:

<sup>15</sup> Ն. Թահմիզյան, *Ներսես Շնորհալին երաժիշտ և երգահան, Եր., 1973, էջ 15-16:*

<sup>16</sup> Ներբողեան յաղագս վարուց սրբոյն Մերոբայ, ասացեալ Կարապետ եպիսկոպոսի եւ Վարդապետի Սասնեցոյ, «Արարատ» 1897, էջ 379-380:

<sup>17</sup> Առաքել Սյունեցին և իր քերթուածքները, Վենետիկ, 1914, էջ 322-323:

<sup>18</sup> Բերվում է ըստ Ն.Թահմիզյանի «Մերոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը» հոդվածի, «Բանբեր մատենադարանի», 1964, հ. 7, էջ 175:

<sup>19</sup> Նույնը:

<sup>20</sup> Ն. Թահմիզյան, *նշվ. աշխ., էջ 173:*

ին,-համոզված է Ն. Թահմիզյանը,- որովհետև նրանք V դարի մշակութային խոշոր շարժման ռահվիրաներն էին և, որպես այդպիսիք, կարևոր շատ գործերի նախաձեռնողը: Այնուհետև նրանք իրենց շրջապատի ամենագարգացած գործիչներն էին, և, հետևաբար, երաժշտության տեսության ու գործնականին էլ քաջատեղյակ մարդիկ: Նրանք պատասխանատու էին ծեսի և արարողության նաև երաժշտական մասի բարեկարգման համար: Առաջինը՝ իր պաշտոնի բերումով, իսկ երկրորդը՝ վարդապետի և ուսուցչի իր հասարակական մեծ դիրքով»:<sup>21</sup>

Մտքույ Մաշտոցի և Մահակ Պարթևի գործի շարունակողներից մեկը Հովհան Մանդակունին է, որը, համաձայն Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակության, ողջ ժամկարգության բարեկարգողն էր. «Եւ զկնի նորա (Գյուտ կաթողիկոսին) յաջորդէ զաթոռ հայրապետութեան Յոհան Մանդակունի, որ առլցեալ իսկ էր ամենայն հոգևոր հանճարով, և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթական ժամկարգութիւնս եկեղեցոյ սրբոյ. և յարդարէ ևս առս զգուշացուցիս դիտաւորական կենցաղոյս, որ բերէ զոգուցն փրկութիւնս»:<sup>22</sup> Այս կարծիքին է նաև Կիրակոս Գանձակեցին. «Եւ...Յովհան Մանդակունի ... բազում կարգաւորութիւնս եմոյծ յեկեղեցի՝ կարգեաց քարոզս աղոսեացիցն և զաղօթս նոցա զերրորդ ժամուն և զվեցերորդին, և զեկեղեցոյ հիմնարկէքն, և ժամահարի, սկիհ և մաղզմայի, և զհրք, և կնունք, և խաչ օրհնել և պսակ, զայս ամենայն նորա կարգեալ է»:<sup>23</sup> Այս և այլ մատենագրական աղբյուրների վրա հիմնվելով՝ Ն.Թահմիզյանը ամբողջացրել է V դարի նշանավոր կաթողիկոսի մեծ վաստակը՝ գրելով. «Նա նոր նյութերով հարստացրել և խմբագրել է հայկական առաջին կանոնացված երգարանը - հիմնավորը Աղոթարան-ժամագիրքը, քարգմանել է (հունարենից) մի քանի Պատարագամատույցներ և խմբագրել ու հաստատել է հայոց Պատարագամատույցը: ... Իր տաղանդավոր ստեղծագործություններով Մանդակունին նպաստել է հայոց ինքնուրույն նորաստեղծ հոգևոր երգի հետագա արգագմանը»:<sup>24</sup>

Այլոց մասին մանատիպ հիշատակությունները որոշ դեպքերում սուր վիճաբանությունների առիթ են հանդիսացել, հատկապես, երբ բացակայել կամ շատ սակավ են եղել համաբնույթ օժանդակ աղբյուրները: Այսպես. ժամանակին հակամետ կարծիքների տեղիք է տվել Շիրակի Դպրեվանքի առաջնորդ Բարսեղ Ճոնի երաժշտական գործունեությունը վկայող Վարդան Արևելցու հաղորդումը: Անդրադառնալով VII դարում Ներսես Գ կաթողիկոսի օրոք տեղի ունեցած մի իրադարձության, պատմիչը գրում է. «Սա մեծ ժողովով առնէր զտօն վարդավառին, և ուր հարց փոխեցին, և ոչ կարացին առնուլ զմիմեանցն. ապա հրամայեաց ընտրել զարժանն և զայն միայն ուսանել, զոր և արար ՚ի ձեռն սրբոյն Բարսղի, մականունն Ճոն կոչեցելոյ, որ էր առաջնորդ սուրբ ուխտին՝ որ Դպրավանք կոչի ՚ի զաւտին Անոյ. որում ասեն, թէ եօթն անգամ ետես զՔրիստոս սքանչելի համարձակութեամբ, վասն որոյ Ճոնընտիր կոչի շարականս՝ որ պաշտի յեկեղեցիս մեր»:<sup>25</sup>

Մ.Աբեղյանը ենթադրել է, որ նկարագրված «դեպքը երևի XII դարից Ներսես Շնորհալու և իր ժամանակակից՝ «ամենագովելի» և «աստուածաշնորհ» Բարսեղ վարդապետից» (1162թ.) փոխադրված է VII դարը՝ Ներսես Շնորհի ժամանակը:<sup>26</sup> Սակայն, ինչպես ցույց է տվել Ն.Թահմիզյանը, XII դարում ապրող Բարսեղ Քենտունցու (որը «Ճոն» մականունը չի կրել) կենդանության օրոք Ներսես Շնորհալուն

<sup>21</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, նշվ. աշխ., էջ 177:

<sup>22</sup> Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 90:

<sup>23</sup> Կ ի ռ ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն..., էջ 35:

<sup>24</sup> Н. Т а г м и з я н, Ован Мандакуни и армянское духовное профессиональное песнопение. V республиканская научная конференция по проблемам культуры и искусство Армении, тезисы, Ер. 1982, стр 405.

<sup>25</sup> Հաւարումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 69:

<sup>26</sup> Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 530:

կաթողիկոս չէր տակավին»:<sup>27</sup> Բարսեղ Ճոնը ամենայն հավանականությամբ հեղինակել է «Յարութեան» կոչվող մեծացուսցեների ԱԶ-ԴԿ առանձին շարքի հիմնական մասը,<sup>28</sup> և, որ ավելի կարևոր է, Ճոնը հայ հոգևոր ինքնուրույն երգերի անդրանիկ ժողովածուն կազմողն է:

Պատմագրական որոշ վկայությունների աղբյուրագիտական արժեքը բացառիկ է նրանով, որ դրանք ընդգրկում են ստեղծություններ երաժիշտների մասին, որոնց ստեղծագործական ժառանգությանը վերաբերող այլ աղբյուրները շատ սակավաթիվ են կամ էլ բոլորովին չեն պահպանվել: Անդրադառնանաք Անանիա Նարեկացու երաժշտական գործունեության մասին Ուխտանես եպիսկոպոսի և Ստեփանոս Տարոնեցու վկայություններին: Ուխտանեսի, որի Պատմության պատվիրատուն հենց ինքը՝ Անանիա Նարեկացին էր, պատկերավոր նկարագրության մեջ Նարեկացին «բանիբուն Պուետիկոս» և «հռչակավոր Հռետոր» էր,<sup>29</sup> և «հոգևորական երգով գեղգեղեամբ գեր ի վերոյ քան զամենեսեան» էր:<sup>30</sup> Պուետիկոս, հռետոր անվանումներից ակներև է, որ Նարեկացին իր ժամանակի նշանավոր երաժիշտներից պետք է լիներ: Այդ նրա օրոք էր, որ հիմնադրվեց հռչակավոր Նարեկա վանքը, որի մասին Ստեփանոս Տարոնեցին գրել է. «Այսպէս և յայժմ ժամանակիս շինեցաւ Նարեկ ի Ռշտունեաց զաւառին նոյն կարգադրութեամբ, բազմազարդ պաշտօնապայծառ երգեցողովք և գրական գիտողօք»:<sup>31</sup>

Ընկերվով Նարեկացու մասին վկայությունները՝ Ն.Թահմիզյանը հայտնել է այն միտքը, որ «ձեռագրերում կարող են հայտնաբերվել նրա գրչին պատկանող տաղեր և այլ երգեր»:<sup>32</sup> Ն.Թահմիզյանն անդրադարձել է նաև Նարեկացուն վերագրվող «Խրատ քահանայից»-ին, որը դիտվել է իբրև նրա երաժշտական գործունեությունը հավաստող վկայություն:<sup>33</sup> Մակայն, ըստ Հ. Թամիրազյանի, այն Անանիա Նարեկացու աշխատությունը չէ:<sup>34</sup> Եվ չնայած դրան, պատմագրական տվյալները հիմքեր տալիս են հոգուտ Նարեկացու երաժշտական գործունեության մասին կարծիքի:

Պատմագրական հիշատակությունների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում XII դարի հայ մշակույթի նշանավոր գործիչ Խաչատուր Տարոնեցու երաժշտագիտական գործունեության մասին Կիրակոս Գանձակեցու հաղորդումը. «էր ի տօնախմբութեան եկեղեցոյն և սուրբ վարդապետն Խաչատուր Տարօնացի, առաջնորդ սուրբ ուխտին, որ կոչի Հաղարծին, այր սուրբ և առաքինի և գիտութեամբ հրոչակեալ՝ մանաւանդ երաժշտական արեստի: ...Սա երբ զխազն ի կողմանս արևելից, զանմարմին եղանակսն ի մարմին ածել, զարարեալսն իմաստնոց, որ ցայն ժամանակս չէ եր սփռեալ ընդ աշխարհս: Սա եկեալ գրեաց և ուսոյց բազմաց»:<sup>35</sup> Թեև Կիրակոս Գանձակեցին լռում է նրա ստեղծագործական ժառանգության մասին, սակայն պատմագրի արժեքավոր հիշատակությունը վճռորոշ դեր է կատարել Տարոնեցու ստեղծագործական ժառանգության խրթին հարցերի պարզաբանման գործում: Միակ ստեղծագործությունը, որը հավաստիորեն համարվել է Խաչատուր Տարոնեցու, քահանայի զգեստավորման «Խորհուրդ խորին» շարականի պահպանված երեք տարբերակներից մեկն է:<sup>36</sup>

<sup>27</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, Բարսեղ Ճոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում, ԲԵՀ, 1973, N 1, էջ 214-215:

<sup>28</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, Ներսես Շնորհալիս երգահան և երաժիշտ, Եր., 1973, էջ 19:

<sup>29</sup> Ու խ տ ա ն ն ե ս ե պ ի ս կ ո ս յ ո ս, Պատմութիւն Հայոց, Էջմիածին, 1871, էջ 113-114:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>31</sup> Մ տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ն ե ց ի Ա ս ո ղ ի կ, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 174:

<sup>32</sup> Ն.Թ ա հ մ ի զ յ ա ն, Անանիա Նարեկացու և Նարեկ Վանքի երաժշտական ավանդույթների մասին, «Էջմիածին», 1976, հ.9, էջ 32:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 34-36:

<sup>34</sup> Հ. Թ ա մ ր ա զ յ ա ն, Անանիա Նարեկացի, Եր., 1986, էջ 200-201:

<sup>35</sup> Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն..., էջ 211-212:

<sup>36</sup> Չայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 192:

Որոշ հեղինակներ Տարոնեցուն են վերագրել զանձերի ու տաղերի զգալի մաս (Հ.Տաշյան, Գ.Զարպիհանայան), ոմանք էլ, հակառակը, դրանք դնում են Խ.Կեչա-  
նեցու ժառանգության մեջ (Ֆր. Կոնիբիբ, Գ.Հովհաննիսյան): Այնուհանդերձ պետք է հուսալ, որ նոր աղբյուրների հայտնաբերման շնորհիվ ի վերջո լույս կափռվի մեծ երաժշտագետի Խաչատուր Տարոնեցու ստեղծագործական ժառանգության դեռևս մութ էջերի վրա:

Ավելացնենք նաև, որ այդ կարևոր խնդրի մասին արժեքավոր դիտողություն ունի Ն.Թահմիզյանը, որ մի շարք զանձերի գրական տեքստերի համեմատության հիման վրա ենթադրել է, թե «Տարոնեցին սույն և նման զանձերի հորինումով գրիչը կոփելուց հետո է կերտել զգեստավորման երգը»:<sup>37</sup>

Մինչ այժմ դիտարկված վկայությունները միջնադարյան հեղինակների երա-  
ժրշտական գործունեության մասին ընդհանուր տիպի բնութագրումներ էին: Միջ-  
նադարյան գրավոր աղբյուրներում հաճախ են հանդիպում նաև վկայություններ այս կամ այն անհատ երաժշտի մասին: Այդպիսի մեծաքանակ վկայություններով լի են հայերեն միջնադարյան ձեռագրերի հիշատակարանները: Նախ մեջբերենք պատմագիրներին. Ստեփանոս Տարոնեցու *Իմաստակն Սամուէլ* (X դար)<sup>38</sup> Մատ-  
թեոս ՌՒռիայեցու *Թեոդորոս Ալախոսիկ* (XI դար) և *Խաչիկ* (XI դար),<sup>39</sup> «որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց»,<sup>40</sup> Գրիգոր Մագիստրոսի *յաղագս երա-  
ժրշտիդ Դանիէլի*» (XI դար)<sup>41</sup> վկայություններ:

Նշենք նաև համարնույթ վկայությունները ձեռագրերի հիշատակարաններից. «Ես նուստ երաժիշտս Թարոսս զփափագումն սրտի իմոյ ու յիշատակ հոգւոյ իմոյ ետու գրել զսուրբ Աւետարանս...» (XIII դար):<sup>42</sup> «Եւ արդ արարեալ սկիզբն Տաղարանիս ...աղաչեմ զամենեսեան ... յիշեսցիք ի Տէր, և զՅուսեփ երաժշտապետ, որ զարինակն անձանձիբ շնորհեաց» (XIII)<sup>43</sup> «Եւ արդ աղաչեմ հողացեալ բերանովս... յիշեսցիք... և զբարի վարդապետ իմ՝ զՍամուէլ երաժշտա-  
պետն և մակացու յաստուածայինս...» (XIII դար):<sup>44</sup> «ՁՆովսէփ եղկէի զստացող եւ զգծող սորա յիշեսցիք ի Տէր, եւ զհոգևոր հայր իմ եւ զուսուցիչ զՓիլիպպոս երաժիշտ» (XIII դար):<sup>45</sup> «Դարձեալ աղաչեմ յիշել ի տէր զհոգևոր հայրս իմ և զյոյժ երախտաւոր ուսուցիչ իմ զտէր Սահակ բանի սպասաւորս և քաղցրաձայն երաժիշտս» (XV դար)<sup>46</sup> «...ընդ նմին յիշեցէք զհոգևոր եղբարքս մեր Աւետիք վարդապետն երաժշտականի, որ ուսուց զձայնաւորքն ընդունելի, և զտէր Յովսէփ քաջ փիլիսոփայն, որ բազում աշխատեցաւ ի յետ մեզ յուսուցանելն զդժարախազ շարակունքս...» (XV դար):<sup>47</sup> «Յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր և աստուած ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս, առհասարակ, ողորմեսցի, ամեն. նաև զհոգևոր հայր իմ զյոյժ երախտաւորն առ հոգևորն և առ մարմնաւորն, զվարժապետն իմ և յուսուցիչն, զանհաս երաժիշտն և քաղցրաձայն զՄեծապարոն սարկաւազն և զուսուցիչն մանկանց Սիոնի, զոր և միոյն հարիւրապատիկ տացէ նմայ Քրիստոս զերկնից արքայութիւն...» (XV դար):<sup>48</sup>

<sup>37</sup> Ն. Թ ա հ մ ի գ յ ա ն, Հաղարծնի Վանքը և Խաչատուր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Արվեստագիտություն, Եր., 1975, էջ 193:

<sup>38</sup> Մ տ է փ ա ն ո ս Տ ա ր ո ն է ց ի, Պատմություն, էջ 174:

<sup>39</sup> Մ ա տ ք ե ն ո Ս Ռ Ւ Ր ի ա յ ե ց ի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 215,252:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 244:

<sup>41</sup> Գ ռ ի գ ռ Մ ա գ ի ս տ ռ ո ս, Թղթեր, էջ 124:

<sup>42</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Եր., 1984, էջ 53-54:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 221-222:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 255-256:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 299:

<sup>46</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին, Եր., 1955, էջ 188:

<sup>47</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն երրորդ, Եր., 1967, էջ 10:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 360-361:

Հիշատակարանները հավաստում են, որ *երաժիշտ* կոչումը միջնադարում տրրվել է ոչ միայն անհատ երգահաններին, այլև հոգևոր երաժշտության հմուտ գիտակներին:

Այժմ անդրադառնանք վկայությունների այն խմբին, որտեղ որևէ հեղինակի (կամ հեղինակների) գործունեության ընդհանուր և համառոտ բնութագրից հետո հիշատակվում է կոնկրետ ստեղծագործություն: Այս տվյալները վճռորոշ դեր են կատարել տվյալ հեղինակի ստեղծագործական ժառանգության ճշգրտման և ամբողջական բնութագրի համալրման գործում: Այսպիսին են, մասնավորապես Մեսրոպ Մաշտոցի և Մահակ Պարթևի ստեղծագործությունների մասին Կիրակոս Գանձակեցու և Կարապետ Մասնեցու հիշատակությունները: Գանձակեցին երկու նշանավոր գործիչների և նրանց աշակերտների գործերի ընդհանուր ցուցակում հիշատակել է ապաշխարության շարականների մասին, որոնք հետագայում վերագրվել են Մաշտոցին. «*Արարին և երգս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով ծննդեանն Քրիստոսի և քառասնօրեայ գալստեանն ի տաճարն, մկրտութեանն և եկատրութեանն ի Բեթանիա և յԵրուսաղէմ, մեծի շարաթուն չարչարանացն և յարութեանն, համբարձմանն և հոգւոյ գալստեանն, խաչի և եկեղեցւոյ, և այլ տօնից տերունականաց, և սրբոց ամենեցուն, ապաշխարութեան և ամենայն ննջեցելոց, պէսպէս և զանազանս և անթիւս, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս Հայաստանեայց*»:<sup>49</sup> Եթե Գանձակեցու վկայությունը ընդհանուր բնույթի է, ապա Կարապետ Մասնեցին ուղղակի է նշել, որ Մաշտոցը երգել է «եղանակ ապաշխարութեան». «...երգելով գերզս երից մանկանցն, և շարարան եղանակ ապաշխարութեան՝ ըստ թույ աւուրց պահոցն գոր ընկալեալ երգէ եկեղեցի սուրբ»:<sup>50</sup>

Պատմագրական համաբնույթ արժեքավոր հիշատակություններ են մեզ հասել երեք նշանավոր կաթողիկոսների՝ Կոմիտաս Աղցեցու, Հովհան Օձնեցու և Ներսես Շնորհալու, ինչպես նաև Հովհաննես սարկավազ Իմաստասերի գործունեության և ստեղծագործությունների մասին: Այսպես, Գանձակեցին արժեքավոր վկայություն ունի Կոմիտաս Աղցեցու նշանավոր «Անձինք նուիրեալք» շարականի մասին. «Յետ տեանն Յովհաննիսի առնու զկաթողիկոսութիւնն տէր Կոմիտաս ամս ութ: Սա շինեաց գաութր տիկնոջն Հռիփսիմեայ զվկայարանն պայծառ և հրաշալի, զի խրթին էր առաջին շինուածն. գտանէ ի նմին զնշխարս ոսկերաց սրբոյն՝ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Մահակայ, և ոչ իշխեաց բանալ, այլ իրով մատանեան կնքեալ՝ ամփոփէ անդէն, արարեալ երգս շարականաց սրբոցն հայերէն այբուբենօք, որոյ սկիզբն է այս»:<sup>51</sup>

Բացառիկ արժեք է ներկայացնում Գանձակեցու հիշատակությունը՝ նվիրված Հովհան Օձնեցու երաժշտաբանաստեղծական ժառանգությանը: Մասնավորապես, անդրադառնալով Եզր կաթողիկոսի քաղկեդոնասեր գործունեության շնորհիվ հայոց եկեղեցում տիրող «անկարգության» բարեկարգմանը ու ծիսակարգի «հայացմանը» ուղղված Օձնեցու ջանքերին, պատմիչը հիշատակել է նաև Գավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի տոներին նվիրված կանոնի Հարցի շարականը. «...և երգեաց շարական հարցին՝ «Մեղաք յամենայնի և զպատուիրանս քո ոչ պահեցաք. արդ խոստովանիմք առ քեզ», որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս հայոց, սկսեալ ի ճԻԵ թուականէն մինչև ի ՈՂ թուականս, որ այժմ աւուրս մեր է»:<sup>52</sup> Նշենք, որ Օձնեցուն շարականագիրների տարբեր ցուցակներում վերագրվել է ոչ միայն հիշյալ «հարցը», այլև ամբողջ կանոնի երգերի մեծ մասը (Օրհնություն՝ երկու պատկերով, Հարց, Գործք, Ողորմյա, Տեր Հերկնից և Մանկունք և այլ կանոնների երգեր):<sup>53</sup>

Ինչպես և պետք էր սպասել, ամենաածավալուն և փաստառատ հիշատակությունները վերաբերում են Ներսես Շնորհալու երաժշտական գործունեությանն ու

<sup>49</sup> Կ ի ռ ա կ ն ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն..., էջ 29-30:

<sup>50</sup> Կ ա ռ ա պ ե տ Մ ա ս ն ե ց ի, Ներքողեան յաղագս ..., էջ 382:

<sup>51</sup> Կ ի ռ ա կ ն ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն ..., էջ 53:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 69-70:

<sup>53</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, Գ. Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Եր., 1985, էջ 188:

քողած ժառանգությանը: Այսպես, Կիրակոս Գանձակեցին գրում է. «...կարգեաց նա յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խոսրովային ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս, քանզի նորա է յարութեան օրհնութիւնն՝ երրորդ կողմն, և աստուածածնի փոխման երկուց ատուրցն, և Պետրոսի և Պողոսի օրհնութիւնն, և մանկունքն և համբարձին, ... և Որդւոցն որոտման օրհնութիւն և շարական մի Անտոնի, և երկու Թ՛ոդոսի և մի քառասնիցն, և մի առաքելոցն, և աւագ շարաքին երից ատուրց օրհնութիւն, երկուշարքին, երեքշարքին, չորեքշարքին, և երկու շարական յարութեան ճաշոյ, և Նինուէացոցն, և հրեշտակապետացն, և Վարդանացն, և այլ քազում շարականս: ...արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն»:<sup>54</sup> Ի դեպ, XIII դարից ի վեր վարքագրական աղբյուրների մեջ Գանձակեցու Պատմությունը Ներսես Շնորհալու ստեղծագործական ժառանգությունն առավել մանրամասն նկարագրող աղբյուրներից է: Ավելին, Գանձակեցու հիշատակությունը իրավամբ համարվել է այլ աղբյուրների ճշգրտման կարևոր միջոց: Հատկապես կարևորում ենք պատմիչի այն հաղորդումը, թե «արար նա զքարոզ սրբոյ պատարագին»: Եթե նկատի ունենանք, որ Պատարագամատույցի բարեկարգման մասին այլ հիշատակություններ չեն պահպանվել, ապա Գանձակեցու վերոբերյալ հաղորդումը, իրոք, շատ խոսուն ու ծանրակշիռ փաստի արժեք է ստանում:

Ըստ Ն.Թահմիզյանի, հնարավոր է ենթադրել, որ Գանձակեցին տվյալ դեպքում նկատի ունի մի հայտնի, ծավալուն ու ամբողջական միավոր, ինչպիսին է Հայոց Պատարագում սարկավազի քարոզներից «Եւ եւս խաղաղութեան...»-ը:<sup>55</sup> Միաժամանակ նա նաև այն կարծիքին է, որ «Չայնագրյալ Պատարագում սարկավազի քարոզների այլ եղանակներ ևս (իսկ որոշ դեպքերում՝ գուցե և խոսքերի վերախմբագրումը) պատկանում է Շնորհալու գրչին»:<sup>56</sup> Կ. Գանձակեցին առավել որոշակի է խոսել Շնորհալու, այսպես կոչված, արտապաշտամունքային<sup>57</sup> ստեղծագործությունների մասին («Յիշեսցուք ի զիշերի», «Չարթիք փառք իմ», ուշագրավ հանելուկներ), որոնք «ասասցեն ի զիներբուս և ի հարսանիս»:<sup>58</sup>

Կիրակոս Գանձակեցին ունի նաև մեկ այլ հիշատակության, որը Հովհաննես սարկավազ Իմաստասերի երաժշտական գործունեությունը վկայող նույնպես միակ աղբյուրն է. « արար և շարական Ղևոնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար քանիւ, որոյ սկիզբն է. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք», զրեաց սա և զիրս աղօթից. զրեաց և օրինակս ստոյգ գրոց»:<sup>59</sup>

Մինչ այժմ նշված պատմագրական հիշատակությունները երաժշտագիտական ուսումնասիրություններում ընդունվել են անվերապահորեն: Մինչդեռ կան նաև այնպիսիները, որոնք առայսօր տարակարծություններ են առաջացնում: Այդպիսին է Վարդան Արևելցու հիշատակությունը VII դարում Աշոտ Պատրիկ Բագրատունու՝ Դարույնքի Ամենափրկիչ եկեղեցու նավակատիքի առիթով հորինած և կատարած «Ձորս ըստ պատկերին քում» շարականի մասին. «(Աշոտ-Հ.Մ.) շինեաց զԴարօնից եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր երեր որդի նորա յարևմտից, մասամբ. և ՚ի նաւակատիսն երգեաց Ձորս պատկերին»:<sup>60</sup> Այն, որ հայոց պաշտոներգության մեջ կարող էր ընդգրկվել աշխարհիկ հեղինակի ստեղծագործություն, եզակի երևույթ չէ միջնադարում:<sup>61</sup> Վիճահարույց մեկնությունների առիթ է հանդիսացել պատմիչի հիշատակած հեղինակի և շարականագիրների միջնադարյան մի շարք արժեքավոր ցուցակների տվյալների

<sup>54</sup> Կ ի ռ ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե յ ի, Պատմութիւն ..., էջ 118-120:

<sup>55</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, Ներսես Շնորհալին..., էջ 42:

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> Օգտագործել ենք Ն.Թահմիզյանի տերմինը, որով նշվել են բնույթով կրոնական, սակայն պաշտոներգությունից դուրս կատարվող երգեցողությունները:

<sup>58</sup> Կ ի ռ ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե յ ի, Պատմութիւն ..., էջ 147:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>60</sup> Հատարումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 71:

<sup>61</sup> Հիշենք Խոսրովիդուխտ Գողթնեցուն

անհամապատասխանությունը:<sup>62</sup> Գրանցում իբրև հեղինակ նշված է Գրիգոր Մագիստրոսը, որը նույնպես հայոց բարձրաշխարհիկ տոհմի ներկայացուցիչ էր և նաև բազմաշնորհ արվեստագետ: Ուշագրավն այն է, որ փաստերի այս հակադրության մեջ այնուամենայնիվ ավանդաբար նախընտրելի<sup>63</sup> է համարվում Արևել-ցու հիշատակությունը: Թեև խնդրի համակողմանի քննությունը, որ բողոքովին վերջերս կատարվել է Ա.Արևշատյանի կողմից,<sup>64</sup> աղբյուրագիտական և տեքստա-բանական մանրագնին վերլուծությամբ հիմնավորվում է Գրիգոր Մագիստրոսի հեղինակման փաստը՝ XI դարում Հավուց Թառի վանական համալիրի վերակառուցման մեծածավալ աշխատանքի շրջանակներում:<sup>65</sup> Այս պարագայում ամենայն հավանականությամբ կասկածելի է դառնում այն աղբյուրի հարցը, որից օգտվել է Արևելցին: Կարելի է ենթադրել, որ իր ժամանակին Աշոտ Պատրիկ Բագրատունին ևս հորինել է, և այդ մասին ինչ-ինչ հիշատակումներ պատճառ են հանդիսացել, որ Վարդան Արևելցին նույնացներ այդ ստեղծագործությունները:

Հայագիտության մեջ իրարամերժ մեկնություններ են առաջացրել նաև Ստեփանոս Սյունեցի նույնանուն երկու երաժիշտների մասին հիշատակությունները, որոնք հանդիպում են Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի և Թովմա Մեծոփեցու աշխատություններում: Նշենք, որ կասկածի տակ է առնվել նրանց գոյության փաստն իսկ:

Երկու տարբեր հեղինակների գոյությունը հավաստող հիշատակություններ են Գանձակեցու արժեքավոր վկայությունները, որոնք առաջին անգամ մանրագնին քննել է Մ. Չամչյանը: Ստեփանոս Սյունեցի Բ-ի մասին նշել է Մանուկ Աբեղյանը, որը, սակայն չի անդրադարձել Ստեփանոս Սյունեցի Ա-ի ժառանգության խնդրին:<sup>66</sup> Ն.Թահմիզյանը ևս, հենվելով Մ. Չամչյանի տեսակետի վրա, Գանձակեցու տվյալներից բխեցրել է երկու տարբեր հեղինակների գոյությունը:<sup>67</sup>

Անդրադառնանք դրանց: Կիրակոս Գանձակեցին նախ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի մասին հիշատակել է V դարի թարգմանիչների թվում,<sup>68</sup> այնուհետև նույնանուն հեղինակ է նշվել նաև հաջորդ էջում քերականների և թարգմանիչների շարքում:<sup>69</sup> Ըստ Ն.Թահմիզյանի՝ Ստեփանոս Սյունեցի առաջինը V դարի հեղինակ է, մինչդեռ երկրորդը՝ VIII: Որոշ աղբյուրներում, օրինակ հայամավորներում Ստեփանոս Սյունեցի Ա-ն հիշատակվել է նաև Ստեփանոս Ասողիկ մականունով:<sup>70</sup> Ստեփանոս Սյունեցի Ա-ին այդպես է անվանել նաև Թովմա Մեծոփեցին:<sup>71</sup> Արժեքավոր մանրամասներ ունի նաև Ստեփանոս Օրբելյանը. «... քաժանեաց և գութն ձայնսն և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնսն, երգեաց և կցուրդս քաղցրահամս, յարմարեաց և զստողոզին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդատր, և զպահոցն որ յաղուհացսն երգի. մեկնեաց և զխորհուրդ գիշերային պաշտմանն»:<sup>72</sup>

Թվում է, որ Ստեփանոս Օրբելյանի հաղորդումը հավաստում է Հարության ավագ Օրհնությունների՝ VIII դարի հեղինակ Ստեփանոս Սյունեցու լինելը (Ս. Ամատունի, Մ. Օրմանյան և ուրիշներ): Մինչդեռ Աբեղյանը, ապա նաև Ն.Թահմիզյանը այն հակառակ մտքին են, որ հիշյալ օրհնությունները կարող էին ստեղծվել

<sup>62</sup> Տե՛ս Ա.Արևշատյան, Ով է «Ձորս ըստ պատկերին քում» շարականի հեղինակը, «Էջմիածին», 1997, Գ-Ե:

<sup>63</sup> Նշենք, որ այսօր էլ այդ ավանդույթը պահպանում է իր գործառույթը հոգևոր երգերի ժողովածուներում:

<sup>64</sup> Ա. Արևշատյան, նշվ. աշխ.:

<sup>65</sup> Նույնը:

<sup>66</sup> Մ. Արևշատյան, նշվ. աշխ., էջ 539-540:

<sup>67</sup> Ն. Թահմիզյան, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, հ.2, էջ 32:

<sup>68</sup> Կիրակոս Անճաղի, Պատմութիւն ..., էջ 28:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>70</sup> Ն. Թահմիզյան, Սյունեցի համանուն..., էջ 32:

<sup>71</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 38:

<sup>72</sup> Մեծոփեցի Օրբելյան, Պատմութիւն ..., էջ 139:

ավելի վաղ:<sup>73</sup> Հետևաբար, ըստ վերջինի, մարգարեական օրհնությունների հարա-  
տությամբ հորինված կցուրդները վերագրելի են Ստեփանոս Սյունեցի Ա-ին:<sup>74</sup>

Ժամանակակից շարականագիտությունը, հիմնվելով բանագիտական ուսում-  
նասիրության վրա, հանգել է այն կարծիքին, որ իրենց լեզվա-ոճական բնորոշիչ-  
ների առումով հիշյալ օրհնությունները չէին կարող ստեղծվել վաղ միջնադարում և,  
հետևաբար դրանց հեղինակը Ստեփանոս Սյունեցի Բ-ն է:<sup>75</sup>

Պատմագրական հիշատակությունները բացառիկ կարևոր արժեք են ներկա-  
յացրել հատկապես այն դեպքերում, երբ դրանք այս կամ այն ստեղծագործության  
գոյության փաստող միակ աղբյուրն են: Այդպիսիներից է VII դարում աղվանից  
իշխան Ջվանշիրի մահվան առիթով Դավթակ Զերթողի հորինած Ողբի մասին  
Մովսես Կաղանկատվացու հիշատակությունը. «Յայնժամ ճարտասան ոմն ՚ի մէջ  
անցեալ, տեղեակ արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ՝ հնագի-  
տական վարժիւքն յաջողակ և վերձանական քերթութեամբ յառաջադէմ, յառատա-  
բեր բանից պաճուճանացն ճարտարութեամբ և քաջապէս հրատարակող, լեզու ու-  
նելով նման երագագիր գրչի, սա յոլով աւուրքք յառաջ ժաման էր ՚ի դրան  
արքունի: Եւ իբրև հասանէր օրհասական շշուկն ՚ի վերայ արևելից աշխարհիս  
սակս յանկարծահաս սպանման մեծի գօրավարին, յայնժամ սկսաւ նա *երգել ըստ  
ալֆաֆիտաց գլխակարգութեանց զողբս զայս ՚ի վերայ բարեացապարտին  
Ջիվանշիրի*»: <sup>76</sup> VIII դարի կին երաժիշտ Սահակադուխտ Սյունեցու հորինած  
շարականի մասին է հիշատակել Ստեփանոս Օրբելյանը. «Էր և սորա քոյր մի՝ ի  
մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան և առանձնացեալ ի ձորակին Գառնոյ  
յայրի միոջ, և անտեսանելի վարս ճգնութեան կրէր յանձին. որոյ անուն  
Սահակադուխտ: Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ և ի ներքոյ  
վարագոյրի նստեալ ուսուցանէր զբազումըս: *Եւ արար կցուրդս և մեղեդիս  
քաղցրեղանակս, յորոց մին՝ Սրբուհի Մարիամ, որ իւրով անուամբն է յօրհնեալ*»: <sup>77</sup>  
IX դարում Արծրունյաց իշխան Մուշեղի հորինած երգի մասին հիշատակել է Թով-  
մա Արծրունին. « Էր վարժեալ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտա-  
սանական հրահանգիցն՝ եղ առյայն ժամու իմացական տեսութիւնն զերգս՝ որոյ  
սկիզբն է՝ «Անգրադել ական սրտի նայեցող անձն իմ ի միսսանգամ գալուստն», ե  
տուն ի յութերորդ վանգէ»: <sup>78</sup> Գրիգոր Խլաքեցու (XV դար) ստեղծագործություն-  
ների մասին է հիշատակել Թովմա Մեծոփեցին. «Եւ բազում երգս զանձուց և  
տաղից յիշատակ թողեալ ինքնեան՝ յոյժ տօնասէր եւ պատուող սրբոց մինչև զի ոչ  
եղեալ է և ոչ լինելոց է»: <sup>79</sup>

Արժեքավորելով անհատ երաժիշտների մասին պատմագրական հիշատակու-  
թյունների նշանակությունը հայ միջնադարագիտության մեջ, կարող ենք կատարել  
հետևյալ եզրահանգումները. պատմական աղբյուրներում ընդգրկված փաստերը  
հաճախ եզակի բնույթի նյութ են պարունակում; համադրվելով մատենագրական  
այլ աղբյուրների տվյալների հետ՝ դրանք լուրջ կռվաններ են՝ այս կամ այն հեղի-  
նակի կյանքի ու ստեղծագործության մանրամասների ճշտման հարցում; հիշյալ  
աղբյուրների ամբողջական և համահավաք ուսումնասիրությունը մեծապես կըն-  
պաստի միջնադարյան երաժիշտ երգահանների համաստեղության համալրմանն  
ու նորովի արժեքավորմանը:

<sup>73</sup> Մ. Ա ք ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 340:

<sup>74</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, Սյունեցի համանուն..., էջ 35:

<sup>75</sup> Տե՛ս Չայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Եր., 1997, Առաջաբան, էջ XVIII:

<sup>76</sup> Մովսիսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ս., 1860, էջ 179:

<sup>77</sup> Մ տ ե փ ա ն ո ս Օ ռ բ ե լ ե ա ն, Պատմութիւն նահանգին Միսական, Թ., 1910, էջ 139:

<sup>78</sup> Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւնն տանն Արծրունեաց, Թ., 1917, էջ 297:

<sup>79</sup> Թ ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի, Պատմութիւն Լանկ- Թամուրայ ..., էջ 42:

---

**УПОМИНАНИЯ ОБ АВТОРАХ-МУЗЫКАНТАХ В АРМЯНСКОЙ  
СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИОГРАФИИ V-XV ВВ.***\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_**\_\_\_\_\_ А. Степанян \_\_\_\_\_*

Среди прочих письменных источников, историография является важнейшей составляющей в изучении жизни и творчества армянских средневековых авторов-музыкантов-гимнотворцев. Различаются следующие типы упоминаний: а) упоминается имя автора-гимнотворца или музыканта индивида. в) кроме упоминания имени автора перечисляются его произведения.

В статье дана научная оценка целостно-комплексного изучения письменных историографических источников.

ԿԱՏՈՒՆ ՀԱՅ ՀԱՎԱՏԱԼԻԶՆԵՐՈՒՄ

Կատվի պաշտամունքի նախահայրենիքը Հյուսիսային Աֆրիկան է: Կարևոր պաշտամունքային կենդանի է եգիպտական և հյուսիս-աֆրիկյան շատ ժողովուրդների մեջ: Կենդանու անունը և պաշտամունքը միգրացիոն ճանապարհով հասել է Առաջավոր Ասիա, ապա՝ բալթյան ու սլավոնական ժողովուրդներով միջնորդված՝ Արևելյան ու Արևմտյան Եվրոպա: Ըստ եգիպտական դիցաբանության՝ գլխավոր Ռա աստծու պաշտամունքում կատուն կարևոր տեղ է զբաղեցնում: Պատկերագրության մեջ աստվածությունը հանդես է գալիս մշտապես արծվի գլխով, սակայն ունի նաև հսկա կատվի<sup>1</sup> փոխակերպվելու հատկություն: Ըստ ավանդության, հենց այս կերպարանքով էլ Ռան մենամարտի մեջ է մտնում վիշապ օձի հետ և պարտության մատնում նրան<sup>2</sup>, անցնելով պաշտամունքային կարևոր կենդանիների շարքը<sup>3</sup>: Բայթո-սլավոնա-գերմանական դիցաբանական տեքստերում կենդանին կապվում է ամպրոպի աստծու հետ<sup>4</sup>: Լիտվական դիցաբանության մեջ ևս ամպրոպի աստված Պերկունասը կամ նրա հակառակորդները հաճախ փոխակերպվում են՝ ընդունելով կատվի և մանր կենդանիների, այդ թվում նաև մկան կերպարանք<sup>5</sup>: Հին գերմանական դիցաբանության մեջ, կատուն, բարձրանալով ամպրոպի աստծու՝ Թորի մոտ, դառնում է աշխարհի օձ:

Կենդանու անունը հավանաբար սկիզբ է առել նուրբական լեզվի բարբառներում պահպանված (kadis-կատու նշանակությամբ ձևից<sup>6</sup>, որը, հետագայում ձեռք բերելով արմատական կերպ, հաղորդվել է եվրոպական լեզուներին, ապա Մերձավոր Արևելքի և Եվրոպայի ժողովուրդներին՝ նույն միգրացիոն ճանապարհով: Հայտնի են կատու նշանակությամբ մի շարք տերմիններ, արաբ. kitt, արամ. katt<sup>7</sup>, վրաց. kti, լազ. k'ntO, կարաբղին. getu, ավարերեն keto, թուրք. kedi, keti, չերքեզ. kittu, վաղ եվրոպական լեզուներում պահպանվել է՝ պրուս. catto, լիտվ. kate, koՅ, լատիշ. kaՄպ, ուսու., kot, котъ, լեհ. և չեխ. kot, բուլղ. котка՝ հոլանդ. catt, լատին. cattus (վայրի կատու)<sup>7</sup>, հուն. katta:

Ֆոնետիկ առումով Կովկասի և Առաջավոր Ասիայի ժողովուրդների լեզվաբարբառներում կատու տերմինն ունի ձայնային տարբեր երանգներ: Եգիպտոսում, օրինակ, կենդանին ունի բնաձայնային մանությունն արտահայտող անուն՝ մյաու-ույաու: Հնարավոր է, որ որպես պաշտամունքային կենդանու անուն ենթարկվել արգելի (tabu), կամ գուցե և հենց կատվի բարբառային անուններից մեկն է, ինչպես օրինակ Չեյթունում պահպանված փը'սը'գ, փիստ ձևերը, որոնք կատվի անվան փաղաքշական ձևերից են<sup>8</sup>:

Հայ աղբյուրներում կենդանու անունը կատու ձևով հիշատակվում է տոսկեղարյան շրջանում: Մինչև V դ. ընտանի կատվի համար կենցաղում գործածվել է կուզ<sup>9</sup> տերմինը:

Հայերեն կատու տերմինը մոտ է լատիներեն ու ասորերեն տերմիններին: Ըստ Հր. Աճառյանի, այն փոխառված է ասորերենից և փոխանցված կովկասյան ժողովուրդների լեզուներին: Հայաստան հասել է նույն միգրացիոն ճանապարհով և իր տեղը գրավել հայ հավատալիքներում<sup>10</sup>:

Հայ աղբյուրներում կատուն բնութագրվում է այսպես՝

<sup>1</sup> Мифы народов мира, М., т. I, 1980, с. 624. (այսուհետ՝ МНМ).  
<sup>2</sup> Նույն տեղում, հ. II, էջ 358, 359:  
<sup>3</sup> Вяч. Иванов, Т. Гамкрелидзе, Индоевропейцы и индоевропейский язык, Тбилиси, 1984, т. II, с. 601.  
<sup>4</sup> Вяч. Иванов, Т. Гамкрелидзе, В. Топоров, Этимология, М., 1974, с. 145.  
<sup>5</sup> Вяч. Иванов, Т. Гамкрелидзе, նշվ. աշխ., էջ 600:  
<sup>6</sup> Նույն տեղում, էջ 601, Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), Եր., 1973, հ. II, էջ 539:  
<sup>7</sup> Նույն տեղում, էջ 601, Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. II, էջ 540:  
<sup>8</sup> Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. II, էջ 540:  
<sup>9</sup> Նույնը:  
<sup>10</sup> Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. II, էջ 540:

*Ի կենդանիս յաւտ կատուն*

*Ընտանի է, զի կայ ի տուն:*

*է կենդանի բնութեամբ կայթոտ կամ կայթու-*  
*Սկանց դժնեայ դահիճ, այն իսկ է կատու<sup>11</sup> :*

Հովհան Իմաստասերը Պավլիկյան շարժման մասին խոսելիս հիշատակում է. «զկատվապաշտութիւն... կերակուր իրեանց զկերակրոցն առնելոյ աղագաւ, այսինքն՝ մուկերը ջարդելուն համար «մկնօրսացն լինելով պաշտօնամատույց»<sup>12</sup>:

Բայց եկ տես, որ այս «որսացեալ զգուելի ամենամոտ կենդանին այլ թե ոչ ի պաշտօն առեալ ի Հայս, որպէս Եզդիպտոս և առ Քանանացիս, ըստ պատմութեան Ս. գրոց կերպով մի հեռի չէր ի սնտոսի հաստոց, պէս-պէս խտրութեամբք մկնակի յամանս, և մկնար ածի...»

Ղազար Ջահկեցի գրում է. «Անմտագոյնք կանայք ոմանք՝ ի տարին մի օր կիրակի պահեն, և մարմնական գործ բնաւին ոչ կատարեն, ասելով. Այսօր Սկնտուն է, եթե մարմնական գործս ինչ առնենք՝ զան մկունք և կտրատեն զհանդերձս մեր»<sup>13</sup>:

Հոգևոր դասի այսպիսի բնորոշումներն ու պարսավանքը կատվի հասցեին, լավագույն ապացույցն են այն մտածողության, որ կատուն իր մկնորսի պաշտոնով ոչ միայն կենցաղային, այլև պաշտամունքային դեր է ունեցել հայոց մեջ: Պաշտամունքային ու կենցաղային նշանակություն ունի նաև կատու-մուկ կապի արտահայտություն Սկնտունը, որը պահպանվել է ցայսօր, որպէս կենցաղային կարևոր ծես-արարողություն: Այն տեղի է ունենում Մեծ պասի առաջին շաբաթվա Չիք-չորեքշաբթի օրը. ժամանակ, երբ արթնանում են բնությունն ու կենդանական աշխարհը:

Տան հարսը բարձրանում է երդիկը, իսկ սկեսուրը նստում երդիկի տակ: Երկու քար իրար քսելով՝ սկեսուրը հարցնում է. - *Աղամ, աղամ, ի՞նչն աղամ*. Պատասխանը լինում է տուն սողոսկող բոլոր միջատների ու սողունների անունների թվարկումը, իսկ վերջում՝ մկան անունը: Սկեսուրն ամեն անվան համար քարերը քսում է իրար, իբր աղում է բոլորին առանձին-առանձին, իսկ «*մուկն աղամ*»-ի վրա սկեսուրն ավելի եռանդով քարերն իրար քսելով՝ «*ոչնչացնում է*» մկանը: Արարողությունը հաստատում է, որ մկնորս կատուն տնտեսության մեջ ևս շատ կարևոր դեր է ունեցել՝ կախարդությունից զերծ մնացած մկներին որսալով:

Կատվի պաշտամունքի ապացույցներից մեկն էլ այն է, որ հայ բարձրաստիճան տիկնայք կատուներին հատուկ խնամքի ու պատիվների էին արժանացնում՝ նրանց ոսկեկար ու փափուկ բարձերի վրա նստեցնելով<sup>14</sup>:

Մի փոքր բարդ է ճշտելը, թե կատվի պաշտամունքը Հայաստանում տեղակա՞ն, թե՞ փոխառված երևույթ է: Հարց, որի պատասխանը գտնվում է հեռավոր անցյալի ծայրերում: Դ.Ալիշանն իր «Հին հավատքում» հաստատապէս պնդում է, որ այն փոխանցվել է սեմական աշխարհից: Դ-ա հնարավոր է, սակայն չմոռանանք նաև, որ այն այնքան հեռավոր անցյալ ունի, որ փոխանցվելու միտքն անգամ ձեռք է բերել հարաբերական իմաստ: Եթե հայերի նախնիները կենդանու պաշտամունքը փոխ են առել, ապա հայ իրականության մեջ արդեն այն ստացել է դիցաբանական պատկերացումների այնպիսի բազմաճյուղ իմաստավորում, որ անջատվել ու առանձնացել է, որպէս ինքնուրույն երևույթ: Ուշադրություն դարձնելով կատվի շուրջ պահպանված հավատալիքային բազմաբնույթ սովորություններին՝ պարզ է դառնում, որ կատուն, որպէս դիցաբանական կերպար, հայոց հավատալիքային դաշտում լայն ասպարեզ է ունեցել: Տեսնենք, թե որտե՞ղ և ինչպե՞ս է արտահայտվում այդ:

Հայ հավատալիքներում կատուն ունի բնավորության երկակի բնույթ, դրսևորվում է դրական ու բացասական հատկանիշներով.

1. Հեքիաթներում բարեգործ հերոս է, կախարդական գործողությունների մասնակից և օգնական:
2. Ունի նախազգուշացնելու, չարից զերծ պահելու հատկանիշներ՝

<sup>11</sup> Մ ս ե բ յ ա ն, Ճառարար, 1861, էջ 55:

<sup>12</sup> Դ. Ալիշան, Հին հավատք, Վենետիկ ԱՂազար, 1895, էջ 156:

<sup>13</sup> Նույնը:

<sup>14</sup> Նույնը:

- ա/ Մինչև այսօր հավատալիք կա զգուշանալ կատվից, եթե, մանավանդ, սև ջնտիկ կատու<sup>15</sup> է կտրում ճանապարհը: Դա համարվում է այդ ճանապարհով չգնալու զգուշացում: Դա անհաջողության կամ դժբախտության նախանշան ու նախազգուշացում է:
- բ/ Եթե տանտիկինները նկատեն, որ տան շքամուտքի առաջ կատու է նստած, անմիջապես նրան հեռացնում են, վախը սրտներում լվանում, մաքրում են նրա նստած տեղը, այսինքն՝ մաքրման ծես կատարում, որովհետև դա համարվում է հիվանդության, դժբախտության և առհասարակ տան վրա չարիքներ գալու նախանշան:
3. Կատուն ունի հմայությանը բուժելու կարողություն.
- ա/ Ձանգեզուրում, երբ երեխան կոխվում է (չարքերը զարկում են), նրան բռնում են սատկած կատվի վրա և գլխին ջուր լցնում<sup>16</sup>:  
Երեխայի շտականությունը ևս բուժվում է սև կատվի ականջը երեխայի քթի տակ այրելով<sup>17</sup>:
- բ/ Երբ կատուն գաղտագողի բարձրանում է հիվանդի անկողնու վրա ու նստում, հավատում են, որ հիվանդը կլավանա<sup>18</sup>:
- գ/ Մինչ այսօր շատերը հավատում են, որ կատվին գրկում պահելուց ու գուրզուրելուց, նրան փաղաքշելուց կարգավորվում է մարդու արյան շրջանառությունը:
- դ/ Թպղոտ կանայք<sup>19</sup> մինչև հողիանալը և հողի ժամանակ անցնում են կատվի վրայից՝ հավատալով, որ իրենց հիվանդությունը կանցնի կատվին<sup>20</sup>:
4. Կատուն ամուսնական զույգերի հովանավոր է, առաջացնում է էրոտիկ զգացումներ: Տարվա որոշ ամիսներին՝ փետրվար-մարտ, հայտնվում է կենդանիներին ու մարդկանց, երևակայական Ծվող կերպարի հետ կամ նրա կերպարանքով: Մյուսինքն որոշ գյուղերում մինչև վերջերս տարածված էր մի սովորություն, երբ աղջիկը հասունանում էր և գիտակցում, որ իր ամուսնանալու ժամանակն է, կամ ուղղակի ուզում էր ամուսնանալ, բարձրանում էր տան կտուրը և երդիկից ներս նայելով՝ մկավում: Խոսակցական լեզվում, երբ ուզում էին ասել, թե աղջկա ամուսնանալու ժամանակն է, ասում էին «աղջիկը մկավում է, ամուսնանալ է ուզում»<sup>21</sup>:
- Այս ամենում դրսևորվում է կատվի գործունեության դրական հատկանիշները: Կան նաև բացասական հատկանիշները բնորոշող կողմեր, որոնք դրսևորվում են այսպես. Կատուն համարվում է թշնամության, ատելության, բանասարկության խորհրդանիշ: Գիշերները մարդկանցից գաղտնի բաց է անում տան դռները և չար ուժերին առաջնորդում ներս, մտցնում տան բոլոր ծակուծուկերը, որոնց լավագույն գիտակն է ինքը:
- Հայ հավատալիքներում տեղ ունեն այնպիսի կերպարներ, որոնց արտաքին կերպարանքի ու բնավորության հատկանիշները կատվային են և օժտված են կենդանու բացասական հատկանիշներով:
- Ուշադրություն դարձնենք դրանցից երեքի վրա.
- I. *Գռռնափշտիկ-խորթլաղ*. Մարդկանց ներկայանում է բացառապես կատվի կերպարանքով:
- II. *Ծվող-ժվոտ*. Մարդակերպ է, ունի աներևակայելի չափեր, անհրաժեշտության դեպքում ընդունում է կատվի կերպարանք:

<sup>15</sup> Կ. Գ. ա բ ի կ ե ա ն, *Բառգիրք Սեբաստացոց Գաւառայեզուի (այսուհետ՝ ԲՍԳԼ)*, Երուսաղեմ, 1952, էջ 493:

<sup>16</sup> Եր. Լ. ա լ ա յ ա ն, *Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ)*, Թիֆլիս, 1898, N 2, էջ 90:

<sup>17</sup> ԱՀ, տ. VII, IX գիրք, Բորչալուի գավառ, 1902, էջ 259:

<sup>18</sup> ԱՀ, տ. XVI, XX գիրք, 1916-17, էջ 187:

<sup>19</sup> Հիվանդություն, որից երեխաները մայրերի արգանդում, դեռ չծնված, կամ ծնվելուց հետո մեկ տարվա ընթացքում, մեռնում են:

<sup>20</sup> Դրանից էլ՝ այն հավատքը, որ պատկած կամ քնած մարդու վրայից եթե անցնես, քո բոլոր հիվանդությունները կանցնեն նրան:

<sup>21</sup> Յ. Խ ա ռ յ ա ն, *Традиционные демонические представления армян, Советская этнография*, М., 1980, N 2, стр. 108; Ա. Օդարաշյան, *Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ)*, Եր., 1978, N 9, էջ 34. տե՛ս նաև՝ Կատու, Ծվող, թպղի:

III. *Թարի*. Հատուկ հիվանդության չար ոգի, կիսամարդ-կիսակատու: Հղի կանանց և նորածինների հոգեառ, ունի կատվային էություն: Սշտական կապի մեջ է տան կատուների հետ:

Հայաստանի տարբեր շրջաններում այն հավատքը կա, որ ոչ քրիստոնյա հանգուցյալները դուրս են գալիս գերեզմաններից, դառնում Գոռնափշտիկ: Ըստ բուլանդիսցիների՝ *Գոռնափշտիկ* երևակայական կերպարը ունենում է շան, կատվի կամ քերծու կերպարանք<sup>22</sup>:

Հավատալիքը շատ տարածված է Գեղարքունիքի ամբողջ տարածքում, որտեղ կատուն հազվագյուտ դեր ունի ու շատ սիրված է: Հին Բայազետից վերաբնակվածները համոզված են, որ գիշերները մուսուլմանական գերեզմանների մոտով անցնելը շատ վտանգավոր է, որովհետև կատվի կերպարանքով *Գոռնափշտիկները* հետապնդում են մարդկանց<sup>23</sup>: Մերաստահայերը կատվին համարում են թուրք<sup>24</sup>:

Այս կերպարը Հայաստանի տարբեր շրջաններում հանդիպում է տարբեր անուններով. *Գոռնափշտիկ*,<sup>25</sup> *Գոռնադակ*,<sup>26</sup> *Գոռնադար*,<sup>27</sup> *Խորթլաղ*.<sup>28</sup> Անունն առաջացել է գոռ-ցոր պարսկերեն բառարմատից, որը նշանակում է մահմեդականի գերեզման՝ հաստատելով նաև կերպարի կապը հանգուցյալների, գերեզմանների ու հանդերձյալ աշխարհի հետ<sup>29</sup>: Ի դեպ՝ այդ կապը հաստատում է նաև լատիներեն *cattus* տերմինը, որը փոխկապի մեջ է *catonium* բառի հետ, որը նշանակում է ստորերկրյա աշխարհ, ներքին ստորերկրյա աշխարհից եկած կամ գերեզմանից դուրս պրծած: Իմաստը համապատասխանում է հայերի այն հավատքին, որ երբ հոգին դուրս է գալիս մարդկանց միջից, մտնում է որևէ կենդանու մեջ և վերակենդանանում է նրա կերպարանքով<sup>30</sup>: Դրա արձագանքն է նաև այն, որ երբ կատուն տանից անհետանում է, նրան որոնում են գերեզմանատներում, բայց գտնելու դեպքում այլևս տուն չեն բերում: Գոռնափշտիկը ինքնատիպ դև, երևակայական էակ է, կատվի կերպարանքով: Նրա գործողության ժամանակը խավար գիշերներն են, պտույտի տարածքը՝ գերեզմաններն ու նրանց շրջակայքը<sup>31</sup>:

Հաջորդ կերպարը *Շվորն* է, որն անհրաժեշտության դեպքում անմիջապես փոխակերպվում է կատվի: Ազգագրական տարբեր շրջաններում ստացել է *Շիֆոս*, *Ֆշոս*, *Շվես*, *ժվոս*, *ժիվոս*, որոշ տեղերում նաև *Պուպուշիկ*, *Փուռդիկ*<sup>32</sup> անունները: Ըստ հավատալիքների՝ այս կերպարը հայտնվում է փետրվար-մարտ ամիսներին, պատկանում է միայն արական սեռին: Պատկերվում է որպես աներևակայելի չափերի հսկա՝ «Գլուխը երկնքում, ոտքերը գետնին», սպիտակ շապիկով, թավ պոչով, բարձր ու բարակ ոգի<sup>33</sup>: Անունն առաջացել է պարսկերեն *Subāt*, ասորերեն *Subātu* անսանունից, որն ասորա-բաբելական տոմարի XI ամիսն է<sup>34</sup>:

<sup>22</sup> *Քերծի-այծ*, ԱՀ, տ. IV, Ե գիրք, Բուլանդիս, Թիֆլիս, 1899, N 1, էջ 181, *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ (այսուհետ՝ ՀԱԻ արխիվ)*, հեղինակի նյութեր, 1972:

<sup>23</sup> ԱՀ, տ. XI, XVII գ., Նոր Բայազետ, 1908, N1, էջ 107; Մ. Արեղյան, *Երկեր*, հ. 1, Եր., 1975, էջ 18.

<sup>24</sup> Կ. Գ. ա. ր. ի. կ. Ե. ա. ն. նշվ. աշխ., էջ 293:

<sup>25</sup> *Գոռնափշտիկի մասին մանրամասն տե՛ս Յ. Խարաչյան, Կուլտурные мотивы семейных обычаев и обрядов у армян*; ԴԱԲ, հ. 17, Եր., 1989, էջ 34; Գ. Միրաբյան, Նոր Բայազետ, ՀԱԲ, հ. 11, Եր., 1980, էջ 154; ԱՀ, տ. IV, Ե գիրք, Բուլանդիս, 1899, N 1, էջ 181:

<sup>26</sup> ԱՀ, տ. XI, XVII գիրք, Նոր Բայազետ, 1908, N 1, էջ 108:

<sup>27</sup> Գ. Ա. ր. վ. ա. ն. ճ. ա. յ. ա. ն., *Երկեր*, հ. I, Եր., 1978, էջ 45; ԱՀ, տ. IV, գ գիրք, Նոր Նախիջևան, 1902, էջ 137:

<sup>28</sup> *Ըստ համշենահայերի, կատուն, որ մեռելի վրայից անցնի, մեռելը խորթլաղ կդառնա. Ռ. Պատկանյան, Երկխոսություններ, մանկական ռուսաբանություններ և երգեր, Ռոստով Տոնի վրա, 1904, հ. III, էջ 103, 214. ԱՀ, տ. V, գ գիրք, Համշենցի հայեր, 1900, N 1, էջ 352:*

<sup>29</sup> Մտ. Մ ա լ յ ա ա յ ա ն, *Հայերեն բացատրական բառարան*, հ. I, Եր., 1944, էջ 460; ԱՀ, տ. IV, Ե գիրք, Բուլանդիս, 1899, N 1, էջ 181:

<sup>30</sup> *Вяч. Иванов, Т. Гамкрелдзе, նշվ. աշխ., հ. II, էջ 600:*

<sup>31</sup> *Հայերի մեջ վաղուց հայտնի է հոգու վերաբնակության հավատքը - Метампсихоза.*

<sup>32</sup> ԱՀ, Գանձակի գավառ, 1900, էջ 352; ԱՀ, Նոր Բայազետ, 1908, էջ 108; ՀԱԻ արխիվ, հեղինակի 1988-89թթ. նյութեր, Նոր Բայազետ, ասացողներ Արարսյա Տեր-Աբրահամյան, Հին Բայազետ՝ Կամար Խաչատրյան:

<sup>33</sup> *Տե՛ս նույնը: Վ. Անատունի, Հայ բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 523:*

<sup>34</sup> *Հր. Ա ճ ա ռ յ ա ն, ՀԱԲ, հ. III, էջ 537:*



Հայ հավատալիքներում տարածված է այն մտածողությունը, որ եթե հղի կատուն ցկնի անկողնու վրա, ապա նրա արգանդից ձագերի հետ դուրս է գալիս մի միջատ (կամ որդ), որը մտնելով կանանց արգանդը՝ նրանց հիվանդացնում է թաղոտությամբ: Դրանից հետո, եթե անգամ այդ կնոջից երեխա ծնվի, ապա մինչև մեկ տարեկան դառնալը կմեռնի: Բուժման միջոցներից մեկը հղի կատվի վրայից անցնելն է՝ բարբառով «շենքելը» (շեք անելը): Կատվի հետ է կապված նաև երեխայի չխոսկանության բուժումը<sup>46</sup>:

Կատվի կապը հղի կանանց և նորածինների հետ հաստատում են նաև հնդեվրոպական լեզուներում պահպանված տերմինները՝ Catto, Katu, Kake, Catt, Catus և ուրիշ ձևեր, որոնք իմաստաբանական առումով անբաժանելի են Kocic sie, Kotitise, գլորվել, հղի բառերից, որոնք իրենց հերթին համապատասխանում են լատիներեն Catukus, Katulus-ձագեր, Kotiti(æ)-գլորվել (катитъся) բառերի իմաստին<sup>47</sup>: Թաղոտության բուժմամբ զբաղվում են միայն պառավ կանայք: Կան արարողություններ ու գործողություններ՝ կապված գորտ, թաղի ծառի, թաղուլինգի և այլ պահպանակների հետ:

Բորչալուի գավառում *Թաղիին* ասում են *թրթր, թրդի, թրդի, թիխի*, որը նշանակում է նաև հազվագյուտ մի ծառ: Ըստ Ստ.Մալխասյանի *թրդի*-կարմրան, *գերիմաստենի, գերեմաստի*, այսինքն՝ գեր իմաստուն, հանճարեղ<sup>48</sup>: Ծառն աճում է բարձրադիր ու քարքարոտ ժայռերի վրա, երկաթի պես ամուր է, ճիլ և ունի շատ խորը գնացող արմատներ: Մուգ կարմրավուն գույն ունի: Արմատախիլ անելը կամ կտրելը պահանջում է հատուկ հմտություն: Անցած դարում երիտասարդ, չամուսնացած տղաները ծանր փորձությունների ենթարկվելով, բարձրանում էին ժայռերի վրա՝ այդ ծառի ճյուղերից ձեռք բերելու համար: Մեծ չարչարանքով ճյուղերը արմատախիլ անելով կամ դուրս քաշելով՝ տուն էին բերում, անմիջապես մաքրում ավելորդություններից, ձևավոր կտրատում, հանում էին կարմրավուն կեղևը, և այդ ամենից հետո թրդին ձեռք էր բերում պոչավոր ու նախշուն օձի, ձիու կամ հրեշի կերպարանք: Ըստ չգրված օրենքի՝ անմշակ *թրդին* ոչ մեկին չէին տա, իսկ մշակվածը մվիրելը արտակարգ վերաբերմունքի նշան էր: *Թրդին*, երիտասարդները ձեռքներից բռնած, խաղացնում էին՝ շրջապատի մեջ իրենց նկատմամբ մեծ հարգանք առաջացնելով:

Այսպես, հետևելով հայ հավատալիքներում կատվի հետ կապված սովորություններին ու երևակայական կերպարների բնութագրմանը, վերլուծելով նրանց վարքագիծն ու գործունեությունը, կարելի է գալ այն եզրակացության, որ հայերի մեջ կատուն եղել է պաշտամունքային մի կենդանի, որն ունեցել է հավատալիքային ու գործառական լայն շրջանակներ: Ըստ էության կատուն հանդերձյալ կյանքի հետ կապ ունեցող տղամարդ աստվածության կենդանակերպն է: Աստվածությունն ունի չար ու բարի բնույթ: Իր պտղաբերելու և բեղմնավորելու հատկանիշի շնորհիվ երևում է մարդկանց զարնանը՝ *Գռնափշտիկի* ու *Շվորի* կերպարանքով, ապա՝ առհասարակ *Թաղի* հիվանդությունն առաջացնելու ունակությամբ: Այդ աստվածությունն ունի վիթխարի, հսկա, մեծամարմին, հաղթանդամ, սուկավիթխար<sup>49</sup> բնորոշումները, որոնք կապվում են «Անդրնդային» գաղափարի հետ: Դա աստվածության գործունեության կապն է հանդերձյալ աշխարհի հետ, որն ունի դրական ու բացասական ազդեցության հատկանիշներ: Հայերի մեջ այդպիսի աստվածությունը կարող էր լինել բնության ծաղկման, մարդկանց ու կենդանիների բեղմնավորման ու պտղաբերելու հատկանիշներ կրող տղամարդ աստվածը, որն իր մեջ կրում է *Գռնափշտիկ, Շվոր* և *Թաղի* չար ոգիների բոլոր հատկանիշները միասին վերցրած: Թաղի հիվանդությունը բնության, մարդկանց ու կենդանիների ինքնատիպ պայքարն է բեղմնավորման ու պտղաբերության համար: Այդ աստվածության խորամանկ ու նեղ հատկանիշները դրսևորվում են մի ավանդությամբ: Վասպուրականի Արտամետ գյուղում, գող կատուն հետապնդվելուց ազատվելու համար մտնում է ժայռերի մեջ ու քարանում (որպես պատիժ): Ըստ բանահավաք Մենքերին Մալջյանի՝ գյուղի մոտ՝ ժայռի մեջ, կատվի նմանվող մի փոսիկ կա, որի

<sup>46</sup> ԱՀ, տ. VII, IX գիրք, Բորչալուի գավառ, Թիֆլիս, 1902, էջ 259:

<sup>47</sup> Вяз. Иванов, Т. Гамкрелидзе, т. 624, 625, էջ 599:

<sup>48</sup> Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944, հ. I, էջ 460; Ռ. Ղազարյան, Բուսանունների բառարան, Եր., 1981, էջ 22, 33, 48:

<sup>49</sup> Հր. Ա ճ ա ղ ա ն, ՀԱԲ, հ. IV, էջ 669:

համար այդ ժայռը կոչվում է *կատվաքար* կամ *կատվան քար*<sup>50</sup>: Սա գուգահեռ է բզուկ Ալվիս-գիտունիկին գերագույն տղամարդ աստծու կողմից փորձության ենթարկելու, իր աղջկան նրան կնության տալու, ապա առավոտյան նրան քար դարձնելու հետ: Գիտունիկը հենց այդ փորձությանը անցնող երիտասարդն է, որ հաղթահարելով գերիմաստենի ձեռք բերելու դժվարությունները՝ դառնում է հասուն, անցնում տղամարդկանց շարքը և վաստակում անուսնանալու իրավունք:

## КОШКА В АРМЯНСКИХ ВЕРОВАНИЯХ

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Ж. Хачатрян \_\_\_\_\_

В среде армян с кошкой связано очень много верований, где подчеркивается ее связь с тремя духами-Горнапштик, Швод, Тпхи. В статье рассматриваются положительная и отрицательная сущность этих воображаемых существ. Полагаем, что образ кошки ассоциируется с трансформацией мужского божества потустороннего мира. Это божество, наделенное плодovitостью, является людям весной в образе Горнапштик, Швод, Тпхи. Это божество - огромное, страшное чудовище, что указывает на его хтоническую сущность.

<sup>50</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն , Ավանդապատում, Եր., 1969, էջ 71 (N 89 ավանդություն և 431 ծանոթագրություն), տե՛ս նաև էջ 123-124, N 342 ծանոթագրություն:

ԿԱՆԱՆՑ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ XIX Դ.  
ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայ ժողովրդի առաջնային արտադրության մեջ ու կենսապահովման մշակույթում սահմանված էր աշխատանքի սեռատարիքային բաժանման կանոնակարգված սկզբունք, որի համաձայն երկրագործությունն ու անասնապահությունը գլխավորապես տղամարդկանց գործունեության բնագավառ էր, իսկ տնային տնտեսության վարումն ու գյուղատնտեսական հումքի մշակումը կանանց պատասխանատվության շրջանակներում էին:

Ինչպես երկրագործական, անասնապահական տնտեսության մեջ և տնտեսության օժանդակ ճյուղերում, այնպես էլ արհեստների մեջ գոյություն ունեին տղամարդկանց և կանանց խիստ սահմանազատված բնագավառներ: Ավանդաբար բացառապես տղամարդկանց ոլորտ էր համարվում երկաթագործությունը, ուստի դրանից անձանցյալ բոլոր արհեստներում կանանց մասնակցությունը խստիվ արգելվում էր: Ձուտ տղամարդկանց արհեստներ էին նաև փայտամշակությունը, կաշեգործությունը, ոսկերչությունը, զինագործությունը, քարտաշությունը, շինարարական արհեստները, խեցեգործությունը:

Չանազան արգելանքների ձևով կանանց մասնակցությունը պատնեշվում էր այն արհեստներում, որտեղ առկա էին ֆիզիկական ծանր աշխատանք և թունավոր կամ առողջությունը վնասող միջավայր (բարձր ջերմություն, տարբեր քիմիկատների, կաշվի հոտ և այլն): Այս արգելանքները իրենց հիմքում ռացիոնալ էին, քանի որ ուղղված էին կանացի նախասկզբի պահպանմանը:

Հանդիպում են նաև բացառություններ: Հայկական որոշ քաղաքներում կնոջ (հատկապես երիտասարդ) աշխատանքն օգտագործվում էր արծաթագործության մեջ: Ախալցխայի հռչակավոր զուգաթելի (ֆիլիգրան) տեխնիկայով արվող արծաթագործական իրերի պատրաստման համար անհրաժեշտ էր նրբություն ու ճշգրտություն, ուստի ավանդաբար այս հյուսվածքը կատարվում էր կանանց կողմից: Հայաստանի որոշ շրջաններում մինչև մեր օրերը պահպանվել էր նաև կանանց բրուտությունը (Սառնադրյուրը Շիրակում, Ննգին Արցախում), որն իր արմատներով գնում է նեոլիթ, երբ կանայք սկսեցին պատրաստել առաջին խեցե իրերը: Հետագայում, բրուտի դուրզի հայտնագործությունը կանանց դուրս մղեց այս արհեստից, սահմանափակելով նրանց գործունեությունը որոշակի տարածքներում որոշակի իրերի պատրաստման մեջ: Կին խեցեգործները պատրաստում էին պարզունակ կարասիներ, թոնիրներ, և հատկապես ծիսական նշանակություն ունեցող կանացիակերպ աղամաններ, որոնք ուսումնասիրողները համարում են Անահիտ դիցուհու ծալոված պաշտանմունքի արտահայտություններ<sup>1</sup>:

Կանայք ներգրավված էին հիմնականում ուստայնակության մեջ: Կանանց գործն էր բուրդ գզելը, թել մանելը, ներկելը, կտավեղեն գործելը, հյուսքը, գորգագործությունն ու կարպետագործությունը, ասեղնագործությունը, ժանեկագործությունը և այլն: Հատկանշական է, որ ուստայնակությունը ներկայացնող հիշյալ արհեստները կանայք տնօրինում էին այն դեպքում, երբ խոսքը գնում է տնայնագործության մասին: Յուրաքանչյուր կին իր ընտանիքի սեփական կարիքների համար անհրաժեշտ նմանօրինակ իրերը անձամբ էր պատրաստում, և տղամարդկանց մասնակցությունն այս դեպքում բացառվում էր, քանի որ ժողովրդական ընկալմամբ դրանք համարվում էին ոչ տղամարդկային զբաղմունքներ: Իրավիճակն այլ է, երբ դրանք արհեստ են ներկայացնում: Քաղաքներում այդ «կանացի» զբաղմունքների մեծ մասում ներգրավված էին հիմնականում տղամարդիկ: Փորձենք դիտել օրինակներով. բուրդ, բամբակ գզելը, թել մանելը, ներկելը տանը կատարում էին կանայք, իսկ քաղաքներում գորարությանը, մագմանությանը, ներկարարությանը զբաղվում էին տղամարդիկ: Նույն իրավիճակն է

<sup>1</sup> Վ. Բ ղ ո յ ա ն, Հայկական աղամաններ, Եր., 1986:

նաև ջուլիակության, դերձակության, գորգագործության, ասեղնագործության (հատկապես ոսկեթել) դեպքերում, չնայած որ դրանք միշտ համարվել են առավելապես կանացի զբաղմունքներ:

Հայկական ավանդական բնակարանի ներսույթում կարպետագործ, գորգագործ և ասեղնագործ իրերի խիստ անհրաժեշտությամբ էր պայմանավորված այդ արհեստների լայն տարածվածությունը: Հայաստանի բոլոր պատմագագագրական մարզերում կանայք գերազանցապես զբաղվում էին այդ արհեստներով, որոնք հիմնականում տնայնագործական բնույթ ունեին: «Կային վերմակ, ներքնակ կարող մասնագետ կանայք, որոնք գիտեին, թե որ բրդից կարելի է ներքնակ անել, որից՝ վերմակ և ինչ չափով: Լավ, մուրբ բուրդը սանդեքով զգում էին, իլիկով մանում, մեծ կծիկներ անում և դրանից գործում գուլպա, գոտի, մեջքը կապելու շալ, ձեռնոց, գլխարկ և այլն: Ուլերի և այծերի մազից գործում էին ջվալ, խուրջին, լարեր, սամուրա և այլն»:<sup>2</sup>

Եթե առօրյայում, հայոց մեջ, ասեղնագործությամբ զբաղվում էին միայն կանայք, ապա քաղաքների արհեստանոցներում աշխատում էին տղամարդիկ: Հայտնի է, որ տղամարդ ասեղնագործները եղել են նաև այլ էթնիկական հանրությունների մեջ: Մասնավորապես Հնդկաստանում (Քաշմիրում) ասեղնագործում էին նաև տղամարդիկ, որոնք գլխաշորերը զարդարում էին «ռաֆուգարի» անվամբ հայտնի հարթակարի տեսակով, որի շնորհիվ էլ հենց իրենք՝ վարպետները, կոչվում էին «ռաֆուգարի»<sup>3</sup>: Ադրբեջանում տղամարդիկ զբաղվում էին միայն շոթայակար (*тамбурный*) ասեղնագործությամբ և աշխատում հիմնականում շուկայի համար<sup>4</sup>: Ուրբեկստանում ևս կային տղամարդ վարպետներ, որոնք սակայն, ասեղնագործում էին միայն ոսկեթելով և ունեին իրենց համքարությունը: Նրանք կենտրոնացած էին երկու քաղաքում՝ Մամարղանում և Բուխարայում, իսկ XX դ.՝ միայն՝ Բուխարայում, ունեին երկու արհեստանոց՝ Էմիրի պալատին կից, և աշխատում էին միայն Էմիրի պալատականների համար<sup>5</sup>: Հետազոտությունները ցույց են տվել, որ բացառապես կանանց զբաղմունք է եղել միայն հյուսքը (ճաղերով) և ժանեկագործությունը:

Ասեղնագործության, ժանյակի, տրեզների, երիզների և այլ գործվածքների տարածվածությունը հայ ժողովրդի կենցաղում և դրանց լայն պահանջարկը ստեղծում էին վարպետների կուտակումներ մեծ քաղաքներում, որոնք էլ, աստիճանաբար կազմում էին իրենց արհեստավորական միությունները՝ համքարությունները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում համքարությունները գոյություն ունեն դեռևս X դ. սկսած և զոյատևել են մինչև XX դ, 20-ական թթ.: Թե երբ են դրանց մեջ ընդգրկվել վերոհիշյալ արհեստները, ուսումնասիրողների կողմից հստակ պարզված չէ: Մակայն միջնադարյան բարդ և բարձրարժեք գործվածքները վկայում են, որ դրանք ստեղծվել են մի խումբ վարպետների կողմից: Արևելքում, հատկապես վերնախավի կենցաղում ոսկեթել, մետաքսաթել թանկարժեք գործվածքների լայն կիրառությունը հատուկ փորձառու վարպետների առկայության անհրաժեշտություն էր առաջացնում, ինչպես վանքապատկան արհեստանոցները՝ եկեղեցական պատվերների կատարման համար, որոնք էլ հետագայում, քաղաքների զարգացման հետ միաժամանակ կուտակվելով քաղաքներում, ձևավորում էին առաջին, մախնական արհեստանոցները: Փորձենք քննարկել այս հարցը որոշ արհեստների կապակցությամբ:

Հայաստանում ասեղնագործությունը որպես արհեստ, հիշատակվում է մեզ հայտնի ամենավաղ (XVIII դ. վերաբերվող) արհեստների ցուցակում, որը, ըստ Վ.Արբահամյանի, պատկանում է Կարինի համքարություններին: Այստեղ, ի թիվս այլ արհեստների, նշվում է նաև սրմաքեշ գործը, որը կարող էր վերաբերվել ինչպես ոսկեթել պատրաստող արհեստավորին, այնպես էլ ոսկեթելով ասեղնագործող վարպետին: XX դ. համքարական կազմակերպություններն ավելի լավ են ուսումնասիրված Արևելյան Հայաստանի քաղաքներում, քան Արևմտյան Հայաստանում, ուստի առկա բոլոր

<sup>2</sup> Պ. Հ ա կ ո բ յ ա ն, *Ներքին Բասենի ազգագրությունը և քանահյուսությունը*, Եր., 1975, էջ 141:

<sup>3</sup> Н. Г у с е в а, *Художественные ремесла Индии*, М., 1982, стр 131.

<sup>4</sup> Г. Г у л и е в, *Азербайджанские вышивки*, СЭ, 1959, N 2, стр 113-119.

<sup>5</sup> Е. П е щ е р е в а, *Бухарские золотошвей*, СМАЭ, 1955, т.16. *Узбекское золотое шитье (буклет)*, составитель Н. Перлина, Л., 1982.

տվյալները ներկայացնում են Երևանը, Ալեքսանդրապոլը, Նոր Բայազետը, Շուշին, Նախիջևանը, Ախալցխան, Թիֆլիսը և Անդրկովկասի մյուս հայաշատ քաղաքները: Առավել մանրամասն տվյալներ են պահպանվել Կարինի և նրա մշակութային ավանդույթները կրող Ալեքսանդրապոլի ու Ախալցխայի արհեստների մասին:

XIX դ. երկրորդ կեսին, ըստ վիճակագրական տվյալների<sup>6</sup>, Երևանի առևտրական ու արհեստավորական համքարությունների կազմում թվարկվում է 28 համքարություն, որոնց մեջ հիշատակվում են երիզագործները՝ չորս վարպետով և ինը աշակերտով: Սակայն Վ.Աբրահամյանը, դրանց ավելացնելով հիշյալ ժամանակաշրջանում լայն տարածում ունեցած այլ արհեստներ և, համքարությունների թիվը հասցնում է 34-ի, ընդ որում, նույն երիզագործների համար հիշատակում է չորս վարպետ և 19 աշակերտ:

Արևելյան Հայաստանի փոքր քաղաքներից Նոր Բայազետում ևս թե՛ արհեստների տեսակները և թե՛ արհեստավորների քանակը համեմատաբար սակավ էր: 1865թ. փաստաթղթերից մեկում հիշատակվում է, որ Նոր Բայազետի բնակիչներն զբաղվել են 32 տեսակ արհեստով, որոնց թվում յոթերորդ կետի տակ նշված են ոսկյա թելերով կարողները (կլայիտոն): Մրանք ունեցել են հինգ վարպետ, երեք ենթավարպետ և մեկ աշակերտ: Տասնչորսերորդ կետի տակ դայթան գործողներն են, որոնք ընդամենը երկուսն են եղել:

Ավելի սակավ են տվյալները Երևանի մահանգի մյուս փոքր քաղաքների՝ Նախիջևանի, Օրդուբադի վերաբերյալ: Նույնը կարելի է ասել Շուշիի, Գանձակի և Ելիզավետպոլի մահանգի այլ հայաշատ քաղաքների մասին: Շուշիի կանանց արհեստներին անդրադարձել է Ե. Լալայանը, կին-արհեստավորների մեջ ընդգրկելով դերձակին, հացթուխին, բուրդ գզողին և թել մանողին, որոնք աշխատում էին օրավարձով և կարպետ գործողին: Ընդ որում, «կարպետ գործող կինը մի կազ երկարության և երկու կազ երկարության կարպետը գործելուց հետո ստանում է 2ռ. 50կ.- 3ռ.: Գործը տևում է մոտ մի ամիս: Օրավարձով կարպետ գործողը ստանում է 10-20 կոպ: Պետք է ասել, որ Շուշու գավառում բավականին զարգացած է գորգագործությունը: Թեև առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կարպետ, ձիու չու և այլն»<sup>7</sup>:

Առավել մանրամասն տեղեկություններ են պահպանվել Կարինի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և Թիֆլիսի արհեստների վերաբերյալ: Արդեն ասվեց, որ արհեստների և համքարությունների ամենահին ցուցակը՝ հայերեն և թուրքերեն անվանումներով, վերագրվում է Կարինին: XIX դ. առաջին երեք տասնամյակում, մինչև Կարնո մեծ գաղթը, արհեստների ներսում աշխատանքի բաժանումը զգալիորեն խորացել էր, ինչը փաստագրել է Ս. Եղիազարյանցը «Մշակ»-ում հրատարակած հոդվածում<sup>8</sup>:

Ալեքսանդրապոլը Երևանի մահանգի արհեստավորական խոշոր կենտրոն էր, որտեղ, մահանգային կենտրոնի համեմատությամբ, արհեստների որոշ ճյուղեր ավելի բարձր զարգացման էին հասել<sup>9</sup>: Ալեքսանդրապոլի արհեստների վերաբերյալ մի շարք ուշագրավ փաստաթղթեր են պահպանվել, որտեղ տրված են 1860-1870-ական թթ. արհեստների անվանումները՝ տեղական բարբառով: Ըստ 1865թ. տվյալների, քաղաքում և շրջակայքում զբաղվել են 59 արհեստով, որոնց ցանկում, սակայն, ասեղնագործների անունը բացակայում է: Ալեքսանդրապոլի արհեստների ցուցակներ են կազմել նաև դերձակների ուստաբաշի Ն. Նիկողոսյանը<sup>10</sup> և քարտաշ վարպետ Մ. Թամրազյանը<sup>11</sup>, որտեղ ներկայացված է շուրջ 96 արհեստ: Այս ցուցակում, որպես առանձին,

<sup>6</sup> Վ. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբը), Եր., 1971, էջ 30:

<sup>7</sup> Ե. Լալայան, Գանձակի գավառ, Երկեր, հատ. 2, Եր., 1988, էջ 84:

<sup>8</sup> Ս. Եղիազարյան, Արհեստների ճիւղերը Կարինում XIX դարի առաջին երեք տասնամյակում, «Մշակ», 1891, N 65:

<sup>9</sup> Ալեքսանդրապոլի ասեղնագործության և ժանեկագործության մասին մանրամասն տես՝ Կ. Բազեյան, Ասեղնագործությունն ու ժանեկագործությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում, ԸՀՀԿ Գիտական աշխատություններ, հ 1, Գյումրի, 1998, էջ 111-118:

<sup>10</sup> Ն. Նիկողոսյան, Լենինական, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրության արխիվ, FF I: 7131-7472; FI: 6637-7130:

<sup>11</sup> Մ. Թամրազյան, Ն. Նիկողոսյան, Լենինական, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրության արխիվ, FF I: 7473-7678:

ինքնուրույն արհեստ, նշված են ասեղնագործությունն ու ժանեկագործությունը: Ն.Նիկողոսյանի ցուցակում ասեղնագործ վարպետները տեղական (հիմնականում՝ թուրքերեն) անվանում չունեն և աշխատել են տանը: Նույն ցուցակում որպես առանձին արհեստ նա հիշատակում է նաև ժանեկագործությունը (ժանյակ պատրաստողներ), որի վարպետները ևս տնայնագործ են եղել:

Թիֆլիսը XIX դ. հայկական մշակույթի աչքի ընկնող կենտրոններից էր: Եթե Արևմտյան Հայաստանում հայերի հոգևոր և մշակութային կենտրոնը Կ.Պոլիսն էր, ապա արևելահայերինը՝ Թիֆլիսը, որտեղ զարգացած էին հայ ժողովրդի մշակույթը, արհեստները, արվեստը, գրականությունը, թատրոնը և այլն: Թիֆլիսում, որպես Կովկասի վարչական կենտրոն, համախմբված էին և՛ արհեստները, և՛ առևտուրը: Արհեստների և համքարությունների վերաբերյալ բազմաթիվ ցուցակներ են պահպանվել, որտեղ արհեստների տարբեր թվեր և տարբեր անվանումներ են ներկայացված: XVIII դ. Թիֆլիսի հայ բնակչության զբաղմունքների թվում հիշատակվում է «գործվածքի զարդագործությունը»<sup>12</sup>: 1855թ. աղյուսակի համաձայն, Թիֆլիսում եղել է 2741 արհեստավոր, որոնք զբաղվել են 44 տեսակի արհեստով, որոնց թվում 21-րդը հիշատակված են ոսկյա թելերով զգեստ նախշողները (երիզագործներ), որոնք կազմել են 80 հոգի: Հետագա տարիների ցուցակներում արհեստների թիվը հասնում է մինչև 97-ի, բայց, արդեն բացակայում է ասեղնագործությունը որպես արհեստ, մի բան, որ հնարավոր չէր:

Ախալցխայի արհեստների վերաբերյալ տարբեր տարիների ցուցակներում ևս որևէ տվյալ մեզ հետաքրքրող արհեստների մասին չի հանդիպում, չնայած այն բանին, որ Ախալցխան Կարնո կենցաղամշակութային ավանդների ուղղակի կրողն էր: Նույնը պետք է ասել նաև Ախալքալաքի մասին: Այս քաղաքներում ասեղնագործության և ժանեկագործության տարածումը կապված է կնոջ ավանդական հագուստի համալիրում դրանց առկայության հետ: XIX դ. վերջին - XX դ. սկզբին գործում էին տասնյակ վարպետներ, որոնք աշխատում էին շուկայի համար: Հատկապես ժանյակները, որոնք գլխի հարդարանքի (վարդ) բաղկացուցիչ մաս էին կազմում, հյուսվում էին ժապավենաձև՝ մետրերով և վաճառվում ողջ տարածաշրջանում: Գյուղերում ժանեկագործությամբ չէին զբաղվում ուստի, անհրաժեշտության դեպքում, նման արտադրանքը զրնվում էր քաղաքներից: Այստեղի ասեղնագործ վարպետները հայտնի էին ողջ Անդրկովկասում, սակայն, զարմանալիորեն չեն արտահայտված արհեստավորական ցուցակներում:

Կ.Պոլսում հնագույն ժամանակներից են հայերը բնակվել և աստիճանաբար ստվարանալով, կազմել հոծ գաղութ, զբաղվելով առևտրով և արվեստի բարձրության հասած արհեստներով, ստեղծել ինքնատիպ մշակույթ, ի թիվս կիրառական արվեստների այլ ճյուղերի, զարգացնելով նաև ասեղնագործությունն ու ժանեկագործությունը: Պոլսահայ կանայք հմուտ վարպետներ են եղել և շատերն այդ արհեստներով պահել են իրենց ընտանիքները: Նրանց բարձրորակ և նրբաճաշակ ձեռարվեստի մասին վկայում է Ա. Մազգյանը. «Հայուհիները փայլած են ասեղնագործութեան և ժանեկներ հյուսելու արհեստներում մեջ, և գիտեք որ մասնատր ժանեակ մը, գունավոր թելի, օտան ծանոթ է հայկական ժանեակ անունով»<sup>13</sup>:

Կ. Պոլսում ասեղնագործ վարպետների համքարության գոյության մասին վկայում են 1761թ. պատրաստված վարագույրը, որի արձանագրությունը փաստում է. «Յիշատակ է վարագուրս Բիւզանդիւ սիւզեհիճի բոլոր էսնաֆին, ի սուրբ Էջմիածին, ձեռամբ նուիրակ Միմէօն վարդապետին ՌՄԺ թուին, ի Պոլսոյ: Համբարձում, Պետրոս, Արթին, Ըստեփանոս, Խաչատուր»<sup>14</sup>: Քանի որ «սիւզեհի» նշանակում է նուրբ ասեղնագործություն, ուստի վստահաբար կարելի է խոսել ասեղնագործների համքարության

<sup>12</sup> Վ. Մ ա ղ ո ի ի ռ ո ս յ ա ն, Հայերը Վրաստանի առևտրատնտեսական կյանքում, «Էջեր հայ գաղթավայրերի պատմության», Եր., 1996, էջ 155:

<sup>13</sup> Ա. Մ ա զ զ Գ ե ա ն, Հայերու գեղարուեստական գործունեութիւնը Իկոնիոյ եւ Կ. Պոլսոյ սուրբաններու օրով, «Անահիտ» (հանդես), Փարիզ, 1933, NN 2-3:

<sup>14</sup> Մ. Դ ա վ թ յ ա ն, Հայկական ասեղնագործություն, Եր., 1972, էջ 77:

գոյության մասին, որի մեջ, ինչպես տեսանք ընդգրկված էին միայն տղամարդ վարպետներ<sup>15</sup>:

Կ.Պոլսում գոյություն ունեցող ասեղնագործական արտադրանքի խանութ-կրպակների առկայության և գործունեության կողմնակի վկայություն կարելի է համարել նաև մի շարք ազգամունների գոյությունը՝ Սըրմաքեշյան և Սըրմաքեշխանյան (հայտնի գրող Երովսանի ազգանունը), որոնք առաջացել են ոսկեթել ասեղնագործությամբ պարապողների արհեստի անվանումից: Կ.Պոլսի արհեստների կոնկրետ թվական տվյալների բացակայությունը չի նշանակում, որ Եվրոպայի ու Ասիայի ջրբաժանում ընկած և արևմտահայ մշակութային կենտրոն հանդիսացող հայաշատ քաղաքում ասեղնագործությունն ու ժանեկագործությունը պակաս զարգացած լինեին, քան վերը հիշատակած քաղաքներում:

Ինչպես երևաց վերոհիշյալ համաքարական - արհեստավորական ցուցակներից, ասեղնագործությունն ու ժանեկագործությունը որպես առանձին, ինքնուրույն արհեստ, հիմնականում ներկայացված չեն: Հիշատակությունները վերաբերում են միայն ոսկեթել ասեղնագործությանը, որն էլ, հաճախ, աղոտ ձևով է ներկայացված կամ հանդես է գալիս այլ արհեստների, մասնավորապես՝ երիզագործության անվան տակ: Նույնիսկ Ալեքսանդրապոլի հայտնի վարպետների տված ցուցակներում, որոնք առավել ճշգրիտ պետք է համարել՝ որպես ականատես արհեստավորների կենդանի վկայություններ, ասեղնագործներն ու ժանեկագործները առանձին անվամբ հայտնի չեն, մի բան, որ բնորոշ չէ Ալեքսանդրապոլին: Հայտնի է, որ ի տարբերություն Հայաստանի և հայաշատ մյուս քաղաքների, Ալեքսանդրապոլում ոչ մի արհեստավոր համաքարությունից դուրս չէր գտնվում: Մի խոսքով, չկար ոչ մի արհեստավոր, որ ընդգրկված չլիներ համաքարության մեջ: Ուրեմն, ինչու՞մն է բանը, որ այդքան լայն տարածում ունեցող արհեստները համաքարական ցուցակներում չեն նշվում: Դա կարելի է բացատրել երկու կերպով, մախ, որ ասեղնագործությամբ, ժանեկագործությամբ, գորգագործությամբ և մյուս արհեստներով հիմնականում զբաղվում էին կանայք, որոնք իրավունք չունեին մտնելու համաքարությունների կամ արհեստավորական միությունների մեջ և, երկրորդ, որ ոսկեթելով զբաղվող տղամարդիկ ներգրավվում էին հարակից կամ մերձավոր արհեստների համաքարությունների մեջ, ինչպես դա երևում է Ս.Եղիազարյանցի ներկայացրած Կարնո արհեստների և համաքարությունների ցուցակից: Ըստ այդ տվյալների, դերձակների համաքարության մեջ մտնում էին ասիական և եվրոպական դերձակները (թերզի), ոսկեթել բանվածք անողները (թեհրիճի) և շալեղեն կարողները (աբաճի): Փաստորեն, ոսկեթել ասեղնագործությունը, կապված ավանդական տարազի գեղագարդան հետ, հանդես է գալիս ասիական դերձակների համաքարության մեջ: Ընդ որում, ոսկեթելին տիրապետելը պարտադիր էր ասիական հագուստ կարողի համար: Հայտնի է, որ Ախալցխայում, վարպետ ձեռնադրելիս, եթե եվրոպական հագուստ կարող ենթավարպետից պահանջվում էր ձևել և կարել կոստյում, ապա ասիական հագուստ կարողից՝ ոսկե կամ մետաքսե թելերով հյուսել կնոջ տարազամասերից զոգնոցը կամ ջուպպա վերնագգեստը<sup>16</sup>: Քանի որ ոսկեթել ասեղնագործությունը բավականին բարդ աշխատանք է՝ յուրահատուկ տեխնիկայով, այն առավելապես արվում էր արհեստանոցներում, չնայած չեն բացառվում նաև տանն աշխատելու դեպքերը: Փաստորեն հյուսածո-մանածո այլ արհեստներով աշխատող վարպետները, որոնք բացառապես կանայք էին, դուրս էին մնում արհեստավորական միություններից: Այս երևույթը նկատել է Ս. Եղիազարյանցը, որը դրա վերաբերյալ գրում է. «Շնորհիվ ոստայնակության խիստ տնային բնույթի, ջուլիակներն ու մանողները մեծ մասամբ աշխատում էին տանը, չկազմելով արհեստակցություններ: Կանայք, բացի մանելուց և հյուսելուց, զբաղվում էին այլ, ավելի նրբազեղ արհեստներով՝ մետաքսաթել ասեղնագործությամբ և այլ նուրբ ու մանրակրկիտ ձեռագործով»<sup>17</sup>:

<sup>15</sup> Հ. Ա ճ ա ղ յ ա ն , Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Գ. Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 320:

<sup>16</sup> Վ. Ա բ ը ա հ ա մ յ ա ն , նշվ. աշխ., էջ 109:

<sup>17</sup> С. Е з и а з а р о в , Исследования по истории учреждений в Закавказье, ч. II , Городские цехи, Казань, 1891, стр 184.

Այսպիսի գուտ կանանց արհեստ էր նաև երիզագործությունը Թոքաթում (Եվրոկիա) և «ճիճիմ» վարագույրների արտադրությունը Կեսարիայում: Ահա ինչպես են ներկայացվում դրանք. «Հայ կիներու ուրիշ մէկ հնօրեայ աշխատանքն էր երիզագործութիւնը, որ արծաթէ, ոսկիէ և մետաքսէ հիստած, կը շինէին Թոգասոցի հայ կիները, Փոքր Ասիոյ եւ մասնատրապէս Եւրոկիոյ մօտ գտնուող մեծ ու փոքր քաղաքներու զինուորականներուն եւ եկեղացականներուն հագուստներուն համար պիտանի: Առհասարակ դաթնները կը հիստէին ծեր կիները տուններու մէջ, մանաւանդ ձմեռները: Կը գործէին նաև զինուորականաց հագուստներու աստիճանները նշանակող երիզաւոր ունոցները, նաեւ եկեղեցիներու շուրջառները, դպրաց շապիկներու, ուրարներու ոսկեթել եւ արծաթաթել խաչերը եւ կարգ մը եկեղեցական զգեստներու օձիկներուն զարդերը: Հին ատեն ծեր կիները երիզը (դայթանը) կը հիստէին բարձի մման գործիքի մը վրայ: Նոյնպէս ձիու պոչի մագով եւ նուրբ մետաքս թելերով կը պատրաստուէին գեղեցիկ ձեռագործներ, որոնք մինչեւ Պոլիս կը դրկուէին»<sup>18</sup>:

«Ճիճիմ վարագույրներու ճարտարութեամբ յարակից է գրեթէ գորգագործութեան հետ եւ անի կանուխ մտած է Կեսարիա: Գորգագործութիւնը մատաղ սերունդին մեծաշնորհն եղած էր կարծես, իսկ ճիճիմը առհասարակ մանկան թէ պատանին բաժինը՝ միանգամայն, բաւական է որ կտաւի վրայ տպեալ գիծերը որոշելու չափ սուր աչքեր եւ այն գիծերուն վրայ ասեղը գործելուն չափ ընդունակ մատներ ունենան: Այս մասին կիներու եռանդուն գործունեութիւնը նշանակելի էր: Գորգի գործին Կեսարիոյ մէջ ծաւալ գտնելէն յետոյ այս գործը իր նշանակութիւնը եւ կարեւորութիւնը կորուսած էր եւ 1890-ական թուականներուն սպառումին 20%-ը միայն մնացած էր 1900-ական թուականներու սկիզբը, վասնզի անոնց կեղծերը, ստորինները պատրաստած էին եւ հետեւաբար շահն ալ նոյն նուագումին ենթարկուած էր, եւ շահու պատուական աղբիւր մը, եւ բաւական թուով ընտանիքներու ապրուստը դադրած էր»<sup>19</sup>:

Շամախեցի կանայք իրենց ընտանիքները պահում էին «թոռ» ժանյակի հյուսվածքով: Մ.Թառայանը, նկարագրելով այս արհեստը հիշատակում է, որ դրա արտադրանքը հիմնականում շուկայի համար էր արվում. «Ինքը՝ համարվում էր աչքերին վնասակար և սիրտ մաշող, ուստի հարուստ կանայք հազիվ են նրանով զբաղվում, իսկ չքավոր ընտանիքներում հաճախ են թոռ գործում: Անընդհատ աշխատելով, մի կին կարող է վերջացնել ամսական մեկ թոռ ...»<sup>20</sup>:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ կանայք գործուն մասնակցություն ունենալով քաղաքային արտադրության մեջ՝ չկազմեցին իրենց արհեստավորական միությունները, քանի որ արհեստանոցները հասարակական արտադրության ոլորտ էին ներկայացնում, իսկ կանանց մուտքը մման հաստատություններ արգելված էր ավանդական սովորությամբ իրավունքով և, բնականաբար, չէին կարող ընդգրկել կին վարպետներին: Այսպիսով արտադրության «մասնավոր»՝ ընտանեկան բնույթ ունեցող հատվածում կանայք էին տիրապետողը, իսկ «հանրային»՝ արհեստավորական մասում՝ գերազանցապես տղամարդիկ:

Փաստորեն այն կանայք, որոնք չէին աշխատում արհեստանոցներում, նույն գործն անում էին տանը, որպես «վարձկան» կամ տնայնագործ վարպետներ: Այս դեպքում առաջանում էր միջնորդների լայն ցանց, որոնք նրանց պատվերներ էին տալիս, մատակարարում անհրաժեշտ նյութեր և վճարում կատարած աշխատանքի դիմաց: Մեծ քաղաքներում նրանք նշանակալի թիվ էին կազմում: Կ. Պոլսում նրանց գործունեության մասին արժեքավոր վկայություն է թողել Հ. Աճառյանը, «իշխմեճի» բառի բացատրության մեջ: «Տիւալ կոչուած ասեղնագործութիւնը կանանց բանել տալով պապապիլ (Պոլսոյ կանանց գլխաւոր պարապմունքը և ապրուստի գլխաւոր միջոցն է

<sup>18</sup> Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն , Պատմութիւն Եւրոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, էջ 1347:

<sup>19</sup> Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն , Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 1509:

<sup>20</sup> Ա. Թ ա ռ ա ե ա ն , Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, ԱՀ, II տարի, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 35:

այս)» - նկարագրում է նա<sup>21</sup>: Հարկ ենք համարում ասել, որ մման աշխատանքի համար տրվող վարձը Պուլում կոչվում էր «քանողչեք»<sup>22</sup>:

Այսպիսով կանայք լայնորեն ներգրավված էին քաղաքային արհեստների մեջ, և ըստ Ա. Թառայանի, որն ուսումնասիրել է կնոջ մասնակցությունը քաղաքային արդյունագործության մեջ XIXդ. վերջին – XXդ. սկզբին, երեք ուղությամբ է դրսևորվել՝ 1. սեփական կարիքների համար աշխատողների, 2. վարձկան արհեստավորների և 3. գումարատեր արհեստավորների: Առաջին խմբում ընդգրկված էին այն կանայք, որոնց աշխատանքը միայն սեփական ընտանիքի կարիքների բավարարելուն էր ուղղված: Երկրորդ խումբը կազմում էին այն կանայք, որոնք «շատ անգամ իրենց որբերի միակ խնամողներն են»<sup>23</sup> և իրենց ձեռքի աշխատանքով էին կերակրում իրենց երեխաներին: Երրորդ՝ գումարատեր արհեստավորներ էին համարվում այն կանայք, որոնք իրենց գումարով գնած նյութերից զանազան պիտույքներ էին պատրաստում և վաճառում տնից տուն:

**ЖЕНСКИЕ ремесла и их взаимосвязь с цеховыми организациями среди армян**

Резюме

К. Базеян

*В статье рассматриваются мужские и женские ремесла, их взаимоотношения в плоскости кустарных промыслов–ремесел.*

*Сделана попытка представить рост участия мужчин в занятиях, считающихся чисто женскими, в процессе перехода от кустарного промысла к профессиональному ремеслу. Это обусловлено "приватной" природой кустарных занятий и "публичной"–ремесел.*

*Интересен тот факт, что приписываемые женщинам или чисто женские ремесла как полноправные элементы не входили в цеховые организации. Их взаимосвязь осуществлялась посредственно.*

<sup>21</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերէն զանապական քառարան, Թիֆլիս, 1913, էջ 173:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>23</sup> Ա. Թ ա ռ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 64:

## Մասնվել ՄԿՐՏՉՅԱՆ

### ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԻ ՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՁԻՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՈՒՄ (Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն\*)

Ինչպես, մասամբ այսօր, այնպես էլ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին գյու՝րեցիներն առանձնանում էին ավանդապահ վարքագծով, որի արտահայտությունն էր կենցաղում համազգային բնույթ ունեցող տոների տարածվածությունը:

Գյու՝րեցիների կենցաղում առավել տարածված էին քրիստոնեական տոնացույցի հենքը կազմող, սակայն հեթանոսական ակունքներ ունեցող համաժողովրդական հետևյալ տոները՝ Նոր Տարի, հենքը կազմող, սակայն Քրիստոսի Ծնունդ, Սուրբ Սարգիս, Տեսաճնդառաջ (Տերընդեզ), Բարեկենդան (Բարիկենդանք), Մեծ պաս (Վենձ պաս), Միջինք (Միջունք), Ծաղկագարդ (Ծառզարդար), Չատիկ, Համբարձում, Վարդավառ (Վարթևար), Սուրբ Աստվածածին (Խաղողօրհներ), Սուրբ Խաչ (ՈՒԼոց): Տարածված էին նաև «Օխտն անվան», Գրիգոր Լուսավորչին, Սուրբ Կարապետին, Սուրբ Հակոբին նվիրված տոներն ու պատերը<sup>1</sup>: Գյու՝րին այն յուրօրինակ բնակավայրերից էր, որն ուներ ձևավորված քաղաքային ավանդույթներ, որոնց դրսևորումներից էր նաև մշակութային այդ ֆենոմենի ամկայությունը համբարական կառույցներում<sup>2</sup>:

Ընդհուպ մինչև XIX դ.-ը հայ իրականության մեջ, այդ թվում նաև Գյու՝րիում արհեստավորական համքարություններն ունեին որոշակիորեն ձևավորված տոնածիսական համակարգ՝ իրենց հովանավոր սրբերով և վերջիններիս նվիրված հատուկ արարողակարգով: Համքարությունները ուշադրություն էին դարձնում տոների և ծեսերի արարողակարգի ձևերի ու ժամկետների ճշգրիտ կատարմանը և ստեղծել էին տոնական նպաստային որոշակի համակարգ, որն ինչ-որ առումով հիշեցնում էր պետական և արհմիութենական նմանատիպ ծառայությունների գործելակերպը: Համքարություններն իրենց կարիքավոր անդամներին օգնելու նպատակով տրամադրում էին սեփական զանձարանի գումարներից: Այդ օգնությունները շատ հաճախ տրվում էին տոների և մատաղների առիթով: Առանձին նշանավոր տոներին (Քրիստոսի Ծնունդ, Չատիկ և այլն) համքարությունները պարտադիր փակում էին իրենց արհեստանոցներն ու խանութները՝ այդ օրերը համարելով հանգստյան: Դա չէր վերաբերում շրջաններից եկած բնակչությանը սպասարկող առևտրական և մի քանի այլ հաստատություններին:

Սովորույթի համաձայն հատկապես Նոր տարվա, Քրիստոսի Ծննդի, Բարեկենդանի, Չատիկ և այլ տոների առիթով իրենց վարպետներին շնորհավորելիս, աշակերտներն ու ենթավարպետները նրանց անպատճառ պետք է նվերներ մատուցեին: Բացի այդ, համքարությունները նշում էին հատուկ օրեր, որոնք նվիրված էին իրենց վարպետների հիշատակին և այդ կապակցությամբ դարձյալ մատաղներ էին անում<sup>3</sup>:

Պետք է նշել, որ դարերի ընթացքում գյու՝րեցիների կենցաղում տարածված տոները խորհրդանշական բնույթ ունեցող ծիսատվորության իրենց նորմերով կարգավորել են ներընտանեկան, ազգակցական, դրացիական խմբերի, ինչպես նաև համքա-

\* Ծան. 1980-1993 թթ.-ին էթնոսոցիոլոգիական զանգվածային հետազոտություններ են կատարվել Գյու՝րի քաղաքում, ինչպես նաև Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում: Ընդհանուր առմամբ հարցման են ենթարկվել շուրջ 1900 անձինք, որոնք ներկայացնում են հայ էթնոսի ներէթնիկ այդ խմբի սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական բոլոր խմբերը: Հավաքված նյութերը գտնվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնում, ինչպես նաև հեղինակի անձնական արխիվում:

<sup>1</sup> Հ. Գյու՝րեցի, Տոնակատարություններ, Գյու՝րի (Ալեքսանդրապոլ, Լենինական), Եր., 1976, ՀԱԻ ԱԲԱ, Տեսը 2, էջ 100-165; Նաև՝ Կ. Մեղրոսյան, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում (պատմաազգագրական ուսումնասիրություն), Հայ ազգագրություն և բանահյուսություն, Եր., 1974, էջ 227-251:

<sup>2</sup> Վ. Ար և հ ա մ յ յ ա ն, Հայ համքարություններն Անդրկովկասի քաղաքներում (XVIII-XX դարասկիզբ), Եր., 1971:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 131-134:

րությունների անդամների փոխհարաբերությունները, դրանով իսկ ձևավորելով հարաբերությունների որոշակի համակարգ: Մակայն տոների ու ծեսերի կենցաղավարման հիմնական ոլորտն ընտանիքն էր, որում դրանք արտացոլում էին անձի կենսակերպի հիմնական փուլերի փոփոխությունը՝ սկսած նրա ծննդից, անվանակոչությունից, ամուսնությունից, մինչև հանգուցյալի հիշատակման հետ կապված արարողությունները:

Խորհրդային կարգերի հաստատմամբ հայոց տոնական համակարգը մտավ զարգացման նոր փուլ: Այն ազդեց նաև գյուժրեցիների տոնական վարքագծի վրա. դա արտահայտվեց կենցաղում ավանդույթային-կրոնական հին տոների աստիճանական մոտացման և դրան զուգահեռ՝ խորհրդային նոր տոների տարածման գործընթացներով:

1980 թվականին ողջ հանրապետությունում, այդ թվում նաև Շիրակի մարզում և մասնավորապես Գյումրի քաղաքում անցկացրած էթնոսոցիոլոգիական հետազոտությունները հնարավորություն տվեցին բացահայտելու բնակչության կենցաղում պահպանված տոների տարածվածության ամբողջական պատկերը: Այդ ժամանակաշրջանում ավանդույթային-կրոնական տոներից գյուժրեցիների կենցաղում դեռևս նշվում էին Քրիստոսի ծնունդը (25%), Չատիկը (25%), Տեառնընդառաջը (25%), Վարդավառը (25%), Ս.Խաչը (22%) և Ս. Աստվածածինը (17%)<sup>4</sup>, որոնք ունեին գրեթե համաչափ տարածվածություն: Տոնական այդ համալիրում սակայն ամենից տարածվածը շարունակում էր մնալ Նոր Տարին<sup>5</sup>: Այն որոշակի փոփոխություններով և համալրումներով հանդերձ դեռևս մեծ չափով պահպանում էին ավանդական Ամանորի հետ առնչվող հնագույն ծեսերն ու սովորույթները:

1980-ական թվականներին խորհրդային նոր տոներից առավելապես նշվում էին Կանանց միջազգային օրվան («Մարտի 8»՝ 95%), Հաղթանակին («Մայիսի 9»՝ 87%) և Աշխատավորներին («Մայիսի 1»՝ 84%) նվիրված տոները<sup>6</sup>, որոնք մուտք գործելով գյուժրեցիների կենցաղ, արդեն ձեռք էին բերել ավանդույթային որոշակի նորմեր:

XX դ. վերջերին տեղի ունեցած մի շարք նշանակալից, շրջադարձային իրադարձություններ (դեկտեմբերյան երկրաշարժ, դարաբաղյան համազգային շարժում, խորհրդային համակարգի փլուզում, անկախ պետականության ստեղծում) իրենց արտացոլումը գտան գյուժրեցիների տոնական վարքագծում: Չևավորվեց և հետագայում լրանվեց նաև ազգային պետական նոր տոնացույցը, որում ազգային-պետական նոր արժեքների հետ միասին որոշակիորեն հաշվի էր առնված նաև կենցաղ մուտք գործած նոր տոների ավանդույթային իրողությունը:

Դարավերջին գյուժրեցիների շրջանում տեղի ունեցած տոնական վարքագծային փոփոխություններն ընդհանուր առմամբ դրսևորեցին նախկին խորհրդային տոների անկման և ավանդույթային-կրոնական տոների վերատարածման հակընթաց միտումներ: Այսպես, 1992 թվականին կատարած էթնոսոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում նրանց տոնական վարքագծում տեղի ունեցած փոփոխություններն այս պատկերն ունեին՝ Չատիկ՝ 85%, Վարդավառ՝ 57%, Տեառնընդառաջ՝ 34%, Ս.Խաչ՝ 37%, «Մարտի 8»՝ 34%, «Մայիսի 9»՝ 15%, «Մայիսի 1»՝ 4% և այլն<sup>7</sup>: Տոնական այդ ընդհանուր համալիրում կատարված փոփոխություններն, ըստ էության, ոչ թե խորքային են, այլ առավելապես կրում են էթնիկական, հոգեբանական, կրոնական և քաղաքական բնույթ: Ի դեպ, այստեղ առանձնակի դեր խաղաց ազգային զարթոնքի գործոնը:

XX դ. վերջին պետական տոնացույցը համալրվեց ևս մեկով՝ 1988 թվականի դեկտեմբերյան երկրաշարժի զոհերի հիշատակման օրը («Դեկտեմբերի 7»): Այն Մեծ Եղեռնի (Ապրիլի 24) համաժողովրդական սգո օրվա հետ միասին բավական ամրապնդվել է գյուժրեցիների կենցաղում: Ուշագրավ է, որ հայոց պատմական անցյալի ողջ իրադարձությունների արժեքավորման համատեքստում այս աղետը, որը խլեց հազա-

<sup>4</sup> Մ. Մ կ ր տ չ յ ա ն , Հայաստանի Հանրապետության բնակչության արդի տոնածիսական համակարգը (էթնոսոցիոլոգիական հետազոտություն), թեկնածուական ատենախոսություն, Եր., 1997, էջ 204:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 75, 204:

<sup>6</sup> Մ. Մ կ ր տ չ յ ա ն , Հայոց քրիստոնեական տոների կենցաղավարման և բնակչության կրոնատածության վարքագծային փոփոխությունները XX դարում (էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 400:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 204:

րավոր գյումրեցիների կյանք, նրանց ինքնագիտակցության մեջ զբաղեցնում է կենտրոնական տեղ (50%), գերազանցելով նույնիսկ Հայոց Մեծ Եղեռնին (38%)<sup>8</sup>:

Եվ անցյալում և՛ այսօր գյումրեցիների կրոնական վարքագծում գերակայողը ծիսականության գործունե է, որի ամենացայտուն դրսևորումը կենցաղում ավանդութային կրոնական տոների տարածվածությունն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անկախ այն հանգամանքից, որ հայր նույնիսկ չի էլ գիտակցում իր կատարած տոնի կամ ծեսի քրիստոնեական իմաստը, այդուհանդերձ, մեծ մասամբ այդ արարողությունների հետևողական պահպանումն ու կատարումն էր, որ ավանդաբար նույնացվում էր հայ քրիստոնյայի կերպարի հետ: Իսկ քրիստոնեական կրոնը հայոց մեջ ունեցել է ազգային նկարագիր: Այսինքն, դա նշանակում է, որ ինչպես այլուր, այնպես էլ գյումրեցիների շրջանում, ազգային նկարագիր ունի կենցաղում հավատքի դրսևորման ամենազանգվածային ձևը՝ ավանդութային-կրոնական տոնը և ծեսը:

Հարկ է փաստել, որ տոների նշումը, լինելով հավատքի արտահայտման տարածված ձև, կարևոր դեր է խաղում կրոնական հավատքի ձևավորման գործում: Պատահական չէ, որ նույնիսկ մեր օրերում թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ կառույցները բավական մեծ նշանակություն են տալիս այդ գործունեքին:

Խորհրդային համակարգի հակակրոնական-աթեիստական գաղափարախոսական ուղղվածությունը, սերունդների հավատամերժումային արժեքային դաստիարակությունը օրյեկտիվորեն հանգեցրին նրան, որ գյումրեցիների շրջանում աստիճանաբար թուլացավ կրոնական վարքագիծը: Այսպես, արդեն խորհրդային վերջին շրջանում իրենց հավատացյալ համարում էին գյումրեցիների միայն 45%-ը, անհավատները կազմում էին 35%, տատանվողների կարգավիճակում էին 16%-ը, իսկ 4%-ը ունեին կրոնի դեմ ակտիվ պայքարողների վարքագիծ<sup>9</sup>: Ի դեպ, խորհրդային ժամանակաշրջանում հավատացյալ գյումրեցիների այս ցուցանիշն ամենաբարձրն էր ողջ հանրապետության մասշտաբով, որը մեկ անգամ ևս վկայում է նրանց ավանդապահ բնութագրի մասին:

Ղարաբաղյան համազգային շարժմամբ պայմանավորված ազգային զարթոնքը, միաժամանակ նպաստեց գյումրեցիների կրոնատածության կտրուկ աճին: Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով 1990-ական թվականների սկզբներին (1992թ.) գյումրեցի հավատացյալների թիվն արդեն կրկնապատկվել էր (89%): Դրան զուգընթաց կրճատվել են կրոնի նկատմամբ տատանվողները (10%) և մասնավորապես՝ անհավատները (1%): Իսկ կրոնի դեմ ակտիվ պայքարողներ այլևս չկային<sup>10</sup>:

Նշենք նաև, որ նախորդ դարավերջին գյումրեցիների ինչպես տոնածիսական, այնպես էլ վերջինիս հետ սերտորեն առնչվող հավատքի վարքագծերում կատարված այս փոփոխությունները դարձյալ ունեին ոչ այնքան խորքային, որքան էթնոշակութային, հոգեբանական և քաղաքական երանգավորում: Ուշագրավ է, որ գյումրեցիների՝ եկեղեցի կամ այլ սրբավայրեր հաճախելու շարժառիթների համալիրում, ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների, գերակայողը մոմավառության սովորույթն է (1980 թ. 22%,<sup>11</sup> 1992 թ.՝ 66%<sup>12</sup>), որը դարձյալ ամենաբարձր ցուցանիշն է ողջ Հայաստանում և որի տարածման միտումները հատկապես վերջին շրջանում ակնհայտ են: Այս առումով հաջորդ տեղը զբաղեցնում էր աղոթքի կամ աղոթելու գործունե, որի տարածման միտումը մասնավորապես ետխորհրդային շրջանում նկատելի է (1980 թ.՝ 22%<sup>13</sup>, 1992 թ.՝ 25%<sup>14</sup>): Այս ուսումնասիրությունները հաստատեցին այն տեսակետը,

<sup>8</sup> Ս. Մկրտչյան, Հայաստանի Հանրապետության բնակչության արդի տոնածիսական համակարգը..., էջ 201:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 193:

<sup>10</sup> Ս. Մկրտչյան, Հայոց քրիստոնեական տոների կենցաղավարման և բնակչության կրոնատածության վարքագծային փոփոխությունները XX դարում ..., էջ 401:

<sup>11</sup> Էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտարշավ, թղթ. 2 (Գյումրի, 1980):

<sup>12</sup> Ս. Մկրտչյան, Հայաստանի Հանրապետության բնակչության արդի տոնածիսական համակարգը ..., էջ 197:

<sup>13</sup> Ս. Մկրտչյան, Էթնոսոցիոլոգիական հետազոտություններ ... թղթ. 2:

որ գյումրեցի հավատացյալի (45%) կերպարում առաջնային տեղը դարձյալ զբաղեցնում է ավանդության-կրոնական տոն կամ ծես կատարողը: Ըստ դիտարկումների, եկեղեցի հաճախելու գլխավոր մոտիվը 1980-ական թվականներին դա զուտ տոնածիսական բնույթի արարողություններն էին: Այդ հավատացյալների գերակշռող մասը նախապատվությունը տալիս է մոմավառությանը, տոներին, ծեսերին, ուխտերին, մատաղներին (47%) և ոչ թե օրինակ՝ աղոթքին, քարոզին, ապաշխարությանը, պաս պահելուն և այլն (13%), որոնք հավատացյալի բուն կերպարն արտացոլող խորքային ցուցիչներ են: Մնացած մասի համար այցելության գլխավոր առիթը սրբավայրի, որպես պատմական հուշարձանի ընկալումն է և ժամանցի կազմակերպման գործուն (25%): Նշենք նաև, որ խորհրդային վերջին շրջանում գյումրեցիների մի նկատելի հատված (13%) էր հաճախում եկեղեցի (հիմնականում պետական և կուսակցական էլիտար խմբերը):<sup>15</sup> Ինչպես տեսնում ենք, XX դ. վերջերին գյումրեցիների՝ եկեղեցի կամ այլ սրբավայր այցելելու շարժառիթների համակարգում կատարված փոփոխությունները հիմնականում պայմանավորված են դարձյալ տոնածիսական բնույթի գործունների աճով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ վերջին շրջանում նկատվում է եկեղեցի այցելողների որոշակի աճ, որում զուտ պատմական հուշարձանի կամ ժամանցի մոտիվի նվազմանը զուգահեռ (11%) բավական մեծացել է կրոնական բնույթի գործունի (օրինակ՝ աղոթք 25%) դերը: Այնուամենայնիվ, սրբավայր այցելելու շարժառիթների բովանդակային այս փոփոխությունը գլխավորապես պայմանավորված է անցումային շրջանում եկեղեցու, կրոնի, ազգի նկատմամբ գյումրեցիների արժեքային նոր ընկալումներով, որոնք ունեին ոչ այնքան կրոնական, որքան էթնոքաղաքական երանգավորում: Նշենք նաև, որ ավանդության-կրոնական տոների կենցաղավարման մասշտաբների մեծացման և հավատքի վարքագծի ակտիվացման միտումները նկատելի են գյումրեցիների սոցիալ-մասնագիտական գրեթե բոլոր խմբերում, մասնավորապես պետական ու ֆինանսական վերնախավի շրջանում, ինչը պայմանավորված է պետական-քաղաքական նոր համակարգում պետության և եկեղեցու միջև հարաբերությունների որակական փոփոխությամբ, ինչպես նաև կրոնը լիարժեք ընդունող պետական-քաղաքական նոր համակարգին արագ ադապտացվելու մոտիվներով:

Ընդհանուր առմամբ, գյումրեցիների տոնածիսական ակտիվ վարքագիծը մեծ չափով պայմանավորված էր (և է) նրանց էթնոժողովրդագրական կառուցվածքով, որտեղ գերակայողն արևմտահայ շերտն է: Իսկ վերջինս, ոչ միայն գյումրեցիների, այլ ընդհանրապես հայ էթնոսի ողջ ենթակառուցվածքում առանձնանում է ավանդապահ խորը բնութագրով, ինչը և ցույց տվեցին ազգագրական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները<sup>16</sup>:

## ИЗМЕНЕНИЯ В ПРАЗДНИЧНОМ И РЕЛИГИОЗНОМ ПОВЕДЕНИИ ГЮМРИЙЦЕВ ЗА ПОСЛЕДНЕЕ СТОЛЕТИЕ (этносоциологическое исследование)

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ С. Мкртчян \_\_\_\_\_

*Праздники у гюмрийцев в основном бытовали в кругу родственников, соседей и в особенности в семье. Именно в семье по ходу социализации личности происходит процесс традиционализации праздников.*

*Сопоставительный анализ результатов исследования по верованиям и праздничному поведению гюмрийцев показывает, что в них преобладает обрядовый компонент.*

<sup>14</sup> Մ. Մկրտչյան, Հայաստանի Հանրապետության բնակչության արդի տոնածիսական համակարգը, քրթ. 2 (Գյումրի, 1980):

<sup>15</sup> Մ. Մկրտչյան, Էթնոսոցիոլոգիական հետազոտություններ ... քրթ. 2:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 138-141:

*Социально—структурные изменения среди верующих и участников празднеств как в Гюмри, так и по всей Армении в советский период в основном были обусловлены государственно—политической системой, с ее антирелигиозной направленностью.*

*События конца XX в. (декабрьское землетрясение, Карабахское общенародное движение, развал советской системы, становление армянской независимой государственности) отразились на религиозно—праздничном поведении гюмрийцев. Изменения в этих сферах (снижение масштабов бытования советских праздников и постепенное распространение религиозных верований и традиционных праздников) в основном имели этнический, политический и психологический характер.*

**Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ**  
**Ռեզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ՆՇԱՆԱՍԻՄՎՈԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ԱԶԳԱՅԻՆ ՄԻՄՎՈԼՆԵՐԻ  
ՅՈՒՐԱՅՈՒՄԸ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

Միմվոլի /խորհրդանիշ/ բնույթի համադրականությունը պայմանավորվում է վերջավոր ձևի ու անվերջ բովանդակության համակցությամբ: Յուրաքանչյուր սիմվոլ մեզ մոտեցնում է ամբողջի գաղափարին, որի առանձնամասերի քննությունը ինքնին դեռ սիմվոլ չէ: Բազում անբացատրելի փաստերի առկայությամբ՝ յուրաքանչյուր իրադրական սիմվոլ միշտ էլ անհայտ է որոշակի հարաբերություններում: Միմվոլի մեկնաբանման առումով գոյություն ունի մի սահման, որից այն կողմ մեր իմացությունը չի կարող անցնել:

Լինելով արդյունք և գործընթաց՝ սիմվոլը կամ խորհրդանիշն արտահայտում է առարկայի կամ երևույթի էությունը: Միմվոլի առարկան պատկերային կառուցվածք է, որը վերածվում է ընդհանրացված և չծավալված նշանի: Միմվոլն անբացահայտ ձևով ընդգրկում է իրերի բոլոր հնարավոր դրսևորումները, ստեղծում դրանց անվերջ ծավալումների հեռանկարը: Դրանով իսկ ընդհանրացված իմաստային բնորոշումներից անցնում ենք առանձին, որոշակի միավորների քննությանը:

Գոյություն ունի սիմվոլ-առարկա կամ իդեալականացված առարկա հասկացությունը: Միմվոլն առանձին առարկաների պարզ նշան չէ, այլ ամփոփում է ընդհանրացված այնպիսի իմաստային բովանդակություն, որն անվերապահորեն ենթարկվում է հետագա ծավալման անհրաժեշտության պահանջին: Միմվոլի մշակութային դրսևորումները բովանդակում են իրականության ընդհանրացված սկզբունքին համապատասխան անմիջականորեն նշանակված զգայական պատկերներ: Միմվոլն ենթադրում է գաղափարի և պատկերի զուգակշռություն, միաժամանակ նրա մեջ պատկերն ամբողջությամբ պահպանում է իր ինքնուրույնությունը՝ ներառելով արտացոլվող առարկայի վերացարկված մոտեցումների համախմբվածությունը: Այս առումով սիմվոլը հնարավորություն է տալիս անցնելու պատկերի և առարկայի, արտաքին աշխարհի և հոգեկանի անբաժանելի միասնությանը:

Միմվոլի արդյունավետությունը պայմանավորված է նրա մակաձևման (ինդուկցիոն) հնարավորություններով, որ ներառում է անգիտակցական հոգեկան գործընթացներ և գիտակցական մտածողության ձևեր: Խորհրդանիշների համակարգն ունի գաղափարապատկերային կողմ, որն արտացոլում է միայն իմաստային հարաբերությունը:

Ուսումնասիրելով սիմվոլը մեկնաբանող հետազոտությունները՝ կարելի է սիմվոլ ընդհանրական հասկացությամբ նշանակել այն կայուն կառուցվածքները, որոնք ունեն թաքնված իմաստ, որոշակի բովանդակություն ընդլայնելու հնարավորություն և անբաժանելի են պատկերային կառույցներից: Միմվոլները որոշակի պայմանականությամբ էսպես նպաստում են մարդկային մտքի ընդհանրացմանը:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է տարբերակել *պայմանական, պատահական և ունիվերսալ* խորհրդանիշներ: Պայմանական խորհրդանիշ է առարկայի անվանումը, որը որևէ կապ չունի նրա բովանդակության կամ էության հետ, այսինքն՝ հնչյունական կազմը պայմանականորեն է տրվում տվյալ առարկային: Պատահական խորհրդանիշը բնորոշվում է խորհրդանիշի և խորհրդանշվողի միջև ներքին կապի բացակայությամբ: Ունիվերսալ սիմվոլի և խորհրդանշվող առարկայի միջև գոյություն ունեն ներքին կապեր, որոնց հիմքում ընկած են ապրումներն ու տպավորությունները:

Տարբերակվում են նաև բնական և մշակութային սիմվոլներ: Առաջինները սերվում են հոգեկանի անգիտակցական բովանդակությունից և ներկայացնում են արքետիպային հիմնական պատկերների բազմաթիվ տարբերակներ:

Արխայիկ արմատներ ներառող բնական սիմվոլների վաղեմությունը փաստվում է նախնադարյան մարդկանց ամենաինքն գրառումներով:

Մշակութային սիմվոլներն անցել են գիտակցական զարգացման գործընթացով՝ դառնալով հանրույթի և քաղաքակիրթ հասարակության կողմից ընդունված կերպարներ և գաղափարներ: Ըստ էության այս սիմվոլները գործառնվում են «ձավերժական ճշմարտություններ» արտահայտելու համար և պահպանում են իրենց նախնական, հմայական սկիզբը: Մարդկային բանականությունը ներառում է բնագրային հասկացության նախածներ, որն, անշուշտ, կարող է միավորվել նրանց համապատասխան հոգեկան մոդելում:

Խորհրդանիշները մեզ մոտեցնում են բնությանը, ավելի ըմբռնելի դարձնում այն: Բնությունը մեր սիմվոլն է, և ինչ-որ տեղ մեզ անվտանգ ու ապահով ենք զգում մեր սիմվոլի հետ: Իրականության ըմբռնումը անվերջ կոնցեպցիա է՝ ենթարկված սիմվոլային գործընթացների ազդեցությանը:

Միմվոլը ինչ-որ ներհայեցողություն է, որի որոշվածությունը կախված է նրանից, թե ինչ է ինքն արտահայտում: Ընդունված է տարբերել սիմվոլի իմաստ և նշանակություն հասկացությունները: Միմվոլի նշանակությունը մարդկային կենսագործունեության համար կախված է այն գործառույթից, որ նա իրականում կատարում է: Նշանակությունը որոշվում է օբյեկտիվ էությամբ: Քանի որ նշանակությունը իրական գործունեությունից զատ արտահայտվում է նաև վերբալ միջոցներով, հետևաբար այն առարկայական իրադրության տարբեր բնույթի հարաբերակցումների, փոխադարձ կապերի արտացոլումն է՝ առարկայի բնույթին համապատասխանող գործառույթով:

Միմվոլի նշանակությունը, լինելով նշանային համակարգի կառուցվածքային միավոր, ամենևին էլ պայմանավորված չէ հաղորդակցման իրադրությամբ, այն ցույց է տալիս հաղորդվող նյութի կայունությունը: Նշանին և խորհրդանիշին վերաբերող հոգեբանական ուսումնասիրություններում վերջիններիս նշանակությունը կարող է ներկայացվել առանձին հատկանիշների համախմբության տեսքով, որոնք կարող են ելակետ լինել առարկաների և երևույթների դասակարգման համար: Նշանակություններն իրենց հերթին կազմում են համակարգ՝ չհանգելով գոյության խոսքային ձևերին, որոնք ձևավորվում են մարդու՝ օբյեկտիվ իրականությանը հարաբերվելու ընթացքում: Միմվոլի նշանակությունը բացահայտվում է իբրև նշանի, պատկերի գործողության բովանդակություն: Գործառնական մակարդակում այն դրսևորվում է իբրև ընդհանրացման և հաղորդակցման միասնություն: Միմվոլի նշանակությունը բարդ, աստիճանակարգային կառույց է՝ բաղադրված տարբեր մասերից, որոնց հաճախ անվանում են սեմանտիկական հատկանիշներ, իմաստի անտրոհելի տարրեր:

Կարելի է առանձնացնել «սիմվոլիկ նշանակություն» արտահայտությունը: Այսպես՝ անցյալ դարավերջին Չ. Ֆրոյդը և Ի. Բրեյերը տարբերակեցին, որ հիստերիայի և ցավի դեպքում ոչ բնականոն վարքն ունի սիմվոլիկ նշանակություն: Ակնհայտ է, որ անձնային սիմվոլիկան առավել տարաբնույթ է և տարողունակ, քան այն, ինչ մարդը ֆիզիկապես զգում է: Միմվոլի իմաստը բնութագրվում է անհատականությամբ՝ անկախ արտացոլման անհատական իրադրական յուրահատկություններից: Այն ուղղակիորեն առնչվում է մարդու հուզական ընկալմանը: Գիտակցված տպավորությունը հեշտությամբ յուրացնում է անգիտակցական իմաստի տարրը: Իրականում սիմվոլի ըմբռնման առումով գիտակցականն ու անգիտակցականը զուգակցվում են և անձի համար հանդես են գալիս իբրև արդյունք:

Այսպիսով՝ սիմվոլիկ միջոցները ոչ միայն ընդլայնում են իրականությունը, այլև հնարավորություն են տալիս այն դիտելու որակական նոր տեսանկյունով: Մարդն ապրում է ոչ միայն նյութական, այլև սիմվոլիկ աշխարհում: Լեզուն, առասպելը, արվեստը, կրոնը աշխարհի տարրեր են, և մարդը շրջապատված է լեզվաբանական ձևերով, գեղարվեստական պատկերներով, դիցաբանական սիմվոլներով, կրոնական ծեսերով, առանց որոնց դժվար է ըմբռնել որևէ երևույթ: Ինչպես Կասիրերն է ասում. «Մարդը տեսակներեն և գործնականում ապրում է սիմվոլներով»:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում սիմվոլի նշանագիտական կառուցվածքը ծիսական արարողակարգերի ժամանակ: Բոլոր դեպքերում ծեսը պահանջում է իր սիմվոլը, քանի որ անիմաստ է առանց դրա: Արարողակարգի ընթացքում դրսևորվող սիմվոլները պահպանում են ծիսական վարքագծի առանձնահատկությունները: Միմվոլի նշանագիտական կառուցվածքն ունի նշանակներ, գործողություններ

կամ օբյեկտներ, որոնք սիմվոլիկ ձևով դրսևորվում են ծիսական կոնտեքստների մեջ: Ըստ էության տարբեր առարկաների, գաղափարների և գործողությունների հարաբերությունները պատկերացվում են իբրև սիմվոլիկ միջոց և համախմբություն: Յուրաքանչյուր արարողակարգ միտված է պահանջելու նոր գաղափարների, գործողությունների և սիմվոլային հարաբերությունների ընդունումն ու յուրացումը, այլապես տվյալ սիմվոլը չի սոցիալիզացվում հանրության կողմից: Այս առումով Տերներն առաջարկում է ուշադրությունը բևեռել սիմվոլը կրողների հոգեբանական վարքագծին, որը դրսևորվում է ըստ տարածքային առանձնահատկությունների և ապրելակերպի հոգեբանության: Նորը գալիս է ծայրամասում ապրողի ընկալումից, այսինքն՝ եզրից: Ստեղծագործական միտքը արմատներ ունի սահմանի վրա. այսօրվա եզրը վաղվա կենտրոնն է: Ներքին տարածությունը, ինչպես և արտաքին տիեզերականը, ունի սահմաններ, որոնք կարող են դառնալ սիմվոլիկ համակարգերի սահմաններ: Մարդը մշտապես ընդարձակում է աշխարհընկալման սահմանները՝ անճանաչելի միջոցով գնալով դեպի ճանաչողություն:

Միմվոլներն ու սիմվոլային հարաբերությունները ոչ թե ճանաչողական դասակարգման են ենթակա, այլ գոյություն ունեցող հոգեբանական մեխանիզմների շարքն են կազմում հզոր զգացմունքներ՝ սեր, նախանձ, ատելություն և այլն, արթնացնելու, ուղղություն տալու, կառավարելու իմաստով: Միաժամանակ ինքնապաշտպանական այս մեխանիզմը նպատակային ձևով մատակարարվում է նոր ինֆորմացիայով՝ ունենալով կամային ասպեկտ: Արդյունքում անձն ամբողջությամբ սիմվոլացվում է իր կյանքով:

Միմվոլների ընդհանուր համակարգում առանձնացնում ենք ազգային սիմվոլների էթնոմշակութային բացառիկությունը: Ազգային սիմվոլները տվյալ էթնոսի հոգեկերտվածքի և մշակույթի հայտանշաններն են, որոնց յուրացումը բարդ ու տարդուրանակ սոցիալ-հոգեբանական գործընթաց է:

Էթնիկական ստերեոտիպերն ունեն ընդհանրացված հուզական հագեցվածություն և ազգային գիտակցության մեջ ձգտում են կայունացված կանոնարկման:

Ազգային սիմվոլները հոգեկանի էթնիկական հատկանիշներ են, գաղտնագրային համակարգի բաղադրիչներ, որոնք ներառում են հոգեբանական տեղեկատվություն տվյալ էթնոսի ենթագիտակցական հոգեկանի մասին:

Ազգային սիմվոլները նյութականացված և բյուրեղացված են, կապված ազգի մշակույթին և քաղաքակրթությանը, սրանով իսկ նպաստում են ազգի հոգեկանի հաստատմանը:

Ստրեսային իրավիճակներում (երկրաշարժ, ստրես) ազգային սիմվոլները էթնոպաշտպան գործառույթ են կատարում անձի հոգեկարգավորման, հոգեշտկման առումով և դյուրին են դարձնում ստրես ապրած անձի սոցիալական հարմարումը:

Լինելով տվյալ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի, ինչպես նաև հոգեկան կյանքի կայուն արժեքային դրսևորման ձևեր՝ ազգային սիմվոլների յուրացումն ու ամրակայումը նպաստում են ֆրոստրացիայի հաղթահարմանը:

Ազգային սիմվոլները ընդլայնում են անձի հիմնախնդրի ենթատեքստը՝ ներմուծելով բովանդակային նոր իմաստներ: Ազգային ծեսերի, սովորույթների և ավանդույթների առաջադրումն ու սովորութամշակութային կենցաղում դրանց կիրառումը թուլացնում են ստրեստգեն լարվածությունը՝ անձի համար համահաշտեցման եզրեր գտնելով իրականության հետ:

Ակնհայտ է ազգային սիմվոլների հարաբերակցությունը դրանց հիման վրա ձևավորված ծիսակարգի, տոների, հավատալիքների և տվյալ էթնիկական խմբին բնորոշ վարքային մոդելի միջև:

Ծեսը կանոնների ու գնահատականների պարզ հանրագումար չէ, այլ ուժերի ու էներգիաների խառնուրդ, ինչպես նաև գաղափարների համախմբում: Այն հոգևոր մթնոլորտը, ուր տեղի է ունենում ծեսը, սիմվոլի ձևավորման բաղադրիչներից է: Սովորութային կենցաղում գործառնվող ծեսը միշտ գտնվում է զարգացման կիզակետում: Թեև նրա ձևը, սիմվոլիկ միջոցներն ու կառուցվածքները թվում են անփոփոխ, այնուհանդերձ դրանք միջակա դիրք են գրավում մարդու աշխարհընկալման և սոցիալական փորձի միջև:

Միմվոլն էթնոսի կյանքում մեծ բովանդակություն է և հարստություն, քանի որ սերվում է դարերի խորքից եկող արքետիպերից, պատկերացումներից, որոնք առարկայացել են ժողովրդի մշակություն: Այս առումով ուշագրավ է սիմվոլի վերախմաստավորումը և վերակերտումը:

Անձը ձեռք է բերում իր հոգեկան աշխարհին բնորոշ խիստ անհատական, յուրօրինակ մտածողության սիմվոլացում, որն առավելապես դրսևորվում է ազգի կամ ժողովրդի կյանքի վճռական պահերի, բախտորոշ իրադարձությունների, հոգեբանական ծայրահեղ լարվածությունների դեպքում: Ստրեսային իրավիճակներում ազգային սիմվոլները դառնում են ազգապաշտպան ցուցիչներ: Այս պարագայում գործառնվում է վշտի արտամղման մեխանիզմը: Ֆրոստրացնող դրոպապատճառները մղվում են ենթագիտակցական ոլորտ: Գործում է հակադարձ ռեակցիայի մեխանիզմը, որի ընթացքում մարդն ընտրում է հարմարվողական ստրատեգիա:

Էթնիկական արտամղման սիմվոլացումը առաջ է բերում սոցիալական նոր դիրքորոշումներ, իմացական, հուզական, վարքային նոր ծրագրեր: Սուբիմացիայի՝ վեհացման, վսեմացման վերագրման պրոյեկցիայի շնորհիվ է, որ յուրաքանչյուր իսկական սիմվոլ իր մեջ խտացնում է ազգային հոգեկանը: Եթե էթնոսը սիմվոլներ չունենար, ընդ որում՝ դրական և բացասական, ապա նոր սերունդների էթնիկական սոցիալականացումը լիարժեք չէր լինի (Ա. Նալչաջյան):

Այսպիսով՝ առանց մշակութային ֆեռմենտի անհնար է դառնում սիմվոլների փոխանցումը սերնդից սերունդ: Ինքնին մշակույթը բարերար մթնոլորտ է նոր սիմվոլների ստեղծման ճանապարհին: Ազգային սիմվոլի ներքնայնացումը ինքնապաշտպանական թաղանթ է անձի համար:

Եթե էթնոսը կորցնում է իր սիմվոլները, այդ թվում նաև սիմվոլային գործողությունները, ապա կորցնում է վարքային ստերոտիպերը:

Այսպիսով, պատմամշակութային հանրահայտ սիմվոլների իմաստային բովանդակության սոցիալական հնարավորությունների օգտագործումը նպաստում է սոցիումի ճգնաժամի հաղթահարմանը: Ազգային սիմվոլների սոցիալական յուրացումը սկսվում է ընտանիքում, քանի որ այն առաջին սոցիումն է, ուր անձը ստանում է նախնական կողմնորոշումներ մշակույթի դրսևորումների մասին՝ առաջնային հոգեբանական նույնացում ունենալով սեփական էթնոսի հետ:

Ազգային սիմվոլների յուրացումն էքստրենալ իրավիճակում անձի համար յուրօրինակ կարևորություն է ստանում, քանի որ ճգնաժամերի պահերին բարձրացնում է նրա դիմակայման ոգին և առավել որոշակի դրսևորվում են կամային հատկանիշները՝ ենթագիտակցական թափն ուղղելով դեպի անցյալի մշակութային սիմվոլացած արժեքներ, որոնք, անտարակույս, ինքնապատան դեր են կատարում:

Ազգային սիմվոլները առավել հեշտացնում են հոգեկարգավորման գործընթացը՝ նկատի ունենալով անձի ենթագիտակցության մեջ սիմվոլացված օբյեկտների նախնականությունը: Այս առումով էթնոկիր անձն ավելի պաշտպանված է դառնում ստրեսների պահին:

Ազգային սիմվոլների ընկալման հոգեբանական բնութագիրը պարզելիս տեսական մակարդակով հիմնվում ենք ազգային նախապաշարման, վաղնջական մտածողության, դարերի խորքից եկող կարծրացած սովորությունների, բնապատմական ավանդույթների և կրոնաժխական պատկերացումների վրա: Ժողովրդական մտածողությունն ունի հարուստ ավանդույթներ, յուրահատուկ ներկա, որն անընդհատ գործընթաց է տվյալ ժողովրդի պատմամշակութային զարգացման համար: Բոլոր դեպքերում սիմվոլիկ մտածողությունը ազգի հոգևոր կերտվածքի ընդհանուր բնութագիրն է, տվյալ ժամանակահատվածի համար ձևավորման գործընթաց և արդյունք:

Ազգային ամբողջականության և կեցության փիլիսոփայական ըմբռնումները հաստատում ենք անհատի և ժողովրդի մտածողության անքակտելի միասնությամբ: Հետևաբար, եթե անտրոհելի է այս միասնությունը, նշանակում է ազգին ստրեսային վիճակից դուրս բերելու համար ազգային սիմվոլը դառնում է ֆեռմենտ: Ազգային հոգեբանությունը սնվում է ազգային ավանդույթներից, ծեսերից և սովորություններից, իսկ վերջիններս էլ հոգեբանական այնպիսի տարրեր են, որոնք երկար դարերի ընթացքում վերապրվել են ազգային գիտակցության մեջ: Անձը հոգեպես ներքնայնացնում է դարերի

խորքից եկած մշակույթը, զգայական ու գիտակցական փորձը, նաև ժողովրդական իմաստությունը, այս եղանակով էլ ազգային մտածողությունը ժառանգվում և փոխանցվում է կոնկրետ անհատին: Այս իմաստով անձի մտածողությունը չի հակադրվում ազգային մտածողության դրսևորումներին, քանի որ էթնիկական ստերոտիպի մեջ մտնող որոշ տարրեր դառնում են սիմվոլներ:

Արդյունքում՝ ավանդույթների ստեղծման ու ամրապնդման ընթացքում կատարվում են անձի սիմվոլային ինքնապաշտպանական գործընթացներ: Այսպիսով՝ յուրաքանչյուր ազգային սիմվոլ ծառայում է էթնոսի բարդույթի հաղթահարմանը՝ նպաստելով ազգի սոցիալականացման գործընթացին: Մարդու սիմվոլիկ ըմբռնումներում արտաքինն ու ներքինը սերտորեն կապված են մեկը մյուսին և ամբողջացնում են նրա հոգեկանը՝ բնականաբար հեշտացնելով վերջինիս ինքնաարտահայտման ձգտումները: Մյուս կողմից եթե խոսքը վերաբերում է ազգային սիմվոլների յուրացմանը, ապա դժվար չէ նկատել, որ էթնիկական նախապաշարումները, սովորույթներն ու ծեսերը ևս ենթարկվում են տրամաբանական մշակման, որով և հեշտացվում է մտածողության այդ ձևի յուրացումն ու փոխանցումը հաջորդ սերունդին: Առավել կոնկրետ նկատի ունենք, որ ծայրահեղ հոգեվիճակներում ժամանակի և տարածության մեջ կան անհետացած կամ չբացահայտված ազգային կորեր, որոնք բացառիկ հանգամանքներում՝ ստրեսային իրավիճակներում կարող են բացվել և նորովի դրսևորվել: Այս իմաստով հասարակական արհավիրքները խտացնում են ազգային մտածողությունը. դեպի անցյալ շրջված ենթագիտակցական հոսքը բացում է ազգի դիմակայելու պատմական փորձը (ռետրո հիշողությունը), որի մեջ անձն իրեն ապահով է զգում: Ազգային հոգեկերտվածքի՝ ստրեսային վիճակով պայմանավորված փոփոխությունները կարող են առաջ բերել նոր սիմվոլներ և ստերոտիպեր, քանի որ դեպրեսիաների պահին էթնոկիր անձի հոգեկան աշխարհը առավել ճկուն է:

### *ЗНАКОГО—СИМВОЛИЧЕСКАЯ СИСТЕМА: УСВОЕНИЕ НАЦИОНАЛЬНЫХ СИМВОЛОВ В ПРОЦЕССЕ ПСИХОКОРРЕКЦИИ*

*Резюме*

*К. Саакян, Р. Оганнесян*

Социальное усвоение национальных символов начинается с семьи, поскольку семья-первый социум, где человек получает первоначальные представления о культурных ценностях, психологически идентифицируясь с собственным этносом.

Усвоение национальных символов в экстремальных ситуациях приобретает особую, ярко выраженную значимость для личности, так как повышает стойкость ее духа, выносливость, делает сильнее, направляя подсознание к символическим ценностям национальной культуры, которые, несомненно, приводят в действие механизм самозащиты личности. Национальные символы играют огромную роль в психологической коррекции личности, облегчая ее ориентацию в экстремальных жизненных ситуациях.

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Թեման արդեն բազմիցս ամփոփիչ շարադրանքի առարկա է եղել: Որպես կանոն՝ այն լուսաբանվում է հոգեբանության, երբեմն նաև դիդակտիկայի դասագրքերում: Թեև սույն շարադրանքը ամբողջությամբ կառուցված է հոգեբանական ուսումնասիրությունների նյութի վրա, այն կլուսաբանվի դիդակտիկական տեսանկյունից:

Հիրավի, ո՞րն է քննարկման առարկան ուսուցման հոգեբանական հիմքերը բնութագրելիս: Ի՞նչ հարցերի պետք է պատասխան տալ:

Քանի որ ուսուցումը ուսուցչի և կրթության բովանդակության փոխգործողությունն է ու փոխադարձ կապը, ապա ուսուցման հոգեբանական հիմքերը ենթադրում են ուսուցչի և կրթության բովանդակության, աշակերտի և կրթության բովանդակության փոխգործողության հոգեբանական առան պարզաբանում: Առանց առաջինի, այսինքն ուսուցչի (դասավանդման գործունեություն) և աշակերտի (ուսման գործունեություն) փոխգործողության չի կարող լինել երկրորդ, այսինքն, ուսուցչի և կրթության բովանդակության փոխգործողության առումը, որովհետև այս դեպքում կրթության բովանդակությունը ուսուցչին պետք էլ չէ: Առանց առաջին առանձին ուսուցչի և աշակերտի փոխգործողության չի կարող լինել և աշակերտի և ուսումնական նյութի՝ դրսից կազմակերպված փոխգործողություն: Իսկ յուրացման փուլերի գիտական հիմքերի ընդհանուր բնութագիրը դժվարանում է նրանով, որ դեռևս չի մշակված մի ամբողջական հայեցակետ, որը կարողանար համապարփակության հավակնություն ունենալ, ընդունակ լիներ մեկնաբանելու յուրացման գործընթացի բոլոր երևույթներն առանց բացառության:

Դեռ ավելին, նշանավոր հոգեբան Պ.Գալպերինը, ենթադրում է, որ ըստ էության մանկական մտածողության և նրա զարգացման հիմնախնդիրների հոգեբանական բովանդակությունը շատ դժվար է հայտնաբերել գոյություն ունեցող հայեցակարգում, ուր հոգեբանությունը փոխարինվում է մեծ մասամբ տրամաբանությամբ, բնախոսությամբ և հոգեկան գործընթացների այլ առումներով: Անշուշտ, եթե հետազոտության առարկան պարզ չէ բուն գիտության մեջ, ապա դիդակտիկան, իսկապես ասած, դժվարանում է ուսուցման հետ կապված հոգեբանական երևույթների ներկայացման և գնահատման գործում: Պատահական չէ, որ մանկավարժական հոգեբանությունը աննմուրեք փոխարինվում է դիդակտիկայով: Հարակից գիտության այսպիսի միջամտությունը միայն օգտակար կլիներ, եթե միշտ դյուրին լիներ սահմանազատել, թե որտեղ է ավարտվում մանկավարժական հոգեբանությունը, և որտեղ սկսվում մանկավարժությունը:

Ի՞նչ է յուրացումը: Բառափոխելով Ի. Մեչենովին, կարելի է արձանագրել, որ յուրացումը նոր փորձի միաձուլումն է նախկին փորձին, նոր տեղեկատվությունը՝ ավելի առաջ իմացածին: Այն իրենից ներկայացնում է կուտակված սոցիալական փորձի վերածում անձի սեփականության և դրանով իսկ՝ նրա հատկության: Յուրացումը կարող է լինել տարերային և նպատակառոտված: Երբ երեխան անտառում հանդիպում է նոր բույսերի, կենդանի էակների և նկատում է դրանք, ապա այդ տեղեկատվության յուրացումը տարերային է: Երբ տարեց մարդը գրավում է երեխայի ուշադրությունը և բացատրում է նրա տեսածը, ապա յուրացումը կատարվում է նպատակամետ կերպով: Նպատակամետ յուրացումը նույնպես ստորաբաժանվում է յուրացման՝ ինքնակրթության շնորհիվ և յուրացման՝ նպատակառոտված ուսուցման գործընթացում: Ամեն տեսակի յուրացման համար ընդհանուրն այն է, որ նրա արդյունքը լինում է սովորելը: Հոգեբանության և մանկավարժության մեջ սովորելը անվանում են նպատակահարմար արտաքին և ներքին գործունեության ուղղությամբ ձեռք բերված ընդունակությունը: Այլ կերպ ասած՝ սովորելը գիտելիքների և դրանցով պայմանավորված որոշակի գործողությունների ու արարքների յուրացումն է որոշակի իրադրություններում<sup>1</sup>:

Հոգեբանները յուրացման իրենց հայեցակետերը կառուցում են գործունեության վրա: Նշված տեսության հետ կապի իմաստն այն է, որ մարդու հոգեկան գործունեու-

<sup>1</sup> Տե՛ս Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Պետրովսկու խմբ., Մ., 1973, էջ 168:

թյունն ընդունվում է որպես նրա նյութական արտաքուստ արտահայտված գործունեության արդյունք: Միաժամանակ բոլոր մտածական պրոցեսները՝ ընկալումը, մտածողությունը, հիշողությունը և, հետևաբար, յուրացումը, նույնպես գործունեության որոշակի տեսակներ են:

Հոգեբան Լ.Վիգոտսկին ցույց է տվել, որ անհատի աշխատանքային գործունեությունը, որ ամենից առաջ նշանակում է համապատասխան գործիքների կիրառում, աշխատանքի օբյեկտների վերափոխում, հանդես է գալիս որպես կուտակված կոլեկտիվ փորձի արդյունք: Այդ փորձի յուրացումը նոր սերնդի կողմից կարող է տեղի ունենալ և տեղի է ունենում վերջինս արտաքուստ արտահայտված ձևով հաղորդելու շնորհիվ՝ գործողության նմուշների ցուցադրման միջոցով և բանավոր տեղեկատվության տեսքով: Մարդու հոգեկան գործունեությունը արտաքուստ արտահայտված գործողության յուրացման շնորհիվ անխուսափելիորեն կազմակերպվում է պրակտիկ աշխատանքային գործունեության նմանողությամբ: Հոգեկան ակտը իր կառուցվածքով համանման է կամ կապված է գործունեության նյութական ակտի կառուցվածքի հետ: Քանի որ յուրացումը նույնպես գործունեություն է, ապա «հաղորդումը» նշանակում է արտաքին գործունեություն ինչ-որ բովանդակության յուրացման ուղղությամբ, սովորողի ակտիվության, նրա գործունեության կազմակերպում: Յուրացման վրա չեն կարող չազդել տվյալ անհատի առանձնահատկությունները: Հետևաբար յուրացման գործընթացն իրականացվում է արտաքին և ներքին գործունեության հետ կապի մեջ, այդ կապից դուրս յուրացում չի լինում: Ըստ որում, ներքին գործունեությունն իր կնիքն է դնում յուրացման գործընթացի, յուրացման եղանակի և հոգեբանական այն նորագոյացումների վրա, որոնք առաջանում են յուրացման հետևանքով:

Հոգեբան Ս. Ռուբինշտեյնը, որի գաղափարները էական նշանակություն ունեն ոչ միայն հոգեբանության զարգացման, այլև ուսուցման ամբողջ գործընթացի ըմբռնման ու կազմակերպման համար, ներքին ու արտաքին գործողության կապը համոզիչ կերպով հիմնավորում էր այն բանով, որ մարդու յուրաքանչյուր արտաքին նյութական գործունեություն իր ներսում պարունակում է հոգեբանական բաղադրամասեր, որոնց միջոցով իրականացվում է նրա կարգավորումը<sup>2</sup>:

Այսպիսով, մի որևէ գործունեության յուրացման պայմանն ու միջոցը ի սկզբանե ներքին գործունեության հետ կապակցված արտաքին նյութական գործունեությանն է: Ներքին գործունեությունն իր ծագումով կապված է արտաքինի հետ, և դրանք երկուսն էլ ազդում են յուրացման արդյունքների վրա, որոնք դառնում են անհատի, անձնավորության հատկություններ:

Հոգեկան և նյութական գործունեության զենետիկական կապի ակներևության, ինչպես նաև դպրոցում յուրացման գործընթացը լավ հասկանալու համար անհրաժեշտ է բերել տվյալներ դպրոցական տարիքում յուրացման օրինաչափությունների և գործընթացի մասին<sup>3</sup>:

Մոցիլայական փորձի նախնական տարրերի յուրացումը երեխայի կողմից սկսվում է նյութական գործողությունից և վերջինիս ընթացքում նրա ընկալումից: Սովորողի նյութական գործողությունն աստիճանաբար սկսում է ուղեկցվել սովորեցնողի խոսքային գործողությամբ: Ստեղծվում է հիմք գործողության (պատկերի) ցուցադրումով և խոսքային տեղեկատվության միջոցով փորձի հետագա հաղորդման համար: Այս բոլոր դեպքերում յուրացումը սկսվում է յուրացման առարկայի ընկալումից, հենվում է նրա անմիջական կամ խոսքով միջնորդավորված ընկալման վրա: Ընկալումը յուրաքանչյուր յուրացման անհրաժեշտ պայմանն ու սկիզբն է: Սկզբնապես այն ընթանում է նյութական գործողությամբ, հետագայում՝ նյութականացված գործողությամբ՝ պատկերումով, մոդելով կամ օբյեկտի խորհրդանիշով: Ընկալումը ստեղծում է մտապատկեր, որն այնուհետև ձևավորվում է ոչ միայն օբյեկտի հետ գործողության ընթացքում, այլև բազմապիսի զգայական ընկալումների, մասնավորապես, դիտման շնորհիվ:

Չգայարանների և խոսքի օրգանների միջոցով դասի ընթացքում տեղեկատվության ընկալումը կուտակում է նախ մակերեսային, ապա հետզհետե հարստացող փորձ,

<sup>2</sup> Ս. Ռուբինշտեյն, Հոգեբանության զարգացման ուղիներն ու սկզբունքները, Մ., 1959, էջ 251:

<sup>3</sup> Ն. Պոլյակով, Նախադպրոցական մտածողությունը, Մ., 1977:

որը թույլ է տալիս հասկանալ և իմաստավորել ընկալածը: Հասկանալ կամ իմաստավորել նշանակում է ընկալվող տեղեկատվությունը միացնել կապերի համակարգի մեջ արդեն հայտնիի հետ: Այլ կերպ ասած, դասի ընթացքում սա նոր կապի ստեղծում է, նոր գույությունների կազմավորում: Այս կապերը սկզբնապես ծայրահեղորեն մակերեսային են, և այդ ժամանակ աշակերտին միայն կարող է թվալ, թե ինքը հասկանում է: Դրանք կարող են և լինել պատրանքային, կեղծ, թեև սովորողը կարող է այդ չգիտակցել: Սովորելու համեմատ մարդն առաջացած կապերը իմաստավորում է առավել օբյեկտիվությամբ և ավելի լայնորեն: Կապերը, և համապատասխանաբար, ըմբռնումը կարող են լինել տեղային, ներառարկայական և միջառարկայական մակարդակի:

Դասապրոցեսում միջառարկայական և ներառարկայական կապերի հաստատման ընթացքում առաջանում են մտածողական և ճանաչողական կառուցվածքներ<sup>4</sup>, որոնք համապատասխանում են իրականության օբյեկտների բովանդակության իմաստավորմանն ուղղված գործունեության տրամաբանությանը: Դասապրոցեսում դրանց տարրերի առանձնացումը վերլուծական գործունեություն է. ինքնին առանձին տարրերի քննարկումը ստեղծում է վերացարկում. տարրեր կամ նման առարկաների մեջ ընդհանուր հատկանիշներ նկատելը ծնում է ընդհանրացում կատարելու ընդունակություն և այլն:

Դասի ընթացքում հաղորդվող նյութը ընկալելու շնորհիվ մարդը ոչ միայն ձեռք է բերում տեղեկատվություն այդ մասին, այսինքն գիտելիքներ, այլև ճանաչման գործընթացն իրականացնող ճանաչողական կառուցվածքներ, դրանք հետագա տարերային կամ նպատակատուղված ճանաչողության դեպքում օգտագործելու պատրաստակամություն: Սովորողը նախապատրաստված է լինում վերլուծմանը, համադրմանը, ընդհանրացմանը, երկընտրանքային մոտեցմանը, փոխանցմանը, օբյեկտի ընդհանուր կառուցվածքի ըմբռնմանը, նոր հիմնախնդիրներ տեսնելուն: Բայց, անշուշտ, սա տեղի է ունենում այն դեպքում, եթե աշակերտը իրականացնում է այն գործունեությունը, որը կազմում է հիշատակված մտավոր կամ ճանաչողական կառուցվածքների բովանդակությունը, եթե նա դրվում է դրանց դրսևորումը պահանջող պայմանների մեջ: Այն բանից հետո, երբ այդ կառուցվածքներն ինչ-որ չափով ձևավորվում են, աշակերտն ի վիճակի է լինում օգտվել դրանցից ինխնություն ճանաչողական գործունեության համար: Կապված յուրացվող նյութի բովանդակության հետ, զանազանվում են յուրացման տեսակները:

Մանկավարժական հոգեբանության մեջ զանազանվում են հասկացությունների, հմտությունների ու կարողությունների, մտածողության եղանակների յուրացումը: Գործունեության այդ տեսակներից յուրաքանչյուրը պահանջում է յուրացման իրեն առանձնահատուկ եղանակները: Մակայն մեզ թվում է, որ այստեղ պետք է ներգրավել յուրացման ևս մեկ օբյեկտ: Կրթության բովանդակության կազմին համապատասխան յուրացման է ենթակա հուզական վերաբերմունքի փորձը, սոցիալական, գաղափարաքաղաքական, բարոյական, գեղագիտական և այլ արժեքների համակարգին ուղղված համապատասխան ապրումների փորձը: Քանի որ ամեն մի գործողություն ունի իր բովանդակությունը, իսկ վերաբերմունքը նույնպես գործողություն է, ուրեմն այն ևս ունի իր բովան-

<sup>4</sup> Դիդակտիկայում և մեթոդիկայում նպատակահարմար է տարբերակել այդ հասկացությունները: Մտածողական կառուցվածքը մարդու պատրաստակամությունն է վերլուծում, համադրում, ընդհանրացում և այլ մտածողական գործողություններ կատարելու ընթացքում, անկախ այդ գործողությունների առարկայական բովանդակությունից: Կարելի է, սակայն, դրանց տիրապետել և միաժամանակ չյուրացնել ճանաչողական կառուցվածքները, այսինքն՝ ճանաչողական խնդիրների կոնկրետ խմբերի կամ դասերի հետ ընդհանրացված գործողությունների տիպերը: Այսպես, աշակերտները, սկզբունքորեն իրականացնելով վերլուծություն կամ ընդհանրացում, չեն կարողանում նյութական մշակույթի հուշարձանների հիման վրա եզրակացնել մարդկանց գիտելիքների, նրանց հոգևոր մշակույթի մասին, չեն կարողանում լեզվաբանական տվյալների հիման վրա եզրակացնել կենցաղի մասն և այլն: Ծանաչողական կառուցվածքները մտածողական գործառնությունների յուրահատուկ գույակցություններ են, որոնք գործադրվում են օբյեկտների դասերի նկատմամբ: Այս առանձնահատկության անտեսումը հանգեցնում է նրան, որ ուսումնական ծրագրերում պլանավորվում է վերլուծման, համադրման և մտածողական այլ գործառնությունների ուսուցում, որոնք չեն հասցված ճանաչողական գործողությունների բնույթի:

դակությունը և յուրացման իր եղանակը<sup>5</sup>: Այսպիսով կողմնորոշված հուզական փորձը ևս յուրացման է ենթակա կրթության բովանդակության այլ ձևերին՝ գիտելիքների, գործունեության եղանակների, ստեղծագործական գործունեության փորձին համահավասար:

Գիտելիքների յուրացումը, բնութագրվելով ընդհանուր հատկանիշներով, միաժամանակ կախված է այն բանից, թե ինչ գիտելիքներ են յուրացվում: Արտաքինապես արտահայտված և զգայական ընկալման ենթակա փաստերը յուրացվում են ընկալման, իմաստավորման և մտապահման պրոցեսում: Առանց մտապահման անհնար է որևէ յուրացում: Մտապահումն ավելի լավ է ու կայուն, երբ ավելի ինտենսիվ ու բազմակողմանի է սովորողի գործունեությունն այն բովանդակության հետ, որը ենթակա է մտապահման: Յուրացումը որոնման պրոցեսում տանում է դեպի գտնվածի լավագույն մտապահում: Գիտելիքների օգտագործումը տարբեր իրադրություններում շատ ավելի լավ է ամրապնդում դրանք հիշողության մեջ, քան սերտումը (թեև մի շարք դեպքերում այդ էլ է անհրաժեշտ): Գիտելիքը այն ժամանակ է լիարժեք կերպով յուրացվում, երբ այն կարգավորված է, այսինքն, օրինաչափորեն կապված է ուրիշ գիտելիքների հետ, գիտելիքների որոշակի համակարգի մի մասն է: Այս դեպքում նյութի ծավալը ավելի քիչ է խոչընդոտում յուրացմանը: Որքան ավելի կոնկրետ է գիտելիքը, այնքան ավելի մեծ չափով է յուրացումը հենվում զգայական փորձի վրա, այնքան ավելի մեծ է զննականության դերը: Որքան սահմանափակ է տեղեկատվությունը ստացողի հնարավոր զգայական հենարանը, որքան վերացարկված է ստացվող տեղեկատվությունը, այնքան ընդհանրացման ու վերացարկման գործունեության ավելի բարձր մակարդակ է պահանջվում սովորողներից: Բայց ցանկացած ընդհանրացնող գործունեության նախադրյալը կոնկրետ գիտելիքների ու երևույթների կուտակված պաշարն է:

Անվիճելիորեն առաջադիմական է վերջին տարիների զարգացող միտումը՝ ուսումնական նյութի յուրացումը կառուցել ընդհանուրից, օբյեկտի մոդելից, նրա ծագումնաբանական բջջից դեպի մասնավորն ու անհատականը: Բայց այս մոտեցումը ևս չի վերացնում ինդուկտիվ ճանապարհով ընդհանրացված կոնկրետ գիտելիքների պաշարը նախապես կուտակելու անհրաժեշտությունը: Պետք է ասել, որ տվյալ հայեցակետը երբեմն սխալ են մեկնաբանում: Ուսուցման հայեցակետը դեռևս չի նշանակում յուրացման հոգեբանական հայեցակետ: Վերջինս պարտադիր կերպով պետք է հաշվի առնի, որ դպրոցական արդեն զարգացման նշանակալի ճանապարհ անցած որոշակի տարիքի անհատ է, նրա մեջ գոյացել է մտորային, մտավոր, բարոյական, հուզական և այլ փորձի մեծ, հաճախ որոշիչ պաշար: Յուրացման ընթացքը ընդհանուրից դեպի մասնավորը՝ յուրացման պրոցեսի բաղկացուցիչ մասն է, այնպես, ինչպես վերացականից դեպի կոնկրետի անցումը ճանաչողության ամբողջական պրոցեսի փուլն ու բաղադրամասն է: Այդ պատճառով էլ չի կարելի ուսուցման կազմակերպման, ուսումնական նյութի կառուցման ուղիների արգասավոր առաջարկները խառնել յուրացման այն տեսությունների հետ, որոնք կոչված են բացատրելու յուրացման և նրա ընթացքի նախասկզբնական բնույթը: Յուրացման հիմնական օրինաչափությունները դրսևորվում են ուսումնական պրոցեսը ցանկացած /ինդուկտիվ կամ դեդուկտիվ/ ձևով կազմակերպելու դեպքում:

Դասի ընթացքում երեխայի մեջ գիտելիքների ֆոնդի կուտակման համեմատ՝ ավելի ու ավելի մեծ դեր է ստանձնում խոսքը, որի օգնությամբ փոխանցվում ու յուրացվում է գիտելիքների համակարգը: Այն աստիճանաբար բարդանում է՝ ներգործելով սովորողների մտածողության վրա:

Նոր հասկացությունների<sup>6</sup> յուրացումը սկզբում ապահովվում է դրանց բովանդակության և իմաստի վերաբերյալ տեղեկատվությամբ, որը մշտապես հենվում է սովորողների մեջ առկա զգայական մտապատկերների և կոնկրետ գիտելիքների պաշարի վրա: Որքան ավելի է ընդհանրացված նոր հասկացությունը, այնքան նա ավելի է վերացական, այնքան շատ է սովորողը կարիք զգում այն հատկանիշների հստակ բնորոշման կամ մկարագրման, որոնք բնութագրում են հասկացության էությունը և նրա արտացոլած օբյեկտը: Որքան ավելի պարզ են նշված հասկացության հատկանիշները,

<sup>5</sup> Տե՛ս Միջնակարգ դպրոցի դիդակտիկա, գլ. 2:

<sup>6</sup> Հասկացություն ասելով հասկանում ենք արտացոլվող երևույթի էությունն արտահայտող բառը կամ դաստորությունը:

դրանց ստացման ուղիներն ու հասկացության կիրառման եղանակները, այնքան հեշտամուն է յուրացումը, որ պահանջում է ըմբռնել միմյանց նկատմամբ հասկացությունների հարաբերությունը, հատկապես այնպիսի հասկացությունների, որոնք կապակցված են մեկը մյուսի հետ: Մրանցով հասկացությունների յուրացումը չի ավարտվում: Լիարժեք յուրացման պայմանը գիտակցված հասկացության կիրառումն է:

Մեզ շրջապատող աշխարհը նկարագրող, բնութագրող, բացատրող գիտելիքների հետ միասին մարդկությունը կուտակել է գիտելիքներ գործունեության եղանակների մասին: Այս եղանակների յուրացման համար բավական չեն դրանց մասին եղած գիտելիքները: Անհրաժեշտ է յուրացնել դրանց կենսագործման փորձը, պրակտիկայում իրականացնելու փորձը: Գիտենալ դեռ չի նշանակում կարողանալ:

Աշակերտների կողմից յուրացված գործունեության եղանակները հմտություններն ու կարողություններն են: Հմտություն է համարվում այն գործառնությունը, որի կատարման եղանակը հասցված է ավտոմատացման աստիճանի, այսինքն չի վերահսկվում գիտակցության կողմից: Կարողությունը գործողության եղանակ է, որը բաղկացած է ընդհանուր նպատակ ունեցող գործառնությունների կարգավորված շարքից, յուրացված է՝ փոփոխվող իրադրություններում այն կիրառելու համար պատրաստ լինելու աստիճանի և վերահսկվում է գիտակցության կողմից: Կոնսպեկտ կազմելը կարողություն է: Բայց տեքստ կարդալը, տառեր և բառեր գրելը, տրոհության նշաններ դնելը և պարբերությունների բաժանելը՝ այս ամենը հմտություններ են, որոնք չունեն սեփական նպատակ և ծառայում են ամբողջ գործողությանը՝ կոնսպեկտավորմանը:

Գործունեության եղանակները լինում են գործնական և մտավոր: Գրելը, կարդալը, իմացածը կիրառելը, հաշվելը, համեմատելը գործունեության մտավոր եղանակներն են: Վերջիններիս մեջ պետք է տարբերել գիտելիքների յուրացման, յուրացված գիտելիքների կիրառման և գիտելիքներն ինքնուրույնաբար ձեռք բերելու եղանակները: Թեև դրանք իրենց բնույթով մնան են ու համասեռ, այնուամենայնիվ պետք է տարբերակել, որոհետև կազմակերպված ուսուցման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե դրանցից որոնք կարելի է նկատի ունենալ ուսումնական գործընթացի այս կամ այն պահին՝ լուծելու այն հարցը, թե ինչը յուրացնել, ինչպես ու ինչ չափով:

Իր գործունեության տեսակների ու տիպերի և դրանց հարաբերակցության իմացումը ուսուցչին հնարավորություն է տալիս ստուգել իր պատրաստվածությունը ուսումնական գործընթացի իրագործմանը արդյո՞ք ամեն ինչ է ինքը հաշվի առել, արդյո՞ք իր գործունեության բոլոր տեսակներն են կշռադատել: Կուզանալի հատկապես ընդգծել ուսուցչի ներհայեցողության, մանկավարժական այս կամ այն իրադրությունում իր գործողությունները մշտապես կշռադատելու և գիտակցելու, իր մեջ իրեն զսպելու, ստրեսսային վիճակների դեմ պայքարելու կարողություն զարգացնելու նշանակությունը:

Գործունեության բոլոր տեսակների դեպքում կարևոր է ուսուցչի ինքնադրսևորումը, որպես անձնավորություն: Մրա համար հավասարապես անհրաժեշտ են ինչպես ուսուցչի ներքին ազատությունը, որը նպաստում է նրա մանկավարժորեն արդարացված գծերի դրսևորմանը, այնպես էլ դպրոցում տիրող մթնոլորտը, որը նպաստում է ուսուցչի մեջ բացահայտելու այն լավագույնը, ինչին նա տիրապետում է: Մրանից շահում են ուսուցիչները, դպրոցը, երեխաները և ամբողջ հասարակությունը:

## О ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСНОВАХ ОБУЧЕНИЯ

Резюме

Л. Акопян, Н. Агамян

*В статье всесторонне обсуждается психологический аспект учебного процесса с точки зрения взаимодействия учителей и учеников. Выявлены основные закономерности процессов понимания и усвоения, развертывания учебной деятельности. Заслуживает внимания тот факт, что подчеркивается основополагающая роль сенсорного опыта учащихся в процессе усвоения нового материала, формирования знаний и соответствующих навыков.*

## Լատորա ԱԹԱՆԵՍՅԱՆ

### ԴՊՐՈՑ ԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ

Ստեղծագործական ակտիվության խնդիրները դասվում են գեղագիտության կարևոր խնդիրների շարքը: Գեղագիտական գրականության մեջ գեղարվեստական ստեղծագործությունը ուսումնասիրվել է որպես ստեղծագործության արդյունք, որը հնարավորություն է տվել բացահայտելու նրա կապը օբյեկտիվ գործունեության հետ, պարզելու, թե արվեստում ինչպիսի արտացոլում է գտել իրական աշխարհի այս կամ այն բնագավառը:

Այդպիսի մտտեցման դեպքում գեղարվեստական ստեղծագործության սուբյեկտիվ կողմը, որի հետ այնպես սերտորեն է առնչվում ստեղծագործական ակտիվությունը, կամ մասամբ է ուսումնասիրվել կամ ընդհանրապես մնացել է ստվերում: Այդպես, որոշ ուսումնասիրողներ, պնդելով որ նկարչի հոգեկան աշխարհը չի կարող հանդիսանալ ուսումնասիրության օբյեկտ, բոլորովին անհիմն կերպով ստեղծագործողի սուբյեկտիվ դրսևորումները փոխարինում են սուբյեկտիվիզմով:

Արվեստի մեթոդական հնարքների հետևողական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտելու նկարչի ստեղծագործական ակտիվության դիալեկտիկան, ուսումնասիրելու այն որպես գործընթաց և դրանով իսկ խորացնելու ներկայումս գոյություն ունեցող պատկերացումները գեղարվեստական ստեղծագործության մեջ օբյեկտիվի և սուբյեկտիվի փոխհարաբերությունների մասին:

Օբյեկտը և սուբյեկտը ստեղծագործական գործընթացում իրականացնում են տարբեր սոցիալ-գեղագիտական գործառնություն: Նկարիչը հանդես է գալիս երեք՝ ճանաչման–ինքնաճանաչման սուբյեկտի, գործարար – մտածող սուբյեկտի և յուրացնող սուբյեկտի կարգավիճակներով: Ելնելով սրանից՝ ստեղծագործական ակտիվությունը պետք է դիտել դինամիկայի, այսինքն՝ շարժման և կայացման, դիալեկտիկայի, օբյեկտի և սուբյեկտի՝ մինչև նույնացման հասնող փոխանցման մեջ:

Արտացոլման տեսության սկզբունքների իրագործումը պահանջում է գեղարվեստական ստեղծագործության բոլոր բարդությունների հաշվառում, օբյեկտ–սուբյեկտ փոխհարաբերությունների ծայրահեղ ճյուղություն, դինամիկություն՝ միջնորդավորված ուղղակի և անուղղակի կապերով ու հարաբերություններով, և մասնավորապես նրանով, որ նկարիչը յուրացնում է ոչ միայն օբյեկտը, որն ինքը պատկերում է՝ արտահայտելով որոշակի նպատակ, ճաշակ, գաղափար, նաև ինքն իրեն, իր անձի էությունը՝ հանդիսանալով միաժամանակ իր գործունեության և՛ օբյեկտը, և՛ սուբյեկտը:

Ստեղծագործական ակտիվության խնդիրները ուսումնասիրվել են գերմանական դասական փիլիսոփայության, ամենից առաջ «նույնացման փիլիսոփայության» հիմքի վրա (Բ.Ֆիխտե, Նովալիս, Տիկ)՝ զարգացնելով գաղափարը սուբյեկտի մասին, որպես ներքին ստեղծագործական ակտիվության ինքնագործունեություն:

Ստեղծագործական ակտիվությունը մարդու առանձնահատկություններից է, որն ի հայտ է գալիս և գոյատևում է միայն նոր, օրիգինալ, սոցիալապես կարևոր արժեքներում, նկարչի ստեղծագործական ակտիվությունը ակունքվում է հասարակական-պատմական պրակտիկայից՝ բավարարելով նրա գեղագիտական հարցադրումներն ու պահանջները:

Գեղագիտական հարաբերությունների մեջ հատկապես պրակտիկան է, որ որոշում է նկարչի անձի նախընտրելի ակտիվությունը՝ տրամադրելով նրան իր համար կարևոր ու արժեքավոր երևույթների նպատակամղված յուրացման: Լինելով սոցիալապես գիտակից էակ, նկարիչը շարժման մեջ է դնում իրեն հատուկ ունակությունը՝ արտաքին օբյեկտը վերածելու իր ֆիզիկական ու հոգեկան ուժի ակտիվության, իսկ իր ներքին մտավոր-զգայական ապրումները՝ գաղափարա-նյութա-առարկայական ձևերի (նպատակ, մտահղացում, գաղափար, գեղարվեստական կերպար, արվեստի ստեղծագործություն):

Գրանով հանդերձ նյութականությունը ակտիվությանը չի համադրվում դրսից, այլ գործում է ներսում՝ ամորֆ, տատանվող սպրումների գեղարվեստական ձևերում:

Ակտիվությունը միշտ հենվում է առարկայական նյութերի վրա՝ իրական օբյեկտի կառուցվածքները արվեստի ստեղծագործություն տեղափոխելով, բայց վերցված ոչ թե անշարժության, այլ դինամիկայի, շարժման ու կայացման մեջ, ինչպես սեփական ինքնագարգացման, այնպես էլ սուբյեկտիվ մարդկային գործունեության վերափոխման գործընթացում: Այսպիսին է աշխարհը գեղագիտական գնահատումներով: Այն, ինչ հիմա գոյություն ունի իրական աշխարհում որպես օբյեկտիվություն, միաժամանակ ներկայանում է նաև որպես սուբյեկտիվություն՝ ստեղծագործողի անձի ու գործունեության միասնության մեջ՝ նրա գեղագիտական գաղափարների ու սուբյեկտիվ ձգտումների տեսանկյունից:

Անտեսելով արտացոլման տեսությունը՝ գեղարվեստական ստեղծագործությունը միայն սուբյեկտի ձգտումների ու նպատակների արտահայտմանը հանգեցնելը ճիշտ չէ: Հեռանալով իրականության արտացոլումից, չհանդիսանալով նրա օրինաչափ շարունակությունը, ստեղծագործական ակտիվությունը դառնում է անիմաստ:<sup>1</sup> Ստեղծագործական ակտիվության էությունը ի հայտ է գալիս նպատակադրման, նախագագացման, մտահղացումների իրագործման, գաղափարների գեղարվեստական կերպարավորման մեջ, նկարիչը նախատեսում է օբյեկտի կայացումը, ինչպես հասարակական ամբողջի կառուցվածքում, այնպես էլ իր ստեղծագործության մեջ: Նա սկզբում պետք է ինքը ապրի այն ամենը, ինչը հետո պետք է թելադրվի ստեղծագործության մտահղացմամբ ու ընդհանուր գաղափարով: Նկարիչը պետք է կարողանա իր ապրածն ու զգացումը գեղարվեստական կերպարի ձևով օբյեկտիվացնի իր իսկ պատկերացմամբ ստեղծված աշխարհում:

Ստեղծագործական ակտիվությունը ի հայտ է գալիս ճանաչողական-արժեքավորման գործունեության վերլուծության, սինթեզի (համադրման), օբյեկտից ստացած տպավորությունները գեղագիտական էտալոնների հետ համեմատելու և դրանք արվեստի կոնկրետ տեսակի ու ժանրի մեջ տեղափոխելու ժամանակ: Քանի որ այս գործունեությունը մշակվում է հասարակության կողմից, ուստի այն սոցիալապես պատճառաբանվում է: Այնուհանդերձ նկարչի ստեղծագործական ակտիվությունը պարունակում է բազմաթիվ անհատահոգեբանական երանգներ:<sup>2</sup> Նկարիչը պարտադիր գեղարվեստական պատկերներով աշխարհընկալման միջոցների մեջ ներմուծում է ինչ-որ նոր բան: Բայց այդ գործընթացից ամեն ինչ չէ, որ դառնում է արտադրանք, արդյունք, որքան ակտիվ է ստեղծագործողի անձը, այնքան արժեքավոր է ստացված արդյունքը: Ստեղծագործական ակտիվության գործընթացը արդյունքի կայացումն է: Իր հերթին, արդյունքն էլ հենց գործընթաց է՝ սուբյեկտի կողմից ապրված, բայց ավելի կարևոր, հաստատուն, անտարբերակ, որը ստացվում է ստեղծագործական ամեն հաջորդ փուլում, և այդ հաստատունը ստեղծագործողի հոգեկան վիճակների, մտահղացմամբ պայմանավորված զգացմունքների ու գաղափարների շարժումն է:

Սուբյեկտի ակտիվությամբ հարստացած՝ օբյեկտիվ-առարկայական բովանդակությունը ներառում է ինչ-որ բան նրա անձից և միաժամանակ, կորցնելով իր առօրեականությունը, վերածվում է սուբյեկտիվի, բարձրանում մինչև նրա ստեղծագործական նպատակների իրագործման աստիճանի, ձեռք է բերում մարդկայնորեն արժեքավոր իմաստ ու սոցիալ-գեղագիտական նշանակություն:

Իսկական արվեստը միշտ դինամիկ է մարդուն, որովհետև վերակերտում է օբյեկտը իր սուբյեկտիվ գործունեության գործընթացի վերափոխման ժամանակ, իսկ մարդը իր գեղագիտական գաղափարներին համապատասխան՝ սոցիալական կեցու-

<sup>1</sup> Г. И о г а н с о н, *Учить студентов мыслить творческий*, Пермь, 1971, стр. 104.

<sup>2</sup> Նույն տեղում:

թյան առաջընթաց զարգացման ու վերափոխման գործընթացում հանդես է գալիս որպես սուբյեկտ<sup>3</sup>:

Գեղարվեստական կերպարը միայն օբյեկտի պատկերը չէ, այլ արդյունք ստեղծագործական ակտիվության, իսկ ակտիվությունն էլ իր հերթին պատկեր է՝ ստեղծագործական արդյունքի ստեղծման փուլ, և որպես այդպիսին՝ հնարավոր է միայն ստեղծագործական գործընթացի կարգավորիչ դերի և արվեստում հերոսի ստեղծագործական ակտիվության պայմաններում:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կերպարվեստի գործունեության ուղղվածության բարդ պատկերը իրատեսական գծանկարի ստեղծման գործընթացն է, որը ներառում է ամենաընդհանուր պատկերացումները առարկաների և այն ամենի մասին, ինչը ստացվում է բնանկարից գծանկարելու ամբողջ ճանապարհին: Բայց որպեսզի պատկերացվի այդ ճանապարհի արդյունքը, անհրաժեշտ է այդ ամենի կողքին կանխատեսել նաև ստեղծագործական ակտիվությունը, որպես նրա կերպարավորման փուլ մտովի նախագծման ճանապարհին:

Այս տեսակետից՝ գեղարվեստական մտահղացումը պատկեր է, որտեղ օբյեկտն իր կերպարանափոխությամբ համընկնում է ստեղծագործական փուլին: Եվ ստեղծագործական ակտիվությունը կանխորոշում է արդյունքի կառուցվածքը, այն, ինչը հետո տպվում է նրա մեջ, որովհետև նկարչի կողմից մտահղացած պատկերը հանդես է գալիս այն կառուցվածքային փոփոխություններում, որոնք իրականացվելու են ստեղծագործական հետագա փուլերում:

Նկարիչը մտածում է գործելով և գործում է մտածելով: Նա միտքը կառուցում է գործողությունների սկզբում նախ իր պատկերացումների մեջ, իսկ արդեն գործնականում՝ ռեալ գեղարվեստական միջոցներով, որոնք շարժման մեջ են դնում նրա պատկերավոր միտքն ու զգացմունքը: Մտահղացումներում ստեղծագործողը նույնքան ակտիվ է, որքան նրանք գործնականում արարելու ժամանակ, որովհետև նա հաղթահարում է թե՛ առարկայական և թե՛ հոգեբանական արգելքներ: Օբյեկտիվացումը չի ընթանում կերպարը դրսից բերելով, ինչպես մտածում են շատ հետազոտողներ: Հոգևոր ստեղծագործությունը նույնպես ենթադրում է օբյեկտիվացում գեղարվեստական տպավորությունների՝ զգացմունքների, ապրումների «լեզվով», որովհետև գեղարվեստական կերպարը ստեղծագործողի կողմից միշտ մտածվում է արվեստի իր տեսակով-հնչյուններով, գույներով ու պլաստիկայով: Վերջապես, արվեստի ստեղծագործությունը ոչ թե աշխարհից ու հասարակությունից անկախ ու կտրված է, այլ անմիջականորեն նրանց շնորհիվ է, որովհետև նկարչի ստեղծագործական ակտիվությունը արվեստի գործերում, միահյուսված իր նպատակների իրագործման գործունեությանը, ուղղված է որոշակի հասարակական ազդեցությունների նվաճման:

Ստեղծագործական ակտիվությունը գոյություն ունի միայն նկարչի ստեղծագործական ուժերի ու ունակությունների շարժման, աշխարհի՝ իր պատկերով կերպավորման և նրա մարդայնացման մեջ: Գեղարվեստական ստեղծագործության իմաստը նրա նպատակամղված, սոցիալապես նշանակալից էության ստեղծման ու ինքնաստեղծման, կատարելագործման և ինքնակատարելագործման մեջ է<sup>4</sup>:

Նկարիչը իր ստեղծագործությամբ կամ արձագանքում է հասարակությանը հուզող հրատապ հարցերին, հրավիրում է մարդկանց՝ վերափոխելու աշխարհը գեղեցիկի կանոններով, կամ էլ հեռանում է նրանցից՝ ծախսելով իր տաղանդն ու ստեղծագործական էներգիան աննշան, մանր, անցողիկ երևույթների վրա:

Ստեղծագործական ակտիվությունը նաև սոցիալական ակտիվությունն է, միայն այն տարբերությամբ, որ առաջինի դեպքում այն առաջադեմ է, իսկ երկրորդ դեպքում՝ հետադիմական:

Ստեղծագործական ակտիվության վերը նշված ձևակերպումը հիմնականում կախված է սովորողների (անհատի) աշխարհայացքի ձևավորվածության աստիճան-

<sup>3</sup> Б. К р у п н и к, *Формирование пространственно— временных представлений у учащихся среднего возраста в условиях музея ансамблевого типа*, СЛБ, 1996, стр.96.

<sup>4</sup> В. Л е в и н, *Воспитание творчества*, Томск, 1992, стр. 56.

նից: Սովորողների աշխարհայացքի ձևավորման մեջ կերպարվեստի դասերի դերի և տեսականորեն հիմնավորված տեղի գիտական բացահայտումը թելադրված է ժամանակակից մարդու վարքագծի, զգացմունքների, մտքերի վրա կերպարվեստի ունեցած ազդեցության աճով, ինչն էլ իր հերթին պայմանավորված է անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմամբ:

Դպրոցականների աշխարհայացքի ձևավորումը այս կամ այն առարկայի ուսուցման գործընթացում ունի իր առանձնահատկությունները, պայմանավորված յուրաքանչյուր առարկայի ինքնատիպության, ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակությամբ, որոնք ի հայտ են գալիս կոնկրետ առարկաների ուսուցման ընթացքում, գիտելիքների համակարգի կամ գիտության այս կամ այն սկզբունքի յուրացման ժամանակ:

Սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորման մեջ կերպարվեստի դերը բացահայտելու խնդիրը ենթադրում է նախ և առաջ կերպարվեստի այն առանձնահատկությունների բացահայտումը, որոնք պայմանավորում են սովորողների (կերպարվեստի միջոցով) գաղափարա-գեղագիտական սկզբունքների ու աշխարհայացքի ձևավորումը դաստիարակության ու նպատակամղված ուսուցման ընթացքում: Գիտատեսական ուսումնասիրությունների ընդհանրացումներն ու հանրակրթական դպրոցների հարուստ փորձը, հիմք են տալիս նկատելու կերպարվեստի դասավանդման գործընթացի առանձնահատկություններն ու նրա միջոցով դպրոցականների աշխարհայացքի ձևավորմանը նպաստող հետևյալ պայմանները.

1. Աշակերտների լայն ու նպատակամղված ծանոթացումը կերպարվեստի լավագույն ստեղծագործություններին, նրանց ձևի ու բովանդակության վերլուծությանը, նկարիչների ստեղծագործական ուղղության ուսումնասիրությանը: Այս ամենը կօգնեն աշակերտներին ավելի լայն ճանաչելու աշխարհը, կբացահայտեն հասարակության զարգացման վրա արվեստի ունեցած ազդեցության նշանակությունը, կզինեն գեղարվեստա-գեղագիտական տրամաբանության համակարգով, նրանց մոտ կառաջացնեն սիրած հերոսին մանավելու և գեղեցիկի կանոններով սպրելու և աշխատելու ցանկություն:
2. Կերպարվեստի ստեղծագործության վերլուծության, շրջապատող առարկաների ու երևույթների, ձևերի պատկերման, կոնստրուկտիվ կառուցման, համաչափության, զծագրման, լուսաստվերի, գույնի ուսումնասիրության գործընթացի ժամանակ արդյունավետ ձևով զարգանում են դպրոցականների գեղագիտական զգացմունքները, պատկերվածի նկատմամբ նրանց զգայագեղագիտական վերաբերմունքը: Այսինքն՝ գեղանկարչական, քանդակագործության, գրաֆիկայի վարպետների ստեղծագործություններում եղած գեղագիտականը սովորողների մոտ առաջացնում է զգացմունքային արձագանք՝ դրանով իսկ նախադրյալ ստեղծելով նրանց գեղագիտական զգացմունքների զարգացման համար: Հետևաբար, կերպարվեստի ուսուցման գործընթացում դպրոցականների աշխարհայացքի ձևավորումը իրականացվում է խիստ արտահայտված զգայագեղագիտական հարաբերությունների, առարկաների, երևույթների, օրինաչափությունների ուսումնասիրման, գեղագիտական զգացմունքների ճանաչողական գործընթացի ակտիվ մասնակցության պայմաններում: Ռացիոնալի և զգայականի այդպիսի օրգանական համատեղությունը գիտելիքների յուրացման, շրջապատի նկատմամբ բարոյագեղագիտական վերաբերմունքի դաստիարակության ժամանակ նկատելիորեն հեշտացվում է աշխարհայացքի ձևավորման գործընթացը:
3. Իրականության մեջ պատկերվող օբյեկտների ձևերի, կոնստրուկտիվ կառուցվածքի, համաչափության տարածական տեղավորման, գունային երանգավորման, լուսաստվերի մակերեսային բաշխման ուսումնասիրությունն ու վերապատկերումը պայմանավորում են խոր գիտելիքներ օղային և գծային հեռանկարի օբյեկտիվ օրենքների, իրական առարկաների կոնստրուկտիվ կառուցվածքի, լուսաստվերի ու երանգավորման օրինաչափությունների մասին, որոնք սովորողներին համոզում են աշխարհի նյութականության, նրա ճանաչելիության հնարավորության, երևույթների պայմանականության մեջ և սովորողներին տանում՝ դիալեկտիկական աշխարհայացքի սկզբունքների ըմբռնման: Կերպարվեստի պարասպունքներին դպրոցական-

ների ձեռք բերած գիտելիքները հեռանկարի օրինաչափությունների, օպտիկայի, գունագիտության մասին կազմում են գիտելիքների համակարգի բաղկացուցիչ մասը և նրանց բացահայտում «աշխարհի պատկերը»<sup>5</sup>:

Եվ ինչպես նշում է Ա. Լուկը, աշխարհայացքի գիտական ձևավորման խնդիրը նախ և առաջ պայմանավորված է նրանով, որ ուսուցման ընթացքում սովորողներին բացահայտեն գիտության հիմունքներն ու գործունեության բազմակողմանիությունը, համեմատաբար ընդհանուր գծերով տան «աշխարհի պատկերը», բնության երևույթների ու հասարակության նկատմամբ նրանց զինեն ճիշտ, գիտական դիալեկտիկա-մատերիալիստական մտեցմամբ, զարգացնեն երիտասարդության դիալեկտիկական մտածելակերպը, մշակեն անհատական հաստատուն սկզբունքներ և դրանով իսկ ապահովեն նրանց ակտիվ ու գիտակցական մասնակցությունը նոր հասարակության կառուցման գործին<sup>6</sup>:

4. Բնօրինակից հիշողությամբ ինքնուրույն նկարելու անհրաժեշտությունը, ինքնուրույն ստեղծագործական կոմպոզիցիայի կառուցումը (թեմատիկ գծանկար, գեղարվեստական գրականության նկարագրում, դեկորատիվ գծանկար), կերպարվեստի վարպետների ստեղծագործությունների վերատպությունների նպատակամղված վերլուծությունը աշակերտների մոտ զարգացնում են օբյեկտի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունք, որը շատ կարևոր գործոն է աշխարհայացքի ձևավորման գործում, որովհետև ստեղծագործելու ցանկության ի հայտ գալը անհրաժեշտ է ինչպես գիտելիքների համակարգի յուրացման, բնության, շրջապատող իրականության նկատմամբ գիտական հայացքների ձևավորման փուլում, այնպես էլ այդ համակարգի (ստեղծագործության) գիտելիքների գործնական օգտագործման, սկզբունքների, մտահղացումների մարմնավորման փուլում:

5. Կերպարվեստն ու գեղարվեստա-ստեղծագործական գործունեությունը զարգացնում են սովորողների կամային հատկանիշները, բնավորության անհատականությունը: Ինքնուրույն կատարած ուսումնական աշխատանքներում հերոսության, համարձակության, արիության թեմաների պատկերումը նպաստում է աշակերտների մոտ նպատակամղվածության, վճռականության, ինքնուրույնության ձևավորմանը: Բնավորության նշված կամային այս գծերը նպաստում են ինչպես գաղափարական սկզբունքների հաջող ձևավորմանը, իրականության ու շրջապատող միջավայրի նկատմամբ ունեցած ռեալ հայացքների, այնպես էլ մարդու բարոյական վարքագծի ձևավորմանը:

Ավելի հանգամանորեն ուսումնասիրենք դպրոցականների աշխարհայացքի ձևավորման գործընթացը կերպարվեստի պարապմունքների միջոցներով՝ հաշվի առնելով այդ գործընթացի առանձնահատկությունները: Չմոռանալով ընդգծել աշխարհայացքի ձևավորման տարբերակիչ գծերը՝ բարձր գաղափարայնությունը, երևույթների ու շրջապատող իրականության դիալեկտիկա-մատերիալիստական մեկնաբանությունը, նպատակամղվածությունը, որոնք հնարավոր են դառնում միայն գիտելիքների կուտակված փորձի հետևանքով, նշենք, որ գիտելիքները պետք է լինեն ոչ թե ձևականորեն յուրացված կանոնների, այլ սկզբունքների արդյունք: Սկզբունքային մարդը այն կրթող, հաստատական մարդն է, որը մինչև վերջ պատրաստ է դիմագրավել հանուն իր հայացքների ու սկզբունքների: Անհատի աշխատանքը, նրա գաղափարաքաղաքական հանդգնությունների նախադրյալը իր գաղափարներն են, այն կերպարը, որին ձգտում է մարդը իր գործունեությամբ ու վարքագծով: Բարձր բարոյական իդեալների առկայությունը կոնկրետ անհատի մոտ խոսում է տվյալ անհատի զարգացվածության բարձր մակարդակի մասին:

Պետք է նշել, որ անհատի սկզբունքներն ու գաղափարները, լինելով աշխարհայացքի անհրաժեշտ բաղկացուցիչ մաս և ձևավորվելով նրա հիմքի վրա, այնուհանդերձ նաև իրենք են ձևավորում այն: Այսինքն՝ անհատի ձևավորման գործընթացը ամբողջական, փոխկապակցված պահանջների, հետաքրքրությունների, սկզբունքների, աշ-

<sup>5</sup> С. Л о б о г и н а, Как развить способности ребенка, СПб, 1997, стр. 256.

<sup>6</sup> А. Л у к, Мышление и творчество, М., 1976, стр. 144.

խարհայացքի և կոնկրետ անհատի գաղափարների ձևավորման գործընթացն է<sup>7</sup>: Ուսուցիչը դասերին, արտադասարանական պարապմունքներին երեխաների աշխարհայացքի ձևավորման գործընթացը կազմակերպելիս, պետք է հաշվի առնի այս ամենը: Օրինակ, նկարչության ուսուցիչը, չմոռանալով այն, որ կերպարվեստը, որ գեղարվեստական պատկերներում արտացոլում է ռեալ իրականությունը, հանդիսանում է այդ իրականության յուրացման, գեղագիտական դաստիարակության գլխավոր ու կարևոր միջոցներից մեկը, կերպարվեստի մասին գրույցների, գեղարվեստական ստեղծագործության վերլուծության ժամանակ պետք է ինչքան հնարավոր է լրիվ բացահայտի ստեղծագործության բովանդակությունն ու գեղարվեստական ձևի համապատասխանությունը բովանդակությանը: Ընդ որում, սովորողների գաղափարական դաստիարակության արդյունավետության, զգայագեղագիտական վերաբերմունքի դրսևորման համար անհրաժեշտ է վերլուծել կերպարվեստի ստեղծագործությունները, նախ բարձր գաղափարաբաղադրական և ապա՝ առանձին նկարների վերլուծության արդյունքների համեմատության և գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակության գաղափարական ուղղվածության բացահայտման տեսանկյունից:

Որովհետև գրույցի թեմայի ընդհանրացումը կախված է նախնական ընկալման ու գեղարվեստական պատկերների վերլուծությունից, որոնք իրենցից ներկայացնում են անհատականի ու տիպականի համաձուլվածք՝ հատուկ միայն կոնկրետ մարդուն, ուստի կարևոր նշանակություն է ստանում ուսուցչի պատկերավոր ու գունեղ գրույցը վերլուծվող ստեղծագործության բովանդակության շուրջ: Որքան ճշմարտացի է ուսուցչի գրույցը, այնքան ավելի հավանական է նրա բնութագրած պատկերների համապատասխանությունը գեղարվեստական ստեղծագործությանը, այնքան ավելի խորն է նկարի բովանդակության մեկնաբանությունը, այնքան ավելի շուտ աշակերտների մոտ կնշակվի զգացմունքագեղագիտական վերաբերմունք պատկերվածի՝ գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ, ու ավելի արդյունավետ կընթանա նրանց զգացմունքների ու գիտելիքների դաստիարակման գործընթացը: Բնականաբար, այս ամենը պետք է պայմանավորված լինի նաև տարիքային առանձնահատկություններով՝ նրանց մտավոր ու հոգեկան կարողություններով: Դասերի ժամանակ կերպարվեստի համընդհանուր վարպետների ստեղծագործությունները վերլուծելիս դպրոցականները խտացրած ձևով տեսնում են իրենց շրջապատող միջավայրի գեղեցկությունը: Ծնողիկ այդ գործերի՝ նրանք ծանոթանում են շրջապատող առարկաների հարստությանը, երևույթներին, իրադարձություններին, մարդու հոգեկան բարդ աշխարհին, գեղարվեստական ստեղծագործության հերոսների գեղեցիկ ու տգեղ արարքներին: Ծանոթանալով այս ամենին՝ սովորողները անտարբեր չեն մնում տեսածի նկատմամբ, նրանք իրենք են սկսում վերապրել այդ ամենը, սկսում են գնահատել առանձին հերոսների դրական կամ բացասական արարքները:

Կերպարվեստի պարապմունքների ընթացքում սովորողները զինվում են կոնկրետ գիտելիքներով, որոնք օրգանապես կապված են այն գիտելիքների ընդհանուր համակարգին, որ տնօրինում են դպրոցականները դպրոցում ուսուցման ընթացքում, և որոնք հանդիսանում են գիտական աշխարհայացքի ձևավորման հիմքը, պայմանավորում են գիտելիքների ծավալը և ամրապնդում են այդ ամենը դասարանում ինչպես առանձին առարկաների (գրույցներ կերպարվեստի մասին, նկարչություն բնօրինակից, թեմատիկ գծանկար, դեկորատիվ գծանկար), այնպես էլ կերպարվեստի լրիվ համակարգի ուսուցման ժամանակ:

Կերպարվեստի միջոցով դպրոցականների աշխարհայացքի ձևավորման խնդիրները պահանջում են այն ցուցանիշների, չափանիշների բացահայտում, որոնք պայմանավորում են աշխարհայացքի ձևավորման որակական մակարդակը դպրոցականի ուսուցման ու դաստիարակության որոշակի փուլում:

<sup>7</sup> Концепция художественного образования, как фундамента системы эстетических представлений младших школьников. Сб. "Проблемы художественно-эстетической подготовки современного учителя", Иркутск, 1997, стр. 216.

Այդ կարևոր չափանիշներից մեկը գիտելիքների համակարգի գիտակցական յուրացումն է, կերպարվեստի բնագավառում ունակությունների ու հմտությունների իրագործումը ստեղծագործական գործունեության ընթացքում:

Գծանկարի հաջող կատարումը, կերպարվեստ առարկայի գիտելիքներն ու ունակությունները, իրականության երևույթների բազմակողմանի և խորը ուսումնասիրությունը, դրանցում գեղագիտական բովանդակության բացահայտումը, նկարիչների ստեղծագործությունների բովանդակալից վերլուծությունը, ինքնուրույն հարցադրումներն ու դրանց պատասխանները – այս ամենը կարող են բնութագրել աշխարհայացքի ձևավորման չափանիշներն ու իրականության նկատմամբ դիալեկտիկա-մատերիալիստական վերաբերմունքը:

Կարևոր չափանիշ է նաև շրջապատի նկատմամբ բարոյական, գեղագիտորեն դաստիարակված անհատի վերաբերմունքը: Այդ դեպքում անհատի արարքներն ու վարքագիծը համապատասխանում են նրա բարոյականությանը, գեղագիտական զարգացվածությանը, աշխարհայացքի մակարդակին:

Աշխարհայացքի ձևավորման մակարդակի կարևոր չափանիշներից մեկն էլ գաղափարական համոզմունքն է: Իր գիտելիքների ճշմարտացիության, գործի նկատմամբ ունեցած սիրո, իր արարքների իրավացիության համոզմունքը, որպես կանոն, արտացոլում են դպրոցականի աշխարհայացքը:

Կախված տարիքային առանձնահատկություններից՝ դպրոցականների աշխարհայացքի ձևավորման մակարդակի նշված չափանիշները կերպարվեստի ուսուցման գործընթացում տարբեր ձևով են դրսևորվում՝ ավելի կամ պակաս հնչելով: Իրականության նկատմամբ ունեցած ընդհանուր հայացքների ու գաղափարների ձևավորման մակարդակի չափանիշների տարբերությունը պայմանավորված է դպրոցականների կենսափորձով, յուրաքանչյուր տարիքային փուլում նրա վրա ուսուցման ու դաստիարակության ունեցած ազդեցությունից, նրա հոգեկան ու ընդհանուր զարգացվածության աստիճանից: Դպրոցականի յուրաքանչյուր տարիքային շրջանում, դաստիարակության և ուսուցման ամեն փուլում աշխարհայացքի ձևավորման մակարդակի այդ չափանիշները հեշտությամբ են ի հայտ գալիս իրենց բնորոշ հիմնական գծերով ու բնույթով: Եվ նկարչության ուսուցչի հիմնական խնդիրն է դառնում իր մանկավարժական գործունեության ընթացքում այդ չափանիշների ճիշտ օգտագործումն ու այդ հիմքի վրա՝ սովորողների աշխարհայացքի ձևավորման արդյունավետ կազմակերպումը:

Կերպարվեստի դասավանդումը հանրակրթական դպրոցում պետք է զբաղեցնի առաջնակարգ դիրք: Շնորհիվ իր առանձնահատկությունների՝ կերպարվեստը կարող է հանդես գալ որպես դպրոցականի գաղափարաքաղաքական և բարոյագեղագիտական դաստիարակության, դրանց սկզբունքների ձևավորման լավագույն միջոց տառացիորեն առաջին դասարանից:

## СЕГОДНЯШНИЕ ЭСТЕТИЧЕСКИЕ ЗАДАЧИ ФОРМИРОВАНИЯ ТВОРЧЕСКОЙ АКТИВНОСТИ СТАРШЕКЛАССНИКОВ

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Л. Атанесян \_\_\_\_\_

*Учитывая роль предмета “Изобразительное искусство” в эстетико–нравственном воспитании, в формировании творческой активности и мировоззрения учащихся, задачей преподавателя, по мнению автора статьи, должно стать обеспечение некоторых важнейших условий, стимулирующих процесс преподавания: а) целеустремленное ознакомление учащихся с лучшими произведениями изобразительного искусства; б) всесторонний анализ этих произведений; в) анализ творческого пути искусствоведа (художника).*

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՉԵՎԱՍՏՈՒԹՅԱՆ  
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տեսությունն ու պրակտիկան փիլիսոփայական կատեգորիաներ են: Տեսությունը մարդկանց փորձն է՝ ընդհանրացված գիտակցության մեջ, օբյեկտիվ աշխարհի մասին նրանց ունեցած գիտելիքների համախումբը, գիտելիքների հարաբերականորեն ինքնուրույն համակարգը, որը «հասկացությունների տրամաբանության մեջ վերարտադրում է իրերի օբյեկտիվ տրամաբանությունը»<sup>1</sup>: Պրակտիկան մարդկանց գոյությունն ու զարգացումն ապահովելու նպատակով կազմակերպվող գործունեությունն է: Այն նյութական արտադրության ու մարդկանց կենսագործունեության հիմքն է: «Պրակտիկան իմացության հիմքն է, շարժիչ ուժը, վերջնական նպատակը, գիտելիքի բովանդակության օբյեկտիվության, ճշմարտացիության չափանիշը»<sup>2</sup>:

Տեսությունն ու պրակտիկան գտնվում են անխզելի միասնության մեջ՝ գոյություն չունենալով մեկն առանց մյուսի: Մշտապես ներգործելով մեկը մյուսի վրա՝ դրանք հարըստանում են և՛ խորությամբ, և՛ լայնությամբ: Տեսությունն ու պրակտիկան միասնական համակարգում դիտարկելու դրույթը կարմիր թելի պես ձգված է մի քանի տասնյակ մանկավարժ գիտնականների հայացքներում: Անհրաժեշտ է ընդգծել, որ ուսուցումն ու դաստիարակությունը կյանքի ու պրակտիկայի հետ կապելու դիտարկողական սկզբունքը միակն է, որի նկատմամբ չկան և գոյություն չունեն տարբեր մտտեցումներ: Մեր կարծիքով՝ այդ է պատճառը, որ մանկավարժները հիմնականում հեռու են մնում տարբեր բնույթի շեղումներից: Նախ պետք է ընդգծել, որ տեսությունն ու պրակտիկան մույնական հասկացություններ չեն: Առաջինն բնորոշ են վերացարկումը, իդեալականացումը, մոդելավորումը, վարկածը, մտային գիտափորձը, ձևականացումն ու ընդհանրացումը: Պրակտիկան խիստ օգտակար լինելով հանդերձ՝ կարող է լինել օբյեկտիվ, ինչպես նաև սուբյեկտիվ: Չի կարելի չնկատել, որ տեսությունն իր կիրառությունների շնորհիվ դառնում է հասկանալի, իմաստավորված և ավելի է ամրապնդվում հիշողության մեջ: Այդ տեսակետից առանձին կարևորություն է ստանում տեսության ու նրա կիրառական կողմի համաձայնեցվածության ու ներդաշնակության ուսումնասիրության հարցը:

Մոսկվայի համալսարանի խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ հրատարակված «Մաթեմատիկան և իրականությունը» աշխատության հեղինակ Ն. Կիսելևան «Մաթեմատիկական ճանաչողությունը և պրակտիկան» գլխում<sup>3</sup> պրակտիկան դիտում է որպես ճանաչողության հիմք, նրա շարժիչ ուժը, աղբյուր ու նպատակ: Նա ավելի քան 70 տեսակետներ է քննարկել՝ կապված պրակտիկայի, որպես ճշմարտացիության չափանիշի և գիտության զարգացման գործոնի հետ: Այսպես, վկայակոչելով Բ. Գնեդենկոյին, նա գրում է, որ մաթեմատիկայի զարգացման հիմնական գործոնը պրակտիկայի պահանջն է: Աշխատանքում տեսության ու պրակտիկայի կապի մասին օրենքը համարվում է այն շրջանակը, որի ներսում տեսության զարգացումն ունենում է ինքնատիպ բնույթ<sup>4</sup>: Հեղինակը պրակտիկայի դերի մասին առանձնացրել է վեց խումբ հարցեր՝ կապված մաթեմատիկական նախնական հասկացությունների ու կանոնների ծագման, պրակտիկայի կողմից խնդիրներ ու նպատակներ առաջադրելու, հարաբերական ինքնուրույնության, տեսական օրինաչափությունների ու գործնական խնդիրների կապի, գիտությունների միջնորդավորված կապերի հետ:

Տեսության անզնահատելի դերը բացահայտելու առումով չի կարելի չառանձնացնել «Ի՞նչ է մաթեմատիկան» աշխատանքը: Հեղինակները կանոնը համարել են խելամիտ վարկած և ընդգծել, որ մասնավոր, երբեմն էլ մույնիսկ մեծ թվով դեպքերը

<sup>1</sup> Փիլիսոփայական բառարան., Եր., 1975, էջ 467:

<sup>2</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. IX, Եր., 1983, էջ 419:

<sup>3</sup> Н. К и с е л е в а, Математика и действительность, М., 1967, стр.122.

<sup>4</sup> Նույն տեղում:

հաճախ չեն հիմնավորում կանոնի ճշմարիտ լինելը: Խիստ կարևորություն է տրվում նախադրյալներից հետևություն կատարելու անհրաժեշտությանը<sup>5</sup>:

Տեսության ու պրակտիկայի կապի հարցը քննարկել է ակադեմիկոս Պ. Չերիշևը և գրել, որ տեսության ու պրակտիկայի կապը տալիս է ամենացանկալի արդյունքներ և դրանից օգտվում է ոչ միայն պրակտիկան, այլ օգտվում են նաև գիտությունները, որոնք զարգանում են՝ պատասխանելով պրակտիկայի պահանջներին: Վերոհիշյալ հետազոտությունները բացում են պրակտիկան նպատակային ղեկավարելու նոր հեռանկարներ<sup>6</sup>:

Քննարկելով տեսության ու պրակտիկայի կապի հարցը՝ ակադեմիկոս մանկավարժ Ա. Մակարենկոն գրել է. «Պրակտիկան անհնար է առանց տեսության, տեսությունն անհնարին է առանց գործնականի»<sup>7</sup>: Տեսության ու պրակտիկայի հարցերին ամենատարբեր առիթներով անդրադարձել է Ն. Կրուպսկայան: Նա խիստ վտանգավոր է համարել պրակտիկան իսկական իմաստով տեսության հետ չմիացնելը<sup>8</sup>: Առանձին հոդված է նվիրել պրակտիկային ու տեսությանը<sup>9</sup>, որտեղ արձանագրում է, որ հին դպրոցում որպես կանոն, տեսությունը կտրված է եղել պրակտիկայից, գործնական պարապմունքները հետապնդել են միայն տեսության այս կամ այն դրույթը ցուցադրելի դարձնելու նպատակ: Նման մոտեցումն հանգեցրել է ուսուցումը կյանքից կտրելուն: Մեկ այլ առիթով նա ընդգծել է, որ քիչ չեն դեպքեր երբ տեսությունը չի լուսավորել պրակտիկան, և կատարել է նպատակային եզրակացություն այն մասին, որ պրակտիկան ու տեսությունը միասնական հանգույցում զուգակցելը վերածվում է ոչ սովորական ուժի: Ահա թե ինչու վտանգավոր պետք է համարել նաև գիտելիքների գործադրումը ժամանակ առ ժամանակ գործնական բնույթի առաջադրանքներ կատարելուն հանգեցնելը: Մեր կարծիքով գիտելիքների ուսուցումը պետք է անխզելիորեն կապել նոր նյութը դասավանդելու էության հետ: Կարելի է վստահ ասել, որ ձևամոլության դրսևորումները հաղթահարելու հուսալի գործոն է գիտելիքների իմաստավորումն ու յուրացումը դրանց գործադրման հետ խելացիորեն զուգակցելը: Հաղթահարել ձևամոլությունը նշանակում է վերացնել խոսելը մտքից կտրելու հնարավորությունը և մտքին էլ հաղորդել բովանդակություն: Իսկ մտքին բովանդակություն հաղորդելու հուսալի ուղին ուսուցման կիրառական բնույթի ապահովումն է: Տեղին է մեջբերել Ն. Կիսելևայի կարծիքն այն մասին, թե պրակտիկան միայն նրա համար կարելի է համարել գիտելիքների ճշմարտացիության չափանիշ, որ միայն պրակտիկայում՝ գործունեության մեջ են գիտելիքները դառնում բնության ուժերին նպատակային տիրապետելու միջոց: Հակառակ դեպքում «ընդհանրապես գիտությունն անհրաժեշտ չէր լինի մարդուն»<sup>10</sup>:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ուսուցման գործնացում, կապված տեսության ու պրակտիկայի հետ, ձևամոլության դրսևորումները հանդես են գալիս երկակի տեսքով՝ կամ պրակտիկան ամբողջովին բացակայում է, կամ գոյություն է ունենում տեսությունից կտրված: Միայն գործնականին անհրաժեշտ ուղղորդություն դարձնելու և տեսականը լիովին ամոտեսելու դեպքերը բացառություններ են կազմում: Հավասարապես անթույլատրելի է, երբ թեմայի ուսուցումը հանգեցվում է միայն վարժությունների կատարման կամ, ուղղորդության կենտրոնում պահելով միայն տեսության հարցերը, անտեսվում են վարժությունները: Չի կարելի համամիտ չլինել Ի. Լերների այն կարծիքի հետ, որ առանց գիտելիքների չեն լինում և չեն կարող լինել հմտություններ: Այս կամ այն գործունեությունը ծավալելու համար պետք է իմանալ «ի՞նչ պետք է կատարել», «ինչպե՞ս պետք է կատարել» և «ինչի՞ համար պետք է կատարել» հարցերի պատասխանները: Միայն այդ հարցերի պատասխաններն իմանալով՝ գործունեությունը կարելի է դարձնել գիտակցական, իսկ գիտելիքների

<sup>5</sup> P. К у р а н т, Г. Р о б б и н с, *Что такое математика*. М.—Л., 1974, стр. 664.

<sup>6</sup> П. Ч е б ы ш е в., *Полное собрание сочинений*, т 5, М.—Л., АН, 1951.

<sup>7</sup> У. Մ ա կ ա ռ ե ն կ և յ, *Մանկավարժական ընտիր երկեր*. Եր., 1950, էջ 445:

<sup>8</sup> Н. К р у п с к а я, *О политехническом образовании*, М., 1982, стр. 222.

<sup>9</sup> Նշվ. աշխ., էջ 101-103:

<sup>10</sup> Н. К и с е л е в а, *Математика и действительность*. М., 1967, стр. 122.

կիրառումը՝ դրանք յուրացնելու նոր մակարդակի աղբյուր<sup>11</sup>: Նյութի կիրառական կողմի բացահայտումը բովանդակայից է դարձնում թեմայի ամրապնդման փուլը և իմաստավորված է դարձնում ընկալումն ու յուրացումը:

Տեսության դերի գերադասումն ու պրակտիկային ածանցյալ նշանակություն տալը, ինչպես նաև հակառակ տեսակետները հավասարապես վնասակար են: Անհրաժեշտ է ընդգծել, որ իմանալն ու կարողանալը նույնական չեն: Չի կարելի չի-շել շատ կարևոր հանգամանք, դասավանդման մեթոդները կարելի է ուսումնասիրել գրքերից ու խոսքից, բայց կարողություններ ու հմտություններ կարելի է ձեռք բերել միայն պրակտիկայում և նրա շնորհիվ:

Պրակտիկան նպաստում է ինքնուրույն աշխատանք կատարելու հմտության ձևավորմանը, անհատական և կոլեկտիվ աշխատանքները զուգակցելուն, ինքն իր ուսուցիչը լինելու պահանջը կենսագործելուն, հիշողությունը հարստացնելուն ու ավելի իմաստակարար դարձնելուն, գիտելիքները հասկանալուն ու դրանց ընկալումը գիտակցական դարձնելուն, տեսականի ու գործնականի համաչափության պահպանմանը, հետազոտական աշխատանքի տարրեր յուրացնելուն, անհաջող պատասխանը ուղղելու հմտություն ձևավորմանը, աշխատանքի ռացիոնալ եղանակ ընտրելուն, աշակերտներին ճանաչելուն ու անհատական մոտեցում ցուցաբերելուն, գրքի հետ աշխատելու հմտության ձևավորմանը, գիտելիքների կիրառական կողմերը բացահայտելուն, նոր գիտելիքներ յուրացնելու անհրաժեշտության բացահայտմանը, ինքնակառավարման զարգացմանը, ինքնաստուգման, ցուցումներ ստանալու, հարցեր տալու, հիմնականը երկրորդականից անջատելու հմտությունների ձևավորմանը, հիշողությունը բեռնաթափելուն, աշխատունակությունը բարձրացնելուն և այլն:

Մաթեմատիկայի մեթոդիկայի անվանի գիտակ Վ.Բրադիսը, ձևամտության դրսևորումների հիմնական առանձնահատկություններից մեկը համարելով պրակտիկայի ու տեսության կտրվածությունը, նշել է նրա երկակի բնույթը. կամ պրակտիկան ամբողջովին բացակայում է, կամ էլ գոյություն է ունենում տեսությունից կտրված<sup>12</sup>:

Հիմք ընդունելով կենսաբան Տ. Մյաչինայի տեսակետը հիմնահարց-վարկած-փորձ-եզրակացություն-վարկած-գործնական աշխատանք-եզրակացություն<sup>13</sup> փոխհաջորդման մասին, կարելի է նկատել, որ պրակտիկան ուսուցման գործընթացում հանդես է գալիս երկու անգամ, սկզբում և վերջում, և դրանք, իհարկե, նույնական վիճակներ չեն: Ն. Դայրին, խոսելով ժամանակակից դասին ներկայացվող պահանջների համակարգի մասին,<sup>14</sup> նշել է 18 խումբ հարցեր, որոնցից առաջնայինը համարել է ոչ թե բովանդակության շարադրումը, այլ *յուրացրած գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունների բացահայտումը*: Իհարկե, նման պահանջի անհրաժեշտությունը չէր լինի, եթե դասերի ընթացքում պատկերացումների ու հասկացությունների ձևավորումը զուգակցվեր դրանց կիրառման հետ, և աշակերտները հաճախ չզրկվեին ուսուցման երկու կողմերը նպատակայնորեն զուգակցելու, ներդաշնակ դարձնելու հնարավորությունից: Չէ որ ուսուցման մեջ խիստ կարևոր է ոչ միայն «նորի» ու «նին» նպատակային միահյուսումը, այլև տեսական գիտելիքները հմտորեն պրակտիկայում կիրառելու *կարողության ձևավորումը*: Դիտումները վկայում են, որ տեսականի ու գործնական ներդաշնակությունը չի պահպանվում անգամ տարրական դասարաններում: Հիմնավորված է, որ 1-3-րդ դասարաններում տարրեր տեսակի վարժությունների վրա ծախսվում է ուսումնական ժամանակի շուրջ 38,2 տոկոսը, ժամանակի միայն 11 տոկոսն է հատկացվում բանավոր ու գրավոր աշխատանքներին: Մի՞թե նկատելի թերություն չէ, որ վարժություններին տրված ժամանակի միայն 11 տոկոսն է նվիրվում ինքնուրույն աշխատանքներին: Ավելի վատ է հետազոտական բնույթի ինքնուրույն աշխատանքների վիճակը: Հետազոտական տարրեր բովանդակող աշխատանքին նվիրվում է շատ աննշան ժամանակ, ուսումնական ժամանակի միայն 2 տոկոսը:

<sup>11</sup> Ի. Լ. Երնեբ, *Ուսուցման պրոցեսը և նրա օրինաչափությունները*, Եր., 1982, էջ 92:

<sup>12</sup> Վ. Բրադիս, *Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկան միջն. դպրոցում*, Եր., 1958, էջ 57:

<sup>13</sup> Т. М я ч и н а, *Проблемный подход, место и значение его в учебном процессе*, Биология в школе, 1970, стр. 6.

<sup>14</sup> Ժամանակակից դասը դպրոցում, Եր., 1974, էջ 186:

Պարզ է, որ նման պայմաններում հնարավոր չէ ապահովել տեսության ու պրակտիկայի նպատակային կապը:

**ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ФОРМАЛИЗМА В УЧЕБНОМ ПРОЦЕССЕ.**

\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_ Н. Агамян \_\_\_\_\_

*Рассматривается один из интересных моментов в процессе обучения таких философских категорий, как "теория" и "практика". Они находятся в единстве и не могут существовать раздельно, обогащаются в результате постоянного взаимодействия в процессе обучения. С разносторонних аспектов обосновывается в процессе обучения необходимость взаимосвязи теории и практики.*

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ  
1970-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Որևէ երկրի կամ նրա մի հատվածի բնակչության ժողովրդագրական իրավիճակն ուսումնասիրելիս առաջնահերթորեն ուշադրություն է դարձվում այնպիսի իրողությունների վրա, ինչպիսիք են բնակչության թիվը, կազմը և վերարտադրության ռեժիմը<sup>1</sup>:

Մեր կողմից կատարված հետազոտությունը վերաբերում է 1970-87թթ. Լենինականի բնակչության ժողովրդագրական փոփոխություններին, և քննարկվում են քաղաքի բնակչության թվի շարժընթացին, վերարտադրությանը և ընտանիքի կազմին վերաբերող հարցեր: Հարկ է նշել, որ քաղաքային կյանքի՝ նշված ժամանակահատվածի ժողովրդագրությանը վերաբերող աշխատանքներ հրատարակի վրա առայժմ չկան:

1970թ. մարդահամարի նախնական տվյալներով Լենինականն ունեցել է 164 հազար բնակիչ<sup>2</sup>: Ավելի հստակ պատկերացում կազմելու համար 1970-87թթ. Լենինականի բնակչության շարժընթացի մասին, այն ներկայացնենք աղյուսակով (բնակչության թվին վերաբերող տվյալները վերցված են Գ.յումրու տարածքային վիճակագրական ծառայությունից): Աղյուսակից երևում է, որ 1970-87թթ. Լենինականի բնակչության թիվը ավելացել է 63.4 հազարով, այսինքն 27.7%-ով: 1970-75թթ. բնակչության թվաճի տարեկան միջինը կազմել է 1,3%, 1976-79թթ.՝ 1,8%, 1980-87թթ.՝ 1.0%: Ինչպես տեսնում ենք, բնակչության թվաճի տեմպերն ավելի բարձր են եղել 1970-80թթ.: 1982թ. սկսած՝ մեկնածների թիվը Լենինականում սկսում է գերազանցել եկածների թվին:

Նշված ժամանակահատվածում Լենինականի բնակչության աճն իր տեմպերով զիջել է Երևանի և Կիրովականի բնակչության աճի ցուցանիշներին: Համեմատության համար նշենք, որ 1970-87թթ. Երևանի բնակչության թվաճը կազմել է 34.3%՝ 766.7 հազարից հասնելով 1.1միլիոնի, իսկ Կիրովականինը՝ 34.3%՝ 111հազարից հասնելով 169 հազարի<sup>3</sup>: Նման երևույթը բացատրվում է Երևանում արդյունաբերության, գիտական, մշակութային և կրթական պոտենցիալի կենտրոնացմամբ, ինչն էլ հանգեցրեց այն բանին, որ գյուղական և փոքր քաղաքների բնակչությունը նախընտրեց բնակություն հաստատել հատկապես մայրաքաղաքում: 1960-ական թվականներից Կիրովականում զարկ տրվեց տնտեսության աշխատատար ճյուղերի (քիմիական և թեթև արդյունաբերության, մեքենաշինության) զարգացմանը, ինչն աշխատանքային նոր ռեսուրսների պահանջարկի ավելացման պատճառ հանդիսացավ, իսկ Լենինականում, ընդհակառակը, 70-ականների կեսերից սկսած՝ նկատվեց աշխատանքային ռեսուրսների ավելցուկ, որն էլ նպաստեց դեպի տարբեր միութենական հանրապետություններ, մասնավորապես, դեպի Ռուսաստան սեզոնային արտադադրի աճին: Ավելացնենք նաև, որ 1981-82թթ. Լենինականում զբաղվածների թիվը նվազել է երկու հազարով. դա կազմում է տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվի 2,7%-ը<sup>4</sup>:

1982 թվականից սկսած՝ Լենինականի բնակչության թվաճի միակ աղբյուր դառնում է բնական աճը, որի հիմնական ցուցանիշների՝ ծնելիության և մահացածության բոլոր տվյալները ներկայացվում են ստորև (տե՛ս աղյուսակներ 2,3):

Ծ ն ե լ ի ո թ յ ո ն ը. 1970-87թթ. Լենինականում ծնելիության վիճակը եղել է կայուն, ինչը մեր կարծիքով պայմանավորված էր ժողովրդագրական կայուն վիճակով: Ծնելիության բարձր ցուցանիշներ գրանցվել են 1982-87թթ., և դա պիտի բացատրել հիմնականում ամուսնությունների թվի աճով: Ներկայացված աղյուսակի տվյալներն ասվածի վկայություններն են: Ընդհանուր առմամբ ծնելիության գործակցի վրա դրական ազդեցություն է ունեցել նաև ներգաղթը Շիրակի և Ջավախքի գյուղական ու փոքր քաղաքային բնակավայրերից:

<sup>1</sup> Основы теории народонаселения, М., 1986, стр. 274–283.

<sup>2</sup> О предвыборительных итогах всесоюзной переписи населения 1970 года, М., 1970, стр. 13.

<sup>3</sup> Население СССР. 1987 год, Статистический сборник, М., 1988, стр. 36–37.

<sup>4</sup> Ленинанкан, Статистический сборник, Л., 1984, стр. 65.

**Աղյուսակ 1. Լենինականի բնակչության շարժը 1970-87թթ. ըստ Գյումրու տարածքային վիճակագրության ծառայության տվյալների**

Տարեթիվեր	Բնակչ. ընդհանուր թիվը	Բնակչ. ընդհանուր աճը (հազ.)	Բնակչության աճը (պրոմիլ)
1970	164966		13,2
1971	167358	+2.4	14,2
1972	171043	+3.7	14,1
1973	175484	+4.4	13,8
1974	179793	+4.3	13,5
1975	183561	+3.8	14,3
1976	187933	+4.4	13,6
1977	192261	+4.2	13,0
1978	196394	+4.1	11,9
1979	207000	+10.6	12,8
1980	209676	+2.8	12,3
1981	212605	+2.9	13,5
1982	215300	+2.7	13,0
1983	217800	+2.5	12,8
1984	220400	+2.6	13,4
1985	223300	+2.9	13,4
1986	226100	+2.8	14,4
1987	228400	+2.3	12,4

**Աղյուսակ 2. Լենինականի բնակչության ծնելիության և նրա գործակիցի շարժընթացը (տվյալները վերցված են Գյումրու ԲԿԱԳ-ի տարածքային բաժանմունքից)**

Տարեթիվեր	Ծնվածների թիվը	Տարբերությունը նախորդ տարվա համեմատությամբ	Ծնելիության գործակիցը (պրոմիլ)	Ծնելիության գործակիցը հանրապետությունում (պրոմիլ)	Ամուսնությունների թիվը
1970	3214		19,4	22,3	1240
1971	3367	+153	20,0	22,8	1355
1972	3471	+104	20,1	22,7	1246
1973	3433	-38	19,7	22,2	1348
1974	3497	+64	19,2	22,0	1384
1975	3674	+177	19,8	22,1	1543
1976	3665	-9	19,2	22,8	1425
1977	3603	-62	18,4	22,6	1589
1978	3468	-138	17,3	22,4	1785
1979	3806	+338	18,4	23,0	1798
1980	3669	-137	17,7	22,8	1753
1981	3993	+324	18,8	23,6	1713
1982	4004	+11	18,6	23,4	1834
1983	4033	+29	18,5	23,7	1454
1984	4114	+81	18,6	24,4	1973
1985	4255	+141	19,1	24,2	1765
1986	4433	+178	19,6	24,1	1814
1987	4143	-290	18,7	23,0	1569

Ծնելիության գործակիցը թեպետ ընդհանուր պատկերացում է տալիս բնակչության շարժընթացի մասին, սակայն թերի է ու չի կարող արտացոլել նրա համեմատաբար լիարժեք պատկերը: Այս պարագայում նպատակահարմար է օգտվել նաև ծնելիության հատուկ գործակիցից, որը որոշակի ժամանակահատվածում ծնվածների թվի և 15-49 տարեկան կանանց միջին թվի հարաբերության հազարապատիկն է:

Այսպես, մեր կողմից կատարված մոտավոր հաշվարկներով՝ 1970թ. Լենինականում ծնելիության հատուկ գործակիցը 1000 բնակչի հաշվով կազմել է 19.4, 1979թ և 1987թ.՝ 23.0<sup>5</sup>, որը, ընդունված չափանիշների համեմատությամբ, միջին մակարդակի է : Մ ա հ ա ց ու թ յ ու ն ը . Մա բնակչության վերարտադրության գործընթացում երկրորդ կարևոր չափանիշն է: Բնակչության ժողովրդագրական պատկերը թերի կլիներ առանց մահացածության ցուցանիշների վերլուծության: Բնական աճի ռեալ տվյալներ մահացության գործակիցների բացակայության դեպքում հնարավոր չէ ունենալ:

Ընդհանրապես մահացածության ընդհանուր գործակիցը բնակչության վերարտադրության քանակական չափորոշներից է և ըստ տարիքային խմբերի՝ տարբեր է. այն ավելի բարձր է մանկահասակների ու ծերերի մոտ, և ավելի ցածր է միջին տարիքային խմբում: Այդ իսկ պատճառով, ավելի հավաստի է մահացածության տարիքային կամ հատուկ գործակիցը, որտեղ, հատկապես, կարևորվում է մանկամահացության (մինչև մեկ տարեկան) ցուցանիշը<sup>6</sup>: Ինչպես ցույց է տրվում ստորև, 1970-87թթ. Լենինականում գրանցվել են մահացածության մախ աննշան աճի և ապա՝ նվազման միտումներ: Այդ տարիներին մահացությունների գումարային թիվը կազմել է 20.2 հազ. մարդ, տարեկան միջինը 1.2 հազ.: Ընդ որում, էական տարբերություն չի նկատվում Լենինականում և ամբողջ հանրապետությունում մահացության գործակիցների միջև: Մահացածության ամենաբարձր գործակիցը քաղաքում դիտվել է 1970 թվականին՝ 6.1 պրոմիլե, ամենացածրը՝ 1980-ին՝ 4.8 պրոմիլե, իսկ հանրապետությունում՝ համապատասխանաբար 1985-ին՝ 5.9 պրոմիլե և 1971-ին՝ 4.9 պրոմիլե:

Աղյուսակ 3. Լենինականի բնակչության մահացածության ցուցանիշները 1970-87թթ. (տվյալները վերցված են Գ.յումրու ԶԿԱԳ-ի տարածքային բաժանմունքից)

Տարե - թվեր	Մահացածների թիվը	Տարբերությունը նախորդ տարվա համեմատ.	Բնակչության միջին թիվը (հազ.)	Մահացածության գործակիցը (պրոմիլ)	Մահացածության գործակիցը հանրապետությունում (պրոմիլ)
1970	1034		165.0	6.1	5.1
1971	979	-55	167.3	5.4	4.9
1972	1054	+75	171.1	5.8	5.2
1973	1008	-46	175.5	6.2	5.2
1974	1055	+47	179.8	5.5	5.2
1975	1048	-7	183.4	5.4	5.5
1976	1113	+65	188.0	5.8	5.4
1977	1107	-6	192.3	5.7	5.4
1978	1123	+18	196.4	5.6	5.5
1979	1158	+33	207.0	5.3	5.6
1980	1091	-67	209.7	4.8	5.5
1981	1127	+36	212.6	5.1	5.3
1982	1199	+72	215.3	5.1	5.5
1983	1244	+45	217.8	5.5	5.7
1984	1149	-95	220.4	5.0	5.8
1985	1266	+117	223.3	5.8	5.9
1986	1177	-89	226.1	5.3	5.7
1987	1308	+131	228.4	5.7	5.7

Նշված ժամանակահատվածում քաղաքի բնակչության կտրուկ աճին զուգընթաց մահացության աճի աննշան լինելը արդյունք է ոչ միայն բնակչության սոցիալական բարձր կենսամակարդակի, այլ նաև մանկամահացության ցածր ցուցանիշի, ինչպես նաև 60-ից բարձր տարիք ունեցողների քանակի ավելացման: Մեր կողմից կատարված մոտավոր հաշվարկներով մանկամահացության գործակիցը մահացածների ընդհանուր թվի մեջ 1970թ. կազմել է 8.4 պրոմիլե, 1979թ.՝ 8.2, 1987թ.՝ 7.4: 60-ից ավելի

<sup>5</sup> Դաշտային էթնոժողովրդագրական նյութեր (ԴԷՆ), տեսք 3 :  
<sup>6</sup> В. К о з л о в, Этническая демография, М. 1977, стр. 156.

տարիք ունեցողների թիվը 1970թ, կազմել է 16950 մարդ (703-ը մահացել են), 1979թ՝ 19136 (մահացել են 833-ը), 1987թ՝ 24220 (մահացել են 1005-ը)<sup>7</sup>:

Բ ն ա կ ա ն ա ճ ը. Ինչպես հայտնի է, բնական աճը բնակչության վերարտադրության հիմնական ցուցանիշներից է, որը կախված է ծնելիության բարձր և մահացության ցածր գործակիցներից: Լենինական քաղաքի բնակչության աճը 1970-87թթ. ունի հետևյալ պատկերը. 1970թ. Լենինականում ծնունդների և մահացությունների թիվը համապատասխանաբար եղել է 3214 և 1034, ինչից հետևում է, որ բնական աճը կազմել է 2180 մարդ, 1979թ՝ համապատասխանաբար 3806 և 1158, որի դեպքում բնական աճը կազմել է 2648 մարդ, 1987թ՝ 4143 և 1308, այսինքն՝ բնական աճը կազմել է 2965 մարդ: Բնական աճի գործակիցը նշված տարիներին համապատասխանաբար եղել է 13.1, 13.1 և 13.0 պրոմիլե, իսկ սա նշանակում է, որ ծնունդների և մահացության աստիճանական աճին զուգընթաց՝ բնական աճի գործակիցը գրեթե չի փոփոխվել :

Մ ե խ ա ն ի կ ա կ ա ն շ ա ր ժ ը բնակչության վերարտադրության վրա ազդող գործոններից է: Ավելի հստակ պատկերացում կազմելու համար նշված ժամանակահատվածում քաղաքի բնակչության մեխանիկական շարժի մասին, այն ներկայացնենք աղյուսակով, որի տվյալները վերցրել ենք Գյումրու տարածքային վիճակագրական ծառայությունից:

Աղյուսակ 4. Բնակչության մեխանիկական շարժը Լենինականում 1970-87թթ.

Տարեթվեր	Եկածներ	Մեկնածներ	Տարբերությանը	Մեխանիկական աճը %-ով
1970	3880	2560	+1320	0.8
1971	3638	2325	+1313	0.7
1972	4549	2467	+2082	1.2
1973	4287	2370	+1917	1.0
1974	4385	2722	+1663	0.9
1975	4545	2773	+1772	0.9
1976	3935	2362	+1573	0.8
1977	4106	2626	+1480	0.7
1978	3238	2733	+505	0.2
1979	3263	2780	+483	0.2
1980	3046	2620	+426	0.2
1981	2526	2597	-71	-0.03
1982	2442	2763	-321	-0.1
1983	2731	2882	-151	-0.06
1984	2675	3127	-452	-0.2
1985	3219	3340	-121	-0.05
1986	2896	3846	-950	-0.4
1987	2950	3528	-578	-0.2

Աղյուսակից երևում է, որ 1970-87թթ. եկածների ընդհանուր թիվը Լենինականում կազմել է 62,3 հազար մարդ, իսկ մեկնածներինը՝ 50.4 հազար: Մա նշանակում է, որ քաղաքի բնակչության մեխանիկական աճի հաշվեկշիռը այդ տարիների համար կազմում է +11.9 հազար մարդ: Նշված ժամանակահատվածում բնակչության տարեկան միջին մեխանիկական աճը փաստորեն կազմել է 700 մարդ, իսկ բնական աճը՝ տարեկան 2818 մարդ: Այսինքն՝ բնակչության թիվը հանրապետության երկրորդ քաղաքում այդ տարիներին միջին հաշվով տարեկան ավելացել է մոտավորապես 3500 մարդով:

<sup>7</sup> Հաշվարկը կատարվել է Գյումրու ԶԳԱԿ-ի տարածքային բաժանմունքի տվյալների հիման վրա:

1982-87թթ. միջև ընկած ժամանակահատվածում, սպառողական վիճակագրական տվյալների համաձայն, մեկնածների թիվը Լենինականում գերազանցել է եկածների թվին, և տարբերությունը կազմել է 2644 մարդ:

**ЭТНОДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В г. ЛЕНИНАКАНЕ В 1970—80гг.**

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ А. Бояджян \_\_\_\_\_

*Данные переписи населения Советского Союза 1970 и 1979гг.. и официальные текущие статистические данные дают возможность представить этнодемографическую ситуацию г. Ленинакана в период с 1970 по 1987гг.*

*Анализ этих данных показывает, что в исследуемый период прирост населения составил 27.7%, коэффициент рождаемости увеличился 1.2 раза, смертность понизилась 1.0 раза. а естественный прирост населения возрос более чем в 1.4 раза. Подобное демографическое положение обусловлено устойчивыми политическими и социально-экономическими условиями и сравнительно высокими темпами роста иммиграции и естественного прироста.*